


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՀ ԳԱԱ 2021թ. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Երևան 2022

Հրատարակվել է ՀՀ ԳԱԱ նախագահության
05.04.2022թ. N 4 (1795) որոշմամբ

*Հաշվետվությունը պատրաստել է ՀՀ ԳԱԱ գիտակազմակերպական բաժինը՝
ՀՀ ԳԱԱ գիտությունների բաժանմունքների, գիտական կազմակերպությունների և
ստորաբաժանումների ներկայացրած նյութերի հիման վրա*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ.....	5
ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.....	7
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.....	9
ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.....	26
ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ.....	42
ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.....	47
Մաթեմատիկայի ինստիտուտ.....	48
Մեխանիկայի ինստիտուտ.....	52
Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ.....	56
«Հիդրոմեխանիկայի և վիբրոտեխնիկայի բաժին» ՓԲԸ.....	63
ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԱՍՏՂԱՖԻԶԻԿԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.....	65
Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարան.....	66
Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ.....	73
Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ.....	80
Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ.....	87
ԻԿՐԱՆԵՏ-Հայաստան Կենտրոն.....	91
ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.....	96
Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն.....	97
Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության ինստիտուտ.....	102
Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն.....	108
«Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն.....	116
Գ.Դավթյանի անվ. հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ.....	122
Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ.....	125
Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ.....	130
Հ.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտ.....	135
ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.....	138
Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտ.....	139
Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ.....	145
Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն.....	149
Երկրաբանական գիտությունների ինստիտուտ.....	159
Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ.....	164

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.....	170
Պատմության ինստիտուտ.....	171
Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ.....	184
Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ.....	191
Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ.....	204
Մ.Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ.....	210
Արևելագիտության ինստիտուտ.....	216
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ	222
Արվեստի ինստիտուտ.....	235
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն.....	242
«Հայկական հանրագիտարան» հրատարակչություն	246
ԳԱԱ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ.....	246
ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ.....	253
Ընդհանուր ժողովներ	255
Նախագահություն	255
Հայաստանի ակադեմիական գիտահետազոտական համակարգչային ցանց (ASNET-AM) ..	256
Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով	257
Միջազգային գիտատեխնիկական կապեր և դրամաշնորհներ.....	258
Միջազգային գիտատեխնոլոգիական ծրագրերի բաժին	271
Կիրառական ծրագրերի բաժին.....	274
Սփյուռքի բաժին	274
Գիտակրթական միջազգային կենտրոն.....	281
«Գիտություն» հրատարակչություն	283
Գրադարաններ	285
Գիտության և կրթության ոլորտում ԳԱԱ գիտական կազմակերպությունների համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ.....	288
ԳԱԱ և այլ գիտական կազմակերպությունների, բուհերի համատեղ կենտրոններ, լաբորատորիաներ, ամբիոններ.....	291
Գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորում.....	292
ԳԱԱ թեմատիկայի ամփոփ տվյալներ.....	297
ԳԱԱ հիմնարկների արտոնագրային ցուցանիշներ	298
ԳԱԱ գիտաշխատողների հրապարակումների ընդհանուր քանակը	298
ԳԱԱ ինստիտուտների անցկացրած հանրապետական և միջազգային գիտաժողովներ, սիմպոզիումներ և գիտական այլ միջոցառումներ	300
ԳԱԱ գիտական կադրերի 2021թ. առեստավորման արդյունքներ	305
Կադրեր.....	306

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

2021թ. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան COVID-19 համավարակի ու հետպատերազմյան դժվարին պայմաններում շարունակել է գիտական և գիտակազմակերպական բնականոն գործունեությունը, ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպություններում կատարվել են հիմնարար ու կիրառական բնույթի հետազոտություններ գիտության տարբեր ոլորտներում:

Հաշվետու տարում անցկացվել են ԳԱԱ կառավարման մարմինների ընտրություններ. հունիսի 28-29-ի ընդհանուր ժողովում ԳԱԱ նախագահ է ընտրվել ակադեմիկոս Ա.Սադյանը, փոխնախագահ՝ թղթակից անդամ Հ.Մաթևոսյանը, ակադեմիկոս-քարտուղար՝ թղթակից անդամ Ա.Իշխանյանը, ԳԱԱ գիտական բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարներ են հաստատվել և ԳԱԱ նախագահության անդամ ընտրվել ակադեմիկոսներ Լ.Ադալովյանը (Մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունք), Ռ.Կոստանյանը (Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք), Լ.Թավադյանը (Քիմիայի և Երկրի մասին գիտությունների բաժանմունք), Յու.Սուվարյանը (Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք), թղթակից անդամ Ռ.Հարությունյանը (Բնական գիտությունների բաժանմունք): ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներ են ընտրվել նաև ակադեմիկոսներ Գ.Գևորգյանը, Գ.Ղազինյանը, Ռ.Մարտիրոսյանը, Ա.Մելքոնյանը, Գ.Պողոսյանը, թղթակից անդամներ Ա.Հախումյանը, Վ.Մելիքյանը:

Կատարվել է նաև ԳԱԱ նախագահության կառուցվածքի օպտիմալացում. ստեղծվել են նոր ստորաբաժանումներ՝ Զարգացման ծրագրերի ու մշտադիտարկման, Հատուկ ծրագրերի ու ներդրումների, Գիտական կադրերի պատրաստման ծրագրերի բաժինները, վերակազմավորվել են Միջազգային դրամաշնորհների աջակցության և Գիտության հանրայնացման ու հասարակայնության հետ կապերի բաժինները, ավելացվել են ԳԱԱ նախագահի տեղակալների, Արցախում ԳԱԱ նախագահության ներկայացուցչի հաստիքները:

2021թ. ԳԱԱ շարունակել է ակտիվ համագործակցությունը միջազգային գիտական կառույցների և գիտությունների ակադեմիաների հետ: Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի նախագահ Ա.Սերգենի գլխավորած պատվիրակության հայաստանյան այցի շրջանակում ակադեմիաների միջև ստորագրվել է ՌԳԱ և ՀՀ ԳԱԱ գիտատեխնիկական համագործակցության մասին համաձայնագրի դրույթների իրականացման ճանապարհային քարտեզը, որտեղ նշված 54 համատեղ առաջարկությունները ներառում են գիտության տարբեր ոլորտներ: Ակադեմիայի պատվիրակությունները մասնակցել են «Անկախ պետությունների համագործակցության 30 տարին. արդյունքներ, հեռանկարներ» միջազգային գիտագործնական համաժողովին, Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի (ԳԱՄԱ) նիստին, ԱՊՀ անդամ պետությունների գիտնականների 3-րդ համաժողովի աշխատանքներին: Հանդիպումները նպաստել են երկրների գիտական հաստատությունների գիտատեխնիկական համագործակցության զարգացմանը և խթանել համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացումը:

Ինչպես նախորդ տարիներին, ակադեմիան ակտիվորեն մասնակցել է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակման և ակադեմիային վերաբերող որոշ կետերի փոփոխման աշխատանքներին:

2021թ. ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպություններում իրականացվել է գիտական կադրերի որակավորում, ըստ որի արդյունքների, համաձայն ՀՀ կառավարության 2021թ. մայիսի 13-ի N 747-Լ որոշման, բարձրացվել են գիտաշխատողների աշխատավարձերը:

Հաշվետու տարում ԳԱԱ համակարգի գիտնականներն անմիջական մասնակցություն են ունեցել հանրապետության ռազմարդյունաբերական համակարգի տարբեր օղակների աշխատանքներին:

2021թ. ԳԱԱ ինստիտուտները կազմակերպել և անցկացրել են 37 միջազգային և 42 հանրապետական գիտաժողովներ: ԳԱԱ համակարգի գիտահետազոտական կազմակերպություններն իրականացրել են գիտական և գիտահետազոտական աշխատանքներ 5 նպատակային, 44 բազային, 186 տնտեսական պայմանագրային ծրագրերով, ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ՝ 313 աշխատանք: Ստացված արդյունքներով հրապարակվել են 160 մենագրություն և ժողովածու (20-ն արտասահմանում), 21 ուսումնական ձեռնարկ և դասագիրք, 1550 հոդված գրախոսվող ամսագրերում (615-ն արտասահմանում), 481 հոդված գիտաժողովների նյութերի ժողովածուներում (210-ն արտասահմանում), 349 թեզիս (187-ն արտասահմանում):

Դեռևս 2021թ. սկսվել և այժմ մշակման ավարտական փուլում է ՀՀ ԳԱԱ 2022-26 թթ. զարգացման ռազմավարությունը, որը նպատակ ունի բարձրացնել ակադեմիայի կազմակերպություններում իրականացվող հետազոտությունների արդյունավետությունը, ամրապնդել գիտություն-կրթություն-արտադրություն կապը, խթանել գերազանցությունը, նպաստել ակադեմիայի կազմակերպությունների ինտեգրմանը միջազգային հետազոտական տարածք, արդյունքում՝ ապահովել ակադեմիայի համակարգի կայուն զարգացումը:

Մշակվում է նաև ԳԱԱ կառուցվածքային բարեփոխումների ծրագիրը, որով նախատեսվում է կենտրոնացնել ակադեմիայի ռեսուրսները գիտության արդի չափանիշներին համապատասխան հիմնարար և/կամ հանրապետության տնտեսության պահանջներից բխող կամ ազգային անվտանգության ամրապնդմանն ուղղված հետազոտությունների վրա, ձևավորել ժամանակակից հետազոտական ծրագրեր՝ իրականացնող գիտահետազոտական խոշոր կենտրոններ/կազմակերպություններ՝ զարգացման և ակնկալվող արդյունքների վերաբերյալ հստակ պատկերացումներով:

Գիտական կադրերի վերարտադրության արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում է ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը վերափոխել հետազոտական համալսարանի, որի առաջնային խնդիրը լինելու է հանրապետության գիտական կազմակերպությունների պահանջարկով պայմանավորված կադրերի պատրաստումը:

ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ա.Ս.Սադյան

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաթեմատիկա: Հարմոնիկ անալիզում քաջ հայտնի good-lambda տիպի անհավասարությունները բնութագրում են երկու օպերատորների միջև որոշակի փոխհարաբերակցություն: Այդպիսի անհավասարություններ առաջին անգամ արձանագրվել են մարտին-գալների ուսումնասիրություններում դեռևս 70-ական թվականներին մի շարք ամերիկացի մաթեմատիկոսների կողմից: Ներկայումս հայտնի են good-lambda անհավասարությունների բազմաթիվ օրինակներ, որոնք լայն կիրառություն ունեն հարմոնիկ անալիզի և հավանականությունների տեսությունում: «On good-lambda inequalities for couples of measurable functions» աշխատանքում ներմուծվել է good-lambda անհավասարությունների երկու լայն դաս, որոնք ընդգրկում են մի շարք հայտնի անհավասարություններ: Կիրառելով ստացված արդյունքները՝ բացահայտվել են հարմոնիկ անալիզի որոշ օպերատորների նոր հատկություններ, մասնավորապես ստացվել է Կարլեսոնի տիպի օպերատորների նոր էքսպոնենցիալ գնահատական (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Կարագուլյան):

Մեխանիկա: Գծային դեֆորմացվող Կորեննի մի հիմքի համար, որի ազդեցության ֆունկցիան արտահայտվում է զրոյական ինդեքսով Մակդոնալդի ֆունկցիայով՝ կախված երկու կետերի հեռավորությունից, դիտարկված կոնտակտային խնդիրներում, ցույց է տրվել, որ կոնտակտային տիրույթի եզրագծում գործում են կենտրոնացված ուժեր: Կոնտակտային լարումների սահմանափակության համար ստացվել են անհրաժեշտ և բավարար պայմաններ (դեկ.՝ թղթ. անդ. Ս.Մխիթարյան):

«Ալիքային և տատանողական պրոցեսների կառավարումը խողովակաշար համակարգերում» թեմայի շրջանակում կատարվել են ուսումնասիրություններ միջին հզորության և ճնշման ռեակտիվ շառավղաառանցքային հիդրոտուրբինների պարուրակաձև խցերում, աշխատանքային անիվների խոռոչներում և ուղղորդող սարքերում ալիքային դիմադրությունը փոքրացնելու նպատակով: Մշակվել են մեթոդիկա և միջոցներ, որոնք զգալիորեն նվազեցնում են էներգիայի ծախսը հիդրոտուրբինով հեղուկի հոսքի անցման ժամանակ: Հետազոտություններն իրականացվել են շառավղաառանցքային տուրբին պարունակող հիդրոագրեգատի լաբորատոր մոդելի վրա: Հիդրոտուրբինում տեղի ունեցող բարդ ֆիզիկական երևույթների մոդելավորման համար կիրառվել են նմանության տեսության վրա հիմնված մոդելավորման մեթոդները: Բավարարվել են նմանության բոլոր երեք՝ երկրաչափական, կինեմատիկական և դինամիկական պայմանները, որոնք բխում են նմանության տեսությունից հեղուկի հոսքերում մեխանիկական պրոցեսներից: Ալիքային դիմադրության նվազեցման մշակված մեթոդիկայի և միջոցների ազդեցության ուսումնասիրությունները փորձարարական ստենդի վրա իրականացվել են՝ չափելով հիդրոագրեգատի հզորության բնութագրերը հեղուկի ծախսի և ճնշման փոփոխությունների ողջ միջակայքում: Հիդրոագրեգատի էներգետիկ բնութագրերը որոշվել են առանց մշակված կայունացուցիչների տեղադրման, հիդրոագրեգատի ճնշումային խողովակաշարի վրա և նույն պարամետրերը որոշվել են հեղուկի ճնշման և տատանումների պոլսացիաների կայունացուցիչների տեղադրմամբ: Հիդրոտուրբինների ճնշման խողովակաշարի վրա տեղադրված մշակված բազմաֆունկցիոնալ կայունացուցիչներն արդյունավետորեն գործել են ինչպես հիդրոագրեգատի անցողիկ, այնպես էլ կայունացված ռեժիմների ժամանակ, նրանք մաքել են ճնշման ու հեղուկի հոսքի պոլսացիաները 85-90%-ով: Հիդրոտուրբինի հզորությունն ավելացել է 5-7%-ով, հետևաբար նույնքան ավելացել է տրակտի թողունակությունն ու հիդրոագրեգատի ՕԳԳ, որը հիդրոտուրբինի պարուրաձև խցերում,

աշխատանքային անիվի խոռոչներում և ուղղորդող սարքերում ալիքային դիմադրության մեծության փոքրացման արդյունք է (ղեկ.՝ տ.գ.թ. Գ.Ավետիսյան):

Ինֆորմատիկա և ավտոմատացման պրոբլեմներ: Ապացուցվել է մրցաշարերի d -ուժեղ համակապակցվածության մասին հետևյալ թեորեմը, որը բարելավում է տարբեր հեղինակների կողմից ստացած նմանատիպ մի շարք արդյունքներ՝ դիցուք T -ն p -գազաթանի m -անհամասեռ մրցաշար է, որտեղ $p + m \geq 11$: Եթե $m \leq \frac{1}{3}(p - 5)$ (համապատասխանաբար $m \leq \frac{1}{5}(p - 3)$), ապա T -ն 4-ուժեղ համակապակցված է (համապատասխանաբար 3-ուժեղ համակապակցված է կամ պատկանում է լավ նկարագրված մրցաշարերի մի բազմության) (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Դարբինյան):

E-ունակություն-անորոշություն տիրույթն ու E-գաղտնիության ունակություն նոր հասկացությունները ներդրվել և ուսումնասիրվել են գաղտնալսվող կապուղու համար: Կառուցվել են համապատասխան տիրույթների արտաքին և ներքին գնահատականները: Դիտարկվել են նաև ընդհանուր մոդելի հատուկ դասերը, և կառուցվել են դրանց գնահատականները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Մ.Հարությունյան):

Աստղաֆիզիկա: Օգտագործելով SDSS սպեկտրադիտությունը՝ իրականացվել է 710 ակտիվ գալակտիկական միջուկների (ԱԳՄ) թեկնածուների նույր օպտիկական սպեկտրային դասակարգում: Նույր դասակարգումը ցույց է տվել, որ շատ QSO-ներ (quasi-stellar object) դրսևորել են նույն բնութագրերը, ինչ Մեյֆերտները, այսինքն՝ S1 և S2 միջև ենթադասերը: Ներմուծվել են QSO-ների QSO1.0, QSO1.2, QSO1.5, QSO1.8 ենթադասեր: Այսպիսով, անկախ լուսատվությունից (ինչը բաժանարարն է QSO-ների և Մեյֆերտների միջև) ԱԳՄ-ները դրսևորել են նույն բնութագրերը: Շատ օբյեկտներ դասակարգվել են որպես Composite («բաղադրյալ») սպեկտրներ, որոնք ունեն Մեյֆերտների և Լայներների, Մեյֆերտների և HII-ների կամ Լայներների և HII-ների բաղադրյալ բնութագրեր: Որոշ դեպքերում բոլոր երեք բնութագրերն էլ հայտ են եկել միաժամանակ, և ստացվել է Sy/LINER/HII ենթադասը: QSO-ների ենթադասերը Մեյֆերտների հետ միասին թույլ են տվել հետևել ԱԳՄ-ների հատկությունները կարմիր շեղումների ավելի մեծ տիրույթում՝ ընդլայնելով մեր պատկերացումները ԱԳՄ-ների էվոլյուցիայի մասին դեպի QSO-ներով ներկայացված ավելի հեռու Տիեզերք (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյան):

Ապացուցվել է, որ HH 83 Հերբիգ-Հարո համակարգն ունի երկբևեռ սիմետրիկ բնույթ: HH 83 արտահոսքի հարվածային ճակատում տարանջատվել է երկու կինեմատիկ բաղադրիչ, որոնց տեսագծային արագությունները և սեփական շարժումներն ապացուցում են, որ նրանք աղեղնային հարված և Մախի սկավառակ են: V565 Mon երիտասարդ աստղի սպեկտրային ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են նրա անսովոր քիմիական բաղադրությունը և այլ հատկություններ, ինչը վկայում է տվյալ օբյեկտի եզակիության մասին (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Տ.Մադաքյան):

Ընդլայնված աստղառաջացման տիրույթում, որը ներառում է IRAS 05156+3643, 05162+3639, 05168+3634, 05177+3636 և 05184+3635 աղբյուրները, միջաստղային միջավայրի և երիտասարդ աստղային օբյեկտների հատկությունների համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ ամենամեծ միջաստղային նյութի խտություն և զանգված ունեցող ենթատիրույթները պարունակում են I դասի էվոլյուցիոն փուլ ունեցող երիտասարդ աստղային օբյեկտների ամենամեծ տոկոսը: Բոլոր ենթատիրույթներում աստղերի էվոլյուցիոն տարիքի լայն բաշխումը (105-ից մինչև 107 տարի) վկայում է, որ դիտարկվող աստղառաջացման տիրույթում աստղերի ձևավորման ընթացքը հաջորդական է: Այն ենթատիրույթներում, որտեղ սկզբնական, մայր մոլեկուլային ամպի զանգվածն ավելի մեծ է, այս ընթացքը, հավանաբար, ավելի ակտիվ է և երկարատև (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ե.Նիկողոսյան):

Մեծ չափեր և զանգված ունեցող HII-տիրույթների և կոմպլեքսների 6-մ աստղադիտակով ստացված տվյալների հիման վրա ցույց է տրվել, որ աստղառաջացման պրոցեսները կարող են ձգանի դեր խաղալ՝ դառնալով ձևաբանական փոփոխությունների պատճառ: Տվյալ դեպքում դա Գալակտիկայի թնի առաջացումն է, որի սկիզբը համընկնում է կենտրոնական մասում գտնվող միակ աստղառաջացման տիրույթում նկատվող բուռն պրոցեսների հետ (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Հակոբյան):

Հիմնվելով 4FGL J1544.3-0649 բլազարի յուրահատուկ հատկությունների վրա՝ առաջարկվել է նոր՝ ժամանակավոր (transient) բլազարների դաս: Ռադիո տիրույթում ուսումնասիրություններից հայտնի այդ աղբյուրը (4FGL J1544.3-0649) երբևէ չի գրանցվել ռենտգենյան և բարձր էներգիաների գամմա տիրույթներում, սակայն 2017-18թթ. հետո այն մի քանի ամիս վերածվել է ռենտգենյան տիրույթում ամենապայծառ արտագալակտիկական աղբյուրներից մեկի (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ն.Սահակյան):

Ֆիզիկա: Առաջին անգամ ակալիական մետաղի գոլորշի պարունակող նանոբջջի կլանման և ֆլուորեսցենցի սպեկտրերը գրանցվել են սենյակային ջերմաստիճանում, ինչն ինքնին կարևոր է կոմպակտ համակարգերում կիրառությունների տեսակետից: L~400 նմ հաստությամբ Cs բջջում ատոմային D1 և D2 սպեկտրալ գծերի զգալի (6 անգամ) նեղացման շնորհիվ հնարավոր է դարձել չափել լազերային դաշտում առաջացած սպեկտրալ լայնացումը, որը սկսում է դրսևորվել մոտ 6 մՎտ/սմ² ինտենսիվության դեպքում և այնուհետ աճում գծային օրենքով (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Դ.Սարգսյան):

Օպտիկական բեսելյան փնջի տեխնիկայի և LiNbO₃:Fe բյուրեղի հիման վրա մշակվել և իրականացվել են ֆոտովոլտայիկ լավիտներ (tweezers) միկրո- և նանոօբյեկտների գերման և ղեկավարվող տեղաշարժման համար, որոնք հեռանկարային են որպես lab-on-a-chip սարքեր (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ռ.Դրամիյան):

Երկաթի ֆտալոցիանինի (FePc, Pc= C₃₂N₈H₁₆) և ֆերոցենի (FeC₁₀H₁₀) պինդֆազային պիրոլիզի եղանակով ածխածնային մատրիցում սինթեզվել են (Fe-Fe₃C) և (Fe-Fe₃O₄) «միջուկ-թաղանթ» կառուցվածքով ֆերոմագնիսական նանոմասնիկներ, կատարվել է դրանց կառուցվածքային և մագնիսական համալիր հետազոտում: Հետազոտվել է նանոմասնիկների ջրային լուծույթի տաքացման վարքը 350 կՀց հաճախությամբ և 200 է լարվածությամբ փոփոխական մագնիսական դաշտում (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մանուկյան):

Գրավիտացիոն ալիքների գրանցման համար առաջարկվել են ուժեղ մագնիսական դաշտում գերհաղորդիչ Կուպերի գույգերի հիման վրա դետեկտորներ, որոնցում ալիքներով առաջացած մեխանիկական շարժումը վերածվում է մագնիսական հոսքի: Հիմնավորվել է չափման աղմուկների ցածր շեմը, վերլուծվել են բարձր զգայունության ապահովման համար անհրաժեշտ պարամետրերը (դեկ.՝ Վ.Նիկողոսյան):

Հիմնվելով ստացված փորձարարական արդյունքների վրա՝ տեսականորեն հիմնավորվել է էլեկտրոնային արագացուցիչներում էլեկտրոնների փնջի ցածր էներգետիկ ստրետեգիային ռեժիմում աշխատելու հնարավորությունը (դեկ.՝ թղթ. անդ. Ա.Մկրտչյան):

Ուսումնասիրվել և ցույց է տրվել, որ X-կտրվածքով կվարցի միաբյուրեղում, միաժամանակ երկայնական և լայնական ակուստիկ տատանումների գրգռման միջոցով, հնարավոր է կառավարել անդրադարձած ռենտգենյան փնջի տարածաժամանակային բնութագրերը՝ ինտենսիվությունը, տարածման ուղղությունը, ֆոկուսի դիրքը, անկյունային և էներգետիկ լայնությունները (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Քոչարյան):

Փորձականորեն միկրոալիքային տիրույթում հետազոտվել է առաջին կարգի բեսելյան ճառագայթի (J_1) տարածման առանցքի վրա գտնվող խոչընդոտներից ստացված դիֆրակցիան: Բացահայտվել է, որ խոչընդոտները, որոնք ծածկում են J_1 ֆունկցիայի առաջին մաքսիմումով սահմանափակված ճառագայթի կենտրոնական տիրույթը, չեն առաջացնում լրացուցիչ կորուստներ: Բեսելյան J_1 ճառագայթների հատկանշական

առանձնահատկությունն այն է, որ դաշտի խոչընդոտն անցնելուց հետո դաշտի կառուցվածքն անտենայի բացվածքում գրեթե վերականգնվում է: Բեսելյան ճառագայթների բերված առանձնահատկությունները կիրառելի են ռադիոհեռահաղորդակցության բնագավառում (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Հախումյան):

Առաջարկվել է ռադիոլոկացիոն նշանակետերի անդրադարձման արդյունաբար մակերևույթի գնահատման նոր եղանակ, որը չի պահանջում թանկարժեք անարձագանք խցիկի կիրառում: Եղանակը հիմնված է շարժվող նշանակետերի առանձնացման սկզբունքի վրա, ինչը թույլ է տալիս բացառել անդրադարձումները կողմնակի անշարժ օբյեկտներից: Կատարվել են չափումներ Կս տիրույթում, գնահատվել է եռանիստ անկյունային անդրադարձիչի արդյունաբար մակերևույթը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Տ.Զաքարյան, Ն.Պողոսյան):

Կառուցվել է Մաքսվելի «ձկան աչք» բեկման ցուցիչի պրոֆիլ բևեռացված լույսի համար: Այն ապահովում է ֆոտոնի փակ հետագծեր միջավայրում: Ուսումնասիրվել է Մաքսվելի «ձկան աչք» պոտենցիալ էներգիայի պրոֆիլ ունեցող գրաֆենի քվանտային կետը: Ցույց է տրվել, որ այն օժտված է Հոլլի հաղորդականությամբ նույնիսկ մագնիսական դաշտի բացակայության դեպքում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ժ.Գևորգյան):

Լազերային-իմպուլսային փոշեցրման եղանակով ստացվել են MoS₂ քվազիերկչափ բյուրեղներ՝ բաղկացած մեկ, երկու և ավելի ատոմական մենաշերտերից: Ցույց է տրվել, որ նման գերբարակ բյուրեղների օպտիկական և էլեկտրական հատկությունները, մասնավորապես արգելված գոտու լայնությունը, էապես կախված են ատոմական մենաշերտերի թվից: Պատրաստվել են օհմական կոնտակտներ, ուսումնասիրվել են նման երկչափ բյուրեղների ֆոտոէլեկտրական հատկությունները (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Ստացվել են կիսահաղորդչային նանոլարի (ՆԼ) վրա հիմնված օպտիմալ pH սենսորի աշխատանքային բնութագրերը, այդ թվում՝ իոնային զգայնության կախվածությունները ՆԼ-ի երկրաչափական և ֆիզիկական պարամետրերից: Գտնվել է սենսորի նախագծման համար պարամետրերի արդյունավետ համադրություն (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Եսայան):

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կենսաբանություն: «Երևանի բուսաբանական այգում Հայաստանի վայրի տանձենիների (*Pyrus* L.) պահպանում» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.դ. Ժ.Հակոբյան) Վայոց ձորի մարզի Եղեգիս գետի կիրճից հայտնաբերվել և նկարագրվել է տանձենու նոր տարատեսակ՝ *Pyrus hyrcana* Fed. var. *yeghegisi* Akopian, որն առաջին անգամ է բերվում Դարելեգիսի ֆլորիստիկական շրջանի համար:

Բեռլինի Բուսաբանական այգու և Բուսաբանական թանգարանի (BGBM) գիտնականների հետ համատեղ իրականացվել են *Dianthus* (Caryophyllaceae) ցեղի ֆիլոգենետիկական ուսումնասիրություններ: Ստեղծվել է ցեղի տեսակների ամբողջական կարգաբանական և նոմենկլատուրային ցուցակ՝ ըստ տաքսոնի գլոբալ տարածվածության (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Ներսեսյան):

Հնէաբուսաբանական ուսումնասիրությունների շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Ի.Գաբրիելյան) ավարտվել են «Որոտան գետի ավազանի վաղ պլեյստոցենի ֆլորան որպես Հարավարևելյան Հայաստանի ժամանակակից բուսական ծածկույթի ձևավորման հիմք» աշխատանքները: Նստվածքաշերտերից հայտնաբերված բրածո բույսերի 232 տաքսոնները պատկանում են բույսերի թագավորության 190 տեսակի, 111 ցեղի, 55 ընտանիքի: Դրանցից 37 տաքսոնների ժամանակակից համարժեք տեսակներն այսօր չեն աճում ՀՀ տարածքում, իսկ մոտ 160 տաքսոն առաջին անգամ են նկարագրվել Հայաստանի համար: Որոտան գետի ավազանի, ինչպես նաև տարածաշրջանի ժամանակակից ֆլորան բավականին նման են

վաղ պլեյստոցենյան ֆլորային: Վաղ պլեյստոցենում ևս հատակ արտահայտվել է բուսականության ուղղաձիգ գոտիականությունը, սակայն, ի տարբերություն ժամանակակից բուսականության, լայնատերև անտառային բուսականության սահմաններն ավելի բարձր են եղել, և անտառներն ավելի մեծ մակերես են զբաղեցրել, քան այսօր: Վաղ պլեյստոցենյան և ժամանակակից կլիմայական պայմանների համեմատությամբ բացահայտվել է, որ Որոտանի ավազանի միջին հոսանքների ներկա կլիմայական պարամետրերը համապատասխանում են Սիսիանի դիատոմիտային սովարաշերտերի բրածո բուսականությամբ բացահայտված վաղ պլեյստոցենի պալեոկլիմայի միջին տարեկան ամենացուրտ և համեմատաբար խոնավ պարամետրերին:

Ժամանակակից անթրոպոգենեզի տարածաժամանակային առանձնահատկությունների, մակարդակների և ինտենսիվության գնահատման համար շարունակվել են երկրաքիմիական ֆոնային պարունակությունների և տարրերի բնական ասոցիացիաների բացահայտման միջգիտակարգային հետազոտությունները: Երևանի օրինակով կատարվել է հրաբխային ապարների վրա ձևավորված հողերում քիմիական տարրերի (Fe, Ti, Mn, Co, V, Ba, Cr, Sr, Rb, Zr, Cu, Pb, Zn) ֆոնային երկրաքիմիական ասոցիացիաների ուսումնասիրություն: Ժամանակակից վիճակագրական մեթոդների կիրառմամբ հաստատվել է ուսումնասիրված տարրերի երկու երկրաքիմիական բնական ասոցիացիա՝ Fe-Co-Ti-V-Mn-Zr-Cr-Ba և Cu-Pb-Zn-Rb-Sr: Քաղաքի տարածքի հողերում բազմաֆրակտալ վերլուծության և Ֆուրյեի տրանսֆորմացիայի վրա հիմնված սպեկտրալ տարանջատման մեթոդների համակցմամբ ուրվագծվել են բնական ռադիոնուկլիդների՝ U-238, Th-232, K-40, ֆոնային և մարդածին կարգաշեղումներով տարածքները: Նմանատիպ ֆոնային միջգիտակարգային հետազոտություններն ունեն լուրջ կիրառական նշանակություն շրջակա միջավայրի մոնիթորինգային գիտահեն համակարգի կայացման համար (դեկ.՝ կ.գ.թ. Գ.Տեփանոսյան, կ.գ.թ. Օ.Բեյլյան):

Առաջին անգամ ուսումնասիրվել է ցիանոբակտերիալ ակինետների դերը Սևանա լճի էկոհամակարգում: Պարզվել է, որ հատակային նստվածքներում ձմեռող այս ցիանոբակտերիաները կարող են նորից զարգանալ և համապատասխան պայմաններում վերադառնալ ջրային շերտ: Կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ Մեծ Սևանի հատակային նստվածքներում ակինետները նկատելիորեն շատ են Փոքր Սևանի համեմատ: Լաբորատոր փորձերի արդյունքում պարզվել է, որ ակինետների զարգացումը ճնշվում է լույսի բացակայության, ինչպես նաև կենսածին նյութերի ցածր կոնցենտրացիաների պայմաններում: Լուսավորության դեպքում լճի 1 գ հատակային նստվածքում առկա ակինետներից կարող է զարգանալ մինչև 21000 ցիանոբակտերիալ (*Dolichospermum* և *Aphanizomenon*) բջիջ (դեկ.՝ կ.գ.թ.Գ.Գևորգյան):

Նախագծվել է Սևանա լճի ջուրը ցիանոբակտերիաներից մաքրելու մոդելային սարք:

Ջրակենսաբանական մեթոդներով գնահատվել է Աղստև գետի և նրա վտակների ջրերի որակը: Բացահայտվել է, որ գետը հիմնականում աղտոտվում է «Դիլիջան» ազգային պարկի տարածքում, սակայն նոսրանալով վտակների համեմատաբար մաքուր ջրերի, ինչպես նաև ինքնամաքման հաշվին՝ այն թափվում է Կուր գետ ջրի համեմատաբար «լավ» որակով (դեկ.՝ կ.գ.թ. Բ.Գաբրիելյան):

Որոշվել է «Սևան» ազգային պարկի, «Արտանիշ» արգելոցի և Տավուշի մարզի «Գետիկի» արգելոցի ողնաշարավոր կենդանիների տեսակային կազմը, նշվել է ինչպես լայն տարածված, այնպես էլ հազվագյուտ 233 տեսակ: Նկատվել է կենդանիների նշված խմբերի և հատկապես թռչունների տեսակային կազմի և թվաքանակի զգալի փոփոխություն (դեկ.՝ կ.գ.թ. Մ.Ղասաբյան):

Գրանցվել է միջատների շուրջ 700 տեսակ, այդ թվում՝ գիտության համար 2, Հայաստանի ֆաունայի համար 7, Տավուշի մարզի համար 14 նոր տեսակ (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Քալաշյան):

Հայտնաբերվել է Հայաստանի ֆաունայի համար Tydeidae ընտանիքի բույսերի վնասատու տզերի 4 նոր տեսակ (ղեկ.՝ կ.գ.դ. Ս.Դիլբարյան):

ԴՆԹ-ի սեկվենավորման արդյունքներով առաջին անգամ կառուցվել են բզեզների *Dorcadion* ցեղի ներկայացուցիչների ֆիլոգենետիկ ծառերը, 6 տեսակի համար առաջին անգամ ուսումնասիրվել են նրանց կարիոտիպերը (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Կարապյան):

Մշակվել և պաշտոնապես գրանցվել է սննդի «Նարարգին» կենսաբանորեն ակտիվ հավելումը: Պատրաստուկը պարունակում է կենդանի լիոֆիլիզացված կաթնաթթվային բակտերիաներ՝ *Lactobacillus acidophilus* MDC 9602 և *L. ramnosus* MDC 9631՝ արգինին ամինաթթվի արտադրիչ: «Նարարգինը» կոմպլեքս պատրաստուկ է, որը միաժամանակ խթանում է աղեստամոքսային համակարգի և ենթաստամոքսային գեղձի ֆունկցիաներն առողջ և 2-րդ տիպի շաքարախտով հիվանդ մարդկանց մոտ՝ ապահովելով ինսուլինի և գլյուկագոնի արտազատումը, նպաստում է շաքարի նվազեցմանն արյան մեջ (ղեկ.՝ կ.գ.թ. Ֆ.Տիրունի):

E. coli HK (pargJ-T) (կրում է *Thermotoga neapolitana* թերմոֆիլ մանրէի *argJ* գենը) ռեկոմբինանտ շտամ-արտադրիչի արգինինի կենսասինթեզի մակարդակի բարձրացման նպատակով ստացվել են մուտանտներ, որոնք կայուն են պիրիմիդինների տարբեր նմանակների նկատմամբ, ինչպես նաև չեն ենթարկում արգինինը կատաբոլիզմի: Ցույց է տրվել, որ ամենաբարձր կենսասինթետիկ ակտիվություն են ցուցաբերում 5-ֆտորուրացիլի (5Fur) նկատմամբ կայուն մուտանտները, որոնք սինթեզում են մինչև 22 գ/լ L-արգինին (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Հովսեփյան):

Ցույց է տրվել, որ սինթետիկ միացությունները (2R,3S)-հիդրոքսիլեյցինի և N-ֆորմիլ-մեթիոնիլ-(2R,3S)-հիդրոքսիլեյցինի 1 մՄ կոնցենտրացիայի դեպքում ճնշում են *Pseudomonas* սեռի շտամների պրոտեոլիտիկ ակտիվությունը (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Հովհաննիսյան):

Որոշվել է *Brevibacterium flavum* ATCC 14067 վայրի տեսակի շտամի աճն արգելակող L-տրիպտոֆանի նմանակի՝ m-ֆտորֆենիլալինի նվազագույն կոնցենտրացիան: Քիմիական մուտագենեզի և գենետիկասելեկցիայի մեթոդներով *Br. flavum* 14067 շտամի հիման վրա ստացվել են m-ֆտորֆենիլալանինի նկատմամբ կայուն մուտանտներ (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Ավետիսովա):

Ուսումնասիրվել են Խինդոդնի և Արենի սորտերի խաղողի կորիզներից լուծամզման մեթոդով ստացված բնական յուղերի օրգանոլեպտիկ, ֆիզիկաքիմիական հատկությունները և քիմիական բաղադրությունը: Որոշվել են նպատակային արտադրանքի օպտիմալ ելքերը (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Դադայան):

Սինթեզվել են պոտենցիալ կենսաբանորեն ակտիվ 9-ֆլուրենիլմեթոքսիկարբոնիլային խմբով պաշտպանված նոր ոչ սպիտակուցային ամինաթթուներ ու դրանց դիպեպտիդները ակտիվացված էսթերների եղանակի կիրառմամբ (ղեկ.՝ ք.գ.թ. Զ.Մարդիյան):

Մշակվել և արտոնագրվել է նատրիումի նուկլեինատի ստացման կատարելագործված եղանակ, որն օրգանիզմի իմունիտետի բարձրացման համար լայնորեն օգտագործվում է բժշկության ու անասնապահության մեջ (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան):

Երկրորդային հումքից՝ անհատական համակարգիչների ոչ կոնդիցիոն տպված պլատաններից, արժեքավոր մետաղների տարրալուծման նպատակով կատարվել է երկաթ օքսիդացնող մանրէների համեմատական բնութագրումը: Ցույց է տրվել, որ պղնձի կորզման աստիճանը կախված է պուլպի խտությունից և սուլֆիդային ու օքսիդային հանքաքարերի հարաբերակցությունից համապատասխանաբար 10-ը 14-ի հաշվարկով (ղեկ.՝ կ.գ.դ. Ն.Վարդանյան):

Ցույց է տրվել, որ գետնանուշի և սոյայի պալարաբակտերիաների համատեղ կիրառումը բարձրացնում է գետնանուշի բերքատվությունը 33.9-34.5%-ով (ղեկ.՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան):

«Մանրէների ավանդադրման կենտրոն» հիմնարկը լիիրավ անդամի իրավունքով ընդունվել է Մանրէների կուլտուրաների հավաքածուների եվրոպական կազմակերպություն (ECCO, <http://www.eccosite.org>): Հրատարակվել է մանրէների կուլտուրաների կատալոգի I հատորը՝ «Աերոբ սպորավոր բակտերիաներ» (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Բագիյան):

Արմատամերձ միջավայրում «Aegis» միկրոհատիկավորված միկոորիզայի (*Glomus intraradices* և *Glomus mosseae*) կիրառումը սննդալուծություն, ֆոսֆորի պարունակության 92%-ով նվազեցման պայմաններում, ստուգիչի համեմատ, նպաստել է արևելյան կենսածառի (*Biota orientalis* L.) բարձրության և տարեկան աճի ավելացմանը համապատասխանաբար 1.6 և 1.7 անգամ: Ինոկուլացված և ստուգիչ սերմնաբուսակների տերևներում ֆոտոսինթեզող գունանյութերի կուտակման էական տարբերություն չի արձանագրվել: Մանրադիտակային մեթոդի կիրառմամբ ինոկուլացված սերմնաբուսակների արմատներում հաստատվել է միկոորիզային սնկերի գաղութացման առկայությունը հիդրոպոնիկայում:

Առաջին անգամ հիդրոպոնիկ մշակույթ են ներմուծվել նրբածաղիկ ռեհանը (*Ocimum tenuiflorum* L.) և աշվագանդան (*Withania somnifera* L.): Հիդրոպոնիկ մշակույթում նրբածաղիկ ռեհանի դեղահումքը թարմ քաշով 2.4 անգամ գերազանցել է հողային մշակույթին: Հիդրոպոնիկական բույսերում դիտվել է գումարային ֆլավոնոիդների և C վիտամինի 1.2, ֆենոլային թթուների 1.3 և β-կարոտինի 1.1 անգամ բարձր պարունակություն հողային բույսերի համեմատ: Սակայն վերջիններս աչքի են ընկել էքստրակտիվ նյութերի 30%-ով ավելի բարձր պարունակությամբ:

In vitro մշակույթում առաջին անգամ ուսումնասիրվել է իսկական ունաբի (*Ziziphus jujuba* Mill.) տարբեր էքսպլանտների (մերիսթեմ, տերև, ցողուն) կալուսագեն և մորֆոգեն հնարավորությունը: Մուրասիգե Սկուգի սննդամիջավայրում ԻԲԹ (3.0-3.5մգ/լ) և ԲԱՊ (2.0-2.5մգ/լ) ֆիտոհորմոնների խտության համադրումը մերիսթեմային ծագմամբ կալուսային հյուսվածքներում խթանել է օրգանոգենեզը միջինում 2 ադվենտիվ ընձյուղի գոյացմամբ:

Հայաստան ներմուծված գեղազարդ ծառատեսակ ճապոնական սոֆորան (*Styphnolobium japonicum* L.) աչքի է ընկել որպես ռադիոնուկլիդների բնական կուտակիչ, որի տերևները գումարային β-ռադիոակտիվությամբ գերազանցել են մշտադալար նոճու (*Cupressus sempervirens* L.), վիրգինյան գիհու (*Juniperus virginiana* L.), կաղնու (*Quercus* L.) տերևներին համապատասխանաբար 1.1, 1.5, 2.1 անգամ (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Մայրապետյան):

Բժշկական կենսաբանություն: Պրոլինով հարուստ պեպտիդ գալարմինի կենսաբանական ակտիվության մեխանիզմների բացահայտման նպատակով հետազոտվել է մարդու միտոգեններով ակտիվացող պրոտեին կինազ p38-ի, դրա ֆոսֆորիլացված ձևի, ինչպես նաև ֆերմենտն ակտիվացնող և ինակտիվացնող մուտանտ ձևերի հետ գալարմինի փոխազդեցության էներգիան AutoDock Vina ծրագրային փաթեթի օգնությամբ: Օգտագործվել են մարդու միտոգեններով ակտիվացող պրոտեին կինազ p38-ի Y323F ինակտիվացնող մուտացիայով տարբերակը (pdb 3OEF) և Y323T, Y323Q, Y323R ակտիվացնող մուտացիաներով (համապատասխանաբար pdb 3OD6, pdb 3ODY, pdb 3ODZ) տարբերակները: Միտոգենով ակտիվացող պրոտեին կինազ p38 ռեցեպտորների հետ հետազոտվող պրոլինով հարուստ պեպտիդի դիտվող ուժեղ փոխազդեցությունները վկայում են նշված ռեցեպտորների մասնակցությամբ բորբոքային պրոցեսներում գալարմինի հնարավոր բարձր կենսաբանական ակտիվության մասին (ղեկ.՝ կ.գ.դ. Ս.Չախյան):

Դիպեպտիդիլպեպտիդազ (ԴՊՊIV), ադենոզինդեամինազ (ԱԴԱ), գլուտամինազ ֆերմենտների ակտիվությունների գնահատումն ու կարգավորումը կարևոր և հեռանկարային է մի շարք հիվանդությունների ախտորոշման, բուժման/կանխարգելման համար: Աուտոիմուն հիվանդություններին բնորոշ սպիտակուցային ցինտրովինացում է գրանցվել 1-ին տիպի շաքարախտով հիվանդների արյան պլազմայում, որտեղ գլյուկոզին զուգահեռ աճել են նաև ԱԴԱ2-ի և ԴՊՊIV-ի ակտիվությունները: Արյան պլազմայում ԱԴԱ1-ի և ԱԴԱ2-ի ակտիվության որոշումը կարևոր է 1-ին տիպի շաքարախտով երիտասարդ հիվանդների գլխկեմիկ կարգավիճակի կանխատեսման համար: Աուտոիմուն բնույթի ռևմատոիդ արթրիտով հիվանդների սինովիալ հեղուկներում ԱԴԱ1-ի կուտակումը հետևանք է ԴՊՊIV-ի հետ ցինտրովինացված ԱԴԱ1-ի կապի 5 անգամ նվազման, որը ԱԴԱ-ԴՊՊIV կոմպլեքսագոյացման ցուցանիշ է: Այն կարևոր է իմունային համակարգի գործունեության համար (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Անտոնյան):

Ինսուլինից հետո վերականգնողական գործընթացները խթանելու նպատակով հետազոտվել է ֆոսֆոռիբոզիլ պիրոֆոսֆատ-1-սինթազի էֆեկտորների ազդեցությունն այս գործընթացում: Հետազոտվել է նաև պրոտեինկինազ C-ի մասնակցությունը մակարդուկի գոյացման ժամանակ (ղեկ.՝ կ.գ.թ. Ք.Դանիելյան):

Ստացվել են ֆոտոսենսիբիլիզատորներ կատիոնային պորֆիրինների կոմպոզիտներ տրանսֆերինի ու ցերուլոպլազմինի հետ, հետազոտվել է դրանց արդյունավետությունը քաղցկեղային բջիջների դեմ պայքարում *in vitro*: Այս երկու սպիտակուցները կարող են ակտիվորեն մասնակցել դեպի ուռուցք պորֆիրինների փոխադրմանը: Կատիոնային պորֆիրինների և այս սպիտակուցների կոմպլեքսները կարող են առաջարկվել ուռուցքների ֆոտոդինամիկ թերապիայում օգտագործելու համար (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Գյուլիսանյան):

Առաջին անգամ Հայաստանում իրականացվել է 2020-21թթ. ՀՀ-ում շրջանառվող նոր կորոնավիրուսի տարբերակների ամբողջական գենոմի սեքվենավորում և մոլեկուլա-գենետիկական մոնիթորինգ նանոպորային սեքվենավորման կիրառմամբ: Հետազոտության տվյալներով 2021թ. մարտին Հայաստան է ներթափանցել SARS CoV-2-ի «ալֆա» տարբերակը, որը հունիսից փոխարինվել է ավելի վտանգավոր «դելտա» տարբերակով: Սեքվենավորման հետազոտությունները հաստատել են «դելտա» շտամում առկա վտանգավոր մուտացիաները, որոնցով պայմանավորված են բարձր վարակելիությունը և պատվաստանյութերի արդյունավետության նվազումը: Այս հետազոտությունների ամենամյա իրականացումը թույլ է տվել որոշել Հայաստանում կորոնավիրուսի տարբերակների տեղակալման դինամիկան, գնահատել մուտացիաների ազդեցությունը ՊՇՌ թեստերի ճշտության վրա: Ստացված տվյալները կանոնավոր տրամադրվել են ՀՀ առողջապահության նախարարությանը (ղեկ.՝ կ.գ.դ. Ա.Առաքելյան):

Քրոնիկ լիմֆոցիտար լեյկեմիայի (ՔԼԼ) ժամանակ բացահայտվել է սերտ կապ միջանկյալ մոնոցիտների քանակի և առաջնային ու երկրորդային բուժման նշանակման միջև: Արդյունքները վկայում են, որ միջանկյալ մոնոցիտների 5.4 տոկոսային շեմը կանխագուշակիչ չափանիշ է ՔԼԼ հիվանդների բուժումը սկսելու ժամկետների համար (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Մանուկյան):

Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի և Գերմանիայի Խաղողի սելեկցիայի ինստիտուտի համատեղ հետազոտության արդյունքում հայտնաբերվել են Վայոց ձորի մարզի խաղողի տեղածին վտանգված սորտեր և վայրի խաղողի գենետիկական ռեսուրսներ, իրականացվել է 300 նմուշի մոլեկուլա-գենետիկական նույնականացում և փաստագրում: Խաղողի ծնողական ձևերի գենետիկական վերլուծությունը բացահայտել է ենթադրյալ տեղածին հնագույն սորտեր: Նույնականացված սորտերի ամփոփ բնութագրերը ներբեռնվել են ՀՀ-ի և Եվրոպայի Vitis տվյալների շտեմարան (www.vitis.am, www.vivc.de) (ղեկ.՝ կ.գ.թ. Ք.Մարգարյան):

Ստացվել է անդրկովկասյան գյուրգայի թույնի դեմ հակաթույն խոյի իմունիզացիայի արդյունքում, ինչպես նաև ստացված շիճուկի արդյունավետության գնահատում մի շարք *in vivo* և *in vitro* փորձարարական մոտեցումների միջոցով: Ստուգվել են ստացված հակաթույնի պարասպեցիֆիկությունը և խաչաձև ռեակտիվությունը թունաբանական առումով կարևոր երկրորդ հայաստանյան *Montivipera raddei* օձատեսակի, այն է՝ Հայկական իժի թույնի հանդեպ: Ստուգվել է INOSERP Europe (Inosan, Ֆրանսիա) փորձարարական հակաթույնի ակտիվությունը Անդրկովկասյան գյուրգայի և Հայկական իժի թույնի դեմ: Ուսումնասիրվել է *Macrovipera lebetina obtusa* օձի թույնից առանձնացված օբտուսատին ղեզինտեգրինի և A2 ֆոսֆոլիպազների ազդեցությունն ուռուցքային բջիջների տարբեր գծերի աճի և կենսունակության վրա: Շարունակվել են մարդու արյան էրիթրոցիտների ստվերների թաղանթների վրա իժի թույնի թաղանթատրոպ ազդեցության բացահայտման հետազոտությունները (ղեկ՝ կ.գ.դ. Ն.Այվազյան):

2-րդ տիպի շաքարախտի բնորոշ առանձնահատկությունները թելադրում են բազմաֆունկցիոնալ թերապիայի անհրաժեշտություն: Ստացված տվյալները հաստատել են հակադիաբետիկ դեղաբույսերի հավաքածու «Դիաբեֆիտ» սինթետիկ ազդեցության հայեցակարգը, որը հակահիպերգլիկեմիկ ակտիվության հետ մեկտեղ կարող է նշանակալի ազդեցություն ունենալ ացետիլխոլինով միջնորդավորված դիաբետիկ դեմենցիայի և էնդոթելիոնով միջնորդավորված դիաբետիկ անգիոպաթիայի կանխարգելման գործընթացներում: Էթնոբուսաբանական ծագման «Դիաբեֆիտը» կարող է լինել պոլիմորբիդ բարդությունների ծախսարդյունավետ թերապևտիկ միջոց (ղեկ՝ կ.գ.դ. Վ.Չավուշյան-Պապյան):

ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քիմիա: 2-Ֆենիլ-4-(4-պրոպոքսիֆենիլ)-6-(π -տոլիլ)պիրիմիդինի, (E)-N-բենզիլիդեն-և 2-բենզիլիդենանիլինների փոխազդեցության արդյունքում սինթեզվել են (E)-4-(4-(4-ալիլստիրիլ)ֆենիլ)-2ֆենիլ-6-(4-պրոպոքսիֆենիլ)պիրիմիդիններ:

Սինթեզվել են նաև 1-(5-մեթոքսի-2-((4-մեթիլ-2-ֆենիլ-5,6բենզո[4',5']իմիդազո-[2',1':6,1]-պիրիդո[2,3-d]պիրիմիդին-6-իլ)բենզիլ)ուրացիլ - և 5-ֆտորուրացիլ, վերջինս, իբրև նախադեղային տրանսպորտային ձև, ակտիվ հակաուռուցքային պրեպարատի 5-ֆտորուրացիլի համար է: N-տեղակալված իզիատինի և ակտիվ մեթիլենային խումբ պարունակող միացությունների և արոմատիկ ու հետերոարոմատիկ կետոնների եռաբաղադրիչ միառեակտոր կոնդենսացման արդյունքում սինթեզվել են նոր 3 N-տեղակալված սպիրոցիկլիկ ինդոլին-2-ոններ (ղեկ՝ ք.գ.դ. Ա.Հարությունյան):

Անցումային մետաղների (մոլիբդեն, վոլֆրամ) կարբիդների նանոմասնիկների մասնակի օքսիդացումից ստացվել են այդ մետաղների նանոօքսիդներ, որոնք ցուցաբերել են բարձր կատալիտիկ ակտիվություն ծծումբօրգանական միացությունների օքսիդացման ռեակցիաներում: Այդպիսի կատալիզատորները հեռանկարային են դիզելային վառելիքի ծծմբազրկման համար (ղեկ՝ ք.գ.թ. Ռ.Մնացականյան):

Առաջին անգամ հիդրիդային ցիկլի (ՀՑ) եղանակով սինթեզվել են միաֆազ Ti_2AlC , Ti_3AlC_2 և Ti_2AlN բաղադրությամբ MAX-ֆազեր (միացություններ, որոնք համատեղում են ինչպես կերամիկական, այնպես էլ մետաղական նյութերի հատկությունները)՝ որպես ելանյութներ օգտագործելով բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի (ԲԻՍ) եղանակով ստացված տիտանի տարբեր բյուրեղացանցերով կարբոհիդրիդներ՝ $TiC_{0.5}H_{0.22\pm0.73}$, $TiC_{0.67}H_{0.31-0.39}$, $TiC_{0.45}H_{1.07\pm1.17}$ և հիդրիդնիտրիդներ՝ $TiN_{0.15-0.19}H_{1.5}$: Բացահայտվել է, որ ՀՑ

եղանակով սինթեզված MAX-ֆազերի ձևավորումն ընթանում է պինդ ֆազային մեխանիզմով (ղեկ.՝ տ.գ.դ. Ս.Դուրխանյան):

Հայաստանի ֆոսֆոր պարունակող կենսածին դիատոմային ապարներից մշակվել է պարարտանյութերի ստացման տեխնոլոգիա: Պարարտանյութերի վեգետատիվ փորձարկումները կատարվել են Հայաստանի պետական ագրարային համալսարանում: Հայաստանի սերպենտինիտներից մշակվել են նաև մագնեզիում և ֆոսֆոր պարունակող պարարտանյութեր: Կատարված նախնական վեգետատիվ փորձարկումների արդյունքները դրական են և հեռանկարային (ղեկ.՝ տ.գ.թ. Կ.Գրիգորյան):

Ուսումնասիրվել է $\text{MeF}_2\text{-MgO-Al}_2\text{O}_3\text{-TiO}_2\text{-SiO}_2$ համակարգի հիմքով արծաթապատված մակերևույթներով ապակեբյուրեղների ու ապակիների քիմիական բաղադրության և հատկությունների փոփոխման հնարավորությունն արծաթի մոլեկուլների դիֆուզիայի միջոցով: Պարզվել է, որ դիֆուզիայի արդյունքում դիտվում են սպեկտրի ուլտրամանուշակագույն տիրույթում կլանման աճ և փոքր մոլեկուլների կլանման գոտիներ՝ կլաստերներ Ag_n ($n \leq 5$): Կլաստերների սպեկտրներն ունեն համընկնող կլանման գոտիներ, որոնք գտնվում են սպեկտրի լայն տիրույթում՝ 250-ից մինչև 410 նմ, և համապատասխան լյումինեսցենտային գոտիների տիրույթ՝ 380-610 նմ: Լինելով ֆոտոակտիվ տարր՝ արծաթապատված մակերևույթով ապակին, որպես զգայուն տվիչ, կիրառելի է ուլտրամանուշակագույն սպեկտրի լայն տիրույթում (ղեկ.՝ տ.գ.դ. Ն.Կնյազյան):

Երկրի մասին գիտություններ: Ամփոփվել և հրատարակվել են Սյունիքի և Վարդենիսի բարձրավանդակների պլիոցենի և չորրորդական, այդ թվում՝ հոլոցենի հասակի տասնութ հրաբխային ապարների նմուշների $^{40}\text{Ar}/^{39}\text{Ar}$ իզոտոպային հասակագրման արդյունքները: Առաջին անգամ ստացվել է նշված բարձրավանդակներում առավելապես պոլիգեն հրաբխականության մոնոգենի անցման հասակը: Սյունիքի բարձրավանդակի համար նշված անցումը գնահատվել է 1 Ma, իսկ Վարդենիսի բարձրավանդակի սահմաններում այն տեղի է ունեցել ավելի վաղ, քանի որ 1.4 Ma հասակի հրաբխականությունն արդեն մոնոգեն է: Պոլիգեն հրաբխականության անցումը մոնոգենի պայմանավորված է տարբեր գործոնների համադրմամբ, ներառյալ տարածաշրջանում տեկտոնական ընդարձակման աստիճանի ավելացումը՝ կապված Փամբակ-Սևան-Սյունիքի խախտման ակտիվության և ընդարձակման արդյունքում լոկալ կառույցների ձևավորման, բարենպաստ մոնոգեն հրաբխային պլատոների առաջացման, մագմագենեթացիայի ծավալների համեմատական կրճատման հետ (ղեկ.՝ ե.գ.դ. Խ.Մելիքսեթյան):

Հետազոտությունների ժամանակակից մեթոդների կիրառման արդյունքում Հայաստանի մի շարք տարածքների ածուխների, այրվող թերթաքարերի և բիտումաքեր կրաքարերի երևակումներում հայտնաբերվել են հազվագյուտ և ազնիվ մետաղների բարձր, հետաքրքրություն ներկայացնող պարունակություններ (ղեկ.՝ ե.գ.թ. Ա.Հովհաննիսյան):

Արփիի (Էրտիչ) և Ջրովանքի կտրվածքների նստվածքներից հայտնաբերվել են ստորին ֆամենի հասակի 6 ռինխոնելիդ և 1 աթիրիդ բրախիոպոդներ: Ռինխոնելիդներից չորսը և միակ աթիրիդը (*Crinisarina pseudoglobularis* n. sp) առաջին անգամ են գտնվել Հայաստանում, այդ թվում՝ *Greira transcaucasica* Erlanger, 1993, որը գիտությանը հայտնի ծակոտկեն խեցիով ամենահին տեսակն է: Առաջին անգամ բրախիոպոդների խեցու վրա հայտնաբերվել են էկտոպարազիտներ: Քննարկվել են Հայաստանից հայտնաբերված բրախիոպոդների հնակենսաաշխարհագրական առանձնահատկություններն ու ֆրան-ֆամեն ճգնաժամից հետո բրախիոպոդների կենսաբազմազանության վերականգնման տեմպերը, ապացուցվել է *Tornatospirifer armenicus* (Abrahamyan, 1974) տեսակի առկայությունը, որը հերքվել էր ադրբեջանցիների կողմից: Հաստատվել է, որ Նախիջևանի Գյումուշլուի կտրվածքում հետազոտողների՝ ֆամենի նստվածքներում գտած *caucasia* տեսակը նոր չէ, այլ նույն *armenicus*-ն է (ղեկ.՝ ե.գ.թ. Ա.Գրիգորյան):

Հայաստանի պալեոգոյան նստվածքներում հայտնաբերվել են միջին և ուշ դևոնի տրիլոբիտներ՝ ներկայացված ակնհայտ պրոետիդային պիզիդիումով և մի քանի ֆակոպիդներով: Կատարվել է նրանց պալեոէկոլոգիական գնահատում և հնակենսաշխարհագրական տեղաբաշխման վերլուծություն (ղեկ.՝ Ե.Գ.Թ. Ա.Գրիգորյան):

Կատարվել են ուսումնասիրություններ Արագածի հրաբխային լեռնազանգվածի տարածքում, մասնավորապես դրա արևելյան լանջերի տեղամասերում: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում որոշվել է կորելացիոն կապը տարածքի ժամանակակից և հնաեոկենոզոիկի միջև: Ռեգիոնալ ջրամերժ ապարների ռելիեֆի քարտեզագրման արդյունքում որոշվել է տարածքի ստորերկրյա ջրերի բաշխվածությունը: Առաջարկվել են հնագետահունների և լոկալ ջրավազանների ստորերկրյա ջրերի հայտնաբերման արդյունավետ տեղամասերը (ղեկ.՝ Ե.Գ.Դ. Ռ.Մինասյան):

Իրականացվել է 2021թ. տեղի ունեցած Շորժայի, Երևանի և Ջավախքի երկրաշարժերի տարածաժամանակաինքնգետիկ բաշխվածության մանրամասն վերլուծություն: Քանակապես գնահատվել են երկրաշարժի օջախի խզումնագոյացման կինեմատիկ և դինամիկ պարամետրերը, որոշվել են օջախի ճառագայթման սպեկտրալ բնութագրիչները: Օջախի մեխանիզմի լուծումների, սեյսմիկ մոմենտի թենզորային վերլուծության և լարվածային վիճակը բնութագրող Լոդե-Նոդայի գործակցի տվյալներով ստեղծվել են երկրաբանատեկտոնական պայմաններն ադեկվատ արտացոլող վերոնշյալ երկրաշարժերի օջախների իրատեսական երկրադինամիկ մոդելներ, ստացվել է օջախային գոտու սեյսմագենեզի ճշգրտված պատկեր (ղեկ.՝ Ֆ.-մ.Գ.Թ. Է.Գյոդակյան):

Նախագծվել, պատրաստվել և փորձարկվել է նոր սերնդի ճոճանակային սեյսմիկ տվիչ՝ երկրաշարժների հետևանքով առաջացած գրունտների ուղղաձիգ տատանումները գրանցելու նպատակով (ղեկ.՝ Ա.Գասպարյան):

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատմագիտություն: «Հայաստանը և հայությունը նորագույն ժամանակաշրջանում: Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ պ.գ.դ. Կ.Խաչատրյան) անցկերենով հրատարակվել է 1920-1930-ական թվականներին քեմալական Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին բռնակցված հայկական տարածքների հիմնախնդրին վերաբերող կոլեկտիվ աշխատություն, որով օտար ընթերցողը հնարավորություն է ունենում ծանոթանալ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության սահմանների ձևավորման ընթացքին: Հիմնավորվում է այն փաստը, որ մինչև 2020թ. թուրք-ադրբեջանական ագրեսիան Հայաստանի և Արցախի հանրապետությունների կազմում գտնվող մի շարք տարածքներ օտարվել են հոգուտ Խորհրդային Ադրբեջանի և Թուրքիայի: Այն արդիական նշանակություն ունի ինչպես պատմագիտական, այնպես էլ քաղաքագիտական տեսանկյունից:

Ծրագրի շրջանակում ներկայացվել է նաև իրար հետ սերտորեն կապված Մոսկվայի և Կարսի 1921թ. պայմանագրերի կնքման պամությունը: Պայմանագրեր, որոնք խորը հետք են թողել Հայաստանի և հայ ժողովրդի պատմական և քաղաքական ճակատագրի վրա: Ներկայացվել են համանուն կոնֆերանսների դիվանագիտական նախապատրաստությունը, ընթացքը և ստորագրված պայմանագրերի տեքստերը հավելվածով: Իրականացվել է պայմանագրերի հողվածների պատմաքննական և համեմատական վերլուծություն: Հատուկ ուշադրություն է դարձվել հայ-թուրքական տարածքային-սահմանային խնդիրներին: Փորձ է արվել դիտարկել այդ պայմանագրերի օրինականությունը, դրանց համապատասխանությունը միջազգային պայմանագրային իրավունքին, համադրել հայկական շահերը

նոտահարող այս երկու պայմանագրերի կնքման հանգամանքները, ինչպես նաև դրանք համեմատել ժամանակակից իրողությունների հետ:

«Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը: Միջազգային հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Արևելյան Ասիայում, Հարավային Կովկասում և Հայաստանի Հանրապետությունը» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ պ.գ.թ. Ռ.Ղազարյան) քննարկվել են Արցախ և Ուտիք նահանգների, Բուն Աղվանքի վաղ շրջանից մինչև զարգացած միջնադարի ժամանակաշրջանն ընդգրկող պատմությունը, դիտարկվել են Հայկական լեռնաշխարհում նախամաշտոցյան գրերի պատմությունը, արաբատառ վավերագրերը: Հատուկ ուշադրության առարկա են դարձել քննարկված հիմնահարցերի գրավոր և վիմագիր սկզբնաղբյուրները, որոնց մեծ մասը հրատարակվել է գիտաքննական բնագրերով: Ծրագրի շրջանակում ուսումնասիրվել են նաև արդիական կարևոր նշանակություն ունեցող մի շարք այլ հիմնախնդիրներ՝ Թուրքիայում աշխարհաքաղաքական մտքի զարգացման միտումները, Արցախյան առաջին և 44-օրյա պատերազմներում Թուրքիայի ռազմաքաղաքական վարքագծի, Իսլամական աշխարհի՝ Ադրբեջանի նկատմամբ որդեգրած քաղաքականության հարցերը:

«Բռնության և պատերազմի» մարդաբանական ուսումնասիրությունների ոլորտում ավարտին են հասցվել մի շարք հետազոտություններ, որոնցում առաջ քաշված դրույթները տարածաշրջանի և հայաստանյան իրականության մասին ներկայումս տիրապետող պատկերացումների նորովի արժևորման ու վերաարժևորման հնարավորություններ են ստեղծում: Արխիվային, դաշտային, հայկական, ադրբեջանական, ռուսական և անգլալեզու տպագիր աղբյուրների նյութերի համակցմամբ առաջին անգամ վերլուծվել են 1992թ. փետրվարի 26-ին հայկական ռազմական ուժերի կողմից Արցախի Խոջալու բնակավայրի գրավման և դրան հաջորդած օրերին բնակավայրի քաղաքացիական բնակչության ճակատագրի մանրամասները: Հստակ ներկայացվել է Խոջալուի քաղաքացիական բնակչությանն Ադրբեջանի ժողովրդական ճակատի ռազմական խմբավորումների կողմից հանցագործ խաբեությամբ զինված բախումների մեջ ներքաշելու ծրագիրը, ինչի հետևանքով քաղաքացիական բնակչության զգալի մասը բնակավայրը լքելուց հետո մեծ կորուստներ և զոհեր է ունեցել նահանջի ճանապարհին: Բացահայտվել է Խոջալու բնակավայրը գրավելու և «բնակչության նկատմամբ ցեղասպանական գործողություններ իրականացնելու» մասին ադրբեջանաթուրքական տարատեսակ՝ կեղծ գիտական, դիվանագիտական, մշակութային և այլ քարոզչական միջոցներով 28 տարիների ընթացքում ահռելի քանակով և լայնորեն տիրաժավորված կեղծիքը (ղեկ.՝ պ.գ.թ. Հ.Խառատյան):

Կարևոր արդյունք է նաև սիրիահայության ներկայիս իրավիճակի վերլուծությանը նվիրված հետազոտությունը, որը կատարվել է Մեսսինայի համալսարանի պրոֆեսոր Մարչելլո Մոլլիկայի համահեղինակությամբ: Քննարկվել է երեք սիրիական քաղաքների հայ բնակչության վիճակը Սիրայում սանձազերծված պատերազմի պայմաններում: Հանգամանորեն վեր է հանվել թուրքական գործոնի կործանիչ դերը ոչ միայն ցեղասպանության հիշողությամբ ապրող հայ բնակչության նկատմամբ, այլև ցույց է տրվել, որ այն սպառնալիք է ողջ Եվրոպայի և աշխարհի համար (ղեկ.՝ պ.գ.թ. Ա.Հակոբյան):

Կարևոր արդյունքներ են գրանցվել նաև հայոց ցեղասպանության և հոլոքոստի համեմատական վերլուծությունների ոլորտում: Ներկայացվել են Հոլոքոստի հիշողության պահպանությանն ուղղված առանձնահատուկ քայլերը (Հիշողության օրվա անվանման մեջ պայքարի թեմայի նշումը, զոհերի տվյալներով շտեմարանի կազմումը, վերապրողների պատմությունների աուդիո և վիդեո ձայնագրությունների առկայությունը և դրա օգտագործումը կրթական համակարգում), հիմնավորվել է, որ դրանք են լինելու 21-րդ դարում

Հայոց ցեղասպանության հիշողության պահպանման հիմնական մարտահրավերները: Հստակ հիմնավորվել է, որ Հայոց ցեղասպանության փաստի չճանաչումը բերել է դրա կրկնման վտանգին, որի դրսևորումներից էր 44-օրյա պատերազմը, նաև տասնամյակներ շարունակ հայատյացության վերելքն Ադրբեջանում, որի դրսևորումներից էր «Ռազմական փառքի թանգարանի» բացումը Բաքվում: Առաջ է քաշվել այն միտքը, որ այլատյացության մասին խոսելիս պետք չէ շեշտել միայն հակասեմականությունը, որ վերոնշյալ «թանգարանի» բացման պատճառներից մեկն էլ ժամանակին միջազգային հանրության կողմից պատերազմի ընթացքում ցեղասպանության իրական վտանգի մասին նախազգուշացումներին, հայոց կողմից մասնագիտական օժանդակության խնդրանքներին չարձագանքելն էր (դեկ.՝ պ.գ.դ. Հ.Մարության):

«Շիրակի հնագիտական և պատմագագարական ուսումնասիրություններ-3» թեմայի շրջանակում (դեկ.՝ պ.գ.թ. Ա.Հայրապետյան) Ջրածորի ամրոց-բնակավայրի պեղումներով բացահայտվել են որոշակի համադրելի իրողություններ Շիրակի Ք.ա. IX-VIII դդ. իրարից հեռու տեղադրված բնակավայրերում: Ջրածորի N 5 կացարանի տափանված հատակի վրա բացվել են սաջ և աղորիքներ: Նույն տեղում հայտնաբերվել է հոր՝ լցված Ք.ա. IX-VIII դդ. բնորոշ առարկաներով: Պատկերը նույնն է Ագատանի ամրոցի պարսպին հարող համաժամանակյա կացարանում և Շիրակավանի ամրոցում: Նման ընդհանրությունների առկայությունը տարբեր հուշարձաններում թույլ է տալիս եզրակացնել, որ Ք.ա. VIII դ. երկու ամրոցները և բնակավայրերը ենթարկվել են հարձակման: Եթե Ագատանի բնակավայրում այն արտահայտվել է խոշոր հրդեհով, ապա Ջրածորի ամրոց-բնակավայրում և Շիրակավանի ամրոցում հայտնաբերվել են ուրարտական ջարդված և ծոված գեներ, պարսպի մեջ մտած նետապալներ: Այս իրողությունների համադրումը Շիրակում գտնվող ուրարտական երկու արձանագրությունների տվյալների հետ թույլ է տալիս դիտարկել ուրարտական գործերի հյուսիսից հարավ-արևելք և հարավ-արևմուտք, այնուհետև Ախուրյան գետի ավազանով դեպի Արարատյան դաշտ շարժման ուղղությունները:

Լեռնակերտի N 1 դամբանադաշտի պեղումներով բացվել են միջին բրոնզից ուշ բրոնզի անցման փուլին (Ք.ա. XVI դ. II կես-XV դ. I կես) վերագրվող թաղումներ, որոնցում միաժամանակ հանդիպել են և՛ միջինբրոնզեդարյան կարմիրբերդյան, և՛ ուշբրոնզեդարյան առարկաներ: Մեծ կարևորություն են ունեցել նաև ուշբրոնզեդարյան սալարկղային դամբանների պեղումները: Հենապատ-կրոմլեխով եզրագծված, քարային լիցքով, արևելք-արևմուտք ուղղված սալարկղային խցերով և արևելյան կողմում կցակառույցներով ուշ բրոնզից երկաթի դարի անցման փուլին վերագրվող այդ դամբանները տիպական չեն Շիրակի համաժամանակյա հուշարձանների համար: Անցումային փուլի սալարկղային այս դամբաններում փաստագրվել են երկշերտ խմբային թաղումներ՝ տարատեսակ ուղեկցող գույքով: Խմբային թաղումների մարդաբանական, հնաԴՆԹ և ռադիոմետրիկ հետազոտությունները հնարավորություն կտան պատկերացում կազմել Արագածի լանջերի հնահանրությունների և մշակույթների հաջորդականության և ժամանակագրության մասին:

Ալեքսանդրապոլի օրինակով ուսումնասիրվել է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին: ՏԻՄ-երի ձևավորումը նորանկախ հանրապետության պետական կառավարման համակարգի ու հանրային իշխանության իրականացման կարևորագույն միջոց է: Դրանց գործունեության քննությունը կարևոր նշանակություն ունի Հայաստանի առաջին հանրապետության պետական համակարգի պատմության ամբողջացման համար, իսկ ձեռք բերված փորձն օգտակար է ներկայիս ՀՀ տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի ձևավորման տեսակետից:

Բանասիրություն: Զգալի արդյունքներ են ձեռք բերվել հայերենի բառարանագրության ուղղությամբ: Հրապարակվել են «Բայազետի բարբառի բառարան», «Նոր բառեր

արեւմտահայերէնի մէջ, Ա գիրք», «Նոր բառեր» գրքերը, որոնք կոչված են բավարարելու իմացական և մշակութային որոշակի պահանջ, ուստի և կազմվել են ժամանակի թելադրանքով: Նոր բառարաններն ընդգրկել են ինչպես բարբառային բառեր ու դարձվածային միավորներ (7000 միավոր), այնպես էլ արևելահայ և արևմտահայ գեղարվեստական, գիտական գրականության մէջ և մամուլում գործածված բառեր, որոնք գրանցված չեն բացատրական և նորաբանությունների բառարաններում:

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Թ. Գ.Մխիթարյան) քննվել են Ղարաբաղի (Արցախի) բարբառի բայական համակարգում առկա գրաբարի, միջին հայերենի, զուտ բարբառային, փոխառությունների հիմքով կազմված բայեր և բայաձևեր, ինչպես նաև գրաբարում չվկայված, բարբառային շուրջ երեք տասնյակ բայեր, որոնք կազմված են հ.-ե. արմատներով: Վեր են հանվել ու մեկնաբանվել Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում վկայված բարբառային բառերն ու բառատարբերակները, առանձնացվել են գրաբարյան օրինաչափություններից շեղվող, բարբառային բառերն ու բառաձևերը, ակնարկվել է դրանց առնչությունը ժամանակի բարբառներին: Կատարվել է թարգմանական գրականության մէջ լատիներենի ազդեցության դիտարկում, քննվել են լատինաբան կազմություններ:

«Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» թեմայի շրջանակում (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Սարգսյան) ուսումնասիրություններ են կատարվել հայերենի ոլորտային տերմինաբանության ուղղությամբ, քննվել են օտարալեզու եզրույթների հայերեն թարգմանության սկզբունքները: Մշակվել են արևմտահայերենի կանոնարկման սկզբունքները, հայերենագիտության մէջ առաջին անգամ հանգամանորեն ներկայացվել է վիճակագրական լեզվաբանության նորագույն փուլի ընդհանուր պատկերը:

«Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Գ. Վ.Կատվայան) կատարվել է բարբառային հատկանիշների խմբավորում ըստ տարածական վերաբերության, դիտարկվել են հոգնակի թվի արտահայտության ձևերը բարբառային հայերենում, ուսումնասիրվել և նկարագրվել են հյուսիսային Գողթնի միջբարբառը, Զմշկաձագի խոսվածքը:

«Հայ գրականության պատմություն և տեսություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ Բ.Գ.Գ. Վ.Դևրիկյան) թվարկվել են հայ գրականության մէջ ռուս և համաշխարհային գրականության դասականներին տրված բնորոշումները: Վեր են հանվել ժամանակի գրական և ազգային-քաղաքական այն ըմբռնումներն ու գործոնները, որոնք պայմանավորել են յուրաքանչյուր հեղինակի գրական արժևորումը ժամանակի հայ գրաքննադատության կողմից: Համաժամանակյա վերլուծության մեթոդով այդ բնորոշումները զուգահեռի մէջ են դիտվել այլ ժողովուրդների գրականություններում տվյալ հեղինակներին տրված բնորոշումների հետ: Ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են Ֆ.Դոստոևսկուն, Ն.Նեկրասովին և Գ.Ֆլոբերին նվիրված միջազգային գիտաժողովի զեկուցումներում:

Մխիթարյան միաբանության հետ շարունակվող համատեղ գործակցության շրջանակում ոչ միայն ավարտվել է Ղևոնդ Ալիշանի «Նամականիի» II և III հատորների հրատարակությունը, այլև մշակվել են միաբանության անդամների նամակագրական ժառանգության հրատարակության ընդհանուր սկզբունքները: Մխիթարյան հեղինակների նամակները դիտարկվել են որպես այդ գրողների ստեղծագործությունների սկզբնաղբյուրներ և նրանց գրական-տեսական ըմբռնումների արտահայտություններ: Նամակների վերլուծության համար կազմվել են ծանոթագրությունների հատուկ սկզբունքներ և գիտական համապատասխան համակարգ: Այս սկզբունքի կիրառմամբ սկսվել են Արսեն Բագրատունու, Մանուել Զախչախյանի և Մխիթարյան մյուս հայրերի նամակների հրատարակություններն առանձին հատորներով:

Տնտեսագիտություն: «ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կազմն ու կառուցվածքը ու դրանց փոփոխության միտումները հետհեղափոխական Հայաստանում» թեմայի (ղեկ.՝ թղթ. անդ. Վ.Հարությունյան) կատարման ընթացքում վերլուծվել են հարկային համակարգում տեղի ունեցող փոփոխությունները հետհեղափոխական Հայաստանում, ՀՀ պետական բյուջեի հարկային մուտքերի փոփոխության միտումները, ՀՀ հարկային օրենսգրքի փոփոխությունների ազդեցությունը ՀՀ պետական պարտքի վրա, հետհեղափոխական շրջանում ՀՀ պետական պարտքի փոփոխության միտումները հարկային եկամուտների փոփոխությանը զուգընթաց, ներկայացվել են ուղղակի և անուղղակի հարկերի գծով փոփոխություններն ու դրանց դինամիկան մինչև հեղափոխությունն ու դրանից հետո: Տնտեսաչափական գնահատման եղանակով ստացվել են կարճաժամկետ ժամանակահատվածի հարկային եկամուտների, հարկային եկամուտների կառուցվածքում 4 հիմնական հարկատեսակների (ԱԱՀ, եկամտային, շահութահարկ, ակցիզային) բոյանսի գործակիցները և այդ գնահատված գործակիցների, հեղինակների կողմից հաշվարկված հարկային կայունության գործակիցների, օրենսդրական փոփոխությունների վերլուծության հիման վրա տրվել է հարկային օրենսդրության փոփոխությունների դերի գնահատականը հարկային եկամուտների ավելացման գործում, ուրվագծվել են հարկային քաղաքականության առաջնայնությունները:

«Միջազգային մրցունակության աճը որպես ՀՀ տնտեսության զարգացման գրավական» թեմայի (ղեկ.՝ տ.գ.թ. Լ.Սարգսյան) կատարման ընթացքում բացահայտվել են, որ միջազգային մրցունակության ինդեքսի աճին նպաստող հիմնական գործոնները ՀՆԱ-ի, ՕՈՒՆ ներհոսքի, ինչպես նաև արտահանման աճն է, որոնց հաջորդում են գիտության և նորարարությունների, մարդկային զարգացման համաթվի բարելավումը: Վերլուծությունը ցույց է տվել, որ ՀՀ տնտեսական աճի և մրցունակության ինդեքսի դիրքի փոփոխության միջև կապը թույլ է: Էկոնոմետրիկ վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ 1 տարվա ընթացքում ՀՀ-ում ՕՈՒՆ ներհոսքը մեծացրել է միջազգային մրցունակությունը 0.14%-ային կետով, իսկ արտահանման աճը՝ 0.56%-ային կետով: Մյուս գործոնների ազդեցությունը ՀՀ մրցունակության վրա էկոնոմետրիկ եղանակով հնարավոր չի եղել գնահատել:

Փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավագիտություն, քաղաքագիտություն: «Հայ հասարակության փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական հիմնախնդիրներ (պատմություն և արդիականություն)» թեմայի շրջանակում (ղեկ.՝ իր.գ.թ. Լ.Ղազանյան) իրականացվել են հետազոտություններ գիտական չորս ուղղություններով (փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավունք և քաղաքագիտություն):

Կատարվել են միջգիտակարգային լայնածավալ հետազոտություններ՝ ուղղված ՀՀ-ում և տարածաշրջանում առկա արդի հիմնախնդիրների վերլուծությանը, այդ թվում՝ միգրացիոն բազմաշերտ գործընթացներին, հայրենադարձությանը, հայոց քաղաքակրթական ինքնության վերհանմանը, արդի հայ ընտանիքի ինստիտուտի հիմնախնդիրներին, սահմանադրաիրավական և դատաիրավական բարեփոխումներին, հայ-ադրբեջանական պատերազմի սոցիալ-քաղաքական հետևանքների վերլուծությանը, իշխանության ու արտահերթ խորհրդարանական ընտրությունների նկատմամբ հասարակական կարծիքի բացահայտմանը:

Լեզվափիլիսոփայության համատեքստում իրականացվել են տեսագործնական հետազոտություններ՝ ուղղված քաղաքական և հանրային գործընթացների դիտարկմանը որպես հաղորդակցման տեսակի, որում ընդգրկված են այդ գործընթացներում կիրառվող կատարողական բազմաեղանակային համալիրների տեսական և գործնական ասպեկտների բացորոշումն ու վերջիններիս մեկնաբանական ներկայացումը:

Իրականացվել են անձի իրավական դրության հիմնախնդիրների բացահայտման ու հանգամանալից վերլուծության արդյունավետ գիտահետազոտական և գիտագործնական

աշխատանքներ, հանգամանորեն վերլուծվել են անձի իրավական դրության առանցքային տարրերի՝ իրավունքների, ազատությունների, օրինական շահերի, պարտականությունների, իրավասուբյեկտության և քաղաքացիության դրսևորման առանձնահատկությունները, դրանց իրացման և պաշտպանության իրավաբանական երաշխիքների բնութագրական հատկանիշները:

Արվեստագիտություն: «Հայ արվեստի համալիր ուսումնասիրություն» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Աղասյան) համակողմանիորեն ուսումնասիրվել և առաջին անգամ ռուսալեզու ընթերցողին է ներկայացվել հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմության համառոտ ակնարկը, ինչպես նաև Մոսկվայում ապրած և ստեղծագործած հայ նկարիչ Դ.Նալբանդյանի, քանդակագործներ Ն.Նիկողոսյանի, Ֆ.Սողոյանի և Գ.Ֆրանգուլյանի, Ռուսաստանում կրթություն ստացած հայ ժամանակակից ճարտարապետության հիմնադիր Ա.Թամանյանի ստեղծագործական դիմանկարները: Քննության է առնվել անվանի արվեստաբան Լ.Դուռնովոյի ներդրումը, ով համաշխարհային մշակույթի համար բացահայտել է հայկական միջնադարյան որմնանկարների արժեքը և ստեղծել դրանցից շատերի ընդօրինակները, դարձել միջնադարյան Հայաստանի մոնումենտալ գեղանկարչության և քանդակագործության պատմության առաջին հետազոտությունների հեղինակը, դրել հայկական դաջարվեստի ու զարդանկարի ուսումնասիրության հիմքերը, պատրաստել երիտասարդ նկարիչ-ընդօրինակողների խումբ: Դիտարկվել են «Աստվածածնի վերափոխման» պատկերագրության ընդհանուր առանձնահատկությունները հայ և ռուսական արվեստում: Բացահայտվել է, որ ռուս կոմպոզիտոր, երաժշտական քննադատ, «Հզոր խմբակի» անդամ Ցեզար Կյուլիի՝ ձայնի և դաշնամուրի համար գրված «Памяти И.К. Айвазовского» (op. 86 N 22, Des-dur, 1902) ռեքվիեմի բանաստեղծական տեքստի համար հիմք է ծառայել երաժշտագետ, երաժշտական-հասարակական գործիչ Բարսեղ Ղորղանյանի «Иван Константинович Айвазовский» հոդվածի բնաբանը: Հետազոտությունների արդյունքները հրատարակվել են Պ.Տրետյակովի անվ. բարեգործական հիմնադրամի համագործակցությամբ Մոսկվայում լույս տեսած «Русское искусство» հանդեսի «РОССИЯ-АРМЕНИЯ. Диалог культур на языке искусства» բացառիկ համարում, ինչն աննախադեպ երևույթ է հայ ակադեմիական արվեստագիտության ասպարեզում և կարևոր քայլ հայ արվեստագիտության արդյունքների միջազգայնացման ուղղությամբ:

«Հայ արվեստի համալիր ուսումնասիրություն» ծրագրի շրջանակում շարունակվել են հայ ականավոր կոմպոզիտոր Ա.Սպենդիարյանի կյանքի, ստեղծագործական, կատարողական ու երաժշտական-հասարակական գործունեության ուսումնասիրության, նրա թողած ժառանգության արժևորման աշխատանքները: Հետազոտությունների արդյունքները գեկուցվել են մասնակիցների աշխարհագրությամբ աննախադեպ «Ալեքսանդր Սպենդիարյան-150» խորագրով միջազգային գիտական նստաշրջանում, որը կարևոր փուլ էր միջազգային սպենդիարյանագիտության մեջ (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Աղասյան):

ԳԱՍ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ

Կազմակերպությունը 2019թ. հրատարակում է «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» գիտական պարբերականը, 2021թ. հրատարակվել են պարբերականի V և VI համարները:

Ռուսաստանի Դաշնության «Առողջ անտառ» ընկերության մասնագետների հետ համատեղ հրատարակվել է «Դատական փորձաքննությունների նշանակումն ապօրինի անտառահատումների հետ կապված հանցագործությունների բացահայտման և քննության ընթացքում մեթոդական ցուցումներ» ձեռնարկը:

2021թ. ձեռք են բերվել և կազմակերպությունում առկա գազային քրոմատոգրաֆին (Agilent 7820A GC-NPD) համակցվել են ավտոմատ գոլորշիացման համակարգ (Agilent 7697 A Head-Space Sampler, 12 vial) և բոցախոնային (FID) դետեկտոր, ինչը հնարավորություն է ընձեռել նոր արդիական մեթոդների կիրառմամբ իրականացնել դատաքիմիական փորձագիտական հետազոտությունները:

Կազմակերպության մասնագետներն ապահովել են շուրջ 10000-ից ավելի փորձագիտական հետազոտությունների իրականացում ու գիտականորեն հիմնավորված արդյունքների ստացում:

Կազմակերպության փորձագետները մասնակցել են Դատափորձագիտական ինստիտուտների եվրոպական ցանցի (ENFSI) անցկացրած համաժողովներին, կոնֆերանսներին, գիտաժողովներին, աշխատաժողովներին, որակավորման ստուգման թեստերին և ընթացիկ այլ աշխատանքներին, շարունակվել է նաև նրանց մասնակցությունը Եվրոպական Միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության (CEPOL) փորձի փոխանակման ծրագրին:

Կազմակերպության ներկայացուցիչները մասնակցել են ոլորտի գործունեությանն առնչվող մի շարք նորմատիվային փաստաթղթերի ու իրավական այլ ակտերի մշակման աշխատանքներին, այդ թվում՝ դատափորձագիտության ոլորտի համար կարևոր նշանակություն ունեցող ՀՀ կառավարության 1864-Լ որոշման նախագծի և դրա հիմնավորումների մշակմանը:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Առանցքի նկատմամբ ամրանավորման ուղղության սիմետրիկության սկզբնական խախտմամբ շերտավոր ապակեպլաստե բարակապատ խողովակների բաբախող առանցքային ձգման կամ պարզ ոլորման ենթարկվելու դեպքում առաջացող էներգիայի ընդհանուր կորուստը տրոհվել է երկու բաղադրիչի՝ հիմնական դեֆորմացիաներից (գրանցված բեռնավորման ուղղությամբ) առաջացող էներգիայի կորուստ և կորուստ՝ պայմանավորված հիմնականներին ուղեկցող դեֆորմացիաների առաջացմամբ (սահքը կամ ընդերկայնական դեֆորմացիաներ՝ գրանցված խողովակների համապատասխանաբար առանցքային ձգման կամ պարզ ոլորման դեպքերում): Ձևակերպվել են հանձնարարականներ, որոնք կարող են էապես նպաստել շահագործման ընթացքում բաբախող առանցքային ձգման կամ պարզ ոլորման ենթարկվող շերտավոր կոմպոզիտե բարակապատ խողովակների ամենանպատակահարմար նախագծմանը (ղեկ.՝ տ.գ.դ. Կ.Կարապետյան, տ.գ.թ. Ս.Վալեսյան):

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մարգարյանի շրջահայացության աստղագիտական տվյալների վերլուծության համար մշակվել են տվյալների վերլուծության ծառայություն և մեթոդ, որոնց օգնությամբ հայտնաբերվել և դասակարգվել են մի քանի միլիոն սպեկտրներ:

Մշակվել են Dask զուգահեռ Python և Kubernetes հարթակներն ամպային ենթակառուցվածքում: Dask-ը թույլ է տալիս օգտատերերին ստեղծել սեփական ծրագրակազմը՝ համաձայնեցնելով այլ համայնքային նախագծերի հետ, ինչպիսիք են NumPy-ը, Pandas-ը և scikit-learn-ը, մինչդեռ Kubernetes-ը կառավարում է կոնտեյներների աշխատանքային ծանրաբեռնվածությունը և ծառայությունները: I/O-ի և պրոցեսորի միջև օպտիմալ փոխզիջում գտնելու համար ստեղծվել է արդյունավետ ծառայություն՝ օգտագործելով մեծ տվյալների համար տվյալների սեղմման ալգորիթմներ: Ծառայությունը բաղկացած է կանխատեսման և խորհրդատվական մոդուլներից, որոնք կանխատեսում են հավելվածի կատարման ժամանակը տվյալ ցուցանիշներով և ապահովում օպտիմալ կոնֆիգուրացիաներ՝ հաշվի առնելով հաշվարկների ժամանակը:

Հայկական խորանարդում մշակվել են օդի ջերմաստիճանի մշտադիտարկումը և կանխատեսումը, ջրային մարմինների առափնյա գծի ուրվագծումը, օդի աղտոտիչների կոնցենտրացիայի մոնիթորինգի ծառայությունները: Ծառայությունները գնահատվել են Արարատյան դաշտում մակերևութային օդի ջերմաստիճանի արդյունահանման, Սևանա լճի առափնյա գծի գծանշման և օդի NO₂ աղտոտիչի մակարդակի մոնիթորինգի միջոցով (ղեկ.՝ տ.գ.թ. Հ.Ասցատրյան):

Մշակվել է ծրագրային լուծում տվյալների RDF-ի ձևաչափով բեռնման, նրանց պահպանումը բաշխված ֆայլային համակարգում կամ փոխարկումը Property Graph-ի: Այդ տվյալների հիման վրա հետազոտվել է հայտնի ալգորիթմների կիրառումը (ղեկ.՝ տ.գ.թ. Տ.Շահինյան):

Հետազոտվել են տարաբաշխված տեսակոնֆերանս համակարգերի ծանրաբեռնվածությունը բաշխող մեթոդները: Հետազոտությունների կիրառման արդյունքում արդիականացվել է MEET.ASNET.AM տեսակոնֆերանս հարթակը:

Փորձարկվել է eduroam համակարգի գաղտնաբառի ստուգումն իրականացնող freeradius IMAP connector-ների նոր լուծում: Հետազոտվել են Telegram Bot համակարգերը: Ստեղծվել են ցանցային սերվերների alert-ների ծանուցման փորձնական համակարգեր գործող ցանցային ծառայությունների համար (ղեկ.՝ տ.գ.թ. Ա.Պետրոսյան):

GEANT-ի եվրոպական գործընկերների հետ հետազոտվել և փորձարկվել է eduroam համակարգի աշխատանքի մոնիթորինգի WiFiMon լուծումը (ղեկ.՝ տ.գ.թ. Ռ.Թադևոսյան):

Շարունակվել են ASNET-AM ցանցի DNS, էլիտստի և վեբ-սերվերների անվտանգության բարձրացման աշխատանքները: Արդիականացվել են ASNET-AM ցանցի միասնական վեբ փոստի, էլեկտրոնային փոստի կառավարման համակարգը և ASNET-AM DNS համակարգերը (ղեկ.՝ տ.գ.թ. Գ.Պետրոսյան):

Հետազոտվել է մարդու եռաչափ մոդելի ոսկրային համակարգի ավտոմատ կառուցման համակարգը: Մշակվել է ծրագրային ապահովման նախատիպ, որը թույլ է տալիս հատուկ դիրքով (A-Pose) կանգնած մարդու մոդելին ավելացնել ոսկրային համակարգ, որին հետագայում հնարավոր կլինի հաղորդել շարժունակություն՝ անհմացնել: Օգտագործվել են արհեստական բանականության (աբ) մեթոդներ (տվյալների հավաքագրում, ուսուցում, աբ մոդելի ստացում, լավարկում), կիրառվել է մեքենայական ուսուցման PyTorch գրադարանը Blender միջավայրում:

Մշակվել է ծրագրային ապահովման մոդուլ, որը թույլ է տալիս ոսկրային համակարգ ունեցող շարժական եռաչափ մոդելի Unreal Engine համակարգով ստեղծված և արդեն կոմպիլացված պրոյեկտի մեջ բեռնել ոսկրային համակարգ ունեցող, շարժական եռաչափ մոդել, երբ պրոյեկտն արդեն գործարկված վիճակում է: Մինչ մոդուլի մշակումը որևէ պրոյեկտում մոդել փոխելու համար անհրաժեշտ էր փոփոխել պրոյեկտի սկզբնական կոդը, վերականգնելով լավորել այն, այնուհետև վերագործարկել (ղեկ.՝ տ.գ.թ. Ս.Աբրահամյան):

Եռաչափ սկանավորման տարբեր մեթոդներ կիրառելի են տարբեր նպատակների համար: Օրինակ լազերային սկանավորումն ապահովում է ստացվող եռաչափ մոդելի մեծ ճշտություն, ինչը, օրինակ, շենք-շինությունների դեպքում, հնարավորություն է տալիս կիրառել այն ճարտարապետական հաշվարկների մեջ: Լուսանկարային սկանավորմամբ, ի տարբերություն լազերայինի, հնարավոր է պահպանել սկանավորվող օբյեկտի գույները, սակայն կորցնել մոդելի մեծ ճշտությունը: Օդալուսանկարային սկանավորման շնորհիվ (հիմնականում անօդաչու թռչող սարքերի կիրառմամբ) հնարավոր է սկանավորվել մեծ տարածքներ և ստացված արդյունքը կիրառել, օրինակ, գեոդեզիական հաշվարկների համար, սակայն կորցնել էլ ավելի մեծ հատվածների ճշտություն: Մշակվել և կիրառվել են մոտեցումներ, որոնք թույլ են տալիս վերը նշված բոլոր մեթոդների համադրմամբ կատարել տարբեր տեսակի և չափերի շինությունների արդյունավետ սկանավորում անհրաժեշտ ճշտության և գունային սպեկտրի ապահովմամբ (ղեկ.՝ տ.գ.թ. Ս.Բալյան):

ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հեռավար ուսուցման MOODLE հարթակում 5 տարիների ընթացքում կուտակված տվյալների հիման վրա կատարվել է ուսանողների և դասախոսի վարքագծի վերաբերյալ համապարփակ վիճակագրական վերլուծություն (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Փ.Հակոբյան):

Ներկայացվել է Վիքիպեդիայի և այլ վիքի նախագծերի միջոցով ստեղծված կրթական էլոհամակարգ, որը հնարավորություն է տալիս ուսուցիչներին շարունակաբար ստեղծագործ կրթվել, իսկ աշակերտներին՝ խորացնել միջառարկայական գիտելիքներն ապագա մասնագիտության ոլորտներում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Մկրտչյան):

TensorFlow խորը նեյրոնային ցանցերի ստեղծման համակարգի օգնությամբ ստեղծվել է պատկերների ճանաչման մոդել: TensorFlow համակարգի, TensorFlow Hub մեքենայական ուսուցման մոդելների շտեմարանում տեղ գտած մոդելների, ինչպես նաև տարբեր բաց տվյալների շտեմարաններից վերցված տվյալների հիման վրա լուծվել են տեքստի կլասիֆիկացիայի խնդիրները:

Google -ի կողմից մշակված FaceNet դեմքերի ճանաչման հիմնական մոդելի օգնությամբ ստեղծվել է կամայական մարդկանց դեմքերի ճանաչման պարզագույն փորձնական համակարգ:

BERT բնական լեզվի մշակման համար նախատեսված նեյրոնային ցանցերի կիրառմամբ և դրանց վերաուսուցման արդյունքում լուծվել են պարզ հարց-պատասխան տեսակի խնդիրներ:

Conda բլոկչեյն համակարգի հիման վրա իրականացվել է ապակենտրոնացված փորձնական ծրագիր (դեկ.՝ տ.գ.թ. Մ.Գյուրջյան):

«ՀԻՂՐՈՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԵՎ ՎԻԲՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԲԱԺԻՆ» ՓԲԸ

Ցանկացած ջրանցքի հիդրոդինամիկական բնութագիրը ջրանցքով հոսող ջրի ծախսն է, որն անհրաժեշտ է տարբեր հիդրոտեխնիկական կառույցների նախագծման ժամանակ. հիդրոէլեկտրակայանների դեպքում՝ նրանց հզորությունը որոշելու համար, ոռոգման համակարգի դեպքում՝ ոռոգվող հողերի իրական մակերեսը որոշելու համար, շահագործող ծառայությունների դեպքում՝ ջրային ռեսուրսների կառավարման և բաշխման գործընթացների համար, խմելու և արդյունաբերական ջրամատակարարման, բնակավայրերի և արդյունաբերական օբյեկտների դեպքում՝ մատակարարվող ջրի քանակը հաշվարկելու համար՝ առանց բնապահպանական խնդիրներ առաջացնելու: Մշակվել է ջրանցքներում և գետերում ջրի մակարդակի ու հոսքի չափման եղանակ և սարքվածք ջրային համակարգում ջրառի հաշվառման համար: Մշակման նպատակն է բարձրացնել ջրանցքներում ջրի քանակի ու ծախսի չափման ճշգրտությունը և հուսալիությունը: Ջրաչափական սարքվածքը ջրանցքի ափին տեղակայված հանգստացնող ջրաչափով ջրհոր է: Հանգստացնող ջրհորը ճնշման տատանումների կայունացուցիչ պարունակող խողովակաշարի միջոցով հաղորդակցվում է ջրանցքի հետ: Ջրի հոսքի իրական բարձրությունը հավասար է ջրի չափման սարքի լողանի տեղաշարժի **h** բարձրության և Բեռնուլլիի հավասարման արագության ճնշման՝ $V^2/2g$ անդամի մեծության գումարին: Ջրի հոսքի ծախսը հավասար է ջրանցքում ջրի ընդհանուր բարձրության և ջրի հոսքի միջին արագության արտադրյալին: Ջրանցքներում ջրի ծախսի և քանակի չափման առաջարկվող եղանակն ու սարքվածքը թույլ են տալիս նշված չափումներն իրականացնել մոտ 1% ճշտությամբ: Այս տեխնիկական առաջարկի կիրառելիությունը Սևանա լճից ջրառի քանակի հաշվառման ժամանակ թույլ է տալիս տարեկան տնտեսել 12-17 մլն. խոր. մետր քաղցրահամ ջուր: Սևանա լճից ջրառի քանակի չափման ճշտությունը բարձրացնելու տեխնիկատնտեսական այս առաջարկը ներկայացվել է ՀՀ կառավարություն (դեկ.՝ Ա.Սիմոնյան):

Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎ. ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ

Հայ-ռուսական համատեղ կայանում 260 դիտողական գիշերների ընթացքում ընդհանուր առմամբ արվել է 650000 չափում և վերականգնվել 700 ուղեծիր արհեստական արբանյակների համար (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ. Հարությունյան):

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մշակվել և արտոնագրման է ներկայացվել ֆոտոդնդունիչ սարք, որը, շնորհիվ կիրառված հետադարձ կապի շղթայի, թույլ է տալիս գրանցել թույլ իմպուլսային օպտիկական ճառագայթումը՝ անկախ ֆոնային լուսավորվածության մակարդակից (ղեկ.՝ թղթ. անդ. Ա. Պապոյան):

Հետազոտվել է ջերմային սենսորներով տաք օբյեկտների հայտնաբերումը՝ օգտագործելով հատուկ մշակված ուժեղացուցիչներ՝ կոնական հորներ: Ստեղծված սարքով ստացված ազդանշանների թվայնացումն ու ծրագրային մշակումը թույլ է տվել ապահովել 8 մ հեռավորության վրա 90° տեսադաշտով օբյեկտի արագ տեղորոշում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա. Մարտիրոսյան):

Հետազոտվել և մշակվել է էլեկտրամագնիսական սպեկտրի միկրոալիքային տիրույթում գործող, օբյեկտների գտնվելու վայրը տեղորոշող ռադարային համակարգ՝ հիմնված հորիզոնական և ուղղահայաց դասավորությամբ ալեհավաքային տարրեր պարունակող ռադիոտեղորոշիչ համակարգի վրա (ղեկ.՝ ակ. Ռ. Կոստանյան):

Ցույց է տրվել, որ Lu^{3+} իոնների ներմուծումը $\text{Y}_3\text{Al}_5\text{O}_{12}:\text{Ce}^{3+}$, Li^{+} բյուրեղներ հնարավորություն է տալիս բարձրացնել բյուրեղների օպտիկական որակը հակադիքային տեղակալումների փոփոխության հաշվին: Ցույց է տրվել, որ $\text{Y}_3\text{Al}_5\text{O}_{12}:\text{Ce}^{3+}, \text{Tb}^{3+}$ բյուրեղները հակադիքային արատների առկայության ինդիկատոր են և հնարավորություն են տալիս քանակապես գնահատել դրանց կոնցենտրացիան: Li^{+} իոնները զբաղեցնում են միջհանգուցային դիրքեր և չեն փոխազդում Ce^{3+} իոնների հետ, սակայն բարձրացնում են ճառագայթման տիրույթում բյուրեղների թափանցիկությունը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա. Պետրոսյան):

Անմետաղ ֆտալոցիանինի (H_2Pc , $\text{Pc}=\text{C}_{32}\text{N}_8\text{H}_{16}$) պինդֆազային պիրոլիզի եղանակով սինթեզվել են նանոգրաֆենային կլաստերներով կազմված ածխածնային միկրոսֆերաներ՝ լեզիրված ազոտի ատոմներով: Հետազոտվել են ստացված նմուշների կառուցվածքային, մորֆոլոգիական, ռեզիստիվ, ունակային բնութագրերը, ինչպես նաև դրանց կիրառելիությունը որպես սուպերկոնդենսատորների էլեկտրոդային նյութեր: Միկրոսֆերաների չափված տեսակարար ունակությունը կազմել է 2-4 Ֆ/գ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա. Մանուկյան):

Մարդու առողջահոգեբանական վիճակը և հոգնածության աստիճանը որոշելու համար ստեղծվել է 8 SFCO սենսորներով գործող ստաբիլոգրաֆ բժշկական ախտորոշող սարք: Վերլուծելով 4 դիրքի և 4 տատանումների տվյալներից ստացված ազդանշանների հաճախային և ժամանակային վարքը՝ հնարավոր է գնահատել մարդու նյարդահոգեբանական և հենամկանային համակարգերի վիճակը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ս. Գևորգյան):

ՖԻԶԻԿԱՅԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՊՐՈՒԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Առաջարկվել է լիցքավորված մասնիկների ակուստապլազմային նոր տիպի արագացուցիչների ստեղծման մեթոդ:

Մշակվել ու ստեղծվել է կառավարվող բնութագրերով հակակարկտային նոր տիպի ակուստիկ համակարգ (ղեկ.՝ թղթ. անդ. Ա. Մկրտչյան):

Մշակվել և ստեղծվել է թոքերի օդափոխման պարզագույն շնչառական սարքի լաբորատոր փորձանմուշ, որի գլխավոր յուրահատկությունը ներշնչվող (արտաշնչվող) օդում տարբեր հաճախությամբ հարմոնիկ և ոչ հարմոնիկ տատանումների գրգռումն է: Ցույց է տրվել, որ այդ տատանումները կարող են նպաստել թոքերից խորխի և այլ օտարածին մարմնիկների հեռացմանը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ. Խաչատրյան):

Միջավայրերի ակուստապլազմային վիճակում արգելված անցումներից ի հայտ եկող

ճառագայթումների հիման վրա առաջարկվել է մոնոքրոմատիկ ճառագայթման աղբյուրների ստեղծման նոր մեթոդ (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Աբրահամյան):

Կատարվել են գիտատեխնիկական հետազոտություններ ինստիտուտում մշակված ու ստեղծված վակուումային փոշենստեցման համակարգերի կատարելագործման համար: Մշակվել ու ստեղծվել է վիրուսային վարակների կանխարգելման սարք, որոշվել են նրա աշխատանքային բնութագրերը (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Զիլինգարյան):

Մինթեզվել են փոքր էներգետիկ էլքով ծակոտկեն լյումինաֆոր միջավայրեր (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Նալբանդյան):

Մշակվել ու ստեղծվել է տարածքների ախտահանման համակարգ (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Մ.Սարգսյան):

ՀՀ տարածքում առկա հանքանյութերի օգտագործմամբ մանր դիսպերսիոն բենտոնիտի հիման վրա սինթեզվել է նոր նյութ, որը կարող է կիրառվել գյուղատնտեսությունում որպես ցածր ինքնարժեքով ու բարձր արդյունավետությամբ պարարտանյութ (դեկ.՝ Գ.Ասատրյան):

ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Առաջարկվել է ռադիոլոկացիոն նշանակետերի անդրադարձման արդյունաբար մակերևույթի գնահատման նոր եղանակ, որը չի պահանջում թանկարժեք անարձագանք խցիկի կիրառում: Եղանակը հիմնված է շարժվող նշանակետերի առանձնացման սկզբունքի վրա, ինչը թույլ է տալիս բացառել անդրադարձումները կողմնակի անշարժ օբյեկտներից: Կատարվել են չափումներ Ku տիրույթում և գնահատվել է եռանիստ անկյունային անդրադարձիչի արդյունաբար մակերևույթը (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Տ.Զաքարյան, Ն.Պողոսյան):

Տեխնոլոգիական ռեժիմների կատարելագործման բաղադրիչների ատոմական հարաբերակցության ավելի ճշգրիտ դեկավարման և օպտիմալ տեխնոլոգիական ռեժիմների ընտրության շնորհիվ սինթեզվել են կրկնակի լեգիրված $(Al_{0.5}Nb_{0.5})_xTi_{1-x}O_2$ կերամիկական նմուշներ, որոնց ցածր հաճախային դիէլեկտրիկական թափանցելիությունը գերազանցել է $1.5 \cdot 10^5$: Արդյունքում այդպիսի կերամիկայում նվազում են դիէլեկտրիկական կորուստները և հնարավոր է դառնում գերմեծ ունակությամբ կոնդենսատորների ստեղծումը (դեկ.՝ թղթ.անդ. Ս.Պետրոսյան):

p-InSb/n-CdTe անիզոտրոպ հետերոանցման հիման վրա պատրաստվել են քառազոնդ կոորդինատագրային ֆոտոընդունիչներ, ուսումնասիրվել են նրանց հատկությունները, բացահայտվել են գրանցվող ինֆրակարմիր ճառագայթի կոորդինատների և ֆոտոզգայնության գծային տիրույթները (դեկ.՝ Լ.Մաթևոսյան):

Միկրոալիքային էլեկտրամագնիսական փոխազդեցության միջոցով ուսումնասիրվել են լազերային աբլյացիայի մեթոդով ստացված երկաթի նանոմասնիկներով հագեցված ջրային լուծույթները: Միկրոալիքային սենսորի արձագանքով որոշվել է երկաթի նանոմասնիկների մինիմալ չափվող խտությունը: Գրանցվել է միկրոալիքային հավելյալ բաղադրիչ, որի առկայությունը բացատրվում է լազերային աբլյացիայի ժամանակ ջրի կլաստերների կառուցվածքային փոփոխություններով (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Խաչատրյան):

Մշակվել է ֆիզիոթերապիայի համար նախատեսված միոստիմուլյատորի էլեկտրական սխեման, պատրաստվել է լաբորատոր նմուշը: Կատարվել է 1 թերապևտիկ կետում մկանի գրգռման և կծկման ֆունկցիայի աշխատունակության ստուգում: Սարքի կատարելագործումը և ծրագրային սպասարկման կիրառումը հնարավորություն կտան ստանալ չափումների արդյունքները միաժամանակ 5-10 թերապևտիկ կետերի համար (դեկ.՝ ալ. Ա.Ղուլյան):

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԷԿՈԼՈԳԱՆՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Մշակվել են ՀՀ Արմավիրի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերում բնական և տեխնածին ռադիոնուկլիդների բաշխվածության փորձագիտական թեմատիկ քարտեզներ, որոնք անհրաժեշտ են ռիսկի գնահատման համար, որը սննդամթերքի անվտանգության ապահովման ու կայուն գյուղատնտեսության հիմքն է: Դրանք կարող են նպաստել պետական մոնիթորինգային ծրագրերի ծախսերի կրճատմանը և անհրաժեշտ լինել նաև մասնավոր սեկտորին (ղեկ.՝ կ.գ.թ. Օ.Բեյլասա):

Սննդամթերքում քիմիական վտանգների (ծանր մետաղներ, հալամանրեային նյութեր և աճի խթանիչներ) ռիսկի գնահատման աշխատանքների շրջանակում (ղեկ.՝ սննդ.գ.դ. Դ.Պիպոյան) ՀՀ-ում արտադրված կաթի մեջ հայտնաբերվել են հակաբիոտիկների, իսկ ձկնամսի մեջ՝ հորմոնների մնացորդային քանակություններ: Չնայած սննդակարգային ներգործությամբ պայմանավորված առողջական ռիսկերը գտնվել են թույլատրելի տիրույթում՝ այնուամենայնիվ վերջինս արտահանման լուրջ խոչընդոտ է:

Շարունակվել են Հայաստանում լանդշաֆտների էկոլոգիական մոնիթորինգի հեռազննման համակարգի ստեղծման համար արբանյակային լուսանկարների հավաքագրման և մշակման բազմաշափ տեղեկատվական համակարգի (տեղեկատվական խորանարդ) (<http://datacube.sci.am>) ստեղծման աշխատանքներն Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի ու Ժնևի (Շվեյցարիա) համալսարանի հետ: Համակարգի շտեմարանը ներառում է Landsat և Sentinel արբանյակային լուսանկարները և պարբերաբար թարմացվում է: Համակարգում փորձ է արվել մշակել արբանյակային լուսանկարներից ջրային մարմինների սահմանագծման և մակերևութային ջերմաստիճանի մոդելավորման ալգորիթմներ (ղեկ.՝ ա.գ.թ. Շ.Ասմարյան):

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՂՈՒԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Երկարաչանչ խեցգետնի պաշարները Սևանա լճում վերջնականապես սպառվել են: Նշված հիդրոբիոտը գտնվում է ոչնչացման եզրին: Խեցգետնի պաշարները շարունակում են կրճատվել, մինչդեռ անօրինական որսը լճում չի դադարում: Շրջակա միջավայրի նախարարության հետ կնքված պայմանագրի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Է.Ղուկասյան) իրականացված հետազոտությունները ցույց են տվել, որ հիվանդ խեցգետինների մասնաբաժինը լճում տատանվում է 10-11%-ի սահմաններում, իսկ կենսազանգվածը նախորդ տարվա համեմատ նվազել է 27տ-ով:

Սևանա լճում իրականացված ձկնաբանական հետազոտությունները ցույց են տվել, որ 2020թ. սիգը համալրող բեղուն սերնդի հաշվին ձկնային պաշարները 2021թ. աճել են մոտ 9.6%-ով: Ձվադրման ակտիվ փուլի մեկնարկից առաջ՝ 2021թ. նոյեմբերին, սիգի արդյունագործական նշանակության պաշարները կազմել են մոտ 641.8տ (SD±20,09տ) (ղեկ.՝ կ.գ.դ. Բ.Գաբրիելյան):

Հաստատվել է մանր և խոշոր եղջերավոր կենդանիների վարակվածությունը տրեմատոդներով (*Fasciola hepatica*, *F. gigantica*, *Dicrocoelium lanceatum*, *Paramphistomum cervi*), ստամոքսաղիքային ստրոնգիլատներով (*Trichocephalus ovis*, *Chabertia sp.*, *Haemonchus sp.*, *Paramphistomum sp.*), թոքային նեմատոդներով (*Protostrongilus sp.*), ցեստոդներով (*Monezia expansa*, *Echinococcus granulosus*), նախակենդանիներով (*Eimeria arloingi*, *E. intricata*, *Piroplasma bigeminum*): Շների մոտ նշվել են *Babesia canis*, *Leishmania*

tropica, Hydatigera taeniaeformis, Toxocara canis, Uncinaria stenocephala, Ancylostoma caninum, ճագարների մոտ՝ *Fasciola hepatica, Eimeria stidae, E.magna, E.perforans*, հավերի մոտ՝ *Ascaridia galli* և *E.tenella, E. acervulina*, կատուների մոտ՝ *Hydatigera taeniaeformis, Toxocara cati, Toxascaris leonina, Trichuris vulpis, Cystoisospora felis* և *C. rivolta, Giardia intestinalis, Toxoplasma gondii* մակաբույծ նախակենդանիները: Տարբեր կենդանատեսակների մոտ գրանցվել են *Ixodes ricinus, Dermacentor marginatus, Rhipicephalus bursa, Rhipicephalus annulatus, Hyalomma marginatum, Rhipicephalus turanicus, Haemaphysalis punctata, Rhipicephalus sanguineus, Hyalomma anatolicum* իքսոդային տզեր:

Որոշվել են ձկների մոտ հայտնաբերված հելմինթների տեսակային կազմը և վարակվածության էքստենսիվությունն ու ինտենսիվությունը: Նշվել են պտղատու և փշատերև ծառատեսակների, խաղողի այգիների էկոտ- և էնդոպարազիտ նեմատոդներ, որոնց կազմում գերակշռել են *Xiphinema, Macroposthonia, Helicotylenchus* սեռերի ներկայացուցիչները (ղեկ.՝ կ.գ.դ. Ս.Մովսեսյան):

Շարունակվել է գյուղատնտեսական վնասատուների դեմ կենսաբանական պայքարում նոր մոտեցումների որոնումը: Հայտնաբերվել է Հայաստանի ֆաունայի համար տզերի վնասատու 4 նոր տեսակ: Ստեղծվել և փորձարկվել են տարբեր տեսակի բույսերից ստացված պատրաստուկներ, որոշվել է դրանց միջատա- և տզասպան ակտիվությունը և համեմատական արդյունավետությունը գյուղատնտեսական վնասատուների տարբեր խմբերի դեմ պայքարում (ղեկ.՝ կ.գ.դ. Կ.Դիլբարյան):

Հ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ԱՆՎ. ԿԵՆՍԱՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Բացահայտվել է, որ քաղցկեղային բջիջներում ֆոլաթթվի (FA) ռեցեպտորների քանակը 100-300 անգամ շատ է, քան առողջ բջիջներում: [FA + Zn-TOEt4PyP] կոմպոզիտում ֆոլաթթուն ոչ կովալենտ կապվում է մետաղապորֆիրինի հետ 1.2/1 հարաբերակցությամբ, իսկ [FA+Zn-TBut4PyP] կոմպոզիտում այս հարաբերակցությունը հասնում է 20/1-ի: Նման կոմպոզիտների ստացման մատչելիությունը հնարավորություն է ընձեռում դրանք կիրառել ուռուցքների թիրախային ֆոտոդինամիկ թերապիայում: Պորֆիրինները կարող են օգտագործվել նաև բակտերիաների, սնկերի, խմորիչների և վիրուսների դեմ պայքարում: ՀՀ ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի հետ համատեղ իրականացված փորձերի արդյունքում պարզվել է, որ մութ պայմաններում փորձարկված 18 կատիոնային պորֆիրիններից մեկը ցուցաբերում է ակտիվություն SARS-CoV-2 կորոնավիրուսի նկատմամբ: Շարունակվում է կատիոնային պորֆիրինների ուսումնասիրությունը լույսի ազդեցության (ֆոտոդինամիկ) պայմաններում COVID-19-ով հիվանդների բուժման համար դրանք օգտագործելու նպատակով (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Գյուլխանյան):

ՆՕՔԻ-ում սինթեզված պիպերազինի 15 ածանցյալներից ադենոզինդեամինազ 1-ի ակտիվությունն արդյունավետ ընկճում է բենզիլդրիլ խումբ պարունակող միացությունը: Ֆերմենտի ցածրամոլեկուլային և բարձրամոլեկուլային ձևերի ակտիվության ընկճման արժեքները տարբերվում են երկու կարգով, որը հնարավորություն է տալիս տարբեր պաթոլոգիաների դեպքում ընտրողաբար օգտագործել այդ միացությունը ֆերմենտի ցածրամոլեկուլային ձևի ակտիվությունը ճնշելու համար (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Անտոնյան):

Իրականացվել է տարբեր ֆունկցիոնալ խմբերի առկայությամբ ու բարձր քվանտային ելքով և ֆլուորեսցենցիայի լայն տիրույթով օժտված կարբոնային dot-երի սինթեզ համապատասխան գործառնություններում կիրառելու նպատակով: Ստացվել են երկաթի նանոմասնիկներ, որոնք օժտված են մագնիսական հատկություններով և պերօքսիդազային

ակտիվությամբ, ինչը թույլ է տալիս կիրառել դրանք կենսասենսոբներում և իմունա-
ֆերմենտային անալիզի տարբեր ձևաչափերում:

Իրականացվել են սննդի անվտանգությանը վերաբերող հետազոտություններ, որոնց
համար բուսական աղբյուրներից անջատվել է հիստամինազ ֆերմենտը, որը կիրառվում է
սննդում հիստամինի քանակը գնահատելու համար:

Դեպի բակտերիալ բջիջներ դեղամիջոցների թիրախային առաքմանը վերաբերող
հետազոտություններում օգտագործվել է ամպիցիլինով ներբեռնված ապոֆերիտինը, որպես
համակարգը ճանաչող մոլեկուլ կիրառվել է լեկտինը: Ստացված արդյունքները *in vivo*
փորձարկումների հիմքն են (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Գասպարյան):

«ՀԱՅԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Շարունակվել է մի շարք օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների
արտադրությունը և իրացումը եվրոպական շուկայում, որոնք ունեն կարևոր բժշկական,
դեղագործական և ախտորոշիչ նշանակություն (ղեկ.՝ ակ. Ա.Սադյան):

Շարունակվել է *L. acidophilus* ՄՄԿ 9602 կաթնաթթվային բակտերիայի կիրառմամբ
«Նարինե» կաթնաթթվային մթերքի արտադրությունը մրգային և ըմպելի՝ բնական
օշարակների (ծիրան, դեղձ, սև թուր և բալ) կիրառմամբ: Շարունակվել է լիոֆիլիզացված
«Նարինե»-ի (դեղափոշի) արտադրությունը: Շարունակվել է լիոֆիլիզացված «Նարինե»-ի
արտադրությունն ադիններում լուծվող պինդ ժելատինային պատիճներով: Այս
արտադրանքներն իրացվում են Երևանի առաջատար դեղատներում և սուպերմարկետ-
ներում (ղեկ.՝ Ռ. Հայրապետյան):

Շարունակվել է գյուղատնտեսության համար անհրաժեշտ համալիր կենսա-
պարարտանյութերի՝ «Էկոբիոֆիդ»-ի և «Էկոբիոֆիդ+»-ի արտադրությունը: Արտադրվել է
շուրջ 1.5տ կենսապարարտանյութ, որն իրացվել է հանրապետության տարբեր գյուղական
տնտեսություններում (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Ավետիսովա):

Շարունակվել է Հայաստանի դեղագործական շուկայում պահանջարկ ունեցող
պատրաստուկների (3% և 30% ջրածնի պերօքսիդ, բորաթթու, մագնեզիումի սուլֆատ,
կալիումի պերմանգանատ, ամոնիումի ջրային լուծույթ, գերչակի յուղ, գլիցերին, 5% յոդի
լուծույթ) արտադրությունը: Պայմանագրային հիմունքներով վերոհիշյալ պատրաստուկ-
ներն իրացվում են «Նատալի-Ֆարմ», «Վագա-Ֆարմ», «Ֆարմ-Դոմ», «Յունիֆարմ», «Սանուս»,
«Արմֆարմացիա», «Ալտա» և այլ մեծածախ ցանցերում (ղեկ.՝ ք.գ.թ. Գ.Հովսեփյան):

Շարունակվել է սառը մամլման եղանակով չիչխանի, կտավատի, պուտավոր
կաթնափուշի, նուշի, սև և սպիտակ քունջութի, դեղձի, ծիրանի, սև չամանի, դդումի և սև
սալորի կորիզների բնական բուսական յուղերի արտադրությունը, կազմակերպվել է նոր
արժեքավոր բուսայուղի՝ նռան յուղի արտադրությունը: Նշված յուղերն ունեն սննդային,
բուժկանխարգելիչ և գեղարարական (կոսմետոլոգիական) նշանակություն (ղեկ.՝ ք.գ.դ.
Ս.Դադայան):

Ուսումնասիրվել են պայմանները և օպտիմալացվել է *Rhizomucor miehei*՝ շրդանի
մակարդիչի մանրէային փոխարինողի բորբոսասնկի կուլտուրայի մակերեսային աճեցման
գործընթացը (ղեկ.՝ կ.գ.թ. Հ.Կարագուլյան):

Գ.ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՎ. ՀԻՂՈՊՈՆԻԿԱՅԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍԵՏՈՒՏ

Առաջին անգամ Հայաստան են ներմուծվել և հիդրոպոնիկ պայմաններում աճեցվել
թանկարժեք թեյաբույս եռաշերտ թիթեոնոլոռը (*Clitoria ternatea* L.) և արժեքավոր

դեղաբույսեր նրբաձաղիկ ռեհանն ու աշվագանդան, որոնք հաջողությամբ հարմարվել են անհող պայմաններին և կարող են ունենալ կիրառական մեծ նշանակություն (դեկ.՝ թղթ. անդ. Ս.Մայրապետյան):

Հայաստան են ներմուծվել գեղազարդ ծառատեսակ սպիտակ հուղայածառի սերմեր (*Cercis siliquastrum* “Alba”), որոնք փորձարկվել են հիդրոպոնիկ մշակությամբ: Ստացված տնկիները կարող են ունենալ էական նշանակություն կանաչապատման գործընթացում (դեկ.՝ գ.գ.դ. Մ.Բաբախանյան):

Կազմակերպվել է բաց դռների օր, ներկայացվել են մորինգա յուղատուի հիդրոպոնիկ աճեցման առանձնահատկությունները, ինչպես նաև տերևափոշուց պատրաստված տարբեր մթերքներ՝ թեյեր, հրուշակեղեն, պանիր (դեկ.՝ կ.գ.թ. Ա.Թադևոսյան):

Հաստատվել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար ծառեր ու թփեր մատակարարելու տենդերը (գլխի վիրգինյան մեծ և փոքր, սոսի արևելյան, կենսածառ արևելյան և այլն) 4 մլն 640 հազար դրամ գումարով (դեկ.՝ կ.գ.թ. Ա.Թադևոսյան, կ.գ.թ. Խ.Մայրապետյան):

Իրացվել է գիտափորձերի արդյունքում արտադրված տարբեր ծառաթփերի (կենսածառ, սոսի, գլխի, կաղնի, սոֆորա, հուղայածառ, մետաքսածառ) շուրջ 600 տնկի (դեկ.՝ կ.գ.թ. Խ.Մայրապետյան):

Մշակվել են գործնական ռադիոպաշտպանիչ առաջարկներ, որոնց կիրառումը հիդրոպոնիկայում և ագրոհամակեցություններում կապահովի ռադիոէկոլոգիապես առավել անվտանգ բուսահումքի ստացումը և կունենա բնապահպանական ու սանիտարահիգիենիկ նշանակություն (դեկ.՝ գ.գ.թ. Լ.Ղալաչյան):

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Կատարվել են «ԱՐԱՄԱՔՍ» և «Արմենիկում» պատրաստուկների ուսումնասիրություններ *in vitro* բջիջների կուլտուրայում և *in vivo* սիրիական համատերների մոդելի վրա: Պարզվել է, որ «ԱՐԱՄԱՔՍ» դեղամիջոցն ունի թերապևտիկ ազդեցություն SARS Cov-2 կորոնավիրուսի («դելտա» շտամ) նկատմամբ՝ նշանակալի նվազեցնելով սիրիական համատերների վիրուսային վարակի ախտաբանությունը: Ըստ ստացված արդյունքների թեն վիրուսային տիտրերի նվազում չի դիտվել, սակայն ակնհայտ է դեղամիջոցի զգալի թերապևտիկ ազդեցությունը, որը սիրիական համատերների մոտ դրսևորվում է կորոնավիրուսային վարակին բնորոշ բարձր ջերմության և քաշի կորստի բացակայությամբ: Նաև ուսումնասիրված դեղամիջոցով թերապիայի ընթացքում նկատվել է համատերների թոքերի ինտերստիցիալ բորբոքման նվազման արագ դինամիկա (որոշվում է թոքերի համակարգչային տոմոգրաֆիայի և հյուսվածքաբանական անալիզի միջոցով): Պատրաստուկը գրեթե ամբողջությամբ վերացնում է վիրուսի ախտաբանական ազդեցությունը համատերների թոքերի վրա մինչև հիվանդության 7-րդ օրը ներառյալ, մինչդեռ SARS-CoV-2-ով («դելտա» շտամ) վարակված սիրիական համատերների խմբում թոքերի վնասման ախտանշանները պահպանվում են 2-4 շաբաթ: «Արմենիկում» դեղամիջոցը ցուցաբերել է ոչ միայն «ԱՐԱՄԱՔՍ»-ին համանման թերապևտիկ, այլև ուժեղ հակավիրուսային ազդեցություն: Ըստ այդմ՝ հայտնաբերվել է վիրուսային տիտրերի զգալի նվազում, ընդհուպ մինչև վիրուսի անհետացում համատերների օրգանիզմից վարակվելուց 3-5 օր հետո (դեկ.՝ կ.գ.դ. Զ.Կարապյան):

Առաջին անգամ Հայաստանում հիմնադրվել է խաղողի տեղածին սորտերի բարձրադիր օրգանական այգի 1.5 հա տարածքով, Վայոց ձորի Արտաբույնք գյուղում՝ ծովի մակերևույթից 2050մ բարձրության վրա: Իրականացվել է տեղածին սորտերի

ամպելոգրաֆիկ բնութագրում և մոլեկուլազենետիկական նույնականացում, *VvMybA1* և *VvMybA2* գեների ալելային բազմաձևության ուսումնասիրություն, հետազոտվող սորտերի ամբողջական գենոմների սեքվենավորում (ղեկ.՝ կ.գ.թ. Ք.Մարգարյան):

Անջատվել են Հայաստանում շրջանավոր աղիքային վարակների հարուցիչների կլինիկական շտամների դեմ բարձր արդյունավետություն ցուցաբերող բակտերիոֆագեր, որոնք կարող են ծառայել որպես հակաբիոտիկակայուն հարուցիչների դեմ պայքարի այլընտրանքային միջոց (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Սեդրակյան):

Լ.ՕՐԲԵԼՈՒ ԱՆՎ. ՖԻԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Կոբրայի թույնի և խնկածաղկի եթերայուղի համակցված պրեպարատի հակացավային և հակաբորբոքային ազդեցությունների հետազոտությունը» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ.Ա.Ոսկանյան) Մ.Հերացու անվ. բժշկական համալսարանի ֆարմակոգնոզիայի ամբիոնի հետ համագործակցության արդյունքում հետազոտվել են խնկածաղկի (*Oreganum vulgare*) եթերայուղի հակացավային, հակաբորբոքային և ցիտոտոքսիկ ազդեցությունները ֆորմալինային թեստի, տաք թիթեղի թեստի և MTT թեստի մեթոդներով: Հետազոտությունները խորացնելու և նոր ցավազրկող պատրաստուկի բաղադրություն ստանալու նպատակով լաբորատորիան ձեռք է բերել եթերայուղերի բազմաֆունկցիոնալ թորիչ:

«Մարդու արյան պլազմայից ալբումինի և նորմալ իմունոգլոբուլինի պատրաստուկների արտադրման տեխնոլոգիաների մշակում և փորձնական նմուշների ստացում» թեմայի շրջանակում մշակվել է համապատասխան ձևաչափը և ձեռք են բերվել ֆիլտրներ:

«Մոդիֆիկացված նանոմասնիկների և 5-ֆտորուրացիլի համակցված ազդեցության վերլուծությունը Քրոքերի սարկոմայի և ռաբդոմիոսարկոմայի աճի և զարգացման վրա» թեմայի շրջանակում բելառուս գործընկերներից ստացվել են նշված նանոմասնիկները, ինչպես նաև ստացվել է Քրոքերի սարկոմայի կենդանական մոդելը մկների վրա հետագա փորձարկումների համար (ղեկ.՝ կ.գ.թ.Գ.Կիրակոսյան):

«PSI» ընկերության հետ համատեղ, SFCO-սենսորների կիրառմամբ, իրականացվել են ֆիզիոլոգիական հակազդումների պոլիգրաֆիկական հետազոտություններ՝ ի պատասխան մարդու հուզական վիճակի մոդուլյացիայի: Հետազոտվողի մոտ հուզական հակազդեցության հարուցման համար առաջին անգամ լաբորատորիայում կիրառվել են վիրտուալ իրականության տեխնոլոգիաներ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Խաչունց):

ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎ. ՔԻՄԻԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ստեղծվել է 2016-18թթ. Սևանա լճի ու սնուցող գետերի ջրերում ու հատակային նստվածքներում պեստիցիդների պարունակության տվյալների բազա: Ըստ տարիների կազմվել են Սևանա լճում պեստիցիդների կոնցենտրացիոն բաշխման եռաչափ քարտեզներ:

«Եվրամիության ջրային նախաձեռնությունն պլյուս Արևելյան համագործակցության համար (EUWI+4EaP) և ջրի միջազգային գործակալության» ծրագրով (2019-21թթ.) հատկացված դրամաշնորհի շրջանակում, Եվրամիության ջրի շրջանակային դիրեկտիվի մեթոդաբանությամբ և մոտեցումների հիման վրա կազմվել է Հրազդանի գետավազանի կառավարման պլան, ներկայացվել է ՀՀ ԲՆ և կառավարություն հաստատմանը (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Մինասյան):

Մ.ՄԱՆՎԵԼՅԱՆԻ ԱՆՎ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մշակվել է պարարտանյութերի ստացման տեխնոլոգիա Հայաստանի ֆոսֆոր պարունակող կենսածին դիատոմային ապարներից: Պարարտանյութերի վեգետատիվ փորձարկումները կատարվել են Հայաստանի պետական ագրարային համալսարանում: Ստացվել են նաև մագնեզիում և ֆոսֆոր պարունակող պարարտանյութեր Հայաստանի սերպենտինիտներից (դեկ.՝ տ.գ.թ. Կ.Գրիգորյան):

Սինթեզվել են բարձր թափանցելիությամբ ապակիներ ինֆրակարմիր տիրույթում, որոնք առանձնանում են բեկման ցուցիչի և հարաբերական դիսպերսիայի արժեքների փոփոխության լայն տիրույթով, դյուրահալությամբ և բյուրեղացման նկատմամբ բարձր կայունությամբ՝ կիրառելի ժամանակակից օպտիկայի, օպտոէլեկտրոնիկայի և օպտիկական սարքաշինության բնագավառներում:

Մշակվել է թափանցիկ ապակեկերամիկա բյուրեղային $\text{BaAl}_2\text{Si}_2\text{O}_8$ ֆազով ակտիվացված Eu^{2+} -ով, որի հատկություններն ուսումնասիրվել են ռենտգենաստրուկտուրային և ֆոտոլյումինեսցենտային սպեկտրոսկոպիայի միջոցով: Օդի մթնոլորտում ապակու ջերմային մշակումը նպաստել է բյուրեղային ֆազերի առաջացմանը, որոնցից հիմնականներն են ցելզիանը և հեքսացելզիանը: Ակտիվատորի իոններն ապակու կառուցվածքում գտնվել են երկու վալենտային վիճակներով (Eu^{2+} և Eu^{3+}): Նյութերի բյուրեղացման ընթացքում Eu^{3+} իոնների կոնցենտրացիան նվազել է՝ առաջացնելով Eu^{2+} , որն ապակու կառուցվածքում գտնվել է նանոբյուրեղների տեսքով, ինչը զգալիորեն մեծացրել է սինթեզված ապակեկերամիկայի ճառագայթման ինտենսիվությունը սպեկտրի կապույտ տիրույթում: Սինթեզված թափանցիկ Eu^{2+} լեզիրացված $\text{BaAl}_2\text{Si}_2\text{O}_8$ ապակեկերամիկան կարելի է կիրառել որպես սպիտակ լուսարձակող դիոդներ (LED) (դեկ.՝ տ.գ.դ. Ն.Կնյազյան):

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԳԻՏՍԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ուսումնասիրվել են ամինախմբի կողմից ինքնակատալիզացված հիդրոլիզի ռեակցիան, 3-ամինոպրոպիլտրիէթոքսիսիլանի (APTES) պոլիկոնդենսացումը, APTES-ի և քառաթեթոքսիսիլանի (TEOS) համապոլիկոնդենսացումը ջրային միջավայրում՝ սիլիցիումի երկօքսիդի քսերոգելների ձևավորմամբ: Պարզվել է, որ APTES-ի պոլիկոնդենսացիայի և APTES-ի ու TEOS-ի համապոլիկոնդենսացման արդյունքում APTES:TEOS=4:1 հարաբերությամբ առաջանում են ճյուղավորված պոլիմերային շղթայի կառուցվածքով քսերոգելներ, որոնք լուծելի են ջրում և էթանոլում, իսկ APTES:TEOS=1:1 հարաբերակցության դեպքում ձևավորվում են չլուծվող եռաչափ կառուցվածքներ: Գործընթացն էկզոթերմիկ է: Սիլիկասերո-գելներին բնորոշ սորբցիոն հատկությունների հետ մեկտեղ գոլ-գելի սինթեզի արդյունքում ստացված քսերոգելները պարունակում են ռեակտիվունակ առաջնային ամինախումբ, որը հարմար է սիլիցիումի երկօքսիդի վրա իմոբիլիզացված (քիմիո-սորբացված) պոտենցիալ կենսաբանական ակտիվ միացությունների սինթեզի համար (դեկ.՝ ք.գ.դ. Ս.Գրիգորյան):

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ամփոփվել և հրատարակվել են ՀՀ հյուսիսային հատվածում տրանսպորտային հաղորդակցությունները շրջափակող Օձուն, Այրում և Թումանյանի ակտիվ սողանքների վերջին տարիներին իրականացված ուսումնասիրությունները: Նշված սողանքային

մարմինների տարածքներում իրականացված ինժեներաերկրաբանական և երկրաֆիզիկական հետազոտությունների արդյունքների հիման վրա կատարվել են վերլուծություններ, իրականացվել է սողանքային մարմինների եռաչափ մոդելավորում, որոշվել են սողանքների սահքի մակերևույթները, գնահատվել է սողանքների ակտիվության ներկա վիճակը և սահմանվել են հակասողանքային միջոցառումներ (ղեկ.՝ Ե.Գ.Թ. Մ.Գևորգյան):

Շարունակվել են գրունտների սինթետիկ սեյսմոգրամաների և աքսելերոգրամաների ստացման հիմնախնդրի հետազոտությունները: Առաջարկված եղանակով սինթետիկ աքսելերոգրամաների հիման վրա ստացվել են երկրաշարժի հակազդումների սպեկտրներ սեյսմիկ հատկություններով նորմատիվային I-IV կարգերով գրունտային շինարարական հրապարակների համար: Կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ սինթետիկ աքսելերոգրամաներով ստացված հակազդումների սպեկտրներն ինչպես քանակական, այնպես էլ կառուցվածքային բնույթով նույնական են իրական երկրաշարժների հիման վրա ստացված երկրաշարժի հակազդումների սպեկտրին, ինչը վկայում է առաջարկվող սինթետիկ աքսելերոգրամաների գործնական կիրառման անհրաժեշտության մասին:

Հայաստանի ազգային ճարտարապետության և շինարարության համալսարանում մշակված «Երկաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» նորմատիվային փաստաթուղթը, ներառյալ ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գնահատման նոր քարտեզը, մշակված միջազգային (ԱՄՆ, Իտալիա, Հայաստան կոնսորցիում) մասնագետների կողմից, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հրամանով կիրարկման է դրվել 2021թ.-ից (ղեկ.՝ ալ. Է.Խաչիյան):

Իրականացվել է ԵԳԻ էլեկտրոնային գրադարանի <http://10.77.0.181:5000> կայքի անցումը լոկալ ցանցից վեբ միջավայր՝ ապահովելով հասանելիություն նաև ԵԳԻ տարածքից դուրս՝ <http://library.geology.am/> (ղեկ.՝ Ե.Գ.Թ. Ա.Ավագյան):

Ա.ՆԱԶԱՐՈՎԻ ԱՆՎ. ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԻՆՇԵՆԵՐԱՅԻՆ ՄԵՅՍՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Նախագծվել, պատրաստվել, փորձարկվել են հատուկ հաճախականային տիրույթում (0.75 Հց) աշխատող սեյսմիկ տվիչ շենքերի տեխնիկական վիճակն ուսումնասիրելու նպատակով (ղեկ.՝ Ա.Գասպարյան), սեյսմիկ պաշտպանության համակարգ՝ ջրամբարների պատվարները շահագործելու նպատակով (ղեկ.՝ Ե.Գ.Թ. Զ.Կարապետյան), էլեկտրա-հետախուզական դյուրակիր, ֆունկցիոնալ տեսանկյունից ձկուն բազմաէլեկտրոդ սարք (ղեկ.՝ Մ.Միրանյան), երկրաֆիզիկական կայանների անխափան աշխատանքի «խելացի» համակարգ (ղեկ.՝ Ս.Շահպարտյան):

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ինստիտուտի գիտաշխատողները պարբերաբար պատկան մարմիններին են ներկայացրել ՀՀ արտաքին քաղաքականության մի շարք հիմնական ուղղությունների (մասնավորապես մերձավորարևելյան և տարածաշրջանային) մշակմանը և իրականացմանը նպաստող, ՀՀ ազգային անվտանգությանը վերաբերող գիտական և գիտավերլուծական նյութեր, ներգրավվել են ՀՀ արտաքին քաղաքականության շուրջ ծավալվող խոսույթում՝ հայաստանյան և արտասահմանյան հեղինակավոր ԶԼՄ-ներին

տրված փորձագիտական հարցազրույցների ընթացքում ներկայացնելով իրենց գիտական պրպտումների արդյունքները:

Ինստիտուտի աշխատակիցները հրատարակել են դպրոցական և բուհական դասագրքեր (մասնավորապես եզդիական դպրոցների համար):

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Արցախի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն» ենթածրագրի (ղեկ.՝ պ.գ.դ. Հ.Պետրոսյան) կատարողները, ի պատասխան 44-օրյա պատերազմի արդյունքում Արցախի Հանրապետության գերակշիռ մասի օկուպացման և Արցախի մշակույթի ոչնչացման ու բռնազավթման, հայաստանյան և միջազգային գործընկերների հետ ստեղծել են <https://monumentwatch.org/> ակադեմիական հարթակը, որտեղ ներկայացնում են Արցախի մշակութային ժառանգությունը, հետևում նրա վիճակին: Կայքը եռալեզու է՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն, բաղկացած է 4 հիմնական բաժիններից և 10 ենթաբաժիններից: «Մշտադիտարկում, անհազանգ» բաժնում ներկայացվել են Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման, ադրբեջանական վանդալիզմի դեպքերն արցախյան պատերազմի ընթացքում և դրանից հետո, արդեն իսկ ներկայացվել է նման 40 դեպք:

«Կիրառական ազգագրության» ենթածրագրի (ղեկ.՝ պ.գ.թ. Հ.Խառատյան) կատարողները մշակել են ՀՀ հանրակրթական դպրոցների՝ ատեստավորման ենթակա պատմության ուսուցիչների վերապատրաստման «Պատմության դասավանդման հետազոտահենք մեթոդների կիրառում» դասընթացի մոդուլը, որը երաշխավորվել է ԿԳՄՄՆ կողմից գալիք 3 տարվա համար: Մասնակցել են Ազգային ժողովի Քաղաքացիական կրթության կենտրոնի հայեցակարգի մշակման խմբի աշխատանքներին՝ կարիքների գնահատման մեթոդաբանության մշակմանը, դաշտային աշխատանքներին, հայեցակարգի նախապատրաստմանն ու ներկայացմանը:

Արխիվի աշխատակիցների ուժերով ստեղծվել և հաջողությամբ գործում է iae-archive.am կայքը, որտեղ ներկայացվել են «տան սուրբ» ձեռագրերը, որտեղ տեղ են գտնելու արխիվի թիմի իրականացրած այլ ծրագրերի արդյունքները: Թվայնացվել են Վ. և Գ.Մանասարյանների «Կարինի ազգագրություն» և Ա.Օդաբաշյանի «Շապին-Գարահիսարի պատմություն և ազգագրություն» նյութերը (ղեկ.՝ պ.գ.թ. Լ.Սիմոնյան):

Շահումյանի դամբարանի պեղումների արդյունքները ցուցադրվել են Հ.Շարամբեյանի անվ. ժողովրդական արվեստների թանգարանում կազմակերպված ժամանակավոր ցուցադրությունում (ղեկ.՝ պ.գ.դ. Ռ.Բադալյան):

Վերականգնվել և հետազոտության ու թանգարանացման համար նախապատրաստվել են 16 հուշարձանից հայտնաբերված տարբեր դարաշրջանների գտածոներ՝ 446 խեցանոթ, ավելի քան 15000 խեցատ, մետաղից, ապակուց, քարից և ոսկրից պատրաստված շուրջ 150 մեծարժեք իրեր (ղեկ.՝ Լ.Մանուկյան):

Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎ. ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հրապարակվել են բարբառային և նորաբանությունների բառարաններ, գրական լեզվի կանոնարկման ու ուսուցման խնդիրներին առնչվող ձեռնարկներ: Ստեղծվել է հայերեն էլեկտրոնային սրբագրման համակարգ (գործում է համացանցային առանձին երկլեզու կայքում՝ [armspell.am](https://armspell.am/hy) (<https://armspell.am/hy>)), որն ուղղագրական և քերականական սխալների ստուգումը կատարում է շտեմարանում առկա բառերի հետ համեմատելու միջոցով:

Ձևավորվել է հայերենի բառակազմության էլեկտրոնային շտեմարան՝ համացանցային առանձին երկլեզու կայքում ([formlang.am\(https://formlang.am/hy\)](https://formlang.am/hy)): Շտեմարանն ունի որոնման լայն հնարավորություն:

Հրապարակվել է «ՀՀ ԳԱԱ ԼԻ Տեղեկագիրք 2020» գիրքը, որը ներկայացնում է ինստիտուտի աշխատակիցների հրապարակած աշխատանքների համառոտագրերը երեք լեզուներով:

Մ.ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կազմն ու կառուցվածքը ու դրանց փոփոխության միտումները հետհեղափոխական Հայաստանում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ թղթ. անդ. Վ.Հարությունյան) յուրաքանչյուր հարկատեսակի գծով կատարվել են համապատասխան եզրակացություններ: Գրականության ակնարկի հիման վրա պարզվել է, թե ՀՀ-ի դեպքում որ շեմը կարող է համարվել պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության սահմանային շեմ, որը գերազանցելու դեպքում վերջինս կարող է բացասաբար անդրադառնալ իրական ՀՆԱ-ի վրա, ներակայցվել են հարկային եկամուտների կառուցվածքում 4 հիմնական համարվող հարկատեսակների դինամիկան և դրանց ավելացման վրա ազդող գործոնները, պետական պարտքի հետ կապված և դրան առնչվող այլ հիմնական ռիսկերը: Ուսումնասիրվել են ԱՄՆ ներքին եկամուտների ծառայության (IRS) վերջին տասնամյակում որդեգրած քաղաքականության առանձնահատկությունները, որոնց հիման վրա, օպտիմալ հարկման մեթոդաբանության միջոցով, փորձ է արվել գնահատել հարկային դրույքաչափերի և աշխատուժի պահանջարկի/առաջարկի հավասարակշռության միջև կապը ՀՀ-ում: Ուսումնասիրվել է ֆինանսական տեխնոլոգիաների ներդրման միջազգային փորձը (ԵՄ, Քենիա), դրա տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում: Վերլուծվել է ՀՀ ՊԵԿ «Հարկային վարչարարության բարելավման և զարգացման ռազմավարական ծրագիր 2019-2024թթ.» նախատեսված բարեփոխումների ընթացքը, ՊԵԿ-ի կողմից հարկային արտոնությունների տրամադրման գործընթացը, համեմատության համար բենչմարկ է ընտրվել ԱՄՆ Ներքին եկամուտների ծառայության (IRS) հարկային արտոնությունների տրամադրման համակարգը, մասնավորապես հարկային վարկերի տրամադրման պայմաններն ու արդյունավետությունը: Վերլուծության հիման վրա փորձ է արվել համեմատել հարկային արտոնությունների և ուղղակի սուբսիդավորման համակարգերի արդյունավետությունը:

«Միջազգային մրցունակության աճը որպես ՀՀ տնտեսության զարգացման գրավական» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տ.գ.թ. Լ.Սարգսյան) հանգամանորեն մշակվել է միջազգային մրցունակության աճին նպաստող միջոցառումների իրականացման գործիքակազմ: Ըստ այդմ՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման նպատակով առաջարկվել է ներդնել աշխատաշուկայի պահանջարկի կանխատեսման համակարգ, համապատասխանեցնել կրթական ծրագրերն աշխատաշուկայի պահանջարկին: Ապրանքային շուկաներում մրցունակության աճի նպատակով անհրաժեշտ է գործի դնել արտահանման խթանման ողջ գործիքակազմը՝ միջազգային ցուցահանդեսներին հայկական կազմակերպությունների մասնակցության օժանդակությունը, ՀՀ առևտրային ներկայացուցիչների միջոցով հայկական ապրանքների առաջմղումն արտաքին շուկաներում, արտահանման վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորումը: Ներդրումների աճ ապահովելու նպատակով մշակվել է առաջարկությունների 3 փաթեթ՝ ընդհանուր բնույթի, օրենսդրական բարեփոխումների՝ ուղղված համայնքի զարգացման խնդիր լուծող

կազմակերպությունների գործունեությանը և միտված արտահանող կազմակերպությունների գործունեության բարելավմանը:

«Տնտեսության ճգնաժամային կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տ.գ.թ. Հ.Մարկոսյան) առաջարկվել է մշակել ճգնաժամային մշտադիտարկման համակարգ՝ հիմնված չափելի ցուցանիշների ընտրության, թույլատրելի շեղումների սահմանման, արձանագրված շեղումներին համապատասխան ռազմավարությունների գործարկման և արդյունքների վերահսկման համակարգերի համակցության վրա, որոնք պետք է ունենան իրավական ուժ, ինչը կարող է երաշխիք հանդիսանալ ճգնաժամային կառավարման հրատապ և համարժեք միջոցառումներ գործադրելու համար՝ զերծ պահելով տնտեսությունը քաղաքական և արտաքին անկայունության պայմաններում լուրջ ցնցումներից: Գնահատվում է ճգնաժամային կառավարման արդյունավետության հիմքում ճգնաժամային կառավարման ոլորտային ռազմավարությունների մշակումն է՝ հիմնված ճգնաժամերի վաղ ախտորոշման, հրատապության, համարժեքության, հասցեականության, համամասնակցության և ժամանակավորության սկզբունքների վրա: Դրանցում պետք է գնահատվեն ոլորտին սպառնացող ռիսկերը, դրանց թողած հնարավոր հետևանքները, մշտադիտարկման մեխանիզմներն ու միջոցառումների այն շրջանակը, որը պիտի կիրառվի այս կամ այն ռիսկն ի հայտ գալու պարագայում՝ ներառելով իրավական, ֆինանսական, իրական հատվածի և սոցիալական կարգավորման ոլորտներին առնչվող միջոցառումների ցանկը: ՀՀ մակրոտնտեսական ցուցիչների ուսումնասիրության հիման վրա առաջարկվել են ոլորտային հակաճգնաժամային ռազմավարությունների մշակման սկզբունքներ՝ կարևորագույն նշանակություն ունեցող աշխատանքային միգրացիայի, պետական կառավարման, էներգետիկ, գյուղատնտեսության, ֆինանսավարկային, առողջապահության, պարենային համակարգերի զբոսաշրջության, անշարժ գույքի ոլորտների ճգնաժամային ռիսկերի և հաղթահարման ուղիների մշակման ուղղությամբ:

«Թվային տնտեսության դերը ՀՀ ագրոպարենային համակարգում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տ.գ.թ. Մ.Մանուչարյան) առաջարկվել է բարձրացնել ֆերմերների տեղեկացվածությունը թվային գյուղատնտեսության վերաբերյալ, բնակչության էլեկտրոնային գրագիտությունը (կադրերի վերապատրաստում և կրթության վերափոխում), մշակել պետական աջակցության ծրագրեր՝ ուղղված թվային գյուղատնտեսության զարգացմանն ու տարածմանը, մրցութային կարգով ընտրել SS ընկերություն, որը կմշակի հեռախոսային հավելվածներ, որոնք կօգնեն ֆերմերներին ստանալ ագրոօդերևութաբանական տեղեկություններ, հետևել մշակաբույսերի աճի և զարգացման փուլերին, ձեռք բերել ֆինանսական ծառայություններ և այլն:

«Բարձր տեխնոլոգիական հենքի վրա տնտեսության դիվերսիֆիկացման հնարավորություններն ու կառուցակարգերը ՀՀ-ում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ տ.գ.թ. Մ.Դավթյան), հիմք ընդունելով Էստոնիայի փորձը, առաջարկվել է ՀՀ-ում ներդնել X-road պետական ցանցը, որն ապահովում է տվյալների արագ և անվտանգ փոխանակում տարբեր մարմինների, ընկերությունների, ծառայությունների, մարդկանց միջև, ինչը հիմնված է թվային նույնականացման ծրագրի ու կացության էլեկտրոնային համակարգի ներդրման վրա, երկրի թվային զարգացման համար արդյունավետ մեխանիզմ է: Առաջարկվել է մշակել ՀՀ ինովացիոն տնտեսության դիվերսիֆիկացման ռազմավարություն, որտեղ ներառված կլինեն այն հիմնական նեղ մասնագիտացված ուղղությունները, որոնցով ՀՀ տնտեսությունը կարող է առաջանցիկ զարգացման հեռանկարներ ունենալ՝ ծրագրային ու տեխնիկական լուծումներ պահանջող հավելվածների մշակում, բիոթեք ու թվային առողջապահություն, ինժեներային սեյսմաբանության զարգացում, թվային ապահովագրություն:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ինստիտուտի իրավագետները ՀՀ-ում գործող փաստաբանական գրասենյակների, ՀՀ փաստաբանների պալատի, Փաստաբանական դպրոցի հետ շարունակել են սահմանադրաիրավական բարեփոխումների, ընթացիկ օրենսդրությունում առկա բացերի, միջազգային ատյաններում պետության հայեցողության սահմանների հստակեցման, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, օրինական շահերի պաշտպանության, կառավարման խորհրդարանական ձևի կատարելագործման կիրառական հետազոտությունները, իսկ արդյունքները ներկայացվել են պետական կառույցներին, շահագրգիռ կազմակերպություններին: Իրավագետները նաև տրամադրել են անվճար իրավաբանական խորհրդատվություններ, այդ թվում՝ հայ-ադրբեջանական պատերազմից տուժած անձանց: Միջազգային և ներպետական համագործակցության շրջանակներում տրամադրվել են իրավաբանական խորհրդատվություններ, իրականացվել է տարաբնույթ փաստաթղթերի, օրենքների, օրինագծերի, որոշումների, դրանց նախագծերի գիտական փորձաքննություն, անվճար իրավաբանական խորհրդատվության տրամադրում ներպետական և միջազգային մի շարք կառույցներին վիճահարույց, կոլլիզիոն իրավական խնդիրների վերաբերյալ (դեկ.՝ իր.գ.թ. Լ.Ղազանչյան):

ԳԱԱ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ

2021թ. պետական գնման պայմանագրի շրջանակում իրականացվել է 9262 դատական փորձաքննություն, քրեադատավարական օրենսդրության շրջանակում՝ շուրջ 129, քաղաքացիական դատավարության շրջանակում՝ 185, վարչական դատավարության շրջանակում՝ 26, քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակում՝ 352:

ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

«Ամպային հաշվարկների միջավայրի ստեղծում գիտական և կիրառական խնդիրների լուծման համար»

Համակարգող՝ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի փոխտնօրեն Ֆ.-մ.գ.թ. Վ.Սահակյան

Ծրագիրը նպատակաուղղված է բնագիտական (հիդրոոդերևութաբանության, բնապահպանության, սեյսմաբանության, կենսաբանության և բժշկական գենետիկայի) խնդիրների լուծմանն ու ամպային ենթակառուցվածքի զարգացմանը՝ օգտագործելով ազգային հետազոտական էլեկտրոնային ենթակառուցվածքի հնարավորությունները:

Ծրագրին մասնակցել են Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների, Երկրաբանական գիտությունների (ԵԳԻ), Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության (ԵԻՍԻ), Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի, Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտների, Գիտակրթական միջազգային կենտրոնի և Շրջակա միջավայրի նախարարության առաջատար մասնագետները:

Հաշվետու տարում կատարվել են ամպային ենթակառուցվածքների և ծառայությունների մշակման հետազոտություններ: Մասնավորապես կատարվել են տվյալների պահպանման և մշակման ամպային ծառայություն ստեղծելու աշխատանքներ, որոնց արդյունքում ընդլայնվել են նախորդ տարիներին ստեղծված և զարգացված ամպային հաշվողական միջավայրի հնարավորությունները՝ նրա մեջ ներառելով նոր հաշվողական (բազմապրոցեսորային և ընդհանուր նշանակության սերվերներ գրաֆիկական պրոցեսորներով) և տվյալների պահպանման հզորություններ: Armenian Data Cube հարթակի և մեքենայական ուսուցման տեխնոլոգիաների օգտագործմամբ լուծվել են անհրաժեշտ արբանյակային պատկերների որոնման, ստացման, մշակման և պահպանման խնդիրները, մշակվել են օդի ջերմաստիճանի մշտադիտարկման և կանխատեսման, ջրային օբյեկտների առափնյա գծի տարանջատման, օդի աղտոտիչների կոնցենտրացիայի մշտադիտարկման և այլ ծառայություններ:

Օդերևութաբանության և բնապահպանության բնագավառներում շարունակվել են գիտահետազոտական աշխատանքները, այդ թվում՝ Հայաստանում կլիմայի փոփոխության և խոցելիության գնահատման մոդելների ներդրման, Weather Research and Forecasting (WRF) եղանակի կանխատեսման թվային մոդելի օգնությամբ բարձր լուծաչափի եղանակի կանխատեսումների ստացման, արեգակնային ճառագայթման և քամու ներուժի բաշխման տարածական մոդելի մշակման, մթնոլորտային արտանետումների հիմնապահեստների ստեղծման և զարգացման (տարածքային նորմավորման մեխանիզմի ներդրման նպատակով), մթնոլորտային արտանետումների գնահատման ու կանխատեսման ժամանակակից մոդելների և ցրման հաշվարկներ կատարող համակարգչային ծրագրերի փորձարկման ու ներդրման, մթնոլորտի աղտոտվածության կանխատեսման մեթոդիկայի մշակման ուղղություններով:

Սեյսմաբանության բնագավառում կատարվել են հետևյալ աշխատանքները՝ ԵԳԻ-ի սեյսմիկ կայաններից ստացվող ալիքային պատկերների արխիվային տվյալների կուտակման և պահպանման համար ամպային պահոցի ստեղծում և նրա անխափան աշխատանքի ապահովում տվյալների մուտքագրման և արխիվացման տարբեր հնարավորություններով, ամպային միջավայրում անհրաժեշտ ծրագրային գործիքների և փաթեթների տեղադրում և նրանց անխափան աշխատանքի ապահովում, ամպային միջավայրում տվյալների շտեմարանների հասանելիության, ինչպես նաև տվյալներ

փնտրելու համապատասխան գործիքների առկայության ապահովում և բնական ու տեխնոգեն աղետների հնարավոր կանխարգելման նպատակով վաղ ազդարարման երկրատեղեկատվական համակարգի մշակում:

Կենսաբանության բնագավառում կատարվել են լիպիդային երկշերտ/տրանսմեմբրանային ռեցեպտորներ համակարգի մոդելավորման աշխատանքներ՝ ուսումնասիրելով բարդ համակարգերը բավականին լայն սպեկտրի բնական պրոցեսների բնութագրման համար, համեմատելով առկա համակարգչային մոդելավորման արդյունքները փորձարարական տվյալների հետ:

Բժշկական գենետիկայի բնագավառում լուծվել է 2 խնդիր՝ «Սոմատիկ և ժառանգական մուտացիաների կապը գենների էքսպրեսիայի և կենսաբանական պրոցեսների հետ քաղցկեղների ժամանակ» և «Ուղեղի նորմալ և ախտաբանական զարգացման ժամանակ ամբողջական գենոմի էքսպրեսիայի փոփոխությունների հետազոտություն»:

Պետական նպատակային ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված արդյունքները հրապարակվել են 32 հոդվածում:

«Սևանա լճի էվորոֆագման մեխանիզմների գնահատում և «ծաղկման» երևույթների դեմ պայքարի մեթոդների մշակում»

Համակարգող՝ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն կ.գ.դ. Բ.Գաբրիելյան

Սևանա լճի ջրի «ծաղկման» գործընթացին հետևելու և նշված երևույթների դեմ պայքարի մեթոդներ մշակելու նպատակով շարունակվել են Սևանա լճում ֆիտոպլանկտոնային համակեցության զարգացման ուսումնասիրությունները, գնահատվել է ջրի «ծաղկման» գործընթացի ինտենսիվությունը, հետազոտվել է ջրի կազմը, վերջինիս կրած փոփոխությունները «ծաղկման» ընթացքում և ջուրը ցեոլիտներով մաքրելուց հետո: *Tradescantia (clon 02)* բույսի կիրառմամբ կատարվել է «ծաղկած» և ցեոլիտներով մաքրված ջրային նմուշների գենոտոքսիկության և կլաստոգենության մակարդակների բիոթեստավորում: Մշակվել է ջրի մաքրման մոդելային սարքի նախագիծը և ստեղծվել համապատասխան մոդել:

Ֆիտոպլանկտոնային համակեցության հետազոտությունները ցույց են տվել, որ այս տարի ջրի «ծաղկումը» լոկալ բնույթ է կրել և, չի տարածվել ամբողջ լճով: Հունիս ամսին «ծաղկում» է գրանցվել Լիճք համայնքի հարակից ջրային տարածքում, որտեղ *Dolichospermum/Anabaena flos-aquae* ցիանոբակտերիայի թվաքանակը հավասարվել է 25132000 բջ/լ, իսկ կենսազանգվածը՝ 100 գ/մ³: Լիճքի դիտակետի նմուշներում հայտնաբերվել են նաև *Anabaena* տեսակի հետերոցիստներ, որոնց քանակը մեկ լիտրում հավասարվել է մոտ 500000 բջջի: Ակտիվացված ցեոլիտներով մաքրում իրականացնելուց հետո լճի ջրում *Anabaena flos-aquae* տեսակի ջրիմուռների բջիջներ կամ հետերոցիստեր չեն հայտնաբերվել:

«Ծաղկած» ջրի նմուշը բնութագրվել է կետային մուտացիաների բարձր մակարդակով (գենոտոքսիկ ազդեցություն, գերազանցելով ստուգիչին 3 անգամ), անկենսունակ մազիկների քանակով (տերատոգեն ազդեցություն, գերազանցելով ստուգիչին 16 անգամ), ինչպես նաև տետրադներում միկրոկորիզների քանակով և միկրոկորիզներ պարունակող տետրադների տոկոսով (կլաստոգեն էֆեկտներ, գերազանցելով ստուգիչին 2,5 անգամ): Ըստ հիդրոքիմիական վերլուծության, պարզվել է, որ ծաղկման շրջանում Լիճքի նմուշը բնութագրվել է թթվային միջավայրով (pH 5,9), K , Mg , Cl , Na , SO_4 , HCO_3 իոնների բարձր կոնցենտրացիայով և օրգանական նյութերի առկայությամբ, ինչը հավանաբար հանգեցրել է

բարձր գենոտոքսիկ ազդեցության: Ցեոլիտով մշակված ջրի նմուշներում նկատվել է ուսումնասիրվող գենետիկական թեստ-մարկերների մակարդակի նվազում:

«Փորձագիտական երկրաքիմիական քարտեզների մշակում կայուն գյուղատնտեսության զարգացման և սննդի անվտանգության ապահովման համար»

Համակարգող՝ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն աշխ.գ.թ. Լ.Սահակյան

Կոտայքի մարզի ռեգիոնալ մասշտաբի հողային հանույթից նմուշառվել է 86 նմուշ, որոնցում որոշվել են Cr, V, Ti, As, Zn, Cu, Co, Fe, Mn, Ba, Pb ու Mo տարրերի պարունակությունները և α ու β ակտիվության ցուցանիշները: Ստեղծվել է տվյալների բազա, և կատարվել է ուսումնասիրված ցուցանիշների քարտեզագրում: Արդյունքում հաստատվել է, որ ուսումնասիրված ցուցանիշների տարածաբաշխման առանձնահատկություններն առավելապես պայմանավորված են երկրաբանական հենքի կազմությամբ և ներկայանում են երկու առանձին երկրաքիմիական ասոցիացիաներով՝ Fe, Co, Ti, As, Cu, Cr (բազալտներ, անդեզիտներ, դաքիտներ և այլն) և Pb, Zn, Mn, Ba (գրանիտներ, գրանոդեորիտներ, գաբրոներ և այլն): ՀՀ-ում սահմանված ՄԹԽ նկատմամբ գերազանցումներ հայտնաբերվել են Cr, As, Cu, Mn և Pb դեպքում, իսկ մարդու առողջությանն ուղղված միատարր ոչ քաղցկեղածին և կյանքի տևողության քաղցկեղածին ռիսկ չի գրանցվել: Երեխաների համար մոնոտարր ոչ քաղցկեղածին ռիսկ դիտվել է As-ի դեպքում, մեկ տեղամասում: Մարզի գրեթե ամբողջ տարածքում գրանցվել է երեխաների առողջությանն ուղղված ոչ քաղցկեղածին ռիսկ, որն առավելապես պայմանավորված է Fe, Co, Mn, Pb և As տարրերով:

Գեոպարկը որպես տնտեսության կայուն զարգացման և բնապահպանության խթան Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում

Համակարգող՝ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ ծրագրի ղեկավար ե.գ.դ. Ա.Ավագյան

Ծրագրի իրականացման արդյունքում մշակվել են ՀՀ-ում առաջին գեոպարկի ստեղծման գիտական նախադրյալները:

Վերլուծվել է ինչպես միջազգային, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում երկրատեղանքների (Geosite) ընտրության չափանիշների առկա փորձը: Նախքան երկրատեղանքների ընտրությունը մանրամասն ուսումնասիրվել են հրապարակումները, որին հետևել են տեղային աշխատանքները: Սկզբում վերլուծվել են բնության և երկրաբանական հուշարձանների առկա ցանկերը (e.g. Qocharyan 1979, Grigoryan et al., 1987, Melik-Adamyan 1998, Melik-Adamyan et al., 2019, Avanesyan 2017, Nature of Armenia 2006, ՀՀ բնության հուշարձանների ցանկը (ՀՀ որոշում-2013, <https://ace.aua.am/hy/gis-and-remotesensing/maps/natural-monuments/>): Երկրատեղանքների վերջնական ընտրության համար հիմք են հանդիսացել նաև բազմաթիվ հայ և օտարերկրյա երկրաբանների աշխատանքները: Երկրատեղանքները վերաբերում են տարբեր երկրաբանական ճյուղերին, ինչպիսիք են ակտիվ տեկտոնիկանը (օր.՝ Philip et al., 2001; Karakhanyan et al., 2017a, b; Trifonov et al., 1994, 2017; Avagyan et al., 2010, 2017, 2018; Ritz et al., 15 2016), հրաբխականությունը (օր. Karakhanian et al., 2002, 2013, Ջրբաշյան 2013; Neill et al., 2015; Навасардян 2006, Меликсетян 2018), երկրադինամիկան և շերտագրությունը (օր.՝ Galoyan et

al., 2009; Sosson et al., 2010; Sahakyan et al., 2017a), նստվածքագիտությունը և հնէաբանությունը (օր.՝ Danelian et al., 2012; Sahakyan et al., 2017b,c; Friesenbichler et al., 2018; Joachimski et al., 2019; Serobyanyan et al., 2021), հիդրոերկրաբանական (օր.՝ Շահինյան և ուր., 2019) և այլն:

Երկրատեղանքների դասակարգման համար ուսումնասիրվել են միջազգային և հանրապետական գրականության բազմաթիվ օրինակներ, և ՀՀ առաջին գեոպարկի համար մշակվել է անձնագրավորման 10 պահանջից բաղկացած ձև, ինչպես նաև երկրատեղանքների մասնակի և ընդհանրական գնահատման աղյուսակ:

Գեոպարկում առաջարկվում է ընդգրկել տարածքներ հիմնականում Գեոարքունիքի և Վայոց ձորի մարզերից: Դրա հիմնական պատճառները երեքն են՝ ֆինանսավորման բազմապատիկ կրճատումը, հնարավորինս կոմպակտ տարածքի ընդգրկումը և պատերազմական գործողությունների հետևանքով նախատեսվող երկրատեղանքների սահմանային կամ մերձսահմանային տեղադրված հայտնվելը: Աշխատանքների ընթացքում նպատակահարմար է դարձել ներառել փոքրիկ տարածքներ նաև Արարատի և Կոտայքի մարզերից, ինչը հնարավորություն է տալիս փոքր տարածք ավելացնելով՝ ընդգրկել հարակից տարածաշրջանային և միջազգային նշանակության օբյեկտներ:

Վերլուծելով հարուստ երկրաբանական ժառանգությունը, ինչպես նաև գեոպարկերի միջազգային փորձը՝ առաջարկվել է ստեղծել ոչ թե ընդհանրական երկրաբանական հուշարձանների, այլ երկրաբանական վտանգների գեոպարկ: Հայկական գեոպարկը կառանձնանա նրանով, որ կներառի սահմանափակ տարածքում երկրաբանական վտանգների տարբեր ոլորտներին վերաբերող օրինակներ (երկրադինամիկա, ակտիվ տեկտոնիկա, հրաբխականություն, երկրաշարժագիտություն, շերտագրություն, ջրաերկրաբանություն և այլն), ինչը վերջինիս կտա բացառիկություն, առավել ևս, որ ընտրության արդյունքում կունենանք տարածաշրջանային և մի քանի միջազգային նշանակության երկրատեղանքներ:

Առաջարկվող երկրաբանական վտանգների հայկական գեոպարկը կներառի 26 երկրատեղանք, որոնք կենտրոնացած են համեմատաբար սահմանափակ 4,573 կմ² տարածքում, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության 15.3%-ին: Տարածքը ներառում է 62 համայնք, որոնք կարող են օգտվել և ստանալ լրացուցիչ եկամուտ գեոտուրիզմից: Գեոպարկի ռեյիեֆը լեռնային է և տարածվում է 1000-3595մ սահմաններում (միջին բարձրությունը մոտ 2297մ է): Կա 11 ենթակլիմայական գոտի՝ սկսած չափավոր ցամաքայինից, տաք ու չոր ամառներով ու ցուրտ ձմեռներով, մինչև լեռնային տունդրայի կլիման: Այն կներառի մինչև 360 միլիոն տարի հասակ ունեցող երկրաբանական առաջացումներ:

Ձուգորդվելով պատմական, հնագիտական, մշակութային բաղադրիչներով՝ առաջարկվող հայկական գեոպարկի ստեղծումը դառնալու է շատ շահեկան գեոտուրիզմի հեռանկարային զարգացման, մասնավոր ձեռներեցության և տնտեսության կայուն զարգացման լրացուցիչ խթան ստեղծելու համար: Բազմաթիվ ակտիվ խզվածքներն ու մակերևութային խախտումները, երիտասարդ հրաբուխներն ու լավային հոսքերը, երկրաշարժի հետ կապված սողանքներն ու ավերված պատմական հուշարձանները պատկերավոր ցույց են տալիս «կենդանի» մոլորակի դրսևորումները, որը կարող է ցանկացած պահի հարուցել լուրջ ավերածություններ, եթե դրանց մասին տեղյակ և պատրաստված չլինենք: Երկրաբանական վտանգների մասին գիտելիքների տարածումը, ուսումնական ակտիվությունը բնակչության պաշտպանվածության, ռիսկերի նվազեցման կարևոր հանգամանք են: 1988թ. Սպիտակի երկրաշարժը աղետալի վկայությունն է երկրաբանական վտանգների և ռիսկերի թերագնահատման:

Գիտական արդյունքները հրապարակվել են 1 գիրք-ատլասում, 1 հոդվածում (ևս 1-ը ներկայացվել է “Geoheritage” արտասահմանյան ամսագրին), 3 գիտաժողովի նյութերում:

**«Մեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական
հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն
ու հեռանկարները»**

Համակարգող՝ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ծրագրի ղեկավար՝ պ.գ.դ. Ռ.Կարապետյան

Սփյուռքի ուսումնասիրության բաժնի աշխատակիցների հավաքած տվյալների հիման վրա տպագրվել է «Հայ էթնիկությունը սփյուռքում» մենագրությունը:

Տեղի է ունեցել «Հայկական սփյուռքի ներուժի բացահայտման ու փաստագրման խնդիրները և Հայաստանում նրա ներդրման ուղիները» թեմայով միջազգային առցանց սեմինար-քննարկում, որին մասնակցել են սփյուռքի ուսումնասիրություններով զբաղվող հետազոտողներ, գիտնականներ Լեհաստանից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Լիբանանից, Ուկրաինայից և Ռուսաստանից:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ակադեմիկոս-քարտուղար՝ **ակադեմիկոս Լ.Աղալովյան**
Գիտքարտուղար՝ Լ.Մարտիրոսյան

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Մաթեմատիկայի, Մեխանիկայի, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտները, «Հիդրոմեխանիկայի և վիբրոտեխնիկայի բաժին» ՓԲԸ-ն:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են ԳԱԱ 12 ակադեմիկոս, 7 թղթակից և 24 արտասահմանյան անդամներ, 5 պատվավոր դոկտոր:

Հաշվետու տարում անցկացվել է բաժանմունքի 3 ընդհանուր ժողով:

Բաժանմունքի ապրիլի 22-ի տարեկան ընդհանուր ժողովը քննարկել և հավանություն է տվել Լ.Աղալովյանի «Բաժանմունքի 2020թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները» հաշվետու զեկուցմանը (ժողովն անցկացվել է հեռավար):

Բաժանմունքի հունիսի 29-ի ընդհանուր ժողովում կայացել է ակադեմիկոս-քարտուղարի ընտրություն: Փակ գաղտնի քվեարկությամբ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար է ընտրվել **ակ. Լ.Աղալովյանը**:

Բաժանմունքի հուլիսի 7-ի ընդհանուր ժողովում կայացել է բաժանմունքի բյուրոյի կազմի և գիտքարտուղարի ընտրություն: Բաց քվեարկությամբ բաժանմունքի բյուրոյի կազմում ընտրվել են ակադեմիկոսներ Գ.Բաղդասարյանը, Ա.Թարվերդյանը, թղթակից անդամներ Լ.Ասլանյանը, Բ.Նահապետյանը, բաժանմունքի ինստիտուտների տնօրեններ Գ.Կարազուլյանը, Վ.Ավետիսյանը, Հ.Ասցատրյանը, Գ.Ավետիսյանը, իսկ բաժանմունքի գիտքարտուղար է ընտրվել Լ.Մարտիրոսյանը:

Բաժանմունքն անցկացրել է բյուրոյի 17 նիստ, որոնցում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի 2021թ. աշխատանքային պլանը, 2021-22 ուստարվա ասպիրանտական տեղերի քանակն ու ըստ ինստիտուտների բաշխվածությունը, ասպիրանտուրայի ընդունելության արդյունքները, ասպիրանտների գիտական ղեկավարները և գիտական թեմաները, տարեկան հաշվետու ժողովի որոշման նախագիծը, 2021թ. համար ինստիտուտների տրված բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման հարցերը, պետական նպատակային ծրագրերի և «ՀՀ ԳԱԱ համակարգի կազմակերպությունները սարքավորումներով վերազինում» ծրագրի միջոցների հաշվին ինստիտուտներին ֆինանսավորում հատկացնելու և գիտական գործուղումների հայտերը: Քննարկվել են 2021թ. սեպտեմբերին բաժանմունքի ինստիտուտներում անցկացված գիտաշխատողների ատեստավորման ու ինստիտուտների կարևորագույն արդյունքները, գիտակազմակերպական բնույթի այլ հարցեր:

Ըստ բաժանմունքի մասնագիտությունների հրատարակվել են «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մաթեմատիկա» (6 համար), «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մեխանիկա» (4 համար), «ՀՀ ԳԱԱ և ՀԱՊՀ տեղեկագիր» (տեխնիկական գիտություններ սերիա, 4 համար), «Համակարգչային գիտության մաթեմատիկական խնդիրները» (2 համար) հանդեսները, «Հայկական մաթեմատիկական հանդես» էլեկտրոնային ամսագիրը:

Բաժանմունքի ինստիտուտների գիտաշխատողները տպագրել են 148 հոդված՝ գրախոսվող ամսագրերում 99 (50-ն արտասահմանում), գիտաժողովների նյութերի ժողովածուներում 49 (10-ն արտասահմանում), 21 թեզիս (15-ն արտասահմանում):

Բաժանմունքի ինստիտուտները կազմակերպել են միջազգային և հանրապետական 6 գիտաժողով, միջազգային ֆինանսավորմամբ իրականացրել են 6 դրամաշնորհային ծրագիր:

Բաժանմունքի ինստիտուտների 2 աշխատակից պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ բաժանմունքի ինստիտուտների գիտական մասնագիտական խորհուրդներում պաշտպանվել է 3 թեկնածուական ատենախոսություն:

Դեկտեմբերին բաժանմունքի ինստիտուտներում անցկացվել են տարեկան հաշվետու ժողովներ (ԻԱՊԻ-ում հեռավար), որտեղ քննարկվել և հաստատվել են 2021թ. գործունեության մասին հաշվետվությունները:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Կարապուլյան
Գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Ադեկյան
Էլեկտրոնային փոստ՝ office@instmath.sci.am
Կայքէջ՝ www.math.sci.am/

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Տպագրության է հանձնվել ծավալուն հետազոտական հոդված, որտեղ ներկայացվել է ավելի քան 20 արդյունք այնպիսի հիմնական հասկացությունների վերաբերյալ, ինչպիսիք են հարթ կորերը, մակերեսները, մեկ և երկու փոփոխականների ֆունկցիաները, կամայական անալիտիկ ֆունկցիաները կամայական տիրույթում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Բարսեղյան):

Վերին կիսահարթության համար ստացվել են $\bar{\partial}$ -հավասարման կշռային լուծումների բացահայտ բանաձևեր, ինչպես նաև այդ լուծումների կշռային L^p -նորմերի գնահատականներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Կարապետյան):

Հետազոտվել են R^n տարածության միավոր գնդում հարմոնիկ ֆունկցիաների կշռային դասեր, որոնց համար ստացվել են կշռային ինտեգրալ ներկայացումներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Պետրոսյան):

Ուսումնասիրվել է անկյան վրա անընդհատ և անկյան ներսում անալիտիկ կամ հարմոնիկ ֆունկցիաների լավագույն հավասարաչափ և շոշափումային մոտավորության հարցը համապատասխանաբար ամբողջ ֆունկցիաներով կամ ամբողջ կոմպլեքս հարթության վրա որոշված հարմոնիկ ֆունկցիաներով: Ուսումնասիրությունների արդյունքում դրական պատասխան է տրվել նաև Հ. Կոբերի կողմից առաջադրված խնդրին (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Ալեքսանյան):

Դիտարկվել է շատ փոփոխականի աստիճանային շարքերի (գրո կենտրոնով) անալիտիկ շարունակելիությունը սեկտորային տիրույթում: Շարքի անալիտիկ շարունակելիության պայմանները տրվել են շարքի գործակիցները ինտեգրալացնող ամբողջ ֆունկցիայի ինդիկատորի միջոցով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մկրտչյան):

Ուսումնասիրվել են խմբերի պարբերական արտադրյալների կենտրոնական ընդլայնումները, 3 պարբերությամբ վերջավոր ռանգի ազատ պարբերական խմբերի էնդոմորֆիզմներն ու ավտոմորֆիզմները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Շ.Ստեփանյան):

Միավոր շրջանում ստացվել են հարմոնիկ ֆունկցիաների կշռային դասերի ինտեգրալ ներկայացումները Միտագ-Լեֆլերի տիպի կորիզներով, ինչպես նաև $\bar{\partial}$ -հավասարման կշռային լուծումների բացահայտ բանաձևեր (ղեկ.՝ Ֆ.Հայրապետյան):

Տրվել է Դոբրուշինի վակուումային սպեցիֆիկացիայի ներկայացումը, որը կիրառվել է Գիբսյան պատահական դաշտերի կառուցման համար: Ստացվել են միակետ պայմանական

բաշխումների համակարգով վերջավոր պատահական դաշտի գոյության և եզակիության անհրաժեշտ և բավարար պայմաններ (դեկ.՝ թղթ. անդ. Բ.Նահապետյան):

Ջույգ պոտենցիալի համար Ուրսելի կորիզի օգնությամբ կառուցվել են սահմանային Գիբսյան պրոցեսի կորելյացիոն ֆունկցիաները: Գտնվել է Գիբսյան պատահական պրոցեսների նոր բնութագրիչ, որի միջոցով ստացվել է այդ պրոցեսների միակության նոր հայտանիշ (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ս.Պողոսյան):

Ներմուծվել է օպտիմալ ցանցապատման գաղափարը վերջավոր տարրերի մեթոդով եզրային խնդիրների լուծման համար: Ապացուցվել է, որ Լապլասի օպերատորը պարունակող խնդիրներում օպտիմալ ցանցապատումը Դելոնեի եռանկյունապատումն է (դեկ.՝ տ.գ.դ. Հ.Սուքիասյան):

Ուսումնասիրվել է երկչափ ֆունկցիայի վերականգնումը Լապլասի ինվերսիայի և Ռադոնի ձևափոխության միջոցով (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ռ.Արամյան):

Վայվլետ-բազմանդամային համակարգերով մաժորանտ օպերատորների համար գտնվել է ճշգրիտ լոգարիթմական գնահատական L^p տարածություններում: Օգտվելով այդ գնահատականից՝ ստացվել են նման համակարգերի մի շարք նոր հատկություններ: Մասնավորապես ապացուցվել է, որ $\sqrt{\log n}$ -ը այդպիսի համակարգերի համար ճշգրիտ Վեյլի բազմապատկիչ է: Չափով օժտված քվադր-մետրիկական տարածություններում դիտարկվել են Ֆատուի ոչ շոշափողային զուգամիտության հատկության մի շարք ընդհանրացումներ (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Կարագուլյան):

Ուսումնասիրվել են GC_n բազմությունների մի քանի հիմնական, այդ թվում՝ նաև նոր տիպի հատկություններ: Հանրահաշվական կորերի n -անկախ հանգույցներով գծային բազմության չափողականության համար ստացվել է վերնից գնահատական (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Հակոբյան):

Դիտարկվել է վերջավոր ծավալներում պատահական դաշտերի նկարագրության խնդիրը: Մի կետային պայմանական բաշխումների համակարգով վերջավոր պատահական դաշտերի համար ստացվել են գոյության և միակության պարզ անհրաժեշտ ու բավարար պայմաններ (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Լ.Խաչատրյան):

Դիտարկվել է Ռիմանի եզրային խնդիրը կիսահարթության մեջ, անվերջ թվով գրոներով կշռային տարածություններում: Ստացվել է անհրաժեշտ և բավարար պայման խնդրի նորմալ լուծելիության համար: Լուծումները ներկայացվել են բացահայտ տեսքով (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Աղեկյան):

Զարգացվել են առաջին սեռի ինտեգրալ հավասարումների հետազոտման ու լուծման նոր մոտեցումներ: Մշակվել են սիմետրիկ և շեղ-սիմետրիկ մատրիցներով գծային հանրահաշվական համակարգերի լուծման նոր խնայողական ալգորիթմներ: Մշակվել է էլեկտրամագնիսական ալիքների ափային ռեֆրակցիայի հավասարման լուծման մեթոդ (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ն.Ենգիբարյան, ֆ.-մ.գ.թ. Ա.Բարսեղյան):

Գտնվել են մոնոտոն ոչ գծայնությամբ ինտեգրալ հավասարումների տարբեր դասերի լուծելիության բավարար պայմաններ: Ուսումնասիրվել են լուծումների հատկությունները: Ապացուցվել են գոյության և միակության կոնստրուկտիվ թեորեմներ: Արդյունքները կիրառվել են p -ադիկ անալիզում և համաճարակի տարածման նոր, ոչ գծային մոդելներում (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Խաչատրյան, ֆ.-մ.գ.դ. Խ.Խաչատրյան):

Մշակվել է նոր ֆակտորիզացիա Վիներ-Հոպֆի առաջին սեռի ինտեգրալ հավասարման համար (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Լ.Արաբաջյան):

Ստացվել են գլոբալ լուծելիության նոր թեորեմներ Ռիկատիի տիպի հավասարումների համար: Արդյունքները կիրառվել են գծային համիլտոնյան համակարգերի նկատմամբ և այլ հարցերում (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Գ.Գրիգորյան):

Ստացվել են նոր արդյունքներ կրկնակի շարքերի միջոցով քվադրատիկայաբերական ֆունկցիաների ներկայացումների վերաբերյալ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Գ.Ավանեսյան):

Ուսումնասիրվել է բազմանդամների մի դաս, որոնք հիպերբոլական են կշռով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Ղազարյան):

Ուսումնասիրվել է վերջավոր հատվածի վրա որոշված ողորկ ֆունկցիայի Ֆուրիե ինտերպոլյացիան: Դիտարկվել են ալգորիթմներ, որոնք նման են Ֆուրիեի շարքի հատվածի համար նախկինում ներկայացված «գեր-գուգամետ» ալգորիթմներին (ղեկ.՝ ալ. Ա.Ներսիսյան):

Ուսումնասիրվել են Լեբեգի աստիճանային կշռով տարածություններում L-Վիներ-Հոպֆի օպերատորներ կտոր առ կտոր անընդհատ մատրիցային սիմվոլով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Քամայան):

Ուսումնասիրվել են ամպային ենթակառուցվածքների և նրանցում աշխատող ծրագրերի մոնիթորինգի արդյունքում ծագած որոշ խնդիրներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Պողոսյան):

Ուսումնասիրվել են վերջավոր հատվածի վրա քվադրատիկայաբերական եռանկյունաչափական համակարգով իրականացված մոտարկումների զուգամիտության հատկությունները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Պողոսյան, ֆ.-մ.գ.թ. Լ.Պողոսյան, ֆ.-մ.գ.թ. Ռ.Բարխուդարյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Մեքենայական ուսուցմամբ հզորացված կանխագուշացնող անալիտիկա ամպային տվյալների կենտրոնների համար» թեմայի շրջանակում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Պողոսյան) ուսումնասիրվել է ժամանակային շարքերի կանխատեսման խնդիրը transfer learning-ի օգնությամբ: Նեյրոնային ցանցերը բազմիցս օգտագործվել են կանխատեսման խնդրի լուծման համար: Սակայն transfer learning-ի օգտագործումն առաջին անգամ է քննարկվել: Նեյրոնային ցանցերն ունեն մի ընդհանուր թերություն՝ բավական դանդաղ են աշխատում, քանի որ պետք է մշակվեն յուրաքանչյուր շարքի համար և մեծ համակարգչային ռեսուրսներ օգտագործեն (GPU, CPU): Մեր դեպքում այն բավական արագ է աշխատում, քանի որ ցանցն ամեն անգամ մշակելու կարիք չկա: Այն արդեն նախապես մշակվել է բոլորովին այլ տվյալների բազայի հիման վրա և պատրաստ է կիրառման:

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Арабаджян Л.Г., О вольтерровом разложении интегрального оператора Винера-Хопфа, М., “Математические заметки”, т. 110, вып. 2, 2021, с.163-169.
2. Григорян Г.С., Камалян А.Г., Киракосян Г.А., Операторы L-Винера-Хопфа с кусочно-непрерывным матричным символом в лебеговых пространствах со степенным весом, Ер., ДНАН Армении, т. 121, N 4, 2021, с. 259- 266.
3. Маргарян В.Н., Казарян Г.Г., Об одном классе многочленов, гиперболических с весом, Ер., “Изв. НАН Армении. Математика”, т. 56, N 6, 2021, с. 51-69.
4. Сукиасян Г.С., Мелконян Т.Р., Григорян А.Х., Автоматизированное моделирование электромагнитного поля для зернистых сред, Ер., “Вестник НПУА. Информационные технологии, электроника, радиотехника”, N 2, 2020, с. 26-33.
5. Хачатрян Х.А., Петросян А.С., О знакопеременных и ограниченных решениях одного класса нелинейных двумерных интегральных уравнений типа свертки, М., “Тр. Московского математического общества”, т. 82, N 2, 2021, с. 89-103.
6. Хачатрян А.Х., Хачатрян Х.А., Петросян А.С., Асимптотическое поведение решения для одного класса

нелинейных интегро-дифференциальных уравнений в задаче распределения дохода, Екатеринбург, "Тр. ИММ УрО РАН", т. 27, N 1, 2021, с. 188-206.

7. Aghekyan S., Karapetyants.A., Weighted Hadamard-Bergman convolution operators, "Springer Proceedings in Mathematics & Statistics", v. 357, N 1, 2021, pp. 1-20.
8. Aramyan R., Mnacakanyan V., Conditional moments for a d-dimensional convex body, "Journal of Contemp. Math. Analysis", v. 56, N 3, 2021, pp. 3-9.
9. Barsegian G., A principle related to zeros of real functions, "J.Contemp.Math.Analysis" , v. 56, N 3, 2021, pp. 113-117.
10. Ginovyan M., Sahakyan A., Statistical estimation for stationary models with tapered data, "J. Contemp. Math. Anal.", v. 56, N 6, 2021, pp. 12-38.
11. Grigorian G., On the reducibility of systems of two linear first-order ordinary differential equations, "Monatshafte fur Matematik", vol. 195, issue 1, pp. 107 -117.
12. Grigorian G., Global solvability criteria for quaternionic Riccati equations," Archivum Mathematicum (Brno)", tomos 57, 2021, pp. 83-99.
13. Grigorian G., Oscillatory and non-oscillatory criteria for linear four-dimensional Hamiltonian systems, "Mathematica Bohemica", v. 146, N 3, 2021, pp. 289-304.
14. Grigorian G., Interval oscillation criteria for linear matrix Hamiltonian systems, "Rocky Mountain Journal of Mathematics", v. 50, 2020, N 6, pp. 2047-2057.
15. Hakopian H., Kloyan H., Voskanyan D., On plane algebraic curves passing through n-independent nodes, "J. Contemp. Math. Anal.", v. 56, N 5, 2021, pp. 280-294.
16. Hakopian H., Vardanyan N., On the basic properties of GCn sets, "Journal of Knot Theory and Its Ramifications", 29(14), 2020, pp. 1-26.
17. Hayrapetyan H., Aghekyan S., Ohanyan D., On a Riemann Boundary Value Problem with Infinite Index in the Half-plane, "Springer Proceedings in Mathematics & Statistics", v. 357, N 1, 2021, pp. 221-241.
18. Hayrapetyan F., A.H.Karapetyan A.H., Karapetyan A.A., On weighted solutions of $\bar{\partial}$ -equation in the upper half-plane, "J.Contemp.Math.Analysis" , v. 56, 2021, N 5, pp. 270-279.
19. Hayrapetyan F., On weighted solutions of $\bar{\partial}$ -equation in the unit disc, "Proceedings of the Yerevan state university", v. 55, 2021, N 1, pp. 20-28.
20. Hayrapetyan F.,Weighted integral representations of harmonic functions in the unit disc by means of Mittag-Lefflers type kernels, "Armenian J.Math.", v. 13, 2021, N 5, pp. 1-11.
21. Karagulyan G., Katkovskaya I., Krotov V., The Fatou property for general approximate identities on metric measure spaces, "Mathematical Notes", v. 110, N 2, 2021, pp. 196-209.
22. Karagulyan G., Probability inequalities for multiplicative sequences of random variables. Proc. Amer. Math. Soc. , v. 149, N 9, 2021, pp. 3725-3737.
23. Karagulyan G., On good- λ inequalities for couples of measurable functions, "Indiana University Math. Journal", v. 70, N 6, 2021.
24. Khachatryan A., Khachatryan Kh., Petrosyan H., Solvability of two-dimensional integral equations with monotone nonlinearity, "Journal of Mathematical Sciences", v. 257, N 5, 2021, pp. 720-731.
25. Khachatryan A., Khachatryan Kh., Petrosyan H., On positive bounded solutions of one class of nonlinear integral equations with the Hammerstein–Nemytskii operator, "Differential Equations", v. 57, N 6, 2021, pp. 768-779.
26. Khachatryan L., Nahapetian B., Combinatorial approach to the description of random fields, "Lobachevskii Journal of Mathematics", v. 42, N 10, 2021, pp. 2337-2347.
27. Khachatryan Kh., Petrosyan H., Solvability of a certain system of singular integral equations with convex nonlinearity on the positive half-line. "Russian Math. (Iz. VUZ)", v. 65, N 1, 2021, pp. 27-46.
28. Khachatryan Kh., Petrosyan H., Integral equations on the whole line with monotone nonlinearity and difference kernel, "Journal of Mathematical Sciences", v. 255, N 6, 2021, pp. 790-804.
29. Khachatryan Kh., Petrosyan H., On solvability of a class of multidimensional integral equations in the mathematical theory of geographic distribution of an epidemic, "Journal of Contemporary Math. Analysis", v. 56, N 3, 2021, pp. 143-157.
30. Khachatryan Kh., Petrosyan H., On the solvability of a class of nonlinear Urysohn integral equations on the positive half-line, "Izv. Irkutsk. University, ser. Math.", v. 36, 2021, pp. 57-68.

31. Khachatryan Kh., Petrosyan H., On bounded solutions of a class of nonlinear integral equations on the plane and the Urysohn equation in a quadrant of the plane, "Ukranian Math. Journal", v. 73, N 5, 2021, pp. 695-711.
32. Mnatsakanov R., Aramyan R., Recovery of bivariate functions from the values of its Radon transform using Laplace inversion, "Journal of Computational and Applied Mathematics", v. 395, 2021, pp. 113-557.
33. Nersessian A., On some fast implementations of Fourier interpolation, "Springer Proceedings in Mathematics & Statistics", v. 357, N 1, 2021, pp. 463-477.
34. Poghosyan A, Harutyunyan A, Grigoryan N, Pang C, Oganessian G, Ghazaryan S, Hovhannisyan N., An enterprise time series forecasting system for cloud applications using transfer learning. *Sensors*. 2021; 21(5):1590.
35. Poghosyan A., Poghosyan L., and Barkhudaryan R., On the convergence of the quasi-periodic approximations on a finite interval, "Armenian Journal of Mathematics", vol. 13, N 10, 2021, pp. 1-43.
36. Poghosyan S., Zessin H., Penrose-stable interactions in classical statistical mechanics, "Annales Henri Poincaré", 2021, pp. 1-33.
37. Poghosyan S., Zessin H., Characterization and uniqueness of Gibbs processes by means of Kirkwood-Salzburg equations, "Lobachevskii Journal of Mathematics", v. 42, N 10, 2021, pp. 2427-2436.
38. Sukiasyan H., Piecewise linear approximation by the method of worst segment division, "Lobachevskii Journal of Mathematics", v. 42, N 12, 2021, pp. 2969-2979.

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ Ֆ.-մ.գ.դ. Վ.Ավետիսյան
 Փոխտնօրեն՝ Ֆ.-մ.գ.թ. Մ.Միկիլյան
 Գիտքարտուղար՝ Ֆ.-մ.գ.թ. Լ.Դաշտոյան
 Էլեկտրոնային փոստ՝ mechins@sci.am
 Կայքէջ՝ www.mechins.sci.am

Մասնագիտական խորհուրդ 047՝ «Մեխանիկա»

Նախագահ՝ ակ. Լ.Աղալովյան, գիտքարտուղար՝ Ֆ.-մ.գ.դ. Ա.Խաչատրյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Առաձգականության տեսության եռաչափ դրվածքով լուծվել է եռաշերտ թաղանթի համար ոչ դասական դինամիկական խնդիր, որը կարող է կարևոր դեր խաղալ երկրաշարժների պարամետրերի գնահատման գործում (դեկ.՝ ակ. Լ.Աղալովյան):

Գծային դեֆորմացվող Կորեննի մի հիմքի համար, որի ազդեցության ֆունկցիան արտահայտվում է զրոյական ինդեքսով Մակդոնալդի ֆունկցիայով՝ կախված երկու կետերի հեռավորությունից, դիտարկված կոնտակտային խնդիրներում, ցույց է տրվել, որ կոնտակտային տիրույթի եզրագծում գործում են կենտրոնացված ուժեր: Կոնտակտային լարումների սահմանափակության համար ստացվել են անհրաժեշտ և բավարար պայմաններ (դեկ.՝ թղթ. անդ. Մ.Միխայրյան):

Նկատի ունենալով առանձին պիեզոէլեկտրական բյուրեղներում էլեկտրաակտիվ առաձգական սահքի ն/կամ հարթ դեֆորմացիայի ալիքների գրգռման և տարածման հնարավորությունը՝ առաջարկվել է քննարկել ակուստիկ ալիքների հիբրիդիզացիա թույլատրող շերտավոր բաղադրյալ ալիքատարերի ֆիզիկական մոդելները: Քննարկվել են հեքսագոնալ համաչափության 6mm դասի և 6m2 դասի պիեզոէլեկտրիկների շերտավոր կոմպոզիտներում հիբրիդի հնարավոր ձևավորման պայմանները և դրանց տարածման առանձնահատկությունները: Ցույց է տրվել էլեկտրաակուստիկ ալիքների հիբրիդի

ձևավորումը, երբ սահքի (կամ հարթ դեֆորմացիայի) էլեկտրաառաձգական ալիքն անցնում է երկու տարբեր պիեզոէլեկտրիկների չհավող (առանց ակուստիկ շփման) մակերևույթների միջով: Հարևան պիեզոէլեկտրիկում գեներացվել է հարթ դեֆորմացիայի (կամ սահքի) էլեկտրաառաձգական ալիք: Անկման անկյան սահմանային դեպքերում ստացվել է պիեզոէլեկտրական կոմպոզիտում շերտերի միջերեսի երկայնքով տարածվում է՝ ըստ շերտերի տարբեր տեղայնացումներով էլեկտրաակտիվ առաձգական ալիքների (Ռելեյի տիպի և Գուլյան-Բյուստեյնի տիպի) հիբրիդ, լայնական պարբերական անհամասեռ շերտավոր պիեզոէլեկտրական կոմպոզիտում տարածվում է Ֆլոկեյի տիպի պարբերական առաձգական ալիքների հիբրիդ (հարթ դեֆորմացիայի P+SV տիպի և սահքի SH տիպի) (դեկ.՝ Թղթ. անդ. Ա.Ավետիսյան, Վ.Խաչատրյան, Մ.Մկրտչյան):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Ավետիսյան В.В., Оптимальное по быстродействию управление перемещением схвата двузвенного манипулятора с учетом типа конечной конфигурации, М., “Автоматика и телемеханика”, вып. 2, 2021, с. 3-15.
2. Агаловян Л.А., Об основных соотношениях обобщенной плоской деформации анизотропных тел, ДНАН Армении, т.121, N 1, 2021, с. 54-60.
3. Агаловян Л.А., Агаловян М.Л., Закарян Т.В., О решении трехмерной динамической смешанной задачи двухслойных ортотропных пластин, лежащих на жесткой подстилке, Ер., ДНАН Армении, т.121, N 4, 2021, с. 279-287.
4. Акопян В.Н., Амирджанян А.А., Осесимметричная контактная задача для составного пространства с круговой дискообразной трещиной, Ер., “Изв. НАН Армении. Механика”, т. 74, N 3, 2021, с. 15-34.
5. Акопян В.Н., Григорян А.А., Амирджанян А.А., Осесимметричное напряженное состояние кусочно-однородного, слоистого пространства с периодическими межфазными полубесконечными трещинами, Ер., “Изв. НАН Армении. Механика”, т. 74, N 1, 2021, с. 15-34.
6. Акопян В.Н., Григорян А.А., Плоско-деформированное состояние равномерно кусочно-однородной плоскости с периодической системой полубесконечных межфазных трещин, Самара, Вести Самарского гос. технич. ун-та, Сер. Физ.-мат. науки, т. 25, N 1, 2021, с. 67-82.
7. Амирджанян А.А., Белубекян М.В., Геворкян Г.З., Дарбинян А.З., Распространение поверхностных волн в системе полуплоскость-слой при уловии скользящего контакта между ними, Ер., “Изв. НАН Армении. Механика”, т. 74, N 2, 2021, с. 18-32.
8. Барсегян В.Р., Оптимальное граничное управление колебаниями струны с заданными значениями скоростей точек в промежуточные моменты времени, Ер., “Изв. НАН Армении. Механика”, т. 74, N 1, 2021, <http://doi.org/10.33018/74.1.3>, с. 35-50.
9. Барсегян В.Р., Задача управления колебаниями струны с неразделенными условиями на функции прогиба в заданные промежуточные моменты времени, СПб., Дифференциальные уравнения и процессы управления, N 4, 2021, с. 69-80.
10. Барсегян В.Р., Солодуша С.В., О задаче граничного управления колебаниями струны с заданными состояниями в промежуточные моменты времени, мат. 3 межд. конф. “Динамические системы и компьютерные науки: Теория и приложения (DYSC 2021)”, Иркутск, 2021, с. 85-87.
11. Белубекян В.М., Терзян С.А., Влияние условий закрепления сжатых сторон пластинки на локализованную неустойчивость, Ер., “Изв. НАН Армении. Механика”, т. 74, N 2, 2021, с. 60-66.
12. Белубекян М.В., Геворкян Г.А., Задача дивергенции панели в сверхзвуковом потоке газа при учете поперечных сдвигов, Ер., ДНАН Армении, т. 121, N 2, 2021, с. 99-105.
13. Белубекян М.В., Мартиросян С.Р., Об устойчивости (достаточно широкой) панели с свободным краем, сжатой в направлении, перпендикулярном к скорости потока газа, при наличии сосредоточенных инерционных масс и моментов, Ер., “Изв. НАН Армении. Механика”, т. 74 (3), 2021, с. 19-36.
14. Белубекян М.В., Мартиросян С.Р., Сверхзвуковой флаттер панели со свободным краем, сжатой в

направлении, перпендикулярном к скорости потока газа, при наличии сосредоточенных инерционных масс и моментов, Ер., "Изв. НАН Армении. Механика", т.74, N (2), 2021, с. 33-59.

15. Геворкян Г.А., Доказательство невозможности существования совершенного кубоида, *East European Scientific Journal* (Warsaw, Poland), #6 (70), 2021, part 1, (<http://doi.org/10.31618/ESSA.2782-1994.2021.1.70.70>), с. 42-45.
16. Григорян М.С., Едоян В.Г., Мхитарян С.М., О взаимодействии концентраторов напряжений типа трещин и стрингеров с кусочно-однородным упругим полупространством при антиплоской деформации, Ер., ДНАН Армении, т.121, N 1, т.121, с. 32-49.
17. Гукасян А.А., Об управляемости процесса многоэтапного обслуживания технологического участка манипулятора с векторным управлением, Ер., ДНАН Армении, т.121, N 3, 2021, с. 181-191.
18. Карапетян К.А. Айроян С.Г., Манукян Е.С., Об аналитическом описании деформаций ползучести элементов из цементогрунтового композита с учетом уровня сжимающих напряжений, Ер., "Изв. НАН Армении. Механика", т. 74, N 2, 2021, с. 67-77.
19. Мкртчян М.С., Мкртчян, М.М., О напряженном состоянии кусочно-однородного слоя с абсолютно жесткими включениями при антиплоской деформации, Ер., ДНАН Армении, т. 121, N 1, 2021, с. 44-53.
20. Мхитарян С.М., О решении двух интегральных уравнений, связанных с контактными задачами для линейно деформируемого основания, Ер., ДНАН Армении, N 1, т.121, 2021, с. 20-31.
21. Мхитарян С.М., О решении плоской задачи типа Ламба для полуплоскости, заполненной несжимаемой вязкой жидкостью, Ер., ДНАН Армении, т.121, N 4, 2021, с. 51-57.
22. Мхитарян С.М., Гаспарян А.В., Саргсян А.С., О точном решении интегрального уравнения одной контактной задачи математической теории упругости, Ер., ДНАН Армении, т.121, N 2, 2021, с.106-115.
23. Петросян Т.Л. Влияние температуры на диссипативные свойства грунтов, Ер., "Изв. НАН Армении. Механика", т. 74, N 1, 2021, с. 51-57.
24. Саакян А.В., Саркисян В.Г., Хачикян А.С., Смешанная задача для упругой составной полосы, содержащей внутреннюю трещину, выходящую на линию раздела материалов, Ер., "Изв. НАН Армении. Механика", т.74, N 3, 2021, DOI: 10.33018/74.3.3, с. 37-52.
25. Саркисян К.С., Сукиасян Д.Ж., Математическое моделирование контактной задачи для однородной упругой пластины, усиленной одним конечным и двумя бесконечными упругими стрингерами, Ер., "Вестник НПУА. Механика, Машиноведение, Машиностроение", N 2, 2021, с. 51-57.
26. Сейранян С.П., К обоснованию применения метода С.П. Тимошенко к решению задачи изгиба прямоугольной защемленной по контуру пластины при симметричном внешнем давлении, мат. XXII межд. конф. по вычислительной механике и современным прикладным программным системам, М., изд. МАИ, 2021, с. 276-279.
27. Япуджян В.Т., Об одной динамической задаче плоской деформации ортотропного тела, Ер., ДНАН Армении, т.121, N 3, 2021, с. 192-200.
28. Aghalovyan L., Ghulghazaryan L., Kaplunov J., Prikazchikov D., 3D dynamic analysis of layered elastic shells, "Mathematical methods and physico-mechanical fields", v. 63, N 4, 2020, pp. 96-108.
29. Aghalovyan L., Aghalovyan M., On one class of problems of the theory of elasticity and seismology and a problem of earthquake prediction, "International Applied Mechanics", v. 57, 2021, pp. 19-33.
30. Aghalovyan M., Aghalovyan L., On one class of spatial problems of layered plates and applications in seismology, in the book: Recent approaches in the theory of plates and plate-like structures (Advanced Structured Materials, 151), chapter 1, Springer Nature Switzerland AG, 2021, pp.1-16.
31. Antipov Y., Mkhitarayan S., Integral and integro-differential equations with an exponential kernel and applications, "The Quarterly Journal of Mechanics and Applied Mathematics", v. 74, issue 3, 2021, <https://doi-org.eres.qnl.qa/10.1093/qjmam/hbab007>, pp. 297-322.
32. Avetisyan A., Khurshudyan As., Chopuryan S., A meso-scale model of particle reinforced Timoshenko beam, "Proc. NAS RA. Mechanics", v. 74, N 1, 2021, (<http://doi.org/10.33018/74.1.1>), pp. 6-14.
33. Avetisyan A., Gevorgyan A., Avetisyan L., Hybrid of surface shear waves at the contact interface between piezoelectric and electrically conductive half-spaces, "Proc. NAS RA. Mechanics", v. 74, N 3, 2021, (<http://doi.org/10.33018/74.3.4>), pp. 53-61.
34. Avetisyan A., Mkrтчян M., Control of vibrations of infinite membrane tape with a moving edge in a supersonic gas flow, "Proc. NAS RA. Mechanics, v. 74, N 2, 2021, (<http://doi.org/10.33018/74.2.1>), pp. 3-17.
35. Avetisyan A., Mkrтчян M., Avetisyan L., Forced electro acoustic vibrations across the thickness of the

- piezoelectric layer. Application opportunities, "Proc. NAS RA. Mechanics", v. 74, N 4, 2021, pp. 48-59. (<http://doi.org/10.33018/74.4.5>)
36. Avetisyan A., Shahinyan A., A hybrid control problem for a linear system with constant coefficients, "Reports of NAS RA, N 2, pp. 91-99.
 37. Avetisyan A., Khachatryan V., (https://iutam.org/publications/ictam-proceedings/ictam_2020/) Multi physical modeling of composite cellular piezocrystalline waveguides, 25th International Congress of Theoretical and Applied Mechanics, Book of Abs., 2021, Milano, Italy, pp. 2596-2598.
 38. Avetisyan A., Khurshudyan A., (<https://doi.org/10.1002/zamm.202000350>), Benchmarking the difference of moving follower and normal loads on linear and nonlinear Euler-Bernoulli and Timoshenko beams "ZAMM-Journal of Applied Mathematics and Mechanics" /Zeitschrift für Angewandte Mathematik und Mechanik/, 2021.
 39. Avetisyan V., Optimal choice of the type of the final configuration at the limited control of gripper motion of the two link manipulator, "Proc. NAS RA. Mechanics", v. 74, N 3, <http://doi.org/10.33018/74.3.5>, pp. 61-72.
 40. Avetisyan V., Time-optimal control of gripper motion in a two-link manipulator with allowance for the terminal configuration, "Automation and Remote Control", v. 82, issue 2, 2021, pp. 189-199.
 41. Baghdasaryan G., Mikilyan M., Vardanyan I., Melikyan K., Marzocca P., Thermoelastic non-linear flutter oscillations of rectangular plate, "Journal of Thermal Stresses", (<http://doi.org/10.1080/01495739.2021.1914528>), 2021, pp. 731-754.
 42. Baghdasaryan G., Panteleyev A., Mikilyan M., Influence of magnetic field on the amplitude of flutter type oscillations of dialectical plate, in the book: Proceedings of the XXII International Conference on Computational Mechanics and Modern Applied Software Systems (CMMASS'2021), 2021, Alushta. - M.: Publishing house MAI, 2021, pp. 301-305.
 43. Barseghyan V., Solodusha S., On one problem in optimal boundary control for string vibrations with a given velocity of points at an intermediate moment of time, conference paper. publisher: IEEE. 2021, International Russian Automation Conference (RusAutoCon), 2021, pp. 343-349. doi:10.1109/RusAutoCon52004.2021.9537514.
 44. Barseghyan V., Solodusha S., Optimal boundary control of string vibrations with given shape of deflection at a certain moment of time, in: Pardalos P., Khachay M., Kazakov A. (eds), Mathematical Optimization Theory and Operations Research. MOTOR 2021. Lecture Notes in Computer Science, 2021, v. 12755, pp. 299-313, Springer, Cham. https://doi.org/10.1007/978-3-030-77876-7_20.
 45. Barseghyan V., Solodusha S., On one boundary control problem of string vibrations with given velocity of points at an intermediate moment of time, "Journal of Physics: Conference Series, v. 1847, 2021, 012016. Irkutsk, Russian Federation. DOI <https://doi.org/10.1088/1742-6596/1847/1/012016>.
 46. Barseghyan V., The problem of control of rod heating process with nonseparated conditions at intermediate moments of time, "Archives of Control Sciences, v. 31(LXVII), N 3, 2021, pp. 481-493. DOI: 10.24425/acs.2021.138689.
 47. Ghazaryan K., Ghazaryan R., Terzyan S., Localization of shear waves in inhomogeneous periodically stratified waveguide, "Proc. NAS RA. Mechanics", v. 74, N 4, 2021, (<http://doi.org/10.33018/74.4.6>), pp. 60-71.
 48. Gevorgyan H., Problem on optimizing the motion of an elastic tracking manipulator, (<http://doi.org/10.3103/S0025654421020072>), "Mechanics of Solids", 2021, 56 (2), pp. 242-249.
 49. Hakobyan V., Sahakyan A., Amirjanyan H., (2021) Stress state of a compound plane with interface absolutely rigid inclusion and crack having common tip, in: Altenbach H., Eremeyev V., Galybin A., Vasiliev A. (eds), Advanced materials modelling for mechanical, medical and biological applications, "Advanced Structured Materials", v. 155. pp. 225-237. Springer, Cham. https://doi.org/10.1007/978-3-030-81705-3_13
 50. Stepanyan S., On the numerical solution of a non-classical problem of bending and stability of an orthotropic beam of variable thickness, "Вестник Томского государственного университета. Математика и механика", т. 73, 2021, с. 111-120.
 51. Stepanyan S., Investigation of the influence of an intermediate hinge support in the problem of bending of an elastically restrained orthotropic beam, "Proceedings of the Yerevan State University, Physical and Mathematical Sciences", N 1, v. 55, 2021, pp. 64-71.
- Հողվածները հրատարակվել են «Հոծ միջավայրի մեխանիկայի արդի խնդիրներ» VII միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուում, Ե., «Գիտություն» հրատ., 2021, 329 էջ
52. Агабекян П.В., Арутюнян Л.А., Плоская контактная задача для составной области с симметричными трещинами между материалами, с. 5-9.

53. Агаян К.Л., Мартиросян А.В., Изгиб балки бесконечной длины на границе упругой полуплоскости, с. 10-14.
54. Акопян В.Н., Амирджанян А. А., Осесимметричная контактная задача для составного пространства с круговой дискообразной трещиной, с. 15-17.
55. Акопян Л.В., Даштоян Л.Л., Контактная задача для кусочно-однородной плоскости с межфазной трещиной, с. 18-22.
56. Амирджанян А.А., Белубекян М.В., Геворкян Г.З., Дарбинян А.З., Распространение поверхностных волн в системе полуплоскость-слой при относительном скольжении, с. 23-27.
57. Арутюнян Л.А., Агабекян П.В., Плоская контактная задача для неоднородной луночки с симметричными трещинами, с. 38-42.
58. Атоян Л.А., Упруго-спиновые волны в составной ферромагнитной структуре, с. 43-47.
59. Барсегян В.Р., Об оптимальном управлении колебаниями струны со смещениями на концах с заданными состояниями в промежуточные моменты времени, с. 47-50.
60. Белубекян В.М., Терзян С.А., Локализованная неустойчивость окрестности упруго-закрепленной стороны прямоугольной пластинки, с. 51-54.
61. Белубекян М.В., Хачатрян В.М., Изгибные колебания пьезоактивных упругих пластин из материала гексагональной симметрии, поляризованной по толщине, с. 55-58.
62. Геворкян Г.А., Высокоточное моделирование механизма шарнирного параллелограмма с упругим шатуном, с. 77-81.
63. Карапетян К.А., Валесян С.Ш., О коэффициенте рассеяния энергии стеклопластиковых трубчатых элементов с изначально нарушенной симметрией армирования относительно оси, с. 123-127.
64. Курдина С.П., Геворкян Г.А., Динамическое моделирование упругого двойного физического маятника на основе обобщенного метода Ньютона-Эйлера, с. 162-167.
65. Мартиросян С.Р., Сверхзвуковая дивергенция панели с одним свободным краем, первоначально нагруженной по двум направлениям, с. 172-176.
66. Саакян А.В., Саркисян В.Г., Хачикян А.С., Определяющее уравнение смешанной задачи для упругой составной полосы, содержащей внутреннюю трещину, выходящую на линию раздела материалов, с. 201-205.
67. Сейранян С.П., Выделение особенностей в изгибающих моментах в прямоугольной пластине, нагруженной сосредоточенной силой, с. 211-215.
68. Шемян Г.Г., Геворкян А.В., Частотный анализ корпуса вращающейся электрической машины, с. 239-243.
69. Avetisyan A.S., Mkrtchyan M.H. Formation of a Hybrid of Electroacoustic Waves in Piezoelectric Layered Composites, p. 72-76.

Պաշտպանվել է 3 թեկնածուական ատենախոսություն:

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ տ.գ.թ. Հ.Ասցատրյան
 Փոխտնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Սահակյան
 Գլխավոր տնօրեն՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Սահակյան
 Էլեկտրոնային փոստ՝ iiap@sci.am
 Կայքէջ՝ www.iiap.sci.am

Մասնագիտական խորհուրդ 037՝ «Ինֆորմատիկա»

Նախագահ՝ ակ. Յու.Շուրբուրյան, գլխավոր տնօրեն՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Սարգսյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Մշակվել են համակարգչային ցանցերում հանգույցների խաթարման դեպքում ինֆորմացիայի լրիվ փոխանակում (Gossip/broadcast models) իրականացնող նոր օպտիմալ

(մինիմալ ժամանակ, կանչեր, կապուղիներ) ու վթարակայուն սխեմաների (fault-tolerant) կառուցման ալգորիթմներ:

Մշակվել է ինքնակազմակերպվող մոդելում (sadbile model) տեղադրված բազմագույն աղավաղված պատկերների ճշգրիտ վերականգնման ալգորիթմ:

Շարունակվել են կիբեր-ֆիզիկական համակարգերի մոդելավորման կոմպոզիցիոն մոտեցման ուսումնասիրությունները՝ հաշվի առնելով միջավայրի ինքնակազմակերպվածությունը: C++ լեզվով իրականացվել է ծրագրային գործիք տրեկային լեզվի ճանաչելիության խնդիրների ուսումնասիրման համար (ղեկ.՝ ակ. Յու.Շուքուրյան, տ.գ.թ. Ս.Պողոսյան):

Ապացուցվել է, որ n - փոփոխականի բոլոր ընդհանրացված պարզագույն կարգընթաց ֆունկցիաների բազմությունը ($n + 1$) փոփոխականի ընդհանրացված պարզագույն կարգընթաց համապիտանի ֆունկցիա չունի (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Մ.Խաչատրյան):

Ապացուցվել է, որ կամայական ոչ հաշվարկելի ռեկուրսիվորեն թվարկելի b աստիճանի համար գոյություն ունի այնպիսի a աստիճան, որ $a \leq b$ և a -ն պարունակում է հիպերպարզ T-միթոտիկ, բայց ոչ wtt-միթոտիկ բազմություն (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Սոկացյան):

Կառուցվել է նպատակային դասի դասակարգման խնդրի կոմբինատոր տրամաբանական մոդել և ուսումնասիրվել են առաջացող գրաֆ տեսական խնդիրները:

Ներմուծվել է գենոմի միաժամանակյա վերլուծության և համահարթեցման ալգորիթմ, որի օգնությամբ իրականացվել է վիրուսների լրիվ գենոմների խմբի համակարգչային վերլուծում:

G աբելյան խմբի ենթաբազմությունների (A_1, \dots, A_k) հավաքածուն կոչվում է k -լուծումներից ազատ, եթե $x_1 + \dots + x_k = 0$ հավասարումը չունի լուծումներ (A_1, \dots, A_k) հավաքածուում, որտեղ $x_1 \in A_1, \dots, x_k \in A_k$: Ստացվել է k -լուծումներից ազատ հավաքածուների քանակի լոգարիթմական ասիմպտոտիկա աբելյան խմբերում (ղեկ.՝ թղթ.անդ. Լ.Ասլանյան):

Դիսկրետ տոմոգրաֆիայում հիմնական խնդրի դիսկրետ կառուցվածքի վերականգնումը տրվել է վերջավոր թվով պրոյեկցիաների միջոցով: Դիտարկվել են դիսկրետ տոմոգրաֆիայի գոյության/կառուցման խնդիրներ հորիզոնական և անկյունագծային պրոյեկցիաների դեպքի համար: Մասնավորապես ուռուցիկ և կապակցված կառուցվածքների դեպքում ապացուցվել է, որ խնդիրն ունի բազմանդամային բարդություն՝ հանգեցնելով այն 2-իրագործելիության խնդրին (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Սահակյան):

Ստացվել է գրաֆում Օրեի տեսքի համիլտոնյանության նոր բավարար պայման, որն անհրաժեշտ է ստուգել միայն հատուկ 4-գագաթանի ծնված ենթագրաֆներում, ի տարբերություն Օրեի պայմանի, որը ստուգվում է բոլոր ոչ հարևան գագաթների զույգերի համար: Տրված k ամբողջ թվի համար համանման պայման է ստացվել նաև ամենաշատը k տերև ունեցող կմախքային ծառերի գոյության համար, որտեղ տերևը ծառի մեկ աստիճան ունեցող գագաթն է (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ժ.Նիկողոսյան):

Գլխարկը կետերի բազմություն է, որոնցից կամայական երեքը համագիծ չեն: Մշակվել է 2 նոր մեթոդ ոչ մեծ լրիվ գլխարկների կառուցման համար $AG(n, 3)$ երկրաչափությունում $F_3 = \{0, 1, 2\}$ դաշտի վրա (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ի.Կարապետյան):

Ուսումնասիրվել է Մարկովյան շղթայի նկատմամբ բազմակի վարկածների ԼԱՕ թեստավորման խնդիրը, երբ առաջադրվող $M (M \geq 2)$ վարկածները խմբավորված են $K (2 \leq K \leq M)$ ընտանիքներով: Նկարագրվել է բոլոր հնարավոր զույգերի սխալների հավանականությունների փոխկապվածությունը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ե.Հարությունյան):

Կոմպլեքս հավանականային ընթացքների շրջանակներում, որոնք բավարարում են Լանժեն-Շրյոդինգերի տիպի ստոխաստիկ դիֆերենցիալ հավասարմանը, ուսումնասիրվել է պատահական շրջակայքում ընկղմված երկու կապված քվանտային օսցիլատորների

խնդիրը: Ցույց է տրվել, որ քվանտային համակարգի վիճակագրական պարամետրերը կարելի է կառուցել երկչափ ինտեգրալային պատկերացումների և մասնակի ածանցյալներով երկրորդ կարգի դիֆերենցիալ հավասարումների լուծումների միջոցով (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Գևորգյան):

Քննարկվել են ժամանակակից ամպային ենթակառուցվածքներում արհեստական բանականության կիրառմամբ վթարների հայտնաբերման ու օգտատերերին դրանց պատճառների հիմնավոր ու մեկնաբանելի մատուցման (explainable ML/AI) նոր մեթոդներ այն պարագայում, երբ մարդու կողմից համակարգից դիտված տվյալների պիտակման (labeling) հնարավորությունները հասանելի չեն, որից բխում է, որ մեքենայական վերահսկմամբ (supervised) ուսուցման ալգորիթմների կիրառումն անհնար է (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Հարությունյան):

Էլեկտրամիգրացիայի մոդելավորման (միկրոսխեմաների հուսալիության անալիզի համար) խնդիրը բերվել է մաթեմատիկական ֆիզիկայի պարաբոլական տիպի ջերմահաղորդականության հավասարման լուծմանը, որն իրականացվել է երկու մեթոդով՝ երեք անկյունագծային տեսքի գծային հանրահաշվական հավասարումների լուծման և Ֆուրյեի արագ ձևափոխության: Ստեղծվել է ծրագրային համակարգ Windows Microsoft Visual Studio (c++) միջավայրում (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Ալավերդյան):

Կատարվել են թվային ազդանշանների և պատկերների մշակման գիտական ուղղության շրջանակում ստեղծված որոշ ալգորիթմների ծրագրային իրականացումներ C++ լեզվով Windows միջավայրում: Կատարման փուլում է տեսաշարում որոշակի օբյեկտների հայտնաբերման և հետևման ծրագրային համակարգի իրականացումը (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Սարուխանյան):

Կատարվել են տեքստուրային պատկերի կառուցվածքային հատկությունների հետազոտում և մոդելավորում, խանգարակայուն տեքստուրային հայտանիշներ հայտնաբերելու արագագործ ալգորիթմների և ծրագրային մոդուլների մշակում, հայտանիշների ինֆորմատիվության չափանիշների մշակում, պատկերների դասակարգման ալգորիթմների մշակում և համեմատական հետազոտություններ (դեկ.՝ տ.գ.դ. Դ.Ասատրյան):

Մշակվել է Զրո ինֆորմատիվությամբ ինտերվալում գտնվելու ապացույց (Zero knowledge range proof)՝ հիմնված կարգի պահպանմամբ ծածկագրման (order preserving encryption) համակարգի վրա (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Աբրահամյան):

Հետազոտվել է բազմապրոցետորային սպասարկման համակարգում առաջադրանքների սպասարկման ընդունման առաջնահերթությունների որոշման խնդիրը, որտեղ յուրաքանչյուր առաջադրանք ունի սպասման ժամանակի սահմանափակում: Ռեսուրսների օպտիմալ օգտագործումը հաշվարկների կազմակերպման արդիական խնդիր է, որի լուծումը ստացվել է առաջադրանքների կատարման արդյունավետ պլանավորման միջոցով՝ հաշվի առնելով պահանջվող ռեսուրսները և կատարման ժամանակը: Մշակվել է սպասարկման մոդել, որում կատարվում է առաջադրանքների սպասարկման ընդհատումը և ընդհատված առաջադրանքների հետագա սպասարկումը (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Սահակյան):

Ենթադրելով, որ համակարգչից կախված (computer-depended) կոմբինատոր խաղեր լուծող ծրագրերը կարող են հասնել մարդու իմացության ադեկվատ մոդելներին՝ հաջորդիվ փորձ է արվել կատարել նմանատիպ պնդումներ ընդհանուր առմամբ ոչ(ներգ)ենտրոպիկների (negentropics) համար՝ բջջայիններից (cellulars) և համակարգիչներից անկախ: Օստավների՝ նեգենտրոպիկների մի տեսակի համար, որոնք կարող են ընդլայնել իմացության ուժը բավարար ժամանակային պայմաններում, պնդում ենք, որ կարող են մոդելավորել Պիաժեյի ներկայացրած նորածինների զարգացումը: Նաև պնդում ենք, որ այդ ընդհանրացված իմացիչները (cognizers) բավարար են ամենաառաջին նեգենտրոպիկների՝ էներջայզերների (energizers), ապա օստավների (octaves) բնութագրման համար, որոնք իրենց

հերթին, ենթադրաբար, հիմնական 1/2 տեղանի դասակարգիչների համաստեղություններ են (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Է.Պողոսյան):

Մշակվել են տեքստերից գիտելիքների կառուցման և գիտելիքներից մարդուն հասկանալի նկարագրությունների ստացման ալգորիթմներ RGT խնդիրների համար և կատարվել են դրանց փորձարկումներ RGT Solver ծրագրային փաթեթում (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Գրիգորյան):

Ուսումնասիրվել են գրաֆի տեսքով նկարագրված տվյալների մեծ հավաքածուներից ավտոմատ գիտելիքների դուրս բերման հնարավորությունները՝ կիրառելով հայտնի ալգորիթմները և նրանց կոմբինացիաները: Հետազոտվել են տվյալների զուգահեռ մշակման հնարավորությունները՝ այն ձևափոխելով Property Graph-ի ներկայացման (դեկ.՝ տ.գ.թ. Տ.Շահինյան):

Հետազոտվել են SSL հավաստագրերի կենտրոնացված տարաբաշխման ավտոմատացված համակարգի արդյունավետությունը բարձրացնող մեթոդները: Ստեղծվել է կենտրոնացված տարաբաշխման ավտոմատացված SSL հավաստագրերի համակարգի թարմացված տարբերակ, որը տրամադրում է անվճար SSL հավաստագրեր տարբեր Certificate Authorities (CA) աղբյուրներից, ինչպես օրինակ ZeroSSL, LetsEncrypt: Համակարգը հիմնված է ժամանակակից Automatic Certificate Management Environment (ACME) արձանագրության 2-րդ սերնդի (version 2) վրա և ունի նոր հավաստագրերի աղբյուրներ ընդգրկելու հնարավորություն (դեկ.՝ տ.գ.թ. Ա.Պետրոսյան):

Գլոբալ հասցեային տարածքի բաժանված մոդելի UPCXX C++ գրադարանի հենքի վրա մշակվել և գնահատվել են բարձր արտադրողականությամբ գրաֆային երկու ալգորիթմներ, որոնք սիմետրիկ բազմապրոցեսորային և բաշխված հիշողությամբ համակարգերի համար օգտագործել են հեռահար ֆունկցիաների կանչեր և ատրիբուտներ՝ տարբեր խտությամբ մեծ գրաֆներում նվազագույն կապող ծառի խնդիրները լուծելու համար: Ալգորիթմներից առաջինը հիմնված է Պրիմի, իսկ երկրորդը՝ Կրուսկալի ալգորիթմի վրա:

Դիտարկվել է Rb ատոմական գոլորշու հիմնական վիճակի ենթամակարդակների ռելաքսացման արագության կանխագուշակման խնդիրը՝ չափված ֆլուորեսցենցի սպեկտրներից, ինչը ռեգրեսիայի տիպիկ խնդիր է: Ներկայացվել է օպտիմալ ռեգրեսիայի մոդել, որը բնութագրվում է մեծ ճշտությամբ և ֆունկցիայի հիմնական ցուցանիշների մոդելավորման բարձր արագությամբ (դեկ.՝ տ.գ.թ. Հ.Ասցատրյան):

Հայաստանյան գիտական ամսագրերի համար հաշվարկվել են Ազդեցության գործոնները: Կատարվել է արտասահմանյան պարբերականներում հայաստանյան գիտնականների և հետազոտողների հրապարակումների գիտաչափական վերլուծություն, հայաստանյան գիտական ամսագրերի մատենաչափական նկարագրություն և հեղինակների ու կազմակերպությունների նույնականացում: Ստացված շտեմարանները հիմք են ծառայելու Գիտական հոման հայկական ցուցիչի համար: Российский индекс научного цитирования գիտական շտեմարանում զետեղվել են Mathematical Problems of Computer Science ամսագրի համարները: Իրականացվել են Հայաստանում բաց գիտության զարգացման աշխատանքներ (դեկ.՝ կ.գ.թ. Շ.Սարգսյան):

Ուսումնասիրվել են արհեստական բանականության ոլորտում տարատեսակ բաց ծրագրային կոդով անվճար համակարգերը, դրանց՝ միմյանց հանդեպ ունեցած առավելություններն ու թերությունները, նեյրոնային ցանցերի, խորը նեյրոնային ցանցերի տարբեր ենթախմբերը, կոնվոլյուցիոն նեյրոնային ցանցերի և բնական լեզվի մշակման համար նախատեսված նեյրոնային ցանցերը:

Ուսումնասիրվել են TensorFlow Hub շտեմարանում տեղ գտած տիպային և բազմանպատակ կիրառություն ունեցող մեքենայական ուսուցման մոդելները, փոխանցվող ուսուցման (transfer learning) տեխնոլոգիան և դրա կիրառման շնորհիվ TensorFlow Hub

մեքենայական ուսուցման մոդելների շտեմարանում տեղ գտած բազմակի օգտագործման համար նախատեսված մոդելների վերին շերտի ներդրումների վերաուսուցումը:

Շարունակվել են ԻԱՊԻ-ի կլաստերի ղեկավարման համակարգի՝ արդիական նախագծերում օգտագործվող տեխնոլոգիաներին համապատասխանեցման աշխատանքները:

Մշակվել են նկարների ճանաչման փորձնական մոդելներ փոխանցվող ուսուցման տեխնոլոգիայի օգնությամբ, դրանք օպտիմիզացվել են TensorFlow Lite համակարգերի համար և կիրառվել մոբայլ հարթակում պատկերների ճանաչման և դասակարգման նպատակով: Mobile FaceNet դասի մեքենայական ուսուցման մոդելների հիման վրա ստեղծվել է փորձնական համակարգ կամայական դեմքերի ճանաչման համար (ղեկ.՝ տ.գ.թ. Մ.Գյուրջյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Կոլեկտիվ արհեստական բանականությամբ ինքնակազմակերպված անօդաչու թռչող սարքերի երամի վթարակայուն մշտադիտարկման և նպատակային առաջադրանքների իրականացման ծրագրային համակարգ» նախագծի շրջանակում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ.Պողոսյան) հետազոտվել է ԱԹՍ երամի մոդելավորման համակարգում ինֆորմացիայի լրիվ փոխանակում իրականացնող (Gossip/broadcast models) օպտիմալ սխեմաների ներգրավման հնարավորությունը՝ անհրաժեշտ մինիմալ բնութագրիչներով (մինիմալ ժամանակ, կանչեր, կապուղիներ) օժտված տրամաբանական կապերով երամների գեներացման համար: Կատարվել են դրոնների միջև ինֆորմացիայի (նկարահանված պատկեր/ներ) փոխանակման ընթացքում կապի հավանական խաթարումների չեզոքացման նպատակով մշակված անհրաժեշտ վթարակայունություն ապահովող (fault-tolerance) բազմասպեկտր կառուցվածքներով սխեմաների գեներացման և ալգորիթմների ծրագրային իրականացումներ: Մշակվել է ԱԹՍ երամի դրոններին թռիչքի մեկնարկից առաջ «բանալի-արժեքների» վերագրման ընթացակարգը: Մշակվել են նաև նկարահանված բազմագույն պատկերների կողավորման և ապակողավորման համապատասխան ալգորիթմները: Ժամանակի տվյալ պահին նկարահանված և դեպի կենտրոնացված սերվեր հաղորդված պատկերների հետագա մշակման նպատակով ներդրվել և կիրառվել է OpenDroneMap Authors ODM - բաց սկզբնաղբյուրով ծրագրային համակարգը՝ պատկերների հավաքական ճանաչման ու սինթեզի, երկչափ ու եռաչափ պատկերների վերաբաժանման և տեսաբերման հնարավորությամբ: Տվյալների մշակման նպատակով ստեղծվել է բազմաօգտատեր ծրագրային ապահովման հարթակ՝ օգտատերերի փոխգործուն համատեղ աշխատանքի և տեսաբերման հնարավորությամբ: Հարթակի կազմակերպումը ներառում է օգտագործողի ինտերֆեյսը և TCP Client-Server ճարտարապետությունը: Սերվերը տեղադրվել և գործում է ամպային միջավայրում:

«Ինքնակազմակերպվող ԱԹՍ-երի երամի խելացի ամպային հիմնահարթակ՝ բազմա-ագենտային ալգորիթմների և համակարգերի ներգրավմամբ» նախագծի շրջանակում (ղեկ.՝ տ.գ.թ. Հ.Ասցատրյան, համակարգող՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Պողոսյան) կազմակերպվել են աշխատանքային սեմինարներ, որոնց ընթացքում խմբի մասնակիցների համար ձևավորվել են տեխնիկական առաջադրանքներ: Մշակվել են ինքնակազմակերպվող անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) երամի գործարկման և կառավարման օպտիմալորեն բաշխված ծրագրաապարատային ամպային համակարգի գլխավոր բաղադրիչների կառուցվածքները:

«Ճանաչողության բազմամակարդակ մոդելներ օպտիմալ լուծումների դինամիկ որոնման խնդիրներում» ծրագրի նախնական փուլում ճշգրտվել են նախագծի հետազոտական և տեխնիկական մանրամասները, կատարվել է հետագա աշխատանքների

պլանավորում: Հետազոտվել է կերպարների ճանաչողության դինամիկ վերահսկվող մոդելը՝ ըստ ուսուցման բազմության:

«Նորարարական լուծումներ մոնոտոն և գծային կոմբինատոր օպտիմիզացիայում՝ ուղղված կիրառություններին» ծրագրի նախնական փուլում մշակվել է ծրագրի մանրամասն հետազոտական տեխնիկական պլանը, անցկացվել են աշխատանքային սեմինարներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Սահակյան):

«Պատկերների տեքստուրային հատկությունների հետ համաձայնեցված ինֆորմատիվ հայտանիշների հավաքակազմի ձևավորման արդյունավետ հաշվողական ընթացակարգերի կառուցում» ծրագրի շրջանակում կատարվել է տեքստուրային պատկերների մշակման ժամանակակից մեթոդների ուսումնասիրություն, այդ թվում՝ հայտնի մոտեցումների և գործող ծրագրային միջոցների փորձարկումներ, տեքստուրայի հայտանիշների որոշման և դրանց ինֆորմատիվության գնահատման նոր ալգորիթմների մշակում, ինֆորմատիվ հայտանիշների հավաքակազմի ձևավորման արդյունավետ ընթացակարգերի նախնական ուսումնասիրություն:

«Էլեկտրոնային քվեարկության ընթացակարգերի անվտանգության և հուսալիության բարելավում ստեգանոգրաֆիկ մոդելների հետազոտության և ներդրման միջոցով» նախագծի շրջանակում հետազոտվել են գոյություն ունեցող է-քվեարկության համակարգերն անվտանգության խնդիրների հայտնաբերման տեսանկյունից (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Մ.Հարությունյան):

«Ճշգրիտ կառուցվող պատահական շրջակայքով քվանտային համակարգեր, դրանց մոդելավորումը և 3D տեսայնացումը» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Գևորգյան) կատարվել են դասական, պատահական շրջակայքում ընկղմված մեկչափանի տատանակի շարժման պարամետրերի մաթեմատիկական սպասումների ճշգրիտ կառուցման տեսական հետազոտություններ: Հետազոտվել են վիճակագրական հավասարակշռության սահմանում առաջացած տարածությունների երկրաչափական և տոպոլոգիական հատկությունները:

«Դեպի հայաստանյան գիտության միջազգայնացում. Գիտական հոման հայկական ցուցիչ» («Գիտական խմբերի կամ լաբորատորիաների ամրապնդման աջակցություն-2020» շրջանակում իրականացվող թեմա) ծրագրի շրջանակում աշխատանքի տեսական հիմքի նախապատրաստման համար ուսումնասիրվել է գիտական հոման շտեմարանների ստեղծման և կիրառման համաշխարհային փորձը: Մասնավորապես խորացված ուսումնասիրվել են Web of Science, Scopus, eLibrary/PIHIL, SciELO շտեմարանները և մի շարք բաց համակարգեր, որոնց շարքում կարելի է հիշատակել OpenAire Explore-ը և Dimensions-ը: Խորհրդատուների հետ (ներառյալ SS խորհրդատուն) ամբողջացվել է Գիտական հոմաների հայկական ցուցիչի տեխնիկական առաջադրանքը, որը ծրագրի իրականացման տեխնիկական մասի հիմքն է: Կատարվել է ԳՀՀՑ-ի հումքի հավաքագրում, մշակում և ինդեքսավորում, առկա հումքային տվյալների ճշգրտում, մաքրում և նույնականացում: Շարունակական բնույթ կրող այս աշխատանքի արդյունքում իրականացվել է հայաստանյան շուրջ 40 գիտական ամսագրի տվյալների գիտաչափական մշակում ու ճշգրտում: Տեխնիկական բնույթի այս աշխատանքն առանցքային նշանակություն ունի ծրագրի արդյունավետ իրականաման տեսանկյունից, քանի որ հանդիսանալու է ապագա համակարգի բովանդակությունը:

«Հայ ազգի գիտական ներուժի զարգացման հիմնական մարտահրավերներից մեկը. ինչպե՞ս ուղեղների արտահոսքը վերածել ուղեղների ներհոսքի» ծրագրի շրջանակում իրականացվել է «Հայրենիք - գիտական սփյուռք» համագործակցության համաշխարհային փորձը (ղեկ.՝ կ.գ.թ. Շ.Սարգսյան):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Գզոյան Է.Գ., Սարգսյան Շ.Ա., «Գիտաչափությունը հասարակական և հումանիտար գիտություններում. խնդիրներ ու առանձնահատկություններ», Ե., «Հանրային կառավարում», N 1, 2021, էջ 63-76:
2. Գզոյան Է.Գ., Սարգսյան Ա.Ա., Սարգսյան Շ.Ա., ՀՀ-ԵՄ գիտական համագործակցության ցանցային կառուցվածքը, Ե., «Հանրային կառավարում», N 2, 2021, էջ 26-30:
3. Asatryan D., Kurkchian V., Sazhumyan G., Rational approach to the problem of accurate UAV landing using intelligent image processing methods, "Mathematical Problems of Computer Science", v. 54, 2020, pp. 108-115.
4. Astsatryan H., Gevorgyan Gh., Knyazyan A., Mickaelian A., Mickaelian G., Astronomical objects classification based on the Digitized First Byurakan Survey low-dispersion spectra, "Elsevier Journal Astronomy and Computing", v. 34, DOI: 10.1016/j.ascom.2020.100442, pp. 442-445, 2021.
5. Astsatryan H., Grigoryan H., Poghosyan A., Abrahamyan R., Asmaryan Sh., Muradyan V., Tepanosyan G., Guigoz Y., Giuliani G., Air temperature forecasting using artificial neural network for Ararat valley, "Springer Earth Science Informatics", v. 14, N 2, pp. 711-722, DOI: 10.1007/s12145-021-00583-9, 2021.
6. Astsatryan H., Lalayan A., Kocharyan A., Hagimont D., MapReduce optimization service based on data compression and in-memory file system, "Scalable Computing: Practice and Experience", v. 22, issue 4, pp. 401-412, doi: 10.12694/scpe.v22i4.1945.
7. Astsatryan H., Narsisian W., Mirzoyan A., Sahakyan V., Research cloud computing ecosystem in Armenia, International Conference "Distributed Computing and Grid-technologies in Science", 2021, Dubna, Russia, 2021, pp. 117-121.
8. Bejanyan V., Astsatryan H., A PGAS-based implementation for the parallel minimum spanning tree algorithm, "13th International Conference on Large-Scale Scientific Computations", Sozopol, Bulgaria, 2021, Springer Lecture Notes in Computer Science, v. 13127, pp. 395-403.
9. Bejanyan V., Astsatryan H., VM based evaluation of the scalable parallel minimum spanning tree algorithm for PGAS model, 9th International Conference "Distributed Computing and Grid Technologies in Science and Education" (GRID'2021), 2021, Dubna, Russia, 2021, pp.541-547.
10. Darbinyan S., A theorem on even pancyclic bipartite digraphs, "Mathematical Problems of Computer Science", v. 55, 2021, pp. 9-23.
11. Gevorkyan A., Bogdanov A., Mareev V., Hidden dynamical symmetry and quantum thermodynamics from the first principles: quantized small environment. "Symmetry", v. 13, N 8, 2021, 1546 (28 pages). <https://doi.org/10.3390/sym13081546>
12. Haroutunian M., Capacity - equivocation region of wiretap channel, "JUCS - Journal of Universal Computer Science", v. 27, N 11, 2021, pp. 1222-1239. <https://doi.org/10.3897/jucs.76605>
13. Haroutunian M., Mastoyan K., The role of information theory in the field of big data privacy, "Mathematical Problems of Computer Science", v. 55, 2021, pp. 45 – 53.
14. Karapetyan I., Karapetyan K., The complete caps in projective geometry PG ($n,3$), «Լրաբեր գիտական հոդվածների ժողովածու», (ՀԱՊՀ), մաս 1, 2021, էջ 35-43:
15. Kupriyanov A., Asatryan D., Haroutunian M., Gabbasov R. and Paringer R., Structural intellectual techniques for texture image analysis, "2021 International Conference on Information Technology and Nanotechnology (ITNT)", 2021, pp. 1-7, doi: 10.1109/ITNT52450.2021.9649201.
16. Lukashevich P., Belotserkovsky A., Astsatryan H., Modern systems for processing and analyzing GEO-data based on OLAP technology, "CMIS-2021 (The Fourth International Workshop on Computer Modeling and Intelligent Systems)", Zaporizhzhia, Ukraine, 2021, v. 2864, pp. 216-225.
17. Mkrtchyan S., Education through Wikipedia, "Mathematical Problems of Computer Science", v. 55, 2021, pp. 72-78.
18. Poghosyan A., Harutyunyan A., Grigoryan N., Kushmerick N., Incident management for explainable and automated root cause analysis in cloud data centers, "JUCS - Journal of Universal Computer Science", v. 27, N 11, 2021, pp. 1152-1173. <https://doi.org/10.3897/jucs.76608>
19. Sargsyan A., Aleksanyan A., Petrosyan S., Gazazyan E., Papoyan A., Astsatryan H., Prediction of atomic ground state relaxation rate from fluorescence spectra using machine learning, "Proceedings of the NAS RA. Physics", v. 56, N 4, 2021, pp. 431-439.

20. Shushanyan R., Ohanyan M., How to perform a bibliometric analysis of journals for specific scientific fields, Ե., «Բանբեր Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի. Մետալուրգիա, նյութագիտություն», N 2, 2021, էջ 67-72:
Հոդվածները հրատարակվել են CSIT2021 միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուում, Ե., «Գիտություն» հրատ., 2021, 304 էջ
21. Asatryan D., Haroutunian M., Kurkchiyan V., Melkumyan A., Kupriyanov A., Paringer R., Kirsh D., Dissimilarity-based algorithms for fabric defects detection, pp. 167-170.
22. Aslanyan L., Sahakyan H., Sperner system descriptions in ARM, pp. 51-53.
23. Aslanyan L., Karalyan Z., On whole genome phylogeny of viruses, pp.107-109.
24. Avetisyan A., Comparative analysis of modern E-voicing systems based on security criteria, pp. 81-84.
25. Darbinyan S., On d -panconnected tournaments with large semi-degrees, pp. 54-56.
26. Gabbasov R., Paringer R., Kupriyanov A., Asatryan D., Haroutunian M., A method of coordinated optimization of neural network parameters for a given set of images, pp. 13-16.
27. Grigoryan S., Automating acquisition and explanation of strategy knowledge, pp. 21-23.
28. Karapetyan I., Karapetyan K., Complete caps in projective geometry $PG(n, 3)$, pp. 57-60.
29. Manukyan N., Hakobyan P., and Harutyunyan A., Analysis of student learning behavior via moodle data, pp. 278-281.
30. Mokatsian A., On initial segments of the class of turing degrees containing hypersimple T-mitotic but not wtt-mitotic sets, pp. 150-154.
31. Nikoghosyan Zh., Ore-type conditions for Hamilton cycles and spanning trees with few leaves, pp. 68-70.
32. Petrosyan A., Petrosyan G., Tadevosyan R., Implementation of ACMEv2-based automated centralized wildcard certificates system, pp. 207-208.
33. Petrosyan A., Petrosyan G., Tadevosyan R., Implementation of load-balancing for distributed video conferencing system", pp. 209-210.
34. Pogossian E., Specifying adequate models of cognizers, pp. 24-29.
35. Poghosyan S., Alaverdyan Y., Poghosyan V., Abrahamyan S., Atashyan A., Astsatryan H., Shoukourian Yu., Certain methods for investigating epidemics and preventing the spread of viruses in self-organizing systems, pp. 155-158.
36. Poghosyan S., Alaverdyan Y., Poghosyan V., Lazyan A., Hayrapetyan D., Shoukourian Yu., Algorithms for operating self-organizing swarms of UAVs implementing full exchange of information, pp. 159-163.
37. Sahakyan H., Aslanyan L., Reconstruction of hd-convex and connected discrete sets from horizontal and diagonal projections, pp. 71-74.
38. Sahakyan V., Vardanyan A., About the possibility of executing tasks with a waiting time restriction in a multiprocessor system, pp.47-48.
39. Sargsyan V., Asymptotics for the logarithm of the number of k -solution-free collections in Abelian groups, pp. 75-77.
40. Shahinyan T., Automatic big data analysis of RDF datasets using Apache Spark GraphX", pp. 47-48.
41. Yesayan A., Neyman-Pearson procedure of detection with side information for separate groups of arbitrarily varying Markov distributions, pp. 85-89.

«ՀԻՂՐՈՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԵՎ ՎԻՐՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԲԱԺԻՆ» ՓԲԸ

Տնօրեն՝ տ.գ.թ. Գ.Ավետիսյան
Էլեկտրոնային փոստ՝ EnergPower@mail.ru

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Հետազոտություններ են կատարվել գազի անկայուն հոսք պարունակող խողովակաշար համակարգերում ալիքային և տատանողական պրոցեսների, ինչպես նաև հարվածային երևույթների կառավարման ուղղությամբ:

Մշակվել են երեք տիպի սկզբունքորեն նոր կայունացուցիչներ գազի անկայուն հոսք պարունակող խողովակաշար համակարգերում տատանողական պրոցեսները կառավար-

րելու համար: Այս մշակումների նպատակը խողովակաշարում գազի ճնշման և ծախսի տատանումների հաճախականությունների մարման տիրույթի ընդլայնումն է:

Կայունացուցիչներն իրենց հիմքում պարունակում են կորպուս, որն ընդգրկում է խողովակաշարը՝ առաջացնելով մարող խոռոչներ և ալիքատարներ, ընդ որում ալիքատարներն իրականացվում են տարբեր թողունակությամբ:

Աշխատանքային միջավայրի ճնշման և ծախսի պոլսացիաները մարում են մեկ կամ մի քանի ալիքատարների և մարող խոռոչի միջև ռեզոնանսային տատանումների հաշվին:

Մշակվել է մեթոդ կայունացուցիչ պարունակող խողովակաշարերում գազի ճնշման ու ծախսի ստիպողական տատանումների և նրանց կոնստրուկտիվ պարամետրերի որոշման համար:

Նախապես տրված որոշակի մակարդակով գազի ճնշման և ծախսի պոլսացիաներով խողովակաշար համակարգերի նախագծումը նախատեսում է կոմպլեքս խնդիրների լուծում՝ կապված կայունացուցիչների տիպի և տեղակայման, տեղի ընտրության, խողովակաշար համակարգերի վերլուծական կամ փորձարարական մոդելների կառուցման, սահմանային պայմանների որոշման, կայունացուցիչների հիմնական պարամետրերի հաշվարկման հետ:

Կայունացուցիչներով գազատարներում անցողիկ պրոցեսներն ուսումնասիրելու համար մոդելավորվել և ստեղծվել է լաբորատոր ստենդ, որի վրա կարելի է ստանալ գազի ճնշման պոլսացիաները 5-250 Հց միջակայքում, իսկ ճնշման պոլսացիաների ամպլիտուդային արժեքը՝ 0.05-0.1 ՄՊա: Նշված պարամետրերից ելնելով՝ ընտրվել են չափող և գրանցող սարքավորումներ, որոնք թույլ կտան իրականացնել համապատասխան ճշգրտությամբ փորձարարական հետազոտություններ:

Մշակված կայունացուցիչների մակետների ստենդային փորձարկումների արդյունքները ցույց են տվել նրանց աշխատանքի բարձր արդյունավետությունը ճնշման և ծախսի տատանումների 5-90 Հց հաճախականության միջակայքում (դեկ.՝ տ.գ.թ. Գ.Ավետիսյան):

ՏԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԱՍՏՂԱՏԻԶԻԿԱՅԻ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

Ակադեմիկոս-քարտուղար՝ ակադեմիկոս Ռ.Կոստանյան

Գիտքարտուղար՝ Ն.Դավիդյան

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանը (ԲԱ), Ֆիզիկական հետազոտությունների (ՖՀԻ), Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների (ՖԿՊԻ), Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի (ՌՖԷԻ) ինստիտուտները և ԻԿՐԱՆԵՏ կենտրոն ՄԿ:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են ԳԱԱ 6 ակադեմիկոս, 10 թղթակից և 27 արտասահմանյան անդամներ:

Հաշվետու տարում անցկացվել է բաժանմունքի 3 ընդհանուր ժողով, բյուրոյի 14 նիստ, բազմաթիվ ընթացիկ հարցերի քննարկման և լուծման համար կազմակերպությունների հետ պահպանվել է մշտական կապ:

Բաժանմունքի ապրիլի 22-ի տարեկան ընդհանուր ժողովը քննարկել և հավանություն է տվել ակադեմիկոս-քարտուղար ակ. Ռ.Կոստանյանի «2020թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները» հաշվետու զեկուցմանը (հեռավար): Հունիսի 29-ին հերթական ժողովում ակ. Ռ.Կոստանյանը վերընտրվել է ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում, ընտրվել և հաստատվել է բյուրոյի նոր կազմը:

Բաժանմունքի բյուրոյի նիստերում քննարկվել և հաստատվել են ստորաբաժանումների գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման, ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերը, ասպիրանտուրայի և գործուղումների հայտերը, փորձագիտական եզրակացություններ են տրվել Կառավարության կառույցներից ստացված նամակներին, դիմումատուներին տրվել են պատասխաններ: Ընդհանուր ժողովում ընտրվել են լիազոր ներկայացուցիչներ, ՖՀԻ-ում՝ գիտական քարտուղար և փոխտնօրեն: Քննարկվել և բավարարվել են «ՀՀ ԳԱԱ ինստիտուտների գիտական սարքավորումների սպասարկում, վերազինում, գիտափորձերի իրականացման համար նյութերի ձեռքբերում և չնախատեսված անհետաձգելի ծախսերի կատարում» և «ՀՀ ԳԱԱ համակարգի կազմակերպությունները սարքավորումներով վերազինում» բյուջետային ծրագրերի շրջանակում նախատեսված միջոցների հաշվին սարքավորումների ձեռքբերման ՖՀԻ-ի, ԲԱ-ի և ՌՖԷԻ-ի ներկայացված հայտերը: Ըստ «ՀՀ ԳԱԱ համակարգի կազմակերպություններում գիտական աշխատողի ատեստավորում անցկացնելու ընդհանուր դրույթներ» ներքին օրինակելի կանոնակարգի՝ ստորաբաժանումներում մեկնարկել է գիտահետազոտական աշխատանքներ կատարող աշխատակիցների ատեստավորումը, որի արդյունքները քննարկվել են բյուրոյի նիստերում:

Մշտապես քննարկվել են գիտական աշխատանքների արդյունավետության բարձրացման, կիրառական նշանակություն ունեցող ուսումնասիրությունների ընդլայնման, գիտական կազմակերպությունների աշխատանքի գնահատման հարցերը:

Պարբերաբար անցկացվել են հանրապետական սեմինարներ և միջազգային գիտաժողովներ, կնքվել են նոր պայմանագրեր, շարունակվել է համագործակցությունը գիտական և կրթական ոլորտների այլ ստորաբաժանումների հետ: Քննարկվել են 2022թ. բազային հայտերը, 2022-27թթ. ծրագրերը և բաժանմունքի կազմակերպությունների ռազմավարությունը, գիտական կազմակերպությունների 2021թ. կարևորագույն և կիրառական արդյունքները:

Բաժանմունքի ինստիտուտների աշխատակիցները պաշտպանել են 8 թեկնածուական ատենախոսություն: Բաժանմունքի ինստիտուտները ստացել են 3 արտոնագիր, գիտաշխատողները տպագրել են 2 դասագիրք, 4 մենագրություն (2-ն արտասահմանում), 221 հոդված՝

գրախոսվող ամսագրերում 189 (98-ն արտասահմանում), գիտաժողովների նյութերի ժողովածուներում 32 (8-ն արտասահմանում), 107 թեզիս (27-ն արտասահմանում):

Դեկտեմբերին բաժանմունքի գիտական կազմակերպություններում անցկացվել են տարեկան հաշվետու ժողովներ, քննարկվել և հաստատվել են 2021թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության մասին հաշվետվությունները:

Բաժանմունքը հրատարակում է «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Ֆիզիկա» (imp. fac. 0.578, 4 համար), «Աստղաֆիզիկա» (imp. fac. 0.655, 4 համար), «Armenian journal of physics» («Ֆիզիկայի հայկական հանդես», Էլեկտրոնային, 4 համար) ամսագրերը:

Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎ. ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ

Տնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյան
Փոխտնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Հարությունյան
Գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.թ. Ե.Նիկողոսյան
Էլեկտրոնային փոստ՝ director@bao.sci.am, observ@bao.sci.am
Կայքէջ՝ www.bao.am

Մասնագիտական խորհուրդ 048՝ «Աստղաֆիզիկա, ռադիոաստղագիտություն»
Նախագահ՝ ֆ.-մ.գ.դ. Տ.Մադաթյան, գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.թ. Ե.Նիկողոսյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Օգտագործելով Gaia EDR3 և 2MASS կատալոգների տվյալները՝ կառուցվել է երկու դիագրամ, որտեղ լրիվ իրարից առանձնանում են C և M աստղերը, այսինքն՝ ածխածնով և թթվածնով հարուստ աստղային օբյեկտները: Գնահատվել են FBS M և C աստղերի զանգվածները: Ուսումնասիրվել են 1471 FBS C և M աստղերի բաշխումն ու փոփոխականությունը: Catalina շրջահայությունից հետազոտվել է հարավային երկնքի 1286 երկարապարբերական փոփոխական: Կատարվել է մեծ թվով Catalina և LINEAR փոփոխականների դասակարգում: Գտնվել է C աստղ 120 կպկ հեռավորության վրա: Գտնվել է M աստղ IC 1613 թզուկ գալակտիկայում: DFBS-ից հայտնաբերվել են նոր թույլ C և M դասի աստղեր (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյան):

Գտնվել են մի քանի նոր աստղառաջացման տիրույթներ հարավային կիսագնդում: Դրանցից առաջինը՝ SFR 1, գտնվում է մութ գլոբուլում, պարունակում է ենթակարմիր աստղեր, որոնցից շատերը կապված են փոշու թաղանթի հետ, իսկ երկուսը՝ գիսավորաձև միգամածությունների հետ: Երկրորդ տիրույթը՝ SFR 2, գտնվում է մութ ամպում: Առկա են գիսավորաձև միգամածություններ և փոշու թաղանթներ պարունակող ենթակարմիր աստղեր: Երրորդը՝ մութ ամպում գտնվող SNO 28 աստղը, կապված է փոշու թաղանթի և երկբևեռ շիթի հետ (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Գյուլբուդաղյան):

Օգտագործելով 2500 բաբախիչների Ֆարադեյի պտույտի և 40000 արտագալակտիկ ռադիոաղբյուրների բևեռաչափական տվյալները՝ ստացվել են նախնական գնահատականներ Մետագալակտիկայի մագնիսական դաշտերի համար: Ցույց է տրվել, որ $z=1$ մետագալակտիկական հեռավորությունների վրա Ֆարադեյի պտտման չափի աճը 10 ռադ/մ² կարգի է: Մեծ չափեր և զանգված ունեցող HII-տիրույթների և կոմպլեքսների 6-մ աստղադիտակով ստացված տվյալների հիման վրա ցույց է տրվել, որ աստղառաջացման պրոցեսները կարող են ձգանի դեր խաղալ՝ դառնալով ձևաբանական փոփոխությունների պատճառ: Տվյալ դեպքում դա Գալակտիկայի թևի առաջացումն է, որի սկիզբը համընկնում է կենտրոնական մասում գտնվող միակ աստղառաջացման տիրույթում նկատվող բուռն

պրոցեսների հետ: Ցույց է տրվել, որ գերնոր աստղերի բացարձակ մեծության արժեքի փոփոխությունն ընդամենը 0,4 m-ով հանգեցրել է տիեզերաբանական պարամետրերի փոփոխությանը $\Omega\Lambda = 0,7$ և $\Omega M = 0,3$ արժեքներից մինչև $\Omega\Lambda = 0$ և $\Omega M = 1$: Սա նշանակում է, որ Ia տիպի գերնոր աստղերի M բացարձակ մեծության ճիշտ գնահատումը չափազանց կարևոր է տիեզերաբանական պարամետրերը գնահատելու համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Անդրեասյան):

Դիտողական տվյալների հիման վրա հաշվարկվել է 64 BCD (Blue Compact Dwarf) գալակտիկաների համար փոշու քանակությունը: Փոշու և HII գազի զանգվածների միջև ստացված առնչությունը կարելի է օգտագործել այլ աստղաքիմիական խնդիրներում: Հաշվարկվել են փոշու գոլորշիացման շառավիղները 64 գալակտիկայի համար: Հաշվի առնելով կլանումը՝ 8 գալակտիկայի համար հաշվարկվել են ջրածինն իոնացնող ջերմ աստղերի և փոշու քանակը, ինչպես նաև սառույցի սյունակային խտությունները: Դասակարգվել են [CII] 158 μ m գծի պրոֆիլները 379 գալակտիկայի համար, որոնք դիտվել են Հերշելի տիեզերական աստղադիտարանի PACS սարքավորումով: Կատարվել է FUV - ի 2.6 մ դիտակի համար ադապտիվ օպտիկայի առավել հարմար սխեմայի մշակում: Որպես հիմք ընդունվել է Natural Guide Star (NGS) Single-Conjugated (SC) Adaptive Optics (AO) բազային սխեման: Թվային մոդելավորումով գնահատվել է համակարգի վերջնական կատարումը: Ըստ նախնական արդյունքների՝ այն կարող է արդյունավետ աշխատել մինչև $V \sim 11^m$ կետային աղբյուրների (ուղեկցող աստղերի) հետ՝ ապահովելով տեսական սահմանին մոտ ~ 0.048 arcsec անկյունային լուծունակություն: Նմանատիպ համակարգի կիրառմամբ հնարավոր նոր հետազոտությունների շրջանակ կարող են հանդիսանալ դիտողական աստղագիտության փաստացի բոլոր արդի ուղղությունները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Եղիկյան):

Այլընտրանքային տիեզերաբանության տեսանկյունից դիտարկվել է «հաբլյան լարվածություն» կոչված խնդիրը: Խնդրի էությունն այն է, որ Հաբլի հաստատունի տարբեր արժեքներ են ստացվում «վաղ տիեզերքի» և «ուշ տիեզերքի» տվյալների գործածմամբ, և առայժմ որևէ բացատրություն չկա դրա համար: Քանի որ «վաղ տիեզերքի» տվյալները գալիս են միայն ֆոնային ճառագայթման երկրաչափությունից և դրանք օգտագործվում են առանց նյութի ֆիզիկական հատկությունների հաշվառման, իսկ «ուշ տիեզերքի» տվյալներն օբյեկտների հեռավորությունների և կարմիր շեղումների օգտագործմամբ են ստացվում, ապա առաջ է քաշվել վարկած, որ պատճառը կարող է լինել բարիոնային նյութի էվոլյուցիան, ինչը տեղի է ունենում Տիեզերքի ընդհանուր էվոլյուցիայի շրջանակում: Քանի որ եզրակացրել էինք, որ Տիեզերքի էվոլյուցիայի հետևանքով աստիճանաբար աճում են օբյեկտների զանգվածները, ապա այդ եզրակացությունը կիրառվել է նաև այս դեպքում՝ բերելով ֆիզիկական հիմնավորումը: Հաշվարկները ցույց են տվել, որ բարիոնների զանգվածի աճը տարեկան մոտ 6×10^{-12} չափով ապահովում է տրված տարբերությունը: Մշակվել է նաև ծրագրային փաթեթ միջաստղային նյութի սյունակային խտության և փոշու ջերմաստիճանի որոշման համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Հարությունյան):

Ստացվել է ճառագայթման տեղափոխման ժամանակից կախված համապատասխան խնդրի ճշգրիտ լուծումը, որը հաշվի է առնում միջավայրում բազմապատիկ ցրումների ընթացքում ֆոտոնների ժամանակային կորուստների հիմնական երկու պատճառները: Խնդրի լուծման ճշգրիտ եղանակը թույլ է տալիս գտնել միջավայրում ֆոտոնների գտնվելու ընդհանուր ժամանակը: Այսպիսով հնարավորություն է ընձեռնվել նկարագրել սպեկտրալ գծերի պրոֆիլների էվոլյուցիան ֆիզիկական պարամետրերի տարբեր իրատեսական արժեքների դեպքում, ինչպես նաև պարզել անընդհատ սպեկտրում ցրումների ազդեցությունը ճառագայթային կամ կլանման գծերի առաջացման վրա: Լազրանոցային ճառագայթման տեղափոխման տեսության զարգացումը թույլ է տալիս իրականացնել ժամանակից կախված ճառագայթման տեղափոխման խնդրի վարիացիոն ձևակերպումը:

Կառուցվել է համապատասխան Լագրանժյանը և Էյլեր-Լագրանժի հավասարումը: Կիրառելով Համիլտոնի փոքրագույն գործողության սկզբունքը՝ ստացվել են պահպանման օրենքներ, որոնք համապատասխանում են դասական մեխանիկայում իմպուլսի և էներգիայի պահպանման հայտնի օրենքներին: Վերլուծվել է ճառագայթային էներգիայի տեղափոխման տեսության դիֆուզ անդրադարձման խնդիրը: Մշակվել է նոր պարզ մոտեցում, որը թույլ է տալիս կիսաանվերջ համասեռ միջավայրի խնդրում մոնոխրոմատիկ և իզոտրոպ ցրման դասական լուծման հավանակային մեկնաբանության և վեր հանված, այսպես կոչված, «վիճակագրական նույնականության» հասկացության հիման վրա անմիջականորեն ստանալ նաև ավելի բարդ ցրման գործողության դեպքերին վերաբերող խնդիրների լուծումներն ու համապատասխան ֆունկցիոնալ հավասարումները (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Նիկողոսյան):

Հետազոտվել է 137 միջին զանգվածով սև խոռոչների «սերմնային» վիճակների աճի երևույթը: Հաշվարկվել են դրանց զանգվածները, կարմիր շեղումները և աճի ժամանակահատվածները: Մշակվել է նոր մոտեցում, որը հնարավորություն է տալիս երկնային մարմնի «տիեզերածին կարմիր շեղման» միջոցով հաշվարկել տվյալ մարմնի հեռանալու «իրական կինետիկ արագությունը», որը նույնիսկ ամենահեռավոր օբյեկտների դեպքում չի գերազանցում լույսի արագությանը: Լուծվել է վերոնշյալ մասնավոր խնդրի ընդհանրացված, առավել բարդ խնդիրը կամայական Ռիմանյան տարածության համար (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Տեր-Ղազարյան):

Հաշվվել են որքան բաղադրությամբ տաք նեյտրոնային աստղերում թույլ պրոցեսների (նեյտրոնի տրոհում և էլեկտրոնի ու մյուտոնի զավթում, թույլ լեպտոնային ռեակցիաներ) արագությունները և մածուցիկության երկրորդ գործակիցը՝ պայմանավորված թույլ փոխազդեցություններով: Ստացված արդյունքներով գնահատվել է կրկնակի նեյտրոնային աստղերի միաձուլման արդյունքում ձևավորված օբյեկտի բաբախումների մարման համար պահանջվող ժամանակը: Ստացվել են երկրորդ կարգի հիդրոդինամիկայի հավասարումներն անհավասարակշիռ վիճակագրական օպերատորի մեթոդով: Դիտարկվել է ռելատիվիստիկական քվանտային համակարգ, որի հիդրոդինամիկական վիճակը նկարագրվում է էներգիայի ու իմպուլսի թենզորով և պահպանվող հոսանքներով: Հիդրոդինամիկայի հավասարումները ստացվել են պահպանվող մեծությունների վիճակագրական միջիններն ըստ հիդրոդինամիկական գրադիենտների (արագության, ջերմաստիճանի և քիմիական պոտենցիալների) Թեյլորի շարքի վերածելով, որտեղ պահվել են մինչև երկրորդ կարգի անդամները: Հավասարումների մեջ մտնող երկրորդ կարգի տեղափոխման գործակիցներն արտահայտվել են համապատասխան կորելացիոն ֆունկցիաներով (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Սեդրակյան):

Ձորաց Քարեր հուշարձանի տեղազննությամբ բացահայտվել են աստղադիտական նշանակության առնվազն 4 դիտահարթակ սալաքարեր, հատուկ դիտողական անկյուններ ունեցող վեմեր (մեգալիթներ), կատարվել է դրանց մի մասի ուսումնասիրությունը: Բացահայտվել են սերտ առնչություններ հայկական հնագույն օրացուցային-կրոնածիսական մշակույթի և Ձորաց Քարեր հուշարձանի միջև: Մասնավորապես հստակ է դարձել հուշարձանի կապը Հայոց Նախահայկյան օրացույցի և Հայոց Բուն Թվականի սկզբնավորման ժամանակների և հուշարձանի միջև, ինչպես նաև բացահայտվել է հուշարձանի բազմաշերտ լինելու իրողությունը: Ըստ մինչ այժմ ստացված արդյունքների՝ այդ շերտերը վերաբերում են Ք.ա. 9000, 5800 և 2341թթ., նաև պարզվել է, որ այդ ամբողջ ընթացքում հուշարձանը շահագործել են միևնույն մշակույթի կրողները: Ընդհանուր առմամբ հստակ առանձնանում է 11000 տարեկան աստղադիտական-օրացուցային մշակույթի շերտ: Հուշարձանում ի հայտ են եկել նաև փաստեր ավելի վաղ ժամանակներում դրա շահագործման մասին (դեկ.՝ Բ.գ.թ. Հ.Մալխասյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Օգտագործելով SDSS սպեկտրադիտությունը՝ իրականացվել է 710 ԱԳՄ թեկնածուների նուրբ օպտիկական սպեկտրային դասակարգում: Նուրբ դասակարգումը ցույց է տվել, որ շատ QSO-ներ դրսևորում են նույն բնութագրերը, ինչ Սեյֆերտները, այսինքն՝ S1 և S2 միջև ենթադասերը: Ներմուծվել են QSO-ների QSO1.0, QSO1.2, QSO1.5, QSO1.8 ենթադասերը: Այսպիսով, անկախ լուսատվությունից (ինչը բաժանարարն է QSO-ների և Սեյֆերտների միջև) ԱԳՄ-ները դրսևորել են նույն բնութագրերը: Շատ օբյեկտներ դասակարգվել են որպես Composite («բաղադրյալ») սպեկտրներ, որոնք ունեն Սեյֆերտների և Լայներների, Սեյֆերտների և HII-ների կամ Լայներների և HII-ների բաղադրյալ բնութագրեր: Որոշ դեպքերում բոլոր երեք բնութագրերն ի հայտ են եկել միաժամանակ, և ստացվել է Sy/LINER/HII ենթադասը: QSO-ների ենթադասերը Սեյֆերտների հետ միասին թույլ են տալիս հետևել ԱԳՄ-ների հատկությունները կարմիր շեղումների ավելի մեծ տիրույթում՝ ընդլայնելով մեր պատկերացումները ԱԳՄ-ների էվոլյուցիայի մասին դեպի QSO-ներով ներկայացված ավելի հեռու Տիեզերքը: Hamburg-ROSAT (HRC) և Byurakan-Hamburg-ROSAT (BHRC) կատալոգների նույնացված օպտիկական օբյեկտներից ստեղծվել է համասեռ ԱԳՄ-ների ընդհանուր կատալոգ: Նշված երկու կատալոգների օպտիկական և բազմալիքային տվյալներն ուսումնասիրվել են սխալ ԱԳՄ-ների հեռացման և բաց թողնված նորերի ավելացման նպատակով: Արդյունքում ստացվել է 4253 ռենտգենյան ԱԳՄ-ների կատալոգ (ROSAT BSC/FSC): Այս օբյեկտների համար նորագույն կատալոգներում որոնվել են բազմալիքային տվյալները (գամմա, ռենտգենյան, ուլտրամանուշակագույն, օպտիկական, ենթակարմիր և ռադիո), կատարվել են վիճակագրական ուսումնասիրություններ: Այս աղբյուրների համար հետազոտվել են ռենտգենյան հատկությունները նորմալ գալակտիկաների և ռենտգենյան ԱԳՄ-ների միջև, փորձ է արվել գտնել թաքնված ԱԳՄ-ներ (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյան):

Ավարտվել է HH 83 Հերբիգ-Հարո համակարգի մանրակրկիտ ուսումնասիրությունը: Ապացուցվել է նրա երկբևեռ սիմետրիկ բնույթը: HH 83 արտահոսքի հարվածային ճակատում տարանջատվել են երկու կինեմատիկական բաղադրիչներ, որոնց տեսագծային արագությունները և սեփական շարժումներն ապացուցել են, որ նրանք աղեղնային հարված են և Մախի սկավառակ: Բյուրականի աստղադիտարանի 1մ Շմիդտի դասի աստղադիտակի օգնությամբ կատարվող շրջահայության շրջանակներում մանրակրկիտ ուսումնասիրվել է Mon R1 աստղառաջացման տիրույթը: Այնտեղ հայտնաբերվել են 15 նոր երիտասարդ աստղեր, մոտ 20 Հերբիգ-Հարո օբյեկտներ և հոսքեր, 4 նոր մոլեկուլար ջրածնի ենթակարմիր հոսքեր: Հայտնաբերվել է նաև հեռավոր ենթակարմիր ալիքային տիրույթում դիտվող աղբյուրների կոմպակտ կուտակում: V565 Mon երիտասարդ աստղի սպեկտրային ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են նրա անսովոր քիմիական բաղադրությունը և այլ հատկություններ, ինչը վկայում է տվյալ օբյեկտի եզակիության մասին (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Տ.Մադաքյան):

Որոշվել են միջաստղային միջավայրի (ՄՄ) հիմնական ֆիզիկական պարամետրերը ($N(H_2)$ ջրածնի պոնակային խտությունը և T_d փոշու ջերմաստիճանը) և նրանց բաշխվածությունը աստղառաջացման ընդլայնված տիրույթում, որը ներառում է IRAS 05156+3643, 05162+3639, 05168+3634, 05177+3636 և 05184+3635 աղբյուրները: Ստացված արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ IRAS աղբյուրների շուրջ ՄՄ-ը ձևավորում է խտացումներ, որոնք փոխկապակցված են թելիկաձև կառուցվածքով: Ընդհանուր առմամբ խտացումներում T_d -ն փոփոխվում է 11-ից մինչև 24 K, $N(H_2)$ -ը՝ 1.0-ից մինչև $4.0 \times 10^{23} \text{ սմ}^{-2}$, իսկ զանգվածների արժեքները՝ 1.7×10^4 -ից մինչև $2.1 \times 10^5 M_\odot$: Երկու ենթատիրույթում՝ IRAS 05168+3634 և 05184+3635, արտահոսքերի ուղղությունները լավ փոխկապակցված են

իզոդենսների ուղղությունների հետ: ՄՄ-ի և երիտասարդ աստղային օբյեկտների (ԵԱՕ) հատկությունների համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ ամենամեծ $N(H_2)$ և զանգված ունեցող ենթատիրույթները պարունակում են I դասի էվոլյուցիոն փուլ ունեցող ԵԱՕ-ի ամենամեծ տոկոսը: Բոլոր ենթատիրույթներում աստղերի էվոլյուցիոն տարիքի լայն բաշխումը (10^5 -ից մինչև 10^7 տարի) վկայում է, որ դիտարկվող աստղառաջացման տիրույթում աստղերի ձևավորման ընթացքը հաջորդական է: Այն ենթատիրույթներում, որտեղ սկզբնական, մայր մոլեկուլային ամպի զանգվածն ավելի մեծ է, այս ընթացքը, հավանաբար, ավելի ակտիվ է: Gaia EDR3 տվյալները հաստատում են, որ բոլոր ենթատիրույթները գտնվում են նույն մոլեկուլային ամպի մեջ և պատկանում են նույն աստղառաջացման տիրույթին, որը գտնվում է մոտ 1.9 kpc հեռավորության վրա (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ե.Նիկողոսյան):

Հրապարակումներ

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

1. Mickaelian, A.M. (Ed.), Byurakan Astrophysical Observatory: 75 years of outstanding achievements, Edit Print 2021, 464p..

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

2. Abrahamyan H., Study of the radio and optical properties of Active Galactic Nuclei, “Communications of BAO”, v. 68, N 1, 2021, pp. 130 - 138.
3. Abrahamyan H., Mickaelian A., Paronyan G., Mikayelyan G., Sukiasyan A., Study of radio properties of active galaxies, “Communications of BAO”, v. 68, N 2, 2021, pp. 441-446.
4. Akopian A., Discovery and studies of stellar associations. The Key to Understanding Star Evolution, “Communications of BAO”, v. 68, N 2, 2021, pp. 143-149.
5. Akopian A., Statistical studies of are stars and other flashing objects carried out at the Byurakan Observatory, “Communications of BAO”, v. 68, N 2, 2021, pp. 150-162.
6. Alford M., Harutyunyan A., Sedrakian A., Bulk viscosity from Urca processes: npe μ matter in the neutrino-trapped regime, “Phys. Rev. D”, v. 104, N 10, 2021, article id.103027.
7. Andreasyan H. , Spectral study of V565 Mon: probable FU Ori-like or chemically peculiar star, “Research in A&Ap”, v. 21, N. 3, 2021, id.064, 5 pp.
8. Andreasyan H., Magakian T., Movsessian T., Moiseev A., PV CEP and V350 CEP: stars on the way between FUors and EXors, “Astrophysic”, v. 64, 2021, pp. 187-202.
9. Andreasyan R., On the magnetic fields of galaxies, “Communications of BAO”, v. 68, N 2, 2021, pp. 470-477.
10. Andreasyan R., Abrahamyan H., Tables of physical and morphological properties of nearby extended radio galaxies, “Communications of BAO”, v. 68, N 1, 2021, pp. 75-89.
11. Astsatryan H., Gevorgyan G., Knyazyan A., Mickaelian A., Mikayelyan G. A., Astronomical objects classification based on the Digitized First Byurakan Survey low-dispersion spectra, “Astronomy & Computing”, v. 34, 2021, article id. 100442.
12. Booth M., del Burgo C., Hambaryan V., The Age of the carina young association and potential membership of HD 95086, “MNRAS”, v.500, N 4, 2021, pp. 5552-5560.
13. Broutian G., An Astronomical attempt to determine the temporal origin of an episode of the Armenian epic “Sasnay Tsrer”, “Communications of BAO”, v. 68, N 1, 2021, pp. 105-113.
14. Gigoyan K., Kostandyan G., Variability study of the FBS M giants, “Communications of BAO”, v. 68, N 2, 2021, pp. 478-483.
15. Gigoyan K., Kostandyan G., Gigoyan K., Sarkissian A., Meftah M., et al., Investigations of the periodic variables in the catalina and linear databases, “Astrophysics”, v. 64, N 1, 2021, pp. 20-32.
16. Gigoyan K., Lebzelter T., Kostandyan G., Karapetyan E., Baghdasaryan D., Gigoyan K., New results for FBS late-type stars using Gaia EDR3 data, “Publications of the Astronomical Society of Australia”, v. 38, 2021, article id. e051.

17. Ghazaryan S., Alecian G., Paunzen E., Hakobyan A., Preliminary statistical analysis of Lambda Bootis stars, "Communications of BAO", v. 68, N 2, 2021, pp. 517-521.
18. Gyulbudaghian A., Rotation of dark globules. Chapter 1 in the book "Introduction to Molecular Clouds". Nova Science Publishers, Inc., New York, 2021, pp. 1-10.
19. Gyulbudaghian A., Several star-formation regions in the Southern Hemisphere, "Astrophysics", v. 64, N 4, 2021, pp. 473-480.
20. Gyulbudaghian A., Mendez R., Condensations expelled from the stars, and pairs of stars, connected with bright filaments, "Communications of BAO", v. 68, N 1, 2021, pp. 90-96.
21. Hakopian S., Features of a sample of star-forming galaxies in two SBS field, "Communications of BAO", v. 68, N 2, 2021, pp. 522-527.
22. Hakopian S., Dodonov S., Moiseev A., Panoramic spectroscopy of Galaxies with star-formation regions. A Study of SBS 1539+597, "Astrophysics", v. 64, N 1, 2021, pp. 8-19.
23. Hambaryan V., Stoyanov K. A., Mugrauer M., Neuhauser R., Stenglein W., On the origin of runaway binaries: the case of the HMXB 4U 2206+54/BD +53 2790, "Communications of BA", v. 68, N 2, 2021, pp. 454-463.
24. Harutyunian H., Discrepancy between values of the hubble constant obtained by different methods, "Astrophysics", v. 64, 2021, pp. 435-445.
25. Harutyunian H., The morphology of the spiral galaxies: encoded information on the origin and evolution mechanisms, "Communications of BAO", v. 68, N 1, 2021, pp. 50-55.
26. Kostandyan G., Study of DFBSI late-type stars at high galactic latitudes, "Communications of BAO", v. 68, N 2, 2021, pp. 534-542.
27. Mahtessian A., Karapetian G., Hovhannisyan M., Movsisyan V., Mahtessian L., Testing the evolution of the absolute magnitude of type Ia supernovae and cosmological parameters, "Communications of BAO", v. 68, N 2, 2021, pp. 484-489.
28. Malkhasyan H., Outline of 1983-2021Calendar studies conducted at the Byurakan Astrophysical Observatory, "Communications of BAO", v. 68, N 2, 2021, pp. 407-416.
29. Maun N., Gigoyan K., Kendall T., Hambleton K., A search for distant, pulsating red giants in the Southern Halo, "Astronomy & Astrophysics", v. 650, 2021, id.A146, 8 pp.
30. Mickaelian A., Byurakan Astrophysical Observatory: 75 years of outstanding achievements, "Communications of BAO", v. 68, N 1, 2021, pp. 1-11.
31. Mickaelian A., Markarian survey and Markarian galaxies, "Communications of BAO", v.68, N2, 2021, pp.174-185.
32. Mickaelian A., Abrahamyan H., Paronyan G., Mikayelyan G., Fine classification of QSOs and Seyferts for activity types based on SDSS spectroscopy, "Frontiers in Astronomy and Space Sciences", v.7, 2021, article id. 82.
16. Drmeyer H., Mirzoyan V., Investigating the impact of an external influence on the dynamic behavior of dislocations in silicon crystals, Y., "Proceedings of NPUA. Metallurgy, Material Science, Mining Engineering", N 1, 2021, pp. 72-81. DOI:10.53297/18293395-2021.1-72 .
17. Hovhannisyan A., Fermionic condensate on finite radius cones, Y., "Armenian Journal of Physics", v. 14, N 1, 2021, pp.1-7. DOI:10.52853/18291171-2021.14.1-1.
18. Khachatryan A., Panosyan Z., Khachatryan Z., Phase points of the interference picture of the wave field of two coherent point sources, Y., "J. Contemp. Phys.", v. 56, 2021, pp. 201-207. DOI: 10.3103/S1068337221030130.
19. Khachatryan A., Panosyan Zh., Khachatryan Zh., About the path sum in the interference pattern of a wave field generated by two coherent point sources, "Optik", v. 245, 2021, 167682.
20. Mahtessian A., Karapetian G., Movsisyan V., Hovhannisyan M., Mahtessian L., Estimation of cosmological parameters assuming the evolution of the absolute magnitude of type Ia supernovae, Y., "Comm. of BAO", v. 68, 2021, pp. 484-489.
21. Petrosyan A., Giester G., Tonoyan G., Ghazaryan V., Fleck M., Salts containing different amino acids: Three types salts of l-arginine containing glycine, dimethylglycine or β -alanine, "Journal of Molecular Structure", v. 1228, 2021, 129717.
22. Petrosyan A., Giester G., Ghazaryan V., Fleck M., l-Proline l-proline halogenides: a comparison of the respective chloride, bromide and iodide salts, "Journal of Molecular Structure", v. 1243, 2021, 130851.
23. Petrosyan A., Srinivasan B.R., What is alanine adipate, in fact?, "Journal of Molecular Structure", v. 1245, 2021, 131080.
24. Petrosyan T., Polarization of the conformal vacuum in the Milne universe, Y., "Armenian Journal of Physics", v. 14, N 4, 2021, pp. 180-190.
25. Saharian A., Petrosyan T., Hovhannisyan A., Casimir effect for fermion condensate in conical rings, "Universe", v. 7, N 3, 2021, 73. DOI:10.3390/universe7030073.
26. Saharian A., Petrosyan T., Casimir densities induced by a sphere in the hyperbolic vacuum of de Sitter spacetime, "Phys. Rev. D", v.104, 2021, 065017. DOI:10.1103/PhysRevD.104.065017.
27. Saharian A., de Mello E.R.B., Kotanjyan A., Petrosyan T., Fermionic condensate in de Sitter spacetime, Y., "Astrophysics", v. 64, N 4, 2021, pp. 529-543.
28. Sargsyan A., Features of scattering of a plane electromagnetic wave on a conductive ball, Y., "Armenian Journal of Physics", v. 14, N 4, 2021, pp. 173-179.
29. Sargsyan V., Hovhannisyan A., Adamian G., Antonenko N., Lacroix D., Applicability of the absence of equilibrium in quantum system fully coupled to several fermionic and bosonic heat baths, "Phys. Rev. E", v. 103, 2021, 012137. DOI:10.1103/PhysRevE.103.012137.
30. Srinivasan B.R., Petrosyan A.M., Comments on the paper "l-Lysine doped oxalic acid single crystals – A potential phase matchable organic material for optical limiting applications", "Optics & Laser Technology", v. 141, 2021, 107150.
31. Srinivasan, B., Narvekar K., Petrosyan A., Comments on the paper "Growth and investigation of novel nonlinear optical single crystal of urea potassium dichromate by solution growth technique for photonic application", "Journal of Optics", 2021. <https://doi.org/10.1007/s12596-021-00708-9>.
Հոդվածները հրատարակվել են "Объединённая конференция «Электронно-лучевые технологии и рентгеновская оптика в микроэлектронике» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, М., "ФУТУРИС ПРИНТ", 2021, 364 էջ, ISBN 978-5-1-6044546-4-0, <http://purple.ipm.ru/cebt/2021.pdf>.
32. Кочарян В.Р., Гоголев А.С., Багдасарян Э.Г., Шагвердян А.В., Мкртчян А.Г., Управления параметров отраженного пучка жесткого рентгеновского излучения кристаллом кварца при наличии внешних воздействий, с. 258-260.
33. Дрмeyer Г.Р., Экспериментальное исследование тонкой структуры рентгенодифракционных картин, полученных от двухблочных кристаллических систем с недифрагирующей зоной, с. 256-257.
Հոդվածները հրատարակվել են "VII International Conference on Electron" միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուում (I մաս), Ե., "IAPP", 2021, 215 էջ, ISBN 978-9939-1-1388-3:

34. Abrahamyan A., Mkrtchyan A., Badoyan V., Chilingaryan R., Hakobyan M., Hovhannisyan H., Mkhitarian S., Aeroionizers for prevention of viral diseases, pp. 47-53.
35. Abrahamyan A., Mkrtchyan A., Chilingaryan R., Generation of radiation on forbidden transitions in laboratory acoustoplasma, pp. 54-59.
36. Aloyan L., Margaryan H., The DNA damage induced by X-Ray irradiation in the presence of porphyrins, pp. 162-165.
37. Apreyan R., Atanesyan A., Danghyan A., Bezhanova L., Vasilyan M., Sukiasyan R., Preparation, study and NLO activity of L-nitroarginine tetrafluoroborate (L-NNA·HBF₄), pp. 153-161.
38. Atanesyan A., Apreyan R., Danghyan A., Bezhanova L., Muradyan T., Sukiasyan R., Study of nonlinear optical L-nitroarginine perchlorate crystal, pp. 166-173.
39. Bezhanova L., Atanesyan A., Sukiasyan R., On a specific intermolecular interactions in nematic liquid crystal systems, pp.107-116.
40. Bezhanova L., Atanesyan A., Rotational viscosity of nematic liquid crystals, pp. 117-123.
41. Danghyan A., Single crystals of α -LiIO₃ doped with L-arginine and L-nitroarginine, pp.142-147.
42. Drmeyer H., Margaryan H., X-ray interferometric investigation of the nanostructure of surface layers of silicon crystals subjected to ionic implantation, pp. 79-86.
43. Grigoryan L., Mkrtchyan A., Wagner W., Dabagov S., Saharian A., Khachatryan H., Kocharyan V., Arzumanyan S., Grigoryan M., Kotanjyan V., Harutyunyan H., Angular distribution of high power radiation from a chain of charged particles rotating around a dielectric ball, pp. 27-35.
44. Hayrapetyan Ye., Hunanyan H., Mkhitarian S., Petrosyan S., Research, development and creation of a laser rangefinder for high-precision linear measurements, pp. 60-71.
45. Khachatrian A., Panosyan Zh., Khachatryan Zh., Soghomonyan A., The wave field of a system of point sources in the fraunhofer picture, pp. 44-46.
46. Mahtesyan A., Mkhitarian S., Vardanyan J., Mahtesyan Kh., Hovhannisyan M., Mapping the intensity of UV radiation on the earth (Armenian case), pp.174-178.
47. Mahtesyan A., Karapetian G., Movsisyan V., Hovhannisyan M., Mahtessian L., About hidden energy (part 2) testing the evolution of the absolute magnitude of type Ia supernovae and cosmological parameters, pp. 185-187.
48. Mkrtchyan A., Nikoghosyan V., Kocharyan V., Avagyan A., Babayan A., Ghalumyan A., Matosyan A., Hakobyan A., Transformation of ANSL (YerPhi) electron synchrotron ring to low energy stretcher mode operation, pp. 197-206.
49. Saharian A., Grigoryan L., Khachatryan H., Kotanjyan A., Kotanjyan V., Emission of surface polaritons by relativistic particles, pp. 12-26.
50. Sargsyan A., Grigoryan S., Ghukasyan M., X-ray study of structural changes in the liquid crystal system AOT/N-heptane-water depending on the concentration of components, pp. 87-94.
51. Sedrakyan A., Agabekyan V., Sedrakyan A., Properties of space and time. The role of universal constants in physics, pp. 207-214.
52. Shahverdyan A., Trouni K., Kocharyan V., Diffraction image of a point source of slow neutrons in a weakly deformed crystal, pp. 192-196.
53. Sukiasyan R., Danghyan A., Apreyan R., Bezhanova L., Balayan L., Atanesyan A., Vibrational spectra of L-argininium sulfates, pp. 124-134.

Պաշտպանվել է 3 թեկնածուական ատենախոսություն:

Ա.Պետրոսյանը, Ա.Սահարյանը, Վ.Ղազարյանը դարձել են «Արդյունավետ գիտաշխատող 2021» մրցույթի հաղթողներ:

ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Ս.Զաքարյան
Փոխտնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Է.Ասմարյան
Գլխավոր տնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Եսայան
Էլեկտրոնային փոստ՝ office@irphe.am
Կայքէջ՝ www.irphe.sci.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Հետազոտվել են էլեկտրականապես փոքր մագնիսադիէլեկտրիկական տակդիրների վրա «փատչ» անտենաները: Անտենաների հիմնական բնութագրերի համեմատությունը ցույց է տվել, որ հավասար ռեֆրակցիայի ինդեքսի դեպքում մագնիսադիէլեկտրիկական տակդիրների վրա անտենաների մակերևույթը հնարավոր է նվազեցնել 7 անգամ՝ պահպանելով ճառագայթման բարձր արդյունավետությունը: Միաժամանակ մագնիսադիէլեկտրիկական տակդիրների վրա անտենաների համար մագնիսական թափանցելիության աճը բերել է անտենայի թողարկման շերտի ավելացմանը:

Փորձականորեն ԳԲՀ X-տիրություն հետազոտվել է J_1 բեսելյան անտենայի ճառագայթման դիֆրակցիան մետաղական սկավառակների և տարբեր չափերի սֆերաների վրա, որոնք գտնվում են հաղորդիչ և ընդունիչ անտենաների ուղիղ տեսանելիության գծի վրա: Փորձարկվել են մեր կողմից մշակված J_1 բեսելյան ճառագայթով արդյունավետ ռադիալ գծի հիման վրա պլանար անտենաները: Ճառագայթի բեսելյան կառուցվածքը խոչընդոտի բացակայության պայմաններում պահպանվել է ավելի քան 3 մետր տարածման դեպքում: Այն խոչընդոտները, որոնք ծածկել են J_1 ֆունկցիայի առաջին մաքսիմումով սահմանափակված ճառագայթի կենտրոնական տիրույթը, չեն առաջացրել լրացուցիչ կորուստներ: Ավելի մեծ խոչընդոտների դեպքում համապատասխան կորուստներն էապես փոքր են գաուսյան ճառագայթների համեմատ: Հետազոտված բեսելյան J_1 ճառագայթների հատկանշական առանձնահատկությունն այն է, որ դաշտի խոչընդոտն անցնելուց հետո դաշտի կառուցվածքն անտենայի բացվածքում գրեթե վերականգնվել է:

Հետազոտվել է նախկինում հայտնաբերված ԳԲՀ ճառագայթման կլանման երևույթն օրգանական իոնային հեղուկներում, իոնային ջրային լուծույթներում և կենսաբանական հյուսվածքներում: Չափումները զանազան էլեկտրամագնիսական կառուցվածքներում ցույց են տվել, որ նշված կլանումը պայմանավորված է հետազոտվող նյութերում մրբկային բնույթի հոսքերի գրգռմամբ: Հայտնաբերվել է, որ ԳԲՀ դաշտի մագնիսական բաղադրիչի ուղղվածությունը և լոկալ բևեռացումն էապես ազդում են մագնիսական մրբկային հոսքերի գրգռման և վերջինով պայմանավորված՝ նյութի տաքացման պրոցեսի վրա (դեկ. թղթ. անդ. Ա.Հախումյան):

Առաջարկվել է ռադիոլոկացիոն նշանակետերի անդրադարձման արդյունաբար մակերևույթի գնահատման նոր եղանակ, որը չի պահանջում թանկարժեք անարձագանք խցիկի կիրառում: Եղանակը հիմնված է շարժվող նշանակետերի առանձնացման սկզբունքի վրա, ինչը թույլ է տալիս բացառել անդրադարձումները կողմնակի անշարժ օբյեկտներից: Կատարվել են չափումներ Ku տիրություն, գնահատվել է եռանիստ անկյունային անդրադարձիչի արդյունաբար մակերևույթը (դեկ. ֆ.-մ.գ.թ. Ս.Զաքարյան, Ն.Պողոսյան):

Դիտարկվել է բևեռացված լույսի տարածումը Մաքսվելլի «ձկան աչք» բեկման ցուցիչ ունեցող միջավայրով: Ցույց է տրվել որ բևեռացումը խախտում է միջավայրի լրացուցիչ համաչափություններն այնպես, որ ֆոտոնի հետագծերն այլևս փակ չեն: Առաջարկվել է բևեռացումից կախված բարելավված բեկման ցուցիչ, որը վերականգնում է սկզբնական ցուցիչի բոլոր համաչափությունները և ապահովում բևեռացված լույսի փակ հետագծեր:

Ներկայացվել են բևեռացումից կախված շարժման ինտեգրալների բացահայտ տեսքերը և դրանց համապատասխան ճառագայթային հետազոտությունները: Ուսումնասիրվել է Մաքսվելի «ձկան աչք» պոտենցիալ էներգիայի պրոֆիլ ունեցող գրաֆենի քվանտային կետը: Օգտագործվել է քվադրդասական մոտավորություն՝ հաշվի առնելով, որ պոտենցիալ էներգիան կոորդինատների դանդաղ փոփոխվող ֆունկցիա է: Զրո էներգիայի էներգետիկ սպեկտրը մակրոսկոպիկ այլասերված է: Էլեկտրոնի բոլոր հետազոտությունները փակ շրջանագծեր են, որոնք դասակարգվում են ըստ անկյունային մոմենտի և մի այլ լրացուցիչ շարժման ինտեգրալի: Դիրակի ներքևի զոնայի լրիվ լցման դեպքում Հոլլի հաղորդականությունն ընդունել է ունիվերսալ արժեք (դեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ժ.Գևորգյան):

Առաջարկվել է դինամիկ կոնֆորմ համաչափությամբ և օսցիլատորի ու Կուլոնի համակարգերի սուպերինտեգրվող դեֆորմացիաների նկարագրությունը բազմաչափ Կլայնի մոդելի շրջանակում: Ներկայացվել են այդ համակարգերի շարժման ինտեգրալների արտահայտությունները Կիլինգի պոտենցիալների միջոցով: Պարզվել է, որ օսցիլատորային համակարգը, ի տարբերություն Կուլոնի համակարգի, ունի դեֆորմացված Պուանկարեի սուպերսիմետրիա: Հետազոտվել են նաև SU (2|1) սուպերսիմետրիկ Սմորդոլինսկի-Վինտերնից համակարգի քվանտային հատկությունները: Կառուցվել է ալիքային ֆունկցիաների ամբողջական փաթեթ և հայտնաբերվել է համակարգի էներգետիկ սպեկտրը (դեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ա.Ներսեսյան):

Ուսումնասիրվել է էլեկտրոնային փնջի փոխազդեցությունը պլազմայի հետ՝ այնպիսի համակարգերում, որոնց երկրաչափությունը համընկնում է ռեյատիվիստիկ էլեկտրոնային փնջերով աշխատող պլազմային միկրոալիքային աղբյուրների երկրաչափության հետ: Ուսումնասիրվել է այս պայմաններում զարգացող անկայունությունների վարքագիծը: Ցույց է տրվել, որ դիսիպացիայի առկայության դեպքում անկայունությունները վերածվում են դիսիպատիվ անկայունության նոր տեսակների, որոնք նախկինում տեսականորեն անհայտ էին: Դրանցից մեկի (որը զարգանում է փնջի և պլազմայի թույլ զուգակցման դեպքում) աճի առավելագույն արագությունը հավասար է $\sim \sqrt{n_b}/\nu$, (n_b ՝ փնջի խտությունն է, ν ՝ բախումների հաճախությունը), իսկ մյուսի (որը զարգանում է փնջի գերսահմանային հոսանքների դեպքում) աճի առավելագույն արագությունը $\sim n_b/\nu$ է: Նշենք, որ նախկինում միակ հայտնի դիսիպատիվ փնջային անկայունությունն ունի առավելագույն աճի տեմպ՝ $\sim \sqrt{n_b}/\nu$ (դեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Է.Ռոստոմյան):

Ուսումնասիրվել են եզրային դիսկրետացիաների խիտ ցանցեր ($N_{dis} \sim 7 \times 10^{10}$ սմ⁻²) պարունակող α -Ga₂O₃:Sn բարակ թաղանթների ($n[\text{Sn}^{4+}] \sim 10^{17} \div 10^{19}$ սմ⁻³) էլեկտրոնային և տրանսպորտային հատկությունները: Պոլիմորֆ III-օքսիդի մետաղային α -փուլի էպիտաքսային կայունացման պայմաններում որոշվել են դիսկրետացիաների հետ կապված խորը վիճակների ֆիզիկաքիմիական բնութագրերը: Քննարկվել է լիցքավորված ցանցի ուժային դաշտում էլեկտրոնների առավելագույն թույլատրելի շարժունակության ձևավորման մեխանիզմը: Անալիտիկ հաշվարկների արդյունքները համեմատվել են փորձնական տվյալների հետ: Դիսկրետացիաների հետ փոխազդող էլեկտրոնային լիապատկերման ալիքների փուլային շեղումների համար ձևակերպվել է Ֆրիդելի թեորեմի նմանակը (դեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Լ.Հովակիմյան):

Հետազոտվել է բարձր կարգի հարմոնիկների գեներացիան առանց էներգետիկ ճեղքի երկշերտ գրաֆենում /AB stacked/, հաճախությունների Shg-ից ինֆրակարմիր տիրույթում մոդոլ լազերային դաշտերով՝ էլեկտրոնների բարձր Ֆերմի էներգիաների դեպքում: Կատարվել են թվային հաշվարկներ, որոնք վերաբերվում են AB stacked երկշերտ գրաֆենում էլեկտրոնների Ֆերմի-մակերևույթի տոպոլոգիայի փոփոխության ազդեցությո-

յանը բարձր հարմոնիկների գեներացիայի քվանտային էլքի վրա: Որոշվել են դիտարկվող նանոկառուցվածքի թերմոդինամիկական պարամետրերի ռեալ արժեքները:

Առաջարկվել է նոր տիպի նանոլազերի մեխանիզմ գրաֆենում և գրաֆենանման նանոկառուցվածքներում, որը կարող է գործել հաճախությունների տերահերցից (THz) մինչև հեռու ուլտրամանուշակագույն (UV) տիրույթում: Քննարկվող մոդելում կարող է իրականացվել ինչպես հաճախության կոհերենտ փոքրացման (downconversion), այնպես էլ մեծացման (upconversion) ռեզոնանսային մեխանիզմներով (դեկ. թղթ. անդ. Հ.Մաթևոսյան):

Ուսումնասիրվել են կիսահաղորդչային նանոլարի (ՆԼ) վրա հիմնված pH սենսորի աշխատանքային բնութագրերը: Մասնավորապես ստացվել են սենսորի բնութագրերի, այդ թվում՝ իոնային զգայնության կախվածությունները ՆԼ-ի երկրաչափական և ֆիզիկական պարամետրերից: Գտնվել է սենսորի նախագծման համար պարամետրերի օպտիմալ տարբերակ (դեկ. ֆ.-մ.գ.թ. Ա.Եսայան):

Զարգացվել է տեսական մոդել կիսահաղորդչային նանոլարերի անսամբլի վրա հիմնված արեգակնային տարրի կառուցվածքի համար, հաշվարկվել են նման սիլիցիումային փոխակերպչի արդյունավետության կախումները նանոլարերի շառավղից և մակերևութային խտությունից: Ցույց է տրվել, որ վեջիններիս համար գոյություն ունեն օպտիմալ մեծություններ, երբ լույսի փոխակերպման արդյունավետությունը կարող է հասնել 25%-ի:

Ուսումնասիրվել է InSb /CdTe իդեալական հետերոանցման գոտիական դիագրաման՝ հաշվի առնելով բաժանման սահմանի մոտ փոքր արգելված գոտով կիսահաղորդչում առաջացող ինվերսիոն շերտի գոյությունը: Հաշվարկվել է այդ շերտում էլեկտրոնների կոնցենտրացիայի կախումը CdTe լեգիրման աստիճանից և ջերմաստիճանից:

Տեխնոլոգիական ռեժիմների կատարելագործման բաղադրիչների ատոմական հարաբերակցության ավելի ճշգրիտ դեկավարման և օպտիմալ տեխնոլոգիական ռեժիմների ընտրության շնորհիվ սինթեզվել են կրկնակի լեգիրված $(Al_{0.5}Nb_{0.5})_xTi_{1-x}O_2$ կերամիկական նմուշներ, որոնց ցածր հաճախային դիէլեկտրիկական թափանցելիությունը գերազանցել է 1.5×10^5 : Արդյունքում նվազել են այդպիսի կերամիկայում դիէլեկտրիկական կորուստները և հնարավոր է դարձել գերմեծ ունակությամբ կոնդենսատորների ստեղծումը (դեկ. թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Կատարվել են արևային էլեմենտների համար $CH_3NH_3PbI_{(3x)}Cl_x$ մետաղօրգանական կիսահաղորդչային թաղանթների օպտիկական կլանման եզրի նուրբ կառուցվածքի ուսումնասիրություններ (300-80) K ջերմաստիճանային տիրույթում: Ցույց է տրվել օպտիկական կլանման էքսիտոնային բնույթը, և փորձնականորեն որոշվել է էքսիտոնի կապի էներգիան: Նշված ջերմաստիճանային տիրույթում բացահայտվել են պերովսկիտային կիսահաղորդչի արգելված գոտու փոփոխությունների առանձնահատկությունները, որոնք իրենց հերթին կախված են բյուրեղային ցանցի ձևափոխություններից (տեսորագոնալայինից անցում օրթոռոմբիկ սիմետրիայի ջերմաստիճանային 150-170 K տիրույթում) (դեկ. ֆ.-մ.գ.թ. Կ.Ավջյան):

p-InSb /n-CdTe անիզոտիպ հետերոանցման հիման վրա պատրաստվել են քառագոն կոորդինատազգայուն ֆոտոընդունիչներ, ուսումնասիրվել են նրանց հատկությունները, բացահայտվել են գրանցվող ինֆրակարմիր ճառագայթի կոորդինատների և ֆոտոզգայնության գծային տիրույթները (դեկ. Լ.Մաթևոսյան):

Միկրոալիքային էլեկտրամագնիսական փոխազդեցության միջոցով ուսումնասիրվել են լազերային աբլյացիայի մեթոդով ստացված երկաթի նանոմասնիկներով հագեցված ջրային լուծույթները: Միկրոալիքային սենսորի արձագանքով որոշվել է երկաթի նանոմասնիկների մինիմալ չափվող խտությունը: Գրանցվել է միկրոալիքային հավելյալ

բաղադրիչ, որի առկայությունը բացատրվում է լազերային աբյաղիայի ժամանակ ջրի կլաստերների կառուցվածքային փոփոխություններով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Խաչատրյան):

Մշակվել է ֆիզիոթերապիայի համար նախատեսված միոստիմուլյատորի լաբորատոր նմուշը: Կատարվել է թերապևտիկ կետում մկանի գրգռման և կծկման ֆունկցիայի աշխատունակության ստուգում, ինչը հեռանկարում հնարավորություն կտա կատարել այն միաժամանակ 5-10 թերապևտիկ կետերի համար (ղեկ.՝ ակ. Ա.Ղուլյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Փորձնական եղանակով իրականացվել է արագ շարժվող օբյեկտների օպտիկական միջոցներով հայտնաբերումը մերձակա գոտում: Որպես օպտիկական ճառագայթման աղբյուր օգտագործվել են $\lambda = 860\text{nm}$ ԻԿ տիրույթի LED մատրիցան և $15^\circ \times 15^\circ$ մարմնային անկյան ներքո ֆոկուսացման համակարգը: Որպես անդրադարձած ճառագայթման ընդունիչ օգտագործվել է $5^\circ \times 5^\circ$ տեսադաշտով ֆոտոտրանզիստորը: Կատարվել են երկու տիպի չափումներ՝ $180\text{M}/\text{c}$ արագությամբ շարժվող ու $0,1\text{M}^2$ անդրադարձման արդյունարար մակերևույթ ունեցող օբյեկտի և $800\text{M}/\text{c}$ արագությամբ շարժվող ու $0,01\text{M}^2$ անդրադարձման արդյունարար մակերևույթ ունեցող օբյեկտների համար: Երկու դեպքում էլ օբյեկտները հուսալիորեն հայտնաբերվել են $h = 1\text{M}$ հեռավորության դեպքում 6Bm լուսային հզորության պայմաններում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մակարյան):

Լազերային-իմպուլսային փոշեցրման եղանակով ստացվել են MoS_2 քվազիերկչափ բյուրեղներ՝ բաղկացած մեկ, երկու և ավելի ատոմական մենաշերտերից: Ցույց է տրվել, որ նման գերբարակ բյուրեղների օպտիկական և էլեկտրական հատկությունները, մասնավորապես արգելված գոտու լայնությունը, էապես կախված են ատոմական մենաշերտերի թվից: Պատրաստվել են օհմական կոնտակտներ և ուսումնասիրվել են նման երկչափ բյուրեղների ֆոտոէլեկտրական հատկությունները (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Բարակ թաղանթային CTS արեգակնային փոխակերպիչների ստեղծման նպատակով մագնետրոնային փոշեցրմամբ նստեցվել են պղնձի Cu և անագի Sn տարբեր պարունակությամբ բազմաշերտ պրեկուրսորներ ապակե տակդիրների վրա, որոնք ենթարկվել են սուլֆուրիզացիայի 560°C ջերմաստիճանում, 2 ժամվա ընթացքում: Ուսումնասիրվում են ստացված կիսահաղորդչային շերտերի օպտիկական հատկությունները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մուսայելյան):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Rostomyan E.V. New types of dissipative streaming instabilities in the book «Plasma Science and Technology» London, Great Britain, 2021. <https://www.intechopen.com/online-first/77873>

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

2. Avetissian H.K., Avchyan B.R., Matevosyan H.H., Mkrtchian G.F., Free-electron nanolaser based on graphene plasmons, Laser Physics 31 (5), 055801, 2021. <https://doi.org/10.1088/1555-6611/abeb20>.
3. Avetissian H.K., Avchyan B.R., Mkrtchian G.F., Matevosyan, H.H., Free electron nanolaser based on the graphene plasmons. arXiv preprint arXiv:2012.11376.
4. Y. Avetisyan, A. Makaryan, G. Arabajyan, M. Tonouchi, “Surface-emitting THz generation in two-dimensional quasi-phase-matching structure”, in 46th IRMMW-THz (29 Aug-3 Sept 2021, Chengdu, China) DOI: 10.1109/IRMMW-THz50926.2021.9567617

5. Dabagyan G.A., Matevosyan L.A., Avjyan K.E., Electrical Characteristics and Photo Response of the Heterostructure «Carbon Nanofilm on Silicon». Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences), 2021, 56 (3), 247-253.
6. Davtyan M., Gevorkian Zh., Nersessian A., “Maxwell fish eye for polarized light” Physical Review A, 104 N 5, (2021) 053502
7. Gevorkian Zh., Universal Hall conductivity in graphene Maxwell fish-eye quantum dot, submitted to Physica E, (2021). cond-mat/2111.15173
8. Ivanov E., Nersessian A., Sidorov S., “Quantum SU (2| 1) supersymmetric \mathbb{C}^N Smorodinsky-Winternitz system”, Journal of High Energy Physics, 2101 N 1, (2021) 015
9. Khastyan E., Krivonos S., Nersessian A., “Kahler geometry for -superconformal mechanics” Physical Review D, arXiv:2110.11711
10. Khastyan E., Nersessian A., Shmavonyan H. “Noncompact as a phase space of superintegrable systems”, International Journal of Modern Physics A, 36 08n09 (2021) 2150055
11. Medvedev A., Temkina V., Makaryan A., Sivolenko E., Hovhannisyan B., Ayvazyan H., Extracting human brain signals from the EEG records using labview and advanced signal processing, Proceedings of the YETI-2021, St. Petersburg, Russia, Springer Proceedings in Physics (2021), DOI:10.1007/978-3-030-81119-8
12. Petrosyan S.G., and Khachatryan A.M., Atomically Thin Layers of MoS2 Grown by the Method of Pulsed Laser Deposition, Journal of Contemporary Physics, 2021, Vol. 56, N 3, pp. 234-239.
13. Yesayan A., Petrosyan S., Papiyan A., Sallese J.-M., Theoretical studies of nanowire ion-sensitive field effect transistor, “Journal of Contemporary Physics” v. 56, N 4, 2021, pp. 324-331.
14. Yesayan A, Sallese JM, Compact Analytical Model of Nanowire Junctionless ISFET, IEEE Xplore: “28th International Conference on Mixed Design of Integrated Circuits and System”, 2021, pp. 31-34, doi: 10.23919/MIXDES52406.2021.9497641.
15. Макарян А., Мирзоян К., Закарян Т., Погосян Н., Методы ближнего обнаружения быстролетающих малоразмерных объектов, М., “Радиоэлектронные технологии”, N 1, 2021, с. 78-81.
16. Макарян А.О., Саакян Ю.С., Исследование эффективности генерации терагерцового излучения в нелинейном кристалле в зависимости от параметров возбуждающих лазерных пучков, Ер., “Известия НАН РА. Физика”, т. 56, N 3, 2021, с. 419-425.
17. Петросян С.Г., Хачатрян А.М., Исследование свойств 2Д слоев, выращенных методом импульсно-лазерного осаждения, мат. межд. симп. “Перспективные материалы и технологии”, Минск, 2021, с. 147-149.

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

ԻԿՐԱՆԵՏ-ՀԱՅԱՍՏԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ Ֆ.-մ.գ.թ. Ն.Սահակյան
Էլեկտրոնային փոստ՝ narsahakyan@gmail.com,
yerevan.secretariat@gmail.com

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

QSO B1420+326-ը FSRQ դասի բլազար է, որը 2020թ. սկզբին գտնվել է ակտիվ ճառագայթման վիճակում: Աղբյուրի բազմահաճախային տիրույթում ճառագայթման մեխանիզմները պարզելու և բռնկման էվոլյուցիան հետազոտելու համար այն դիտարկվել է ռադիո, ինֆրակարմիր, օպտիկական, ուլտրամանուշակագույն, ռենտգենյան և բարձր էներգիաների (ԲԷ; >100 ՄԷՎ) գամմա տիրույթներում գործող մի շարք դիտարկումներով: Օգտագործելով հատուկ օպտիկական սպեկտրոսկոպիայի արդյունքները՝ գնահատվել են նաև աղբյուրի ակրեցիոն սկավառակի և տորանման տիրույթի լուսատվությունները: Ակտիվ վիճակում QSO B1420+326 աղբյուրի ճառագայթման երկու բաղադրիչների հոսքը կտրուկ աճել է, իսկ առավելագույնը՝ շեղվել դեպի ավելի ԲԷ տիրույթ: Տեսական մոդելավորման

միջոցով հետազոտվել են մագնիսական դաշտի էվոյուցիան և էլեկտրոնների էներգիական բաշխումը ճառագայթման տիրույթում:

Ուսումնասիրվել է QSO B0218+357 բլազարի ճառագայթումը 2016-2017թթ. ընթացքում, երբ աղբյուրը եղել է ակտիվ ճառագայթման վիճակում օպտիկական, ռենտգենյան և ԳԷՎ տիրույթներում: OVRO դիտակով դիտումները ցույց են տվել, որ ռադիո տիրույթում ճառագայթման հոսքի աճ չի գրանցվել, ինչը ցույց է տալիս, որ այս աղբյուրի ճառագայթումն առաջանում է մի քանի տիրույթներից: VLBİ դիտումները հստակ ցույց են տվել միջուկի և շիթի կառուցվածքը: Առաջին անգամ է, երբ գրանցվում է գրավիտացիոն ռադիոալիքավորված այս աղբյուրի ճառագայթումը ռադիոյից մինչև գերբարձր էներգիաների (ԳԲԷ; >100 ԳԷՎ) գամմա տիրույթ: Աղբյուրի ճառագայթումը ԲԷ տիրույթում մոդելավորվել է հակադարձ Կոմպտոնյան ցրման մեխանիզմով, իսկ ցածր էներգիաների տիրույթում՝ որպես տասնյակ պարսեկների հասնող շիթից սինքրոտրոնային ճառագայթում:

Իրականացվել է TXS 1515-273 բլազարի առաջին բազմաալիքային ուսումնասիրություն՝ օգտագործելով ռադիոյից մինչև ԳԲԷ գամմա տիրույթներում գրանցված տվյալները: MAGIC դիտակով դիտումների արդյունքում աղբյուրն առաջին անգամ գրանցվել է ԳԲԷ գամմա տիրույթում 7.6σ գրանցման նշանակությամբ: Աղբյուրի միջին ինտեգրալ հոսքը ԳԲԷ գամմա տիրույթում (400 ԳԷՎ-ից բարձր տիրույթում) համապատասխանել է խեցգետնի միգամածության հոսքի 6 ± 1 տոկոսին: ճառագայթման տիրույթի չափը և մագնիսական դաշտը գնահատելու համար օգտագործվել է ռենտգենյան տիրույթում ճառագայթման հոսքի ժամանակային փոփոխականությունը: Գրանցված տվյալները թույլ են տվել գնահատել սինքրոտրոնային բաղադրիչի դիրքը և դասակարգել աղբյուրը որպես HBL բլազար: Գրանցված տվյալները մոդելավորվել են լեպտոնային տեսության շրջանակում, երբ ճառագայթումն առաջանում է երկու փոխազդող տիրույթներից:

GW170817 գրավիտացիոն ալիքներին ուղեկցող էլեկտրամագնիսական ճառագայթման (ռադիոյից մինչև ՄԷՎ տիրույթում) գրանցումը ցույց է տվել, որ կարճ գամմա բոնկումները (GRBs) կարող են առաջանալ կրկնակի նեյտրոնային աստղերի միաձուլումից: Մյուս կողմից, կարճ GRB-ների հատկությունները ԳԲԷ գամմա-տիրույթում դեռ լավ ուսումնասիրված չեն: $z = 0.162$ հեռավորության վրա GRB 160821B-ն ամենամոտ կարճ GRB-ներից մեկն է: Նպատակ ունենալով ավելի լավ հետազոտել կարճ GRB-ների բնույթը՝ նշված գամմա բոնկումն ավտոմատ կերպով դիտվել է MAGIC աստղադիտակների միջոցով, պայթյունը գրանցվելուց 24 վայրկյան հետո: 0.5 ՏԷՎ-ից բարձր տիրույթում առկա է գամմա-ճառագայթային ազդանշան 3σ գրանցման նշանակությամբ, որը տևել է մինչև 4 ժամ պայթյունից հետո: Ենթադրելով, որ գրանցված ԳԲԷ գամմա ճառագայթումն առաջանում է GRB 160821B-ից և համադրելով այն այլ ալիքային տիրույթում գրանցված տվյալների հետ՝ հետազոտվել են այդ ճառագայթման առաջացման հնարավոր մեխանիզմները:

Օգտագործելով 2016թ. դեկտեմբերից մինչև 2017թ. հունիս MAGIC, FACT, Fermi-LAT, Swift, NuSTAR, GASP-WEBT, OVRO, Medicina, և Metsähovi դիտակներով գրանցված տվյալները՝ ուսումնասիրվել են Mrk 421 բլազարի բազմահաճախային տիրույթում ճառագայթման մեխանիզմները: MAGIC և NuSTAR դիտակների միաժամանակյա դիտումները թույլ են տվել ճշգրիտ չափել աղբյուրի ճառագայթման սպեկտրում երկու սպեկտրային բաղադրիչների ընկնող հատվածները: Ուսումնասիրելով NuSTAR-ի դիտումների ընթացքում գրանցված բազմահաճախային էներգիայի սպեկտրալ բաշխումը (ԷՄԲ-ը)՝ ցույց է տրվել, որ ռենտգենյան տիրույթում փոփոխությունները կարող են բացատրվել մեկ տիրույթից լեպտոնային մոդելի շրջանակում, երբ ժամանակի ընթացքում ճառագայթման տիրույթի չափերը մեծանում են:

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Վերլուծվել են ռենտգենյան տիրույթում Swift դիտակով 2004-20թթ. ընթացքում առնվազն 50 անգամ դիտված բոլոր բլազարների տվյալները, ինչը հնարավորություն է ընձեռել ունենալ աննախադեպ քանակությամբ տվյալներ 65 բլազարի ավելի քան 31000 դիտումից 0.3-10 կէՎ տիրույթում: Բլազարների ուսումնասիրությունը հատկապես կարևոր է արտագալակտիկական աստղաֆիզիկայի համար, քանի որ դրանք շատ պայծառ աղբյուրներ են, հետևաբար կարող են գրանցվել նույնիսկ շատ մեծ հեռավորություններից: Առանձնացված բոլոր աղբյուրների համար առանձին-առանձին ներբեռնվել են բոլոր դիտումների տվյալները, որոնք վերլուծվել են ամենամանրամասն ձևով՝ օգտագործելով XRT Data Analysis Software (XRTDAS) ծրագրային փաթեթը և HEASoft-ի 6-28 տարբերակը: Բոլոր դիտումների համար առանձնացվել են աղբյուրի (20 պիքսել) և ֆոնային ճառագայթման տիրույթները, որոնք օգտագործվել են XSPEC 12.11 ծրագրային փաթեթում աղբյուրի ճառագայթման հոսքը և ֆոտոնային ինդեքսը գնահատելու համար: Քննարկվել է երկու դեպք, երբ աղբյուրի ճառագայթման սպեկտրը նկարագրվել է power-law և log parabola մոդելներով և յուրաքանչյուր դեպքում գնահատվել են ազատ պարամետրերը՝ օգտագործելով χ^2 օպտիմիզացման եղանակը: Ստացված արդյունքներով ուսումնասիրվել են նաև աղբյուրների ճառագայթման ԷՄԲ-երը: Ստացված արդյունքները համեմատելով արխիվային տվյալների հետ (վերցված VOU-Blazars ծրագրից, որը պարունակում է տվյալներ ավելի քան 70 կատալոգից)՝ հնարավոր է պատրաստել աղբյուրների ԷՄԲ-երը $10^7 - 10^{27}$ Հց տիրույթում: Ստացված տվյալները հատկապես կարևոր են, քանի որ թույլ են տալիս գնահատել սինքրոտրոնային ճառագայթման բաղադրիչի առավելագույնի դիրքը, ինչն անհրաժեշտ է աղբյուրների դասակարգման և նրանցում տեղի ունեցող պրոցեսների հետազոտման համար:

Հետազոտվել են 3C 454.3 բլազարի բազմաալիքային տիրույթում ճառագայթման մեխանիզմները: Այս աղբյուրը բարձր էներգիաների գամմա տիրույթի ամենապայծառ բլազարներից է, որն անընդհատ ուսումնասիրվել է տարբեր ալիքային տիրույթներում: Վերլուծելով 2008-18թթ. ընթացքում գրանցված, օպտիկական (V (500-600 նմ), B (380-500 նմ), U (300- 400 նմ), W1 (220-400 նմ), M2 (200-280 նմ) և W2 (180-260 նմ); Swift UVOT), ռենտգենյան (0.3-10.0 կէՎ; Swift XRT) և ԲԷ գամմա տիրույթներում (>100 ՄէՎ; Fermi LAT) գրանցված տվյալները՝ մանրամասն ուսումնասիրվել են աղբյուրի ճառագայթման հատկությունները նշված տիրույթներում: Աղբյուրը գտնվել է ակտիվ ճառագայթման վիճակում տարբեր ժամանակահատվածներում: Օրինակ՝ բարձր էներգիաների գամմա տիրույթում գրանցված առավելագույն լուսատվությունը 2.15×10^{50} ՊՊՊ ՊՊՊ⁻¹ է, որը գամմա տիրույթում գրանցված ամենամեծ լուսատվությունների կարգի է: Օգտագործելով վերլուծված տվյալները՝ պատրաստվել են աղբյուրի միաժամանակյա տվյալներով ԷՄԲ-երը տարբեր ժամանակահատվածներում և ուսումնասիրվել է դրանց դինամիկ փոփոխությունը ժամանակի ընթացքում (www.youtube.com/watch?v=wNLVj3W6ZFg): Աղբյուրի շիթում տեղի ունեցող պրոցեսներն ուսումնասիրելու նպատակով առանձնացված ԷՄԲ-երը մոդելավորվել են մեկ տիրույթից լեպտոնային ճառագայթման մոդելի շրջանակում: Այս դեպքում ցածր էներգիաների բաղադրիչը մոդելավորվել է որպես արագացված էլեկտրոնների սինքրոտրոնային ճառագայթում, իսկ բարձր էներգիաների բաղադրիչը որպես սինքրոտրոնային ֆոտոնների և ակրեցիոն սկավառակից ճառագայթմած ֆոտոնների հակադարձ Կոմպտոնյան ցրում: ԷՄԲ-երի մոդելավորման արդյունքները և դրանց փոփոխությունը ժամանակի ընթացքում հասանելի է <https://www.youtube.com/watch?v=dAqVjpO5Nb4> հղումով: Մեծ թվով ԷՄԲ-երի այսպիսի մանրամասն մոդելավորումը թույլ է տալիս հետազոտել ճառագայթման տիրույթը և ճառագայթող մասնիկները նկարագրող

հիմնական պարամետրերի փոփոխությունը ժամանակի ընթացքում, ինչը շատ կարևոր է շիրիում տեղի ունեցող պրոցեսները և դրանց դինամիկ փոփոխությունները հասկանալու համար: Օրինակ՝ մոդելավորման արդյունքները ցույց են տվել, որ բռնկումների ժամանակ ճառագայթող էլեկտրոնների պարամետրերի փոփոխության հետ մեկտեղ մեծանում է նաև Դոպլեր ուժեղացման գործակիցը, ինչը նշանակում է, որ բռնկումների ժամանակ ճառագայթումն առաջանում է ավելի արագ շարժվող տիրույթից: Այսպիսի մոդելավորումը թույլ է տալիս նաև գնահատել շիրի էներգետիկան տարբեր ժամանակահատվածներում, որը $\leq 2.08 \times 10^{46} \text{ ԶԶԶ ԶԶԶ}^{-1}$ է, ինչն ավելի փոքր է, քան այս աղբյուրի էդինգտոնի լուսատվությունը՝ $1.9 \times 10^{47} \text{ ԶԶԶ ԶԶԶ}^{-1}$:

Ցույց է տրվել 4FGL J1544.3-0649 բլազարի յուրահատուկ հատկությունը և ուսումնասիրվել են ճառագայթման առաջացման մեխանիզմները: 4FGL J1544.3-0649 աղբյուրը ռադիո տիրույթում ուսումնասիրություններից հայտնի բլազար է, որը չէր ճառագայթում ռենտգենյան և բարձր էներգիաների գամմա տիրույթներում: 2016-17թթ. հետո աղբյուրի ճառագայթումը ռենտգենյան և գամմա տիրույթներում կտրուկ աճել է և աղբյուրի ճառագայթումը գրանցվել է Swift XRT և Fermi LAT դիտակներով: Օրինակ՝ գամմա տիրույթում ճառագայթման առավելագույն հոսքը՝ $(2.35 \pm 0.55) \times 10^{-8} \text{ ԶԶԶԶԶ ԶԶԶ}^{-2} \text{ ԶԶԶ}^{-1}$, գրանցվել է MJD 57998.9-ին, իսկ ռենտգենյան տիրույթում այն եղել է $(1.28 \pm 0.05) \times 10^{-10} \text{ ԶԶԶ ԶԶ}^{-2} \text{ ԶԶԶ}^{-1}$: Աղբյուրի ճառագայթման սպեկտրի փոփոխությունը ժամանակի ընթացքում ավելի մանրամասն ներկայացվել է <https://www.youtube.com/watch?v=9feaNW1RDs> հղումով: Աղբյուրի ռենտգենյան և գամմա տիրույթներում ակտիվության ժամանակ փոփոխվել է նաև սինքրոտրոնային ճառագայթման բաղադրիչի առավելագույնի դիրքը և այն հիմնականում փոփոխվել է $10^{16} - 10^{17}$ Հց տիրույթում, սակայն ամենամեծ ինտենսիվությամբ ճառագայթման ժամանակ այդ առավելագույնը շեղվել է 10^{18} Հց բարձր տիրույթներում, ինչը ցույց է տվել, որ 4FGL J1544.3-0649 աղբյուրը HBL դասի բլազար է:

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Sahakyan N., Modelling the broad-band emission of 3C 454.3, “Monthly Notices of the Royal Astronomical Society”, v. 504, issue 4, 2021, pp. 5074-5086.
2. Sahakyan N, Giommi P., The strange case of the transient HBL blazar 4FGL J1544.3-0649, “Monthly Notices of the Royal Astronomical Society”, v. 502, issue 1, 2021, pp. 836-844.
3. Giommi P., Perry M., Capalby M., ..., Sahakyan N., Israyelyan D., Turriziani S., X-ray spectra, light curves and SEDs of blazars frequently observed by Swift, “Monthly Notices of the Royal Astronomical Society”, v. 507, issue 4, 2021, pp. 5690-5702.
4. Ruffini R., Moradi R., Rueda J.A, Li L., Sahakyan N., ... The morphology of the X-ray afterglows and of the jetted GeV emission in long GRBs, “Monthly Notices of the Royal Astronomical Society”, v. 504, issue 4, 2021, pp. 5301-5326.
5. Adams C., Benbow W., ..., Gasparyan S., ..., Sahakyan N., ..., Observation of the Gamma-Ray Binary HESS J0632+057 with the H.E.S.S., MAGIC, and VERITAS Telescopes, “The Astrophysical Journal”, v. 923, issue 2, id.241, 30 pp., 2021.
6. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., ..., Gasparyan S., ..., Sahakyan N., ..., Search for very high-energy emission from the millisecond pulsar PSR J0218+4232, “The Astrophysical Journal”, v. 922, issue 2, id.251, 14 pp., 2021.
7. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., ... Gasparyan S., ...Sahakyan N., ..., Multiwavelength study of the gravitationally lensed blazar QSO B0218+357 between 2016 and 2020, “Monthly Notices of the Royal Astronomical Society”, 2021. 10.1093/mnras/stab3454

8. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., ..., Gasparyan S., ..., Sahakyan N., ..., Investigation of the correlation patterns and the Compton dominance variability of Mrk 421 in 2017, "Astronomy & Astrophysics", v. 655, id.A89, 36 pp., 2021.
9. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., ... Gasparyan S., ... Sahakyan N., ..., First detection of VHE gamma-ray emission from TXS 1515-273, study of its X-ray variability and spectral energy distribution, "Monthly Notices of the Royal Astronomical Society", v. 507, issue 1, 2021, pp. 1528-1545.
10. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., ..., Gasparyan S., ..., Sahakyan N., ..., Multiwavelength variability and correlation studies of Mrk 421 during historically low X-ray and γ -ray activity in 2015-2016, Monthly Notices of the Royal Astronomical Society, Volume 504, Issue 1, pp.1427-1451, 2021.
11. Algaba J, Anczarski J., Sahakyan N., ... Broadband Multi-wavelength properties of M87 during the 2017 Event Horizon Telescope Campaign, "The Astrophysical Journal Letters", v. 911, issue 1, id.L11, 43 pp., 2021.
12. Abdalla H., Adam R., ..., Sahakyan N., H.E.S.S. and MAGIC observations of a sudden cessation of a very-high-energy γ -ray flare in PKS 1510-089 in May 2016, "Astronomy & Astrophysics", v. 648, id.A23, 22 pp., 2021.
13. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., ... Gasparyan S., ... Sahakyan N., ..., VHE gamma-ray detection of FSRQ QSO B1420+326 and modeling of its enhanced broadband state in 2020, "Astronomy & Astrophysics", v. 647, id.A163, 19 pp., 2021.
14. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., ..., Gasparyan S., ..., Sahakyan N., ..., MAGIC observations of the nearby short gamma-ray burst GRB 160821B, "The Astrophysical Journal", v. 908, issue 1, id.90, 11 pp., 2021.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

Ակադեմիկոս-քարտուղար՝ թղթակից անդամ Ռ.Հարությունյան

Գիտքարտուղար՝ կ.գ.թ. Ս.Աճեմյան

Բաժանմունքի կազմում ընդգրկված են էկոլոգանոսֆերային հետազոտությունների, «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնները, Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության, Հ.Բունիայանի անվ. կենսաքիմիայի, Գ.Դավթյանի անվ. հիդրոպոնիկայի պրոբլեմների, Մոլեկուլային կենսաբանության, Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտները:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են 7 ակադեմիկոս, 9 թղթակից և 27 արտասահմանյան անդամներ, 12 պատվավոր դոկտոր:

Հաշվետու տարում անցկացվել է բաժանմունքի 1 ընդհանուր ժողով, բյուրոյի 16 նիստ և աշխատանքային խորհրդակցություններ, գիտական կազմակերպությունների 8 հաշվետու ժողով:

Բաժանմունքի տարեկան ժողովում լսվել է 5 տարվա գիտական և գիտակազմակերպական գործունեության մասին ակադեմիկոս-քարտուղար Ռ.Հարությունյանի զեկուցումը, անցկացվել է բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի ընտրություն, քննարկվել են կազմակերպությունների հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունքները, ԳԱԱ արտասահմանյան անդամների՝ միջազգային գիտական կապերի զարգացման գործում ներգրավման հնարավորությունները:

Բյուրոյի 16 նիստերում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի 2021թ. աշխատանքային պլանը, բաժանմունքի գիտական կազմակերպությունների 2020թ. բազային ֆինանսավորման, ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման, պետական նպատակային ծրագրերի մասին հաշվետվությունները, 2021-22 ուստարվա ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ընդունելության հարցերը, ԳՀԿ-ների՝ անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման հայտերը:

Բաժանմունքը կազմակերպել է միջազգային կլոր սեղան՝ նվիրված 21-րդ դարի գենետիկայի խնդիրներին, զեկուցումներով հանդես են եկել ՀՀ և ՌԴ գենետիկներ: Բաժանմունքը եղել է Ն.Տիմոֆեև-Ռեսովսկուն նվիրված միջազգային գիտաժողովի համակազմակերպիչ:

ԳԱԱ մրցութային հանձնաժողովը ինստիտուտներին տրամադրել է ֆինանսավորում անհրաժեշտ սարքեր ձեռք բերելու համար:

Բաժանմունքի ԳՀԿ-ներն անցկացրել են հանրապետական և միջազգային 13 միջոցառում, այդ թվում՝ ուսուցողական սեմինարներ, գիտաժողովներ, գիտարշավներ, որոնց մասնակցել է 711 մարդ (268-ն արտերկրից):

Բաժանմունքի ԳՀԿ-ները տպագրել են 290 հոդված՝ գրախոսվող ամսագրերում 253 (152-ն արտասահմանում), գիտաժողովների նյութերի ժողովածուներում 37 (18-ն արտասահմանում), 96 թեզիս (52-ն արտասահմանում), 6 մենագրություն, 2 ուսումնական ձեռնարկ և ստացել է 2 արտոնագիր:

Բաժանմունքի 5 մասնագիտական խորհուրդներում պաշտպանվել են 8 թեկնածուական և 1 դոկտորական ատենախոսություններ:

ԷԿՈԼՈԳԱՆՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ աշխ.գ.թ. Լ.Սահակյան
Փոխտնօրեն՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան
Գլխավոր տնօրեն՝ կ.գ.թ.՝ Ն.Մաղաքյան
Էլեկտրոնային փոստ՝ ecocentr@sci.am, info@cens.am
Կայքէջ՝ www.cens.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Հրազդան գետի Երևանի տարածքով անցնող հատվածի հատակային նստվածքներում բազմամյա ուսումնասիրված 14 տարրերի (Fe, Co, Ti, V, Mn, Ba, Cu, Pb, Zn, Mo, Cr, Sr, Rb, Zr) պարունակությունների տվյալների բազայի հիման վրա իրականացված կլաստերային անալիզի արդյունքների համաձայն՝ ուսումնասիրված տարրերը հանդես են գալիս երեք առանձին երկրաքիմիական ասոցիացիաներով՝ Fe-Co-Ti-V-Mn-Zr (I), Cu-Pb-Mo-Zn-Cr (II) և Sr-Ba-Rb (III): Վերջիններիս համեմատությունը տարրերի ֆոնային երկրաքիմիական ասոցիացիաների հետ թույլ է տալիս վեր հանել ընթացիկ երկրաքիմիական վերափոխումները և կիրառել որպես անթրոպոգենեզի ցուցիչներ (դեկ.՝ կ.գ.թ. Գ.Տեփանյան):

Գնահատվել են ՀՀ Արմավիրի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերում բնական (Ra-226, Th-232, K-40) և տեխնածին (Cs-137) ռադիոնուկլիդների ակտիվության մակարդակները: Բնական ռադիոնուկլիդների ակտիվությունները մոտ են ՄԱԿ-ի ատոմային ճառագայթման ազդեցության գիտական կոմիտեի կողմից գնահատված Հայաստանի հողերի միջինին: Համեմատաբար բարձր ակտիվություն Ra-226 և K-40-ի դեպքում գրանցվել է մարզի հյուսիս-արևմուտքում, Th-232-ի դեպքում՝ հյուսիս-արևելքում: Տեխնածին Cs-137-ի ակտիվությունն աճել է բացարձակ բարձրության աճին զուգընթաց: ՀԱԷԿ-ի տարածքում գրանցվել է Cs-137-ի ցածր ակտիվության դաշտ: Երևանի բնակչության կողմից սպառվող հիմնական սննդամթերքում U-238, Th-232, K-40 և Cs-137-ի տեսակարար ակտիվության չափումները բացահայտել են սննդամթերքի ընդունումից բնակչության ներքին ճառագայթահարման դեպքում սպասվող համարժեք և արդյունաբար դրժաները: Ստացված տվյալների հիման վրա գնահատվել են առողջական ռիսկերը (դեկ.՝ կ.գ.թ. Օ.Բեյլան):

Միջազգային առաջավոր փորձի մեթոդաբանության կիրառմամբ կենդանական ծագում ունեցող մթերքում մանրէաբանական վտանգներով պայմանավորված ռիսկերի գնահատումը բացահայտել է մանրէաբանական վտանգների աղբյուրներ մթերքի իրացման ցանցում: Կենդանական ծագում ունեցող մթերքի անվտանգության ոլորտում, ռիսկի վրա հիմնված համակարգերի ներդրման գիտամեթոդական աշխատանքների շրջանակում, մշակվել է սպանդանոցներում մթերքի անվտանգության ապահովման վերաբերյալ մեթոդական ուղեցույց (դեկ.՝ սննդ.գ.դ. Դ.Պիպոյան):

Շարունակվել են լանդշաֆտային բաղադրիչների (հող, ջուր, բույս) էկոլոգիական վիճակի գնահատման հեռազննման մեթոդների կատարելագործման աշխատանքները: Փոքր գյուղատնտեսական հողահանդակների հողերի նմուշների էլեկտրամագնիսական սպեկտրի տեսանելի ու մոտ ինֆրակարմիր տիրույթներում չափված և լաբորատոր պայմաններում ստացված տվյալների, PLSR մոդելի կիրառմամբ, համադրման արդյունքների համաձայն, տեսանելի ու մոտ ինֆրակարմիր տիրույթները կիրառելի են հողերում Ti, V, Cr և Ba-ի առկայության բացահայտման և պարունակությունների որակական գնահատման համար: Հեռազննման տվյալներով խաղողի այգիների էկոլոգիական վիճակը գնահատելու համար կատարվել է խաղողի տերևներում քլորոֆիլի քանակության չափում և ստացված տվյալների ու ԱԹՄ լուսանկարների սպեկտրալ ինդեքսների (NDVI, NDRE)

կիրառամբ վերծանված արդյունքների համադրում: PLSR մոդելի կիրառամբ տվյալների համադրությամբ հաստատվել է ԱԹՄ բազմասպեկտրալ լուսանկարների, մասնավորապես եզրային կարմիր սպեկտրալ տիրույթի կիրառման անհրաժեշտությունը խաղողի տերևներում քլորոֆիլի քանակության գնահատման համար (ղեկ.՝ ա.գ.թ. Շ.Ասմարյան):

Արագած լեռան արևելյան դիրքադրության տափաստանային արոտներում ուսումնասիրվել են բուսազանգվածի ելքը, առանձին բուսախմբերի, տերևների ու ցողունների մասնաբաժինը, կերաբույսերի պիզմենտների և հողերի N, P պարունակությունը: Պարզվել է, որ արոտատեղամասերի բերքի տատանման տիրույթը 84-264 գ/մ² է (միջինը 183 գ/մ²), որը վկայում է դրա տարածական անհամաչափ բաշխման մասին: Հացազգիների, բակլազգիների և տարախոտերի տեսակարար կշիռն ընդհանուր զանգվածում 43, 16, 42% է, իսկ տերևների և ցողունների տեսակարար կշիռը՝ համապատասխանաբար 41, 59%: Հողային և բուսական փորձանմուշները N, P-ի և պիզմենտների պարունակությամբ էականորեն չեն տարբերվել, բացառությամբ Ա քլորոֆիլի, որը համեմատաբար բարձր է եղել բակլազգիների մոտ: Ստացված արդյունքները հնարավորություն են տալիս համեմատել տարբեր դիրքադրության պայմաններում գտնվող արոտների արդյունավետության և կենսաչափական ցուցանիշները (ղեկ.՝ գ.գ.դ. Բ.Մեծունց):

ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոնը նախաձեռնել և իրականացրել է «Կովիդ-19: Որակյալ կրթության հավասար իրավունք» առցանց ծրագիրը տեղական և միջազգային մակարդակով: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ կրթական գործընթացի կազմակերպման համար արդյունավետ է առցանց և օֆլայն ձևերի համատեղ կիրառումը (հիբրիդ կրթությունը): Ընթացիկ տարում հանրակրթական հաստատություններում իրականացվել են կիսամյակային էկոլոգիական դասընթաց-սեմինարներ (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Պողոսյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Երևան քաղաքի մթնոլորտային օդի մասնիկների, փոշու և ասոցացված պոտենցիալ տոքսիկ տարրերի համալիր հետազոտություններ. երկրաքիմիա, ռիսկեր և լուծումներ» նախագծի շրջանակում (ղեկ.՝ աշխ.գ.թ. Լ.Սահակյան) կատարվել է հետազոտության համար անհրաժեշտ ելքային տվյալների հավաքագրում, թվային շերտերի ստեղծում և քաղաքի տարածքի մթնոլորտային օդի վերաբերյալ առկա ինֆորմացիայի ուսումնասիրություն ու վերլուծություն, նմուշառման համար անհրաժեշտ տվյալների հենքի ստեղծում ու նմուշառման պլանի կազմում:

«Արածեցման տարբեր ռեժիմների ազդեցությունն արոտների արդյունավետության և հողերի բերրիության ցուցանիշների վրա» նախագծի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Նավասարդյան) իրականացվել են գիտատեղեկատվական տվյալների և նյութատեխնիկական բազայի ստեղծման մեկնարկային աշխատանքներ:

«Ռադոնի էմանացիայի պոտենցիալի և ռադոնային վտանգի գնահատում Երևան քաղաքում» նախագծի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Օ.Բելյանա) ձեռք են բերվել անհրաժեշտ սարքավորում և նյութեր՝ նախատեսված դաշտային աշխատանքների իրականացման համար:

«Դասավանդողների համար ցկյանս ուսումնառության մոդելի մշակում» նախագծի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Պողոսյան) կատարվել է տեղական և միջազգային փորձի վերլուծություն, ուսումնամեթոդական նյութերի հավաքագրում, կիրառվող մեթոդների, ռազմավարությունների, տեխնոլոգիաների հստակեցում: Ստեղծվել է ուսումնամեթոդական նյութերի բազա տարբեր երկրների փորձի վերաբերյալ:

«Երևան քաղաքում իրացվող սննդամթերքում տրանսճարպաթթուների ռիսկի գնահատումը» նախագծի շրջանակում առաջին անգամ ՀՀ-ում, Երևան քաղաքի օրինակով, ապահովվել է բնակչության սննդակարգում տրանսճարպաթթուների առկայության և օրական ընդունման վերաբերյալ տվյալների հենքը:

«Պարենային անվտանգության և սննդանյութերի գնահատման գիտամեթոդական կարողությունների հզորացում» նախագծի շրջանակում իրականացվել է սննդանյութերի հետազոտման լաբորատոր կարողությունների ձևավորում, ՀՀ-ում պարենային անվտանգության արդի հիմնախնդիրների վերլուծություն, մայրաքաղաքում և մարզերի գյուղական ու քաղաքային համայնքներում սննդի անհատական սպառման տվյալների հավաքագրում (ղեկ.՝ սննդ.գ.դ. Դ.Պիպոյան):

«Սննդամթերքում միկոտոքսինների ռիսկի գնահատում» նախագծի շրջանակում (ղեկ.՝ տ.գ.թ. Մ.Բեգլարյան) սկսվել են միկոտոքսինների ռիսկի գնահատման առնչվող տվյալների (մեթոդաբանություն, թունաբանական բնութագրեր, օրենսդրական կարգավորումներ) հավաքագրման աշխատանքները:

«Լեռնային լճերի ջրի որակի տարածաժամանակային փոփոխությունների գնահատում հեռազննման տվյալների մշակման տեխնոլոգիաների կիրառմամբ» նախագիծն ուղղված է արբանյակային լուսանկարների մշակման նորարարական մոտեցումների կիրառմամբ Սևանա լճի ջրի պղտորության ու ծաղկման ֆենոլոգիայի տարածաժամանակային փոփոխությունների հիմնական տենդենցների ուսումնասիրմանը և բացահայտմանը ավագանի մակերևութի ծածկի և կլիմայի փոփոխության պայմաններում: Կատարվել են տեղեկատվության ձեռքբերման նախապատրաստական փուլի աշխատանքները:

«Երկրակալության հետազոտություններում երկրատարածական տվյալների մշակման գործում մեքենայական ուսուցման կիրառման կարողությունների հզորացում» նախագիծի շրջանակում իրականացվել է SWOT վերլուծություն՝ պարզելու Էկոլենտրոնում տվյալագիտության և մեքենայական ուսուցման տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը և դրանց ներդրման ու զարգացման ռեսուրսային պոտենցիալը: Պիլոտային հետազոտության շրջանակում հետազոտվել է արբանյակային լուսանկարներից ստացված մակերևութային ջերմաստիճանի և կլիմայական ցուցանիշների (օդի ջերմաստիճան, արեգակնային ռադիացիա, քամու ուժգնություն և ուղղություն, ցողի կետ, ամպամածություն) փոխհարաբերությունը PLSR մոդելի կիրառմամբ: Արդյունքում կլիմայական փոփոխականներից մակերևութային ջերմաստիճանի հետ կորելյացիոն լավագույն արդյունքը ցույց է տվել օդի ջերմաստիճանը (ղեկ.՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան):

«ՀՀ լեռնային լանդշաֆտներում խաղողի այգիների Էկոլոգիական վիճակի գնահատում հեռազննման տեխնոլոգիաների կիրառմամբ» նախագիծի շրջանակում (ղեկ.՝ Ա.Խլղաթյան) կատարվել են խաղողի այգիների հետազոտական տեղամասերի ընտրության նախապատրաստական փուլի աշխատանքներ, նախատեսվում են ԱԹՄ լուսանկարահանման և խաղողի այգիներում քլորոֆիլի չափման դաշտային աշխատանքներ:

«Արարատյան դաշտի հողերի Էկոլոգաերկրաքիմիական առանձնահատկությունների բացահայտում, պոտենցիալ ռիսկերի գնահատում» նախագիծի շրջանակում (ղեկ.՝ Վ.Դավթյան) կատարվել է Արարատյան դաշտի ինֆորմացիոն շերտերի թվայնացում և ծանր մետաղների պարունակությունների տվյալների բազայի ստեղծում:

«Արագած լեռնազանգվածում ռադիոէկոլոգիական իրավիճակի գնահատման նորարարական մոտեցումներ: Ռադիոնուկլիդային ֆոն և հիմնագիծ, միգրացիա և ռիսկ» նախագծի շրջանակում (ղեկ.՝ Ն.Մովսիսյան) Արագած լեռնազանգվածի ընտրված 4 ուղղություններից հավաքվել են հողերի մակերևութային և խորքային նմուշներ, մամուռներ, Արագած լեռնազանգվածից սկիզբ առնող գետերի հատակային նստվածքներ ու ողողատների հողեր, իրականացվում են տարրալուծման աշխատանքներ:

«Ջրի մակարդակը որպես լճերի էկոհամակարգերի ջրի որակի երկարաժամկետ դինամիկայի և հիդրոէկոլոգիական ցուցանիշների փոփոխությունների կարևոր գործոն» հայ-բելառուսական նախագծի շրջանակում (ղեկ. տ.գ.դ. Գ.Բաբայան) հավաքագրվել են ջրային օբյեկտի (Սևանա լիճ, Նարոչանսկի լճեր) վերաբերյալ տեղեկատվությունը և ջրի որակի բազմամյա դիտարկումների արդյունքները լճի մակարդակի առավել բարձր, ցածր և ժամանակակից շրջանների համար, պատրաստվել է Սևանա լճի վերաբերյալ կարճ տեղեկագիր և հարցաթերթիկ փորձագետներին տրամադրելու համար: Դելֆիի մեթոդով ջրի որակի քանակական գնահատման համար կատարվել է հարցում տեղացի և արտասահմանցի 22 փորձագետի ընդգրկմամբ:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Pipoyan D., Beglaryan M., Stepanyan S., The impact of the COVID-19 crisis on nutrition in Yerevan, Armenia, book chapter In “Food Security in Eurasia 2020: Case Studies”, Eurasian Center for Food Security, Moscow, Russia, 2021, pp. 58-75.

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

2. Պիպոյան Դ.Ա., Բեգլարյան Մ.Ռ., Ստեփանյան Ս.Ա., Հովհաննիսյան Ա.Ս., Սննդանյութերի և սննդակարգի գնահատում (մեթոդական ուղեցույց), Ե., ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսոֆերային հետազոտությունների կենտրոնի հրատ., 2021, 93 էջ:

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

3. Դեմիրճյան Գ.Ա., Մովսիսյան Ն.Է., Փյունկյուլյան Կ.Բ., Սահակյան Լ.Վ., Սադաթեյան Ա.Կ., Բեյլակա Օ.Ա., Տեխնոլոգիապես փոփոխված բնական ռադիոակտիվությունը Ալավերդի քաղաքի հողերում, Ե., «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր: Գիտություններ Երկրի մասին», N 74(3), 2021, էջ 41-50:
4. Մովսիսյան Ն.Է., Հովհաննիսյան Ս.Ա., Բեյլակա Օ.Ա., Վանաձոր քաղաքի հողերի ռադիոէկոլոգիական հետազոտություններ, Ե., «ԵՊՀ գիտական տեղեկագիր: Սերիա երկրաբանություն և աշխարհագրություն», N 55(3), 2021, էջ 165-175:
5. Պիպոյան Դ.Ա., Բեգլարյան Մ.Ռ., ՀՀ պարենային անվտանգության արդի հիմնախնդիրները, Ե., «Գիտության աշխարհում», N1, 2021, էջ 58-63:
6. Պիպոյան Դ.Ա., Աբրահամյան Ա.Ս., Ստեփանյան Ս.Ա., Հովհաննիսյան Ա.Ս., Կադմիումի և պղնձի ռիսկի գնահատումը ձկնամսի սպառման դեպքում, Ե., «Ագրոգիտություն և տեխնոլոգիա», N1(73), 2021, էջ 109-113:
7. Պիպոյան Դ.Ա., Բեգլարյան Մ.Ռ., Աբովյան Ա.Յու., Ալթունյան Ս.Հ., Արհեստական լճակային տնտեսություններում բուծվող ձկան մսում հորմոնների մնացորդային պարունակության որոշումը և դրանց սննդակարգային ներգործությամբ առողջական ռիսկի գնահատումը, Ե., «Ագրոգիտություն և տեխնոլոգիա», N3(75), 2021, էջ 305-310:
8. Պիպոյան Դ.Ա., Բեգլարյան Մ.Ռ., Բարձր արդյունավետության հեղուկային քրոմատոգրաֆի կիրառությունը շրջակա միջավայրի և սննդի անվտանգության բնագավառներում, Ե., «Գիտության աշխարհում», N4, 2021, էջ 58-61:
9. Погосян Г.С., Гаспарян А.М., Григорян М.М., Анализ процесса обучения на протяжении всей жизни. Молодежь и будущее: Профессиональная и личностная самореализация, Мат. X межд. научно-практич. конф., Владимир, “Транзит-ИКС”, 2021, с. 57-62.
10. Astsatryan H., Grigoryan H., Poghosyan A., Abrahamyan R., Asmaryan S., Muradyan V., Tepanosyan G., Guigoz Y., Giuliani G., Air temperature forecasting using artificial neural network for Ararat valley, “Earth Science Informatics”, v. 14, 2021, pp. 711-722. <https://doi.org/10.1007/s12145-021-00583-9>
11. Belyaeva O., Movsisyan N., Evolution of radioecology in Armenia: A Short Review, “Int. J. Radiat. Biol.”, 2021, pp. 1-8. <https://doi.org/10.1080/09553002.2021.1976866>
12. Belyaeva O., Movsisyan N., Pyuskyulyan K., Sahakyan L., Tepanosyan G., Saghatelian A., Yerevan soil radioactivity: radiological and geochemical assessment, “Chemosphere”, v. 265, 2021, 129173, <https://doi.org/10.1016/j.chemosphere.2020.129173>

13. Hovhannisyan H., Tepanosyan G., Gevorgyan A., Baldacchini Ch., Sahakyan L., Similarities and differences of potentially toxic elements in contents in leaves of *Fraxinus excelsior* L. and *Platanus orientalis* L. in an urban environment, "Urban Forestry and Urban Greening", v. 65, 2021, 127359, <https://doi.org/10.1016/j.ufug.2021.127359>.
14. Hovhannisyan H., Gevorgyan A., Heavy metal contents in evergreen trees growing in Yerevan (Armenia), "Electronic Journal of Natural Sciences of NAS RA", v. 37, N 2, 2021, pp.13-18.
15. Masson O., Romanenko O., Saunier O., Kirieiev S., Protsak V., et al., Europe-wide atmospheric radionuclide dispersion by unprecedented wildfires in the Chernobyl exclusion zone, "Environ. Sci. Technol.", v. 55, N 20, 2021, pp. 13834–13848. <https://doi.org/10.1021/acs.est.1c03314>.
16. Movsisyan N., Demirtchyan G., Pyuskyulyan K., Belyaeva O., Identification of radionuclides' altitudinal distribution in soil and mosses in highlands of Armenia, "Journal of Environmental Radioactivity", v. 231, 2021, 106550, pp. 1–10. <https://doi.org/https://doi.org/10.1016/j.jenvrad.2021.106550>
17. Movsisyan N., Pyuskyulyan K., Belyaeva O., Radionuclides distribution and associated ecological risk in the environment of Armenian mountains, Proceeding of the V International Conference dedicated to N.W. Timofeeff-Reesovsky "Modern Problems of Genetics, Radiobiology, Radioecology and Evolution" GRRE 2021, Nor Amberd, Armenia, 2021, pp. 1-7.
18. Movsisyan N., Tepanosyan G., Sahakyan L., Pyuskyulyan K., Demirtchyan G., Belyaeva O., Saghatelyan A., Airborne Be-7 and artificial Cs-137 radionuclides in mosses of Armenia, Proceedings of the 15th International Congress of the International Radiation Protection Association (IRPA 15), Seoul Korea, 2021, pp. 1-8. <https://irpa.net/page.asp?id=54839>
19. Peña-Fernández A., González-Muñoz M., Tepanosyan G., Evans M., Lobo-Bedmar M., Human health risk assessments for arsenic and beryllium in urban soils, Chapter 27 in Peña-Fernández A., Evans M.D., Cooke M.S. (Eds.), "Toxicology for the Health and Pharmaceutical Sciences" (1st ed.). CRC Press., 2021, <https://doi.org/10.1201/9780203730584>.
20. Pipoyan D., Beglaryan M., Tepanosyan G., Sahakyan L., Risk assessment of toxic elements in fruits and vegetables grown in Ararat region, Armenia, "Agroscience and Technology", N 4 (7), 2021, pp. 199-202.
21. Pipoyan D., Beglaryan M., Gharibyan G., Aghababyan A., Assessing the risk of antibiotic residues in milk produced in the Republic of Armenia, "Agroscience and Technology", N 4 (74), 2021, pp. 199-202.
22. Pipoyan D., Stepanyan S., Stepanyan S., Beglaryan M., Costantini L., Molinari R., Merendino N., The effect of trans fatty acids on human health: Regulation and consumption patterns, "Foods", N 10(10), 2021, 2452. <https://doi.org/10.3390/foods10102452>
23. Pipoyan D., Beglaryan M., Stepanyan S., Exposure assessment of trans-fatty acids through consumption of sour cream in Yerevan, "Agroscience and Technology", N2 (74), 2021, pp. 203-206.
24. Poghosyan G., Grigoryan M., Amiryan A., Studying the quality of education in the general educational system during Covid-19, "Katchar, Scientific Periodical", ISEC NAS of RA, N 2, 2021, pp. 30-40.
25. Stepanyan S., Beglaryan M., Pipoyan D., Risk assessment of trans-fatty acids intake through consumption of dairy and sausage products in Yerevan, Collection of scientific articles of the international conference "Development of research capabilities", Armenia, 2021, pp. 12-24.
26. Tepanosyan G., Baldacchini Ch., Sahakyan L., Revealing soil and tree leaves deposited particulate matter PTE relationship and potential sources in urban environment, "International Journal of Environmental Research and Public Health", v. 18, N 19, 2021, p.10412, <https://doi.org/10.3390/ijerph181910412>.
27. Tepanosyan G., Harutyunyan N., Sahakyan L., Revealing XRF data quality level, comparability with ICP-ES/ICP-MS soil PTE contents and similarities in PTE induced health risk, "Environmental Geochemistry and Health", 2021, <https://doi.org/10.1007/s10653-021-01079-7>.
28. Tepanosyan G., Belyaeva O., Sahakyan L., Environmental geochemical and radioecological surveys in Armenia, IUGS Commission on Global Geochemical Baseline, annual report, 2021, p. 96.

Ա.ԹԱԽՏԱԶՅԱՆԻ ԱՆՎ. ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ կ.գ.թ. Ա.Ղուկասյան
Փոխտնօրեն՝ տնտ.գ.թ. Ս.Վարդանյան
Գիտքարտուղար՝ կ.գ.թ. Լ.Մարգարյան
Էլեկտրոնային փոստ՝ botanyinst@sci.am, botinst@sci.am
Կայքէջ՝ www.botany.sci.am

Մասնագիտական խորհուրդ 035՝ «Բուսաբանություն»

Նախագահ՝ թղթ.անդ. Ժ.Վարդանյան, գիտքարտուղար՝ կ.գ.դ. Գ.Օգանեզովա

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ուսումնասիրվել է *Chenopodiaceae* ընտանիքի ներկայացուցիչների կարգաբանական կազմն Արմավիրի և Արարատի մարզերի հետևյալ բնակավայրերում՝ Արարատի շրջակայքում գտնվող աղակալած ճահճուտներում, Սուրենավանի և Երասխահունի շրջակայքում գտնվող աղուտներում: Գնահատվել է *Bienertia cycloptera*, *Halocnemum strobilaceum*, *Halostachys belangeriana*, *Kalidium caspicum*, *Microcnemum coralloides* subsp. *anatolicum* հազվագյուտ և անհետացող տեսակների պոպուլյացիաների վիճակը: Կատարվել են *Microcnemum coralloides* subsp. *anatolicum* կենսամորֆոլոգիական և անտէկոլոգիական հետազոտություններ (ղեկ.՝ կ.գ.դ. Ժ.Հակոբյան):

Շարունակվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանից ստացված հերքարիումային նյութերի՝ *Poaceae*, *Rosaceae*, *Amarantaceae*, *Polygalaceae*, *Scrophulariaceae*, *Crassulaceae*, *Lamiaceae*, *Asteraceae* (*Anthemideae*, *Lactuceae* տրիբաներ), *Hypericaceae*, *Poaceae*, *Chenopodiaceae*, *Apiaceae*, *Poaceae*, *Molluginaceae*, *Aizoaceae*, *Brassicaceae* ընտանիքների որոշումները և վերաորոշումները (ղեկ.՝ կ.գ.դ. Մ.Հովհաննիսյան):

Հերքարիումի տեղական բաժնի հավաքածուն հարստացել է 24 ընտանիքի պատկանող բուսատեսակների շուրջ 1640 նմուշով, այդ թվում՝ հերքարիումի համար 5 նոր տեսակով և 1 նոր ենթատեսակով, ընդհանուր բաժնի հավաքածուն՝ 4 ընտանիքի պատկանող 308 նմուշով, այդ թվում՝ հերքարիումի համար 2 նոր ցեղով և շուրջ 38 նոր տեսակով, տիպային հավաքածուն՝ 4 նոր ցեղով և 58 նոր ավթենոիկ նմուշով (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Ասատրյան):

Potentilla ցեղի մակրո- և միկրոմորֆոլոգիական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ բացի կենսաձևից և տերևի կառուցվածքից, որոնց դերը որպես հարմարողական հատկանիշներ վաղուց հայտնի է, այդ համակարգում մեծ դեր ունեն տերևակիցները և տեսակի մազածածկույթը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ ցեղի հարմարողական պոտենցիալը չի սպառվել և տեսակներն ունեն կլիմայի փոփոխությանը կառուցվածքային հարմարվելու ունակություն (ղեկ.՝ կ.գ.դ. Գ.Օգանեզովա):

Salsola L. sensu lato ցեղի *Seidlitzia* Bunge *Noaea* Moq., *Girgensohnia* Bunge ex Fenzl *Anabasis* L., *Petrosimonia* Bunge և *Halanthium* K. Koch 23 տեսակի և 4 ենթատեսակի ծաղկափռու մորֆոլոգիայի ուսումնասիրությունները բացահայտել են, որ ծաղկափռու տրամագիծը, ինչպես նաև ծլանցքների քանակն ու տրամագիծը կարող են դիտարկվել որպես ախտորոշիչ հատկանիշ: Կատարվել են ծաղկափռու միկրոլուսանկարումներ սկանավորող էլեկտրոնային մանրադիտակի մակարդակով (ՄԷՄ) *Iridaceae* Juss. ընտանիքի բոլոր տեսակների համար: *Crocus* L. ցեղի *C. adamii* J. Gay., *C. speciosus* M. Bieb. տեսակների ծաղկափռու մորֆոլոգիայի ուսումնասիրություններն ի հայտ են բերել, որ որպես տարբերակիչ հատկանիշ լուսային մանրադիտակի մակարդակով համարվում են ծաղկափռու չափերը, իսկ սկանավորող էլեկտրոնային (ՄԷՄ) մանրադիտակի մակարդակով՝ և՛ ծաղկափռու չափերը, և՛ ընդհանուր պարուրածն ապերտուրայի տիպը:

Hajastanicus Gabrielian հազվագյուտ էնդեմիկ տեսակի, ինչպես նաև *Gladiolus kotschyanus* Boiss. տեսակի 2 ենթատեսակի ծաղկափոշու մորֆոլոգիական ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ լուսային մանրադիտակի (ԼՄ) մակարդակով *Gladiolus kotschyanus* 2 ենթատեսակի միջև հիմնական տարբերությունը ծաղկափոշու չափերն են, մասնավորապես մեծ հասարակածային տրամագծի երկարությունը, իսկ սկանավորող էլեկտրոնային (ՄԷՄ) մանրադիտակի մակարդակով՝ փշիկների և ծակոտիների քանակը ծաղկափոշու միավոր մակերեսի վրա: Առաջին անգամ ուսումնասիրվել են Հայաստանի ֆլորայի համար *Iris* L. ցեղի նոր տեսակի՝ *I. lazica* Albov ծաղկափոշու մորֆոլոգիական առանձնահատկությունները (ղեկ.՝ Կ.Գ.Պ. Ա.Հայրապետյան):

Գիտության համար նկարագրվել է նոր տեսակ՝ *Acer hajastana* Papikyan, աշխարհի պալեոֆլորայի համար 13 նոր տեսակ, Հայաստանի պալեոֆլորայի համար առաջին անգամ՝ 2 նոր ցեղ (*Aulacomnium* Schwagr. և *Brassaiopsis* Decne. & Planch.) և 24 նոր տեսակ: Բոլոր ընտանիքները, բացառությամբ *Eucommiaceae*, ներկայացվել են Հայաստանի ներկայիս ֆլորայում *Betulaceae* (13 տաքսոն), *Aceraceae* (8 տեսակ), *Salicaceae* (4 տեսակ), *Acer* (8 տեսակ), *Betula* (5 տեսակ), *Alnus* և *Carpinus* (3-ական տեսակ) ընտանիքների և ցեղերի համար: 8 ցեղ չի հանդիպել Հայաստանի ներկայիս ֆլորայում (*Tsuga*, *Alnus*, *Brassaiopsis*, *Eleutherococcus*, *Eucommia*, *Ostrya*, *Parrotia*, *Pterocarya*): Հայտնաբերվել են ՀՀ բրածո ֆլորայի համար մի շարք նոր տաքսոններ՝ հիմնված բրածո ծաղկափոշու և բույսերի միկրոմնացորդների վրա: Հայտնաբերված 94 տաքսոնից 14-ը որոշվել են մինչև տեսակի, 52-ը ցեղի, մյուսներն ընտանիքի մակարդակի: Ծովինար-1 տեղավայրում հայտնաբերված տաքսոնների մեծ մասը հիմնականում համապատասխանել է Սևանի ավազանի ժամանակակից բուսականությանը, բացառությամբ որոշ տաքսոնների, որոնք ներկայումս անհետացել են Սևանի ավազանից (*Abies nordmanniana* (Steven) Spach, *Picea orientalis* (L.) Peterm., *Pinus* sp., *Zelkova carpinifolia* (Pall.) K.Koch, *Vitis vinifera* subsp. *sylvestris* (C.C. Gmel.) և այլն: Ֆրանսիայի Լիլի համալսարանի հետ համատեղ սկսվել է ՀՀ տարածքի պալեոգոյան ֆլորայի ուսումնասիրությունը (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ի.Գաբրիելյան):

«Հայաստանի ֆլորայի գենետիկական ռեսուրսների պահպանության» բաժնի «Հայաստանի ֆլորայի սերմերի բանկ»-ը և հերբարիումային հավաքածուն համալրելու նպատակով իրականացվել է մոտ 30 դաշտային ուսումնասիրություն, որոնց ընթացքում ավելի քան 65 ընտանիքի պատկանող 230 սերմերի և 450 հերբարիումային նմուշներ, մոտ 50 տեսակի կենդանի բույսեր տեղափոխվել են բաժնի «Հայաստանի կենսաբազմազանության էկոլոգիական և տեղեկատվական կենտրոն (Էկոէպիկենտրոն)» ex situ պահպանության նպատակով: Իրականացվել է սառեցման պայմաններում պահված մոտ 330 նմուշի սերմերի ծլունակության ստուգում առաջին տասնամյակի ընթացքում ծլունակության փոփոխությունները նկարագրելու նպատակով: Իրականացվել են վայրի խնձորենու (*Malus orientalis*) գենետիկական ուսումնասիրություններ Իրանի և Կովկասի տարածքի համար: Բացահայտվել են տեսակի տարածվածության նոր թեժ կետեր: RBG Kew գործընկերների հետ համատեղ ուսումնասիրվել է որոշ ուտելի պտղատու վտանգված տեսակների պոպուլյացիաների արդի վիճակը, կատարվել են բացատրական և կրթական աշխատանքներ տեղի բնակչության հետ, նաև՝ Հայաստանի խոլորձագգիների պահպանության որակի անալիզ: Բացահայտվել է, որ տեսակների զգալի մասն ունի պահպանության բարելավման անհրաժեշտություն: Թվայնացվել են ինստիտուտի հերբարիումում (ERE) գտնվող *Onobrychis* և *Caragana* ցեղերի հերբարիումների տվյալները, ԴԼԹ-ի անջատման և ուսումնասիրության նպատակով կատարվել է տերևների նմուշառում *Onobrychis transcaucasica* տեսակի 3, *Onobrychis takhtajanii*, *Onobrychis hajastana*, *Onobrychis cornuta*, *Onobrychis radiata* տեսակների մեկական պոպուլյացիաներից, իրականացվել են

պոպուլյացիաների վիճակի, տարածվածության, կենսացիկլի առանձնահատկությունների դիտարկումներ (դեկ. կ.գ.թ. Ա.Ներսեսյան):

Շարունակվել են Հայաստանի բուսական համակեցությունների փոփոխությունների, հանրապետության էկոհամակարգերի և բնակմիջավայրերի դասակարգման նոր սխեմայի կատարելագործման աշխատանքները: Ներկայումս առանձնացվել է 83 հազվագյուտ էկոհամակարգ, որոնցից արդեն իսկ մանրակրկիտ նկարագրվել է 80-ը, 36 էկոհամակարգի համար պատրաստվել են Հայաստանում տարածվածության քարտեզները:

Իրականացվել են կենսաբազմազանության կարևորագույն տարածքներում աճող Հայաստանի հազվագյուտ և անհետացող բուսատեսակների էկոֆիզիոլոգիական ուսումնասիրություններ ինչպես բնության մեջ, այնպես էլ Երևանի և Վանաձորի բուսաբանական այգիներում, որոնք թույլ են տալիս գնահատել հազվագյուտ բուսատեսակների հարմարվողականության պոտենցիալը և բացահայտել խոցելիության հնարավոր պատճառները (դեկ. կ.գ.թ. Ժ.Հովակիմյան):

Հայաստանի աբորիգեն ծառաբույսերը ներկայացվել են 54 ընտանիքի 117 ցեղի 346 տեսակով, իսկ ներմուծվածներինը՝ 66 ընտանիքի 193 ցեղի շուրջ 1600 տեսակով և տարատեսակներով: Ընտանիքների համեմատությամբ պարզվել է, որ առաջատարը Վարդագգիների (*Rosaceae*) ընտանիքն է (համապատասխանաբար 18 աբորիգեն և 29 ներմուծված ցեղեր, 125 և 268 տեսակներ): Դա պայմանավորված է առաջին դեպքում *Pyrus*, *Sorbus* և այլ ցեղերի մեծ թվով էնդեմիկ տեսակների առկայությամբ, երկրորդում՝ որոշ տեսակների պարտիզային ձևերի հարուստ ներկայացվածությամբ (*Crataegus*, *Malus*, *Rosa*, *Berberis*, *Lonicera*, *Acer*, *Clematis*, *Spiraea* և ուր.): Ներմուծված և կլիմայավարժեցված տեսակների վարքագծի վերլուծության հիման վրա կանխատեսվել է, որ կանոնավոր և նպատակաուղղված ներմուծման արդյունքում, 25-30 տարի անց, Հայաստանի բուսաբանական այգիներում օտարածին դենդրոֆլորան ներկայացված կլինի շուրջ 2000 տեսակով և տարատեսակներով, որոնց կազմում մեծ թիվ կկազմեն պարտիզային ձևերը: Գեղեցիկ ծաղկող թփատեսակների ներմուծմամբ և ցեղային կոմպլեքսի սկզբունքով հավաքածու ստեղծելով՝ հնարավոր կլինի հիմնել երկարատև ծաղկող այգի (պուրակ), որը չափազանց կարևոր է հատկապես կիսաանապատային կլիմայի պայմաններում գտնվող Երևանի համար: Ամփոփվել են ծառաբույսերի պարտիզային ձևերի ներմուծման առանձնահատկությունների ուսումնասիրության արդյունքները: Ներմուծման և կլիմայավարժեցման աշխատանքների շնորհիվ Երևանի բուսաբանական այգում պարտիզային ձևերի թիվն ավելացել է 14 նոր պարտիզային ձևերով: Ներկայումս հավաքածուն ընդգրկում է 63 անուն պարտիզային ձև, մերկասերմերը ներկայացված են 19 անուն պարտիզային ձևով, իսկ ծածկասերմերը՝ 44: Կատարվել են Արալիազգիների (*Araliaceae*) ընտանիքի՝ 4 ցեղի, 4 տեսակի (*Eleutherococcus senticosus*, *Acanthopanax sessiliflorus*, *Kalopanax septemlobus*, *Aralia mandshurica*) աճման, զարգացման և հարմարողականության ուսումնասիրություններ: Եվրասիի բուսաբանական զբոսայգիի դենդրոհավաքածուն հարստացել է ներմուծված մեկ տասնյակ բարձր գեղազարդ տեսակներով՝ *Tilia platyphyllos*, *Alnus, incana*, *Celtis occidentalis*, *Fontonesia phillyreoides* և այլն (դեկ. կ.գ.թ. Ժ.Վարդանյան):

Հետազոտվել է «Զուլալ» օրգանական պրեպարատի ազդեցությունը գեղազարդ բազմամյա խոտաբույսեր *Primula cortusoides* L. և *P. denticulata* Smith. տեսակների աճի և զարգացման վրա: Հետազոտվող բույսերի կենսագործունեության բոլոր փուլերում բացահայտվել է աճի և զարգացման ակտիվացում՝ գեղազարդ հատկանիշների միաժամանակյա բարելավումով: Ուսումնասիրվել է բակտերիալ մեխանիզմի (ԲՄ)՝ որպես կենսախթանիչի ազդեցությունը որոշ դեղաբույսերի աճի և զարգացման վրա (դեկ. կ.գ.թ. Լ.Մարտիրոսյան):

Կոլեկցիոն ջերմատուն ներմուծվել է *Myrtaceae* ընտանիքից 13 տեսակ: Ավարտվել են *Bromeliaceae* ընտանիքին պատկանող *Puya mirabilis* (Mez) L. B. Sm. տեսակի ներմուծման

բազմամյա աշխատանքները, վերջինս, որպես էկզոտիկ, նոր հեռանկարային բուսատեսակ, առաջարկվում է օգտագործել Երևանի կանաչապատման ժամանակ (դեկ.՝ կ.գ.թ. Ն.Ալեքսանյան):

«Հայաստանի ֆլորա և բուսականություն» հոդամասի վայրի տանձենիների հավաքածուն համարվել է 3 նոր տեսակով (*Pyrus hyrcana* Fed. var. *yeghegisi*, *P. pseudosyriaca* Gladkova, *P. argyrophylla* Diapulis): Այժմ հավաքածուն ներառում է 19 տեսակ ներկայացնող բազմաթիվ նմուշներով (դեկ.՝ կ.գ.դ. Ժ.Հակոբյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Ինվազիվ տեսակների ազդեցությունը Հայաստանի տարբեր էկոհամակարգերում ածխածնի կուտակման վրա» թեմայի շրջանակում (դեկ.՝ կ.գ.թ. Ա.Ալեքսանյան) առանձնացվել են այն ինվազիվ և էքսպանսիվ տեսակները, որոնք առավել մեծ վտանգ են ներկայացնում բնական տարբեր էկոհամակարգերի համար, առանձնացվել են նաև առավել խոցված և խոցելի էկոհամակարգերը: Այս տվյալների համադրման արդյունքում ընտրվել են փորձահրապարակների համար առավել նպատակահարմար տարածքները: Ամփոփելով ծրագրի արդյունքները՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

- էկոհամակարգերում կուտակված օրգանական ածխածնի քանակը կախված է մի շարք գործոններից, այդ թվում՝ էկոհամակարգի կազմի մեջ մտնող տեսակների կենսաձևից և խտությունից, տեսակների թվից: Ուսումնասիրված տարածքներից կուտակված օրգանական ածխածնի առավել մեծ քանակով աչքի են ընկել անտառային էկոհամակարգերը: Ընդ որում, ինվազիվ տեսակներով հատվածներում կուտակված օրգանական ածխածնի քանակը գերազանցել է ստուգիչ հատվածի քանակին:

- էկոհամակարգերում կուտակված օրգանական ածխածնի քանակը համեմատելիս պարզվել է, որ ինչքան տաք և խոնավ են պայմանները, այնքան ավելի արագ են ընթանում կուտակման և դանդաղ՝ կայունացման գործընթացները, և հակառակը՝ ինչքան ավելի ցուրտ, բարձրադիր և ցածր խոնավություն է ունենում տվյալ էկոհամակարգը, այնքան ավելի դանդաղ են ընթանում օրգանական ածխածնի կուտակման գործընթացները, սակայն շատ ավելի արագ՝ կայունացման տեմպերը:

- Ուսումնասիրությունների արդյունքները համեմատելիս հստակ երևում է բնակլիմայական պայմանների զգալի ազդեցությունը միևնույն էկոհամակարգերում օրգանական ածխածնի կուտակման տեմպերի վրա: Ինչքան խոնավ են պայմանները, այնքան ավելի շատ օրգանական ածխածին է կուտակվում տվյալ էկոհամակարգում: Արդյունքում, օրինակ, միանման խոտաբուսային համակեցությունը ՀՀ տարբեր շրջաններում կուտակում է տարբեր քանակությամբ օրգանական ածխածին: Ինվազիվներով վարակված էկոհամակարգերի դեպքում գումարվում է նաև այն հանգամանքը, որ ինչքան նպաստավոր են տվյալ տարածաշրջանի բնակլիմայական պայմանները, այնքան ավելի ինտենսիվ աճի և զարգացման հնարավորություն ունեն ինվազիվները և, հետևաբար, էլ ավելի են մեծանում օրգանական ածխածնի կուտակման տեմպերը:

Այսպիսով, ծրագրի շրջանակում իրականացված արդյունքները փաստում են, որ Հայաստանի տարբեր մարզերի տարբեր էկոհամակարգերում ինվազիվ տեսակներն ունեն զգալի ազդեցություն օրգանական ածխածնի կուտակման տեմպերի և քանակի վրա:

«Քարաքոսերի բազմազանության հետազոտումը և պահպանությունը Հայաստանում» թեմայի շրջանակում (դեկ.՝ կ.գ.թ. Ա.Գասպարյան) վերանորոգվել է ինստիտուտի շուրջ 50 մ² մակերեսով տարածք՝ 5 սենյակ, որը ներառում է անհրաժեշտ սարքավորումներով ու նյութերով կահավորված լաբորատոր հատվածը, հերբարիումային դարակաշարերով կահավորված հերբարիումային հատվածը և աշխատանքային տարածքը: Իրականացվել են

մի շարք դաշտային այցեր ՀՀ Տավուշի, Արագածոտնի, Վայոց ձորի և այլ մարզեր քարաքոսերի և սնկերի հավաքի նպատակով: Հավաքվել են նմուշներ, որոնք նույնականացվել են ու պահեստավորվելու են հերբարիումային տարածքում: Հայ սնկաբանների միջազգային կոնգրեսի ներկայացուցիչ ամերիկահայ մասնագետների հետ իրականացվել են համատեղ դաշտային հետազոտություններ ՀՀ տարածքում:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Ներսեսյան Ա.Ա., Պապիկյան Ա.Ս., Հակոբյան Է., Վայրի պտղատուների հավաքի վերլուծություն Խաչիկ գյուղի օրինակով, Վայոց ձոր, Հայաստան, Ե., «Լիմուշ» հրատ., 2021, 55 էջ:

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

2. Գատրչյան Գ.Մ., Արալիագգիների (*Araliaceae*) ընտանիքի որոշ ներկայացուցիչների ներմուծման փորձ Երևանի բուսաբանական այգում, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», N 4, 2021, էջ 56-60:
3. Հովակիմյան Ժ.Հ., Ֆայվուշ Գ.Մ., Վարդանյան Ժ.Հ., Հայաստանի դենդրոֆլորայի որոշ հազվագյուտ ռելիկտային ներկայացուցիչների էկոլոգիական հարմարվողականությունը in situ և ex situ պայմաններում, Ե., «ՀՀ ԳԱԱ զեկույցներ», հտ. 121, N 4, 2021, էջ 321-332:
4. Զանջուղազյան Կ.Զ., Հազվագյուտ տեսակ Մատնունի ծիրանավորի (*Potentilla porphyrantha* Juz.) կենսաբանական բնութագիրը և աճման օրինաչափությունները ex-situ պայմաններում, Ե., «Կենսաբանական հանդես», N 3, 2021, էջ 85-90:
5. Վարդանյան Ժ.Հ., Գրիգորյան Ա.Ա., Սրնգենին (*Philadelphus* L.), որպես արժեքավոր թփատեսակների ելանյութ, Հայաստանի բուսաբանական այգիներն են ներմուծելու համար, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», N 73(1), 2021, էջ 74-81:
6. Վարդանյան Ժ.Հ., Մուրադյան Ն.Ն., Գրիգորյան Մ.Մ., Էտնո ու ձևավորումը որպես ծառերի և թփերի կենսակայունությունը և գեղազարությունը բարձրացնող ֆիտոտեխնիկական միջոցառում, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», N 73(3), 2021, էջ 72-79:
7. Айрапетян А. М., Мурадян А. Г., Новые данные к морфологиии пыльцы *Gladiolus kotschyanus* Boiss. (*Iridaceae*) флоры Армении, Ер., «ДНАН Армении», т. 121, N 4, 2021, с. 333-339.
8. Айрапетян А.М., Гукасян А.Г., Палинологические и кариологические особенности эндемичного вида *Cousinia fedorovii* Takht. (*Asteraceae*), включенного в Красную книгу растений Армении, Ер., «ДНАН Армении», т. 121, N 3, 2021, с. 245-250.
9. Айрапетян А.М., Сонян А.О., Морфологические особенности пыльцы некоторых представителей подсемейства *Salsoloideae* (*Chenopodiaceae*) флоры Южного Закавказья. I. Роды *Seidlitzia* Bunge и *Noaea* Moq., Ер., «Биолог. журн. Армении», 2 (73), 2021, с. 42-50.
10. Айрапетян А.М., Сонян А.О., Морфологические особенности пыльцы некоторых представителей подсемейства *Salsoloideae* (*Chenopodiaceae*) флоры Южного Закавказья. II. Роды *Girgensohnia* Bunge ex Fenzl и *Anabasis* L., Ер., «ДНАН Армении», т. 121, N 2, 2021, с. 148-154.
11. Варданян Ж.А., Мурадян Н.Н., Григорян А.А., Особенности создания дендроколлекций методом родовых комплексов в ботанических садах Армении и перспективы дальнейшего их обогащения, Ер., «ДНАН РА», N 4, 2021, с. 310-320.
12. Варданян Ж.А., Сравнительный анализ аборигенной и иноземной дендрофлор в Армении и перспективы их дальнейшего обогащения, Ер., «ДНАН РА», т. 121, N 3, 2021, с. 235-244.
13. Мурадян А.Г., К особенностям морфологии пыльцы редкого эндемичного вида *Gladiolus hajastanicus* Gabrielian (*Iridaceae*) флоры Армении, Ер., «Биолог. журн. Армении», 2 (73), 2021, с. 52-55.
14. Мурадян А.Г., Морфология пыльцы нового для Армении вида *Iris lazica* Albov (*Iridaceae*), Биологическое разнообразие природных и антропогенных ландшафтов: изучение и охрана, Сб. мат. II Межд. научно-практ. конф., Астрахань, 2021, с. 48-51.
15. Мурадян А.Г., Палиноморфология представителей рода *Crocus* L. *Iridaceae* флоры Армении, Ер., «Биолог. журн. Армении», 2021, 3(73), с. 55-61.
16. Овакимян Ж.О., Эколого-физиологические особенности некоторых редких видов гипсофильных растений Арагатской равнины, Ер., «ДНАН Армении», т. 121, N2, 2021, с. 155-162.

17. Овсепян Р.А., Степанян-Гандилян Н.П., Использование растений в народной медицине молокан Армении: предварительные данные, СПб., “Этнография”, N 2 (12), 2021, с. 98-117. DOI 10.31250/2618-8600-2021-2(12)-98-117, 39:581.6
18. Саргсян М.В., Оценка ксерофильных представителей дендрофлоры Армении как исходный материал для создания аридных дендропарков в засушливых районах республики, Мат. II всеросс. Конф. “Вклад особо охраняемых природных территорий в экологическую устойчивость регионов: современное состояние и перспективы, приуроченная к 15-летию создания заповедника «Кологривский лес»», Кологрив, 2021, с. 176-180.
19. Саргсян М.В., Семейство Мятликовых (*Poaceae*) в Армении и перспективы использования дикорастущих злаков в озеленении, Загреб, “Hrvatski znanstveni glasnik”, N 13 (13), 2021, с. 3-5.
20. Сонян А.О., Айрапетян А.М., Морфологические особенности пыльцы некоторых представителей подсемейства *Salsoloideae* (*Chenopodiaceae*) флоры Южного Закавказья. III. Роды *Petrosimonia* Bunge и *Halanthium* K. Koch, Ер., “Биолог. журн. Армении”, 3 (73), 2021, с. 37-45.
21. Abdel Rahman Mohammad Al-Tawaha, Hikmet Günal, ...Aleksanyan A., Abdel Razzaq Al-Tawaha et al. Soil fertility decline under climate change, In book: Sustainable Soil and Land Management and Climate Change, 2021, 19 p.
22. Akopian J., Ghukasyan A., Hovakimyan J., Ecological-phytocoenotic assessment and the issues of conservation of the Ararat Valley relic salt marshes, “Reports of NAS RA”, v. 121, N 3, 2021, pp. 302-309.
23. Biurrun I., Pielech R., Aleksanyan A., Fayvush G., Dengler J., Benchmarking plant diversity of Palaearctic grasslands and other open habitats, “Journal of vegetation science”, 32, e13050, 2021, pp. 1-21. doi.org/10.1111/jvs13050 (223 authors).
24. Faruk A., Papikyan A., Nersesyan A., Exploring effective conservation of charismatic flora: Orchids in Armenia as a case study. Diversity 2021, 13. <https://doi.org/10.3390/d13120624/>
25. Fayvush G., Aleksanyan A., Plant diversity in riverine wetlands of Armenia. Boccone, 2021, 29, pp. 77-89. doi.org/10.7320/Bocc29.077
26. Gabrielyan E., Khachatryan R., Aghababayan M., The flora of mount Dagnak as a part of CWR (Caucasus Wildlife Refuge), Boccone, 2021. 29: 91-101. <https://doi.org/10.7320/Bocc29.091>
27. Gasparyan A., Szczepkowski A., First report of the white rotting fungus *Sarcodontia crocea* in Armenia – Folia Forestalia Polonica, Series A – Forestry, 63 (1), 2021, pp. 65–67.
28. Hovakimyan J., Ghukasyan A., Fayvush G., Ecologo-physiological and caryological investigations of some rare halophyte plant species from Ararat Plain, “Reports of NAS RA”, v. 121, N 3, 2021, pp. 226-234.
29. Hovsepyan A., Avetisyan S., Martirosyan L., Aghadjanyan A., Koloyan H., Paronyan M., Hovhannesyan S., Bashilov A., The use bacterial melanin as an environmentally friendly growth stimulator of medicinal plants, International Scientific and Practical Conference “Biotechnology: Science and Practice, innovation, and business”, dedicated to the 10th Anniversary of the SPC “Armbiotechnology” NAS RA. Articles, Part II, Armenia, 2021, pp. 56-60.
30. Jinghui Zhang, François Gillet, ... Aleksanyan A., et al., Scale dependence of species–area relationships is widespread but generally weak in Palaearctic grasslands, “Journal of Vegetation Science”, v. 32(3), 2021. DOI: 10.1111/jvs.13044
31. Khachatryan L., Community structure and ecosystem services of trees of the first section of Circular Park in Yerevan, Armenia, “Electronic Journal of Natural Sciences of NAS RA”, 36(1), 2021, pp. 9-13.
32. Khachatryan L., The assessment of total suspended particle mitigation potential of *Platanus orientalis* and *Fraxinus excelsior* in Yerevan conditions, “Electronic Journal of Natural Sciences of NAS RA”, 37(2), 2021, pp. 9-12.
33. Koopman J., Alexanyan T., Alexanyan A., Fayvush G., Oganessian M., Vitek E., Wieclaw E., The genus *Carex* (*Cyperaceae*) in Armenia, “Phytotaxa: 494 (1), 2021, pp. 001-041. <https://doi.org/10.11646/phytotaxa.494.1.1>
34. Pipoyan S., Sadokov D., Gabrielyan I., Hambaryan L., Stepanyan I., Ostashov A., Ananian V., Invasive populations of Stone moroko *Pseudorasbora parva* in Lori lakes (Northern Armenia), International Symposium “Invasion of alien species in Holarctic. Borok-VI”, Russia, Borok – Uglich, 2021, p. 178.
35. Sargsyan R., Gasparyan A., Tadevosyan G. et al., Antimicrobial and antioxidant potentials of non-cytotoxic extracts of corticolous lichens sampled in Armenia, AMB Expr., 11:110, 2021, pp. 1-11.
36. Sonyan H., Hayrapetyan A., Statistical analysis of the basic morphological characteristics of pollen within the limits of genus *Salsola* l. sensu lato in South Transcaucasia, “Electronic Journal of Natural Sciences of NAS RA”, 1(36), 2021, pp. 4-8.

37. Haider S., Lembrechts J., ... Aleksanyan A., et al., Think globally, measure locally: The MIREN standardized protocol for monitoring species distributions along elevation gradients, "Authorea", 2021. DOI: 10.22541/au.162219027.79625324/v1
Հոդվածները հրատարակվել են "Takhtajania" ամսագրում, N 7, Ե., 2021, 104 էջ:
38. Джанджугазян К.З., Файвуш Г.М., Прогнозируемое изменение климата как угроза редкому виду *Potentilla porphyrantha* (Rosaceae) с. 39-46.
39. Маркрян Л.В., Нанагюлян С. Г., Конспект биоты макромицетов Шикаохского заповедника Армении, с. 47-76.
40. Мартиросян Л.Ю., Воздействие органического препарата "Зулал" на рост и развитие видов рода *Primula* L., с. 91-95.
41. Оганезова Г.Г., Морфологические составляющие адаптивного комплекса некоторых видов рода *Potentilla* s. l., с. 12-31.
42. Элбакян А.А., Новые данные по распространению некоторых видов семейства *Brassicaceae* флоры Армении, с. 36-38.
43. Akopian J., A new variety of *Pyrus hyrcana* Fed. (Rosaceae) from Vayots Dzor province of Armenia. pp. 4-11.
44. Asatryan M., Oganessian M., Revision of the types collection of Herbarium of the Institute of Botany, NAS RA, (ERE), 5. (Additions). pp. 32-35
45. Hayrapetyan A., Pollen of trees and shrubs of Armenia (Angiospermae. XI. *Rosaceae*. Genus *Pyrus*). pp. 77-90.

Պաշտպանվել են 1 դոկտորական, 2 թեկնածուական ատենախոսություններ:

ԿԵՆՌԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՂՐՈՒԿՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ Կ.Գ.Պ. Բ.Գաբրիելյան

Փոխտնօրեն և գիտքարտուղար՝ Կ.Գ.Թ. Հ.Խաչատրյան

Էլեկտրոնային փոստ՝ zoohec@sci.am, gabrielb@sci.am, hasoika@yahoo.com

Կայքէջ՝ www.sczhe@sci.am

Մասնագիտական խորհուրդ 036՝ «Կենդանաբանություն»

Նախագահ՝ Կ.Գ.Պ. Բ.Գաբրիելյան, գիտքարտուղար՝ Կ.Գ.Թ. Հ.Խաչատրյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Հայաստանի հյուսիսային շրջանների հատուկ պահպանվող տարածքների և Սևանա լճի ավազանի ֆաունայի և հիդրոբիոտոնների կենսաբազմազանության ուսումնասիրություն» թեմայի շրջանակում հետազոտություններ են կատարվել Տավուշի մարզի տարածքում:

«Սևան» ազգային պարկի Արտանիշ արգելոցի տարածքից գրանցվել է ողնաշարավոր կենդանիների 131 տեսակ, «Գետիկ արգելոցի» տարածքում՝ 102 տեսակ: Հանդիպել են ինչպես տարածված, այնպես էլ հազվագյուտ տեսակներ: Նկատվել են տեսակային կազմի և թվաքանակի զգալի փոփոխություններ (դեկ.՝ Կ.Գ.Թ. Մ.Ղասաբյան): Ուսումնասիրվել է Շիրակի և Սյունիքի մարզերի մի շարք հնագիտական հուշարձաններից պեղված վայրի և ընտանի կենդանատեսակների շուրջ 3500 ոսկրային մնացորդ: Կատարվել են Հայաստանի արջերի գանգաչափական աշխատանքներ (դեկ.՝ Կ.Գ.Պ. Ն.Մանասերյան):

Հայտնաբերվել է տարբեր կարգաբանական խմբերի պատկանող միջատների (Insecta) շուրջ 700 տեսակ, այդ թվում՝ կարծրաթևերի (Coleoptera) 600: Հայաստանի ֆաունայի համար նշվել են բզեզների 6 և հրաթիթեռների (Lepidoptera, Pyraloidea) 1 նոր տեսակներ: Բզեզների 14 տեսակ առաջին անգամ նկատվել է Տավուշի մարզից: Առաջին անգամ հայտնաբերվել է *Dendroleon pantherinum* մրջնառյուծը, որը խիստ հազվագյուտ տեսակ է իր ողջ արեալում և ենթակա է գրանցման ՀՀ Կարմիր գրքում: Գրանցվել են ինվազիվ *Halyomorpha halys*, *Nezara*

viridula և *Leptoglossus occidentalis* տեսակները, որոնք կարող են լուրջ վտանգ ներկայացնել նատիվ ֆաունային, գյուղա- և անտառտնտեսությանը: Ֆիտոֆագ-զալամակների (Diptera, Cecidomyiidae) 3 տեսակի համար արձանագրվել են նոր կերաբույսեր (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Քալաշյան):

Մակաբուծաֆաունայի տեսակային կազմում նշվել է կենդանիների 43 մակաբույծ տեսակ, այդ թվում՝ հելմինթների 32, նախակենդանիների 10, տզերի 6: Առաջին անգամ մարզի տարածքից հայտնաբերվել են *Helix buchi* Dubois de Montpereux, 1830 տեսակին պատկանող փափկամարմնի խեցիներ, ինչը վկայում է այդ տեսակի արեալի ընդարձակման մասին (ղեկ.՝ ակ. Ս.Սովսեյան):

Գրանցվել է տարբեր կարգաբանական խմբերին պատկանող սարդակերպերի (Arachnida) 81 տեսակ, այդ թվում՝ սարդերի ավելի քան 60, մակաբույծ տզերի 8, ֆիտոսեղի գիշատիչ տզերի 9, ինչպես նաև Հայաստանի ֆաունայի համար բույսերի վնասատու տզերի 4 նոր տեսակ (ղեկ.՝ կ.գ.դ. Կ.Դիլբարյան):

Հետազոտվել են Աղստև գետի և նրա վտակների սննդային շղթայի հիմնական բաղադրիչները: Գրանցվել է ձկների 13, մամուռների 5, ջրիմուռների 3 տեսակ: Ձկնատեսակների ամենափոքր բազմազանությունը գրանցվել է Հաղարծին դիտակետում, որտեղ նշվել է միայն կարմրախայտը *Salmo trutta fario*, Linnaeus 1758, իսկ ամենամեծ տեսակային բազմազանությունը՝ Իջևանից ներքև դիտակետում, որտեղից որսվել է ՀՀ Կարմիր գրքում որպես վտանգված տեսակ գրանցված ոսկեգույն ծականը *Sabanejewia aurata* De Filippi 1863: Բացահայտվել են Աղստև գետի և նրա Գետիկ ու Հաղարծին վտակների համար միօրիկների (Ephemeroptera), զարուհիկների (Plecoptera) և երկթևանիների (Diptera) նոր տեսակներ: Հայտնաբերված մակրոֆիտների ու զոոպլանկտոնային հանրային ներկայացուցիչները պատկանել են β - α -մեզոսապրոբ-պոլիսապրոբ ջրերին բնորոշ տեսակներին: Հետազոտված ժամանակահատվածում Աղստև գետում դոմինանտ են եղել կապտականաչ և դիատոմային ջրիմուռները: Իջևանից հետո հանդիպել է դինոֆիտային *Dynobryon cylindricum* հազվագյուտ տեսակը, որը բնորոշ է աղտոտված, բակտերիալ ֆլորայով հարուստ ջրերին և կարող է առաջացնել «ծաղկումներ»: Դիլիջան և Իջևան քաղաքներից հետո հոսքաջրերի ազդեցության հետևանքով լայն տարածում են ստացել *Oscillatoria* և *Anabaena* գեղերին պատկանող տեսակները:

Գնահատվել է ուսումնասիրված գետերի ջրի որակը՝ ըստ IBE բիոթիկ ինդեքսի և Վ.Ռոմանենկոյի՝ մակերևութային ջրերի էկոլոգասանիտարական դասակարգման. Աղստև գետը բնակավայրերից հետո աղտոտվել է կոմունալ-կենցաղային հոսքաջրերով, որի մասին են վկայում կոլի-ինդեքսի բարձր արժեքները (12000-80000 ԳԱՄ/լ): Իջևանից հետո այդ արժեքները որոշակի նվազել են (16000-24000 ԳԱՄ/լ): Աղտոտումը հատկապես մեծացել է Դիլիջանից հետո: Համեմատաբար մաքուր են եղել Գետիկ և Հաղարծին վտակները (ղեկ.՝ կ.գ.դ. Բ.Գաբրիելյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Սևանա լճում ծաղկող ցիանոբակտերիաների աճող խնդիրը. մեխանիզմների, շարժիչ ուժերի և նոր գործիքների հայտնաբերում լճի մոնիթորինգի և կառավարման համար» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Գևորգյան) հետազոտություններ են իրականացվել Փոքր և Մեծ Սևանների 80 մ, 43 մ և 30 մ խորջրյա հատվածներում: Ֆիտոպլանկտոնի որակական անալիզը ցույց է տվել, որ լճի ուսումնասիրված հատվածներում ֆիտոպլանկտոնային համակեցությունն օժտված է տեսակային մեծ բազմազանությամբ: Այդ ցուցանիշով առավել աչքի են ընկել դիատոմային (Bacillariophyta) և կանաչ (Chlorophyta) ջրիմուռները, որոնց հաջորդել են կապտականաչները կամ ցիանոբակտերիաները (Cyanophyta): Դիտվել է

աղտոտված և ճահճացող ջրամբարներին բնորոշ էվգլենային ջրիմուռների (Euglenophyta) տեսակային բազմազանության աճ: Ընդհանուր գծերով լճի երկու հատվածներում էլ ֆիտոպլանկտոնի որակական կառուցվածքը եղել է նույնը: Հետազոտված ժամանակահատվածում ֆիտոպլանկտոնային համակեցության քանակական դոմինանտ կոմպլեքսի ձևավորումն ընթացել է ապրիլին դիատոմային-կանաչ-էվգլենային, մայիսին և հունիսին կանաչ-էվգլենային, իսկ հուլիսին կապտա-կանաչ ջրիմուռների խմբային զուգակցման մեխանիզմներով: Դոմինանտ կոմպլեքսում դիտվող փոփոխությունները վկայում են լճի անկայուն էկոլոգիական վիճակի մասին: Էվգլենայինների մասնաբաժնի մեծացումը և դոմինանտ կոմպլեքսում դրանց ի հայտ գալը կարող է վկայել էվտրոֆացման գործընթացների մասին: Հարկ է նշել, որ ամռանը, ամենայն հավանականությամբ ջերմաստիճանային և եղանակային գործոններով, հիդրոդինամիկ գործընթացներով պայմանավորված, լճում ցիանոբակտերիաներով ջրի զանգվածային ծաղկում չի արձանագրվել, այն կրել է տեղային բնույթ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ ջրի ամառային առավելագույն ջերմաստիճանը, նախորդ 3 տարիների նույն ժամանակահատվածի համեմատ, ցածր է եղել: Վիզուալ դիտարկումները թույլ են տալիս ենթադրել ցիանոբակտերիալ զարգացման վրա լճում ալիքային գործընթացների անբարենպաստ ազդեցության մասին: Այնուամենայնիվ, ցիանոբակտերիաների պոտենցիալ տոքսիկ ներկայացուցիչներից *Aphanizomenon flos-aquae*-ն եղել է հաճախ հանդիպող տեսակներից՝ արձանագրվելով դիտակետերի բոլոր խորություններում: Միաժամանակ մեծացել է *Dolichospermum* ցեղի քանակությունը, որը, ի տարբերություն Աֆանիզոմենոնի, եղել է քանակապես թույլ զարգացած և հստակ բաշխվածություն, ըստ խորությունների, չի դրսևորել: Ինչպես վերը նշվեց, ակինետային զարգացման փորձարկումների արդյունքների հիման վրա, *Aphanizomenon*-ը ցուցաբերել է տոլերանտություն լույսի պակասի նկատմամբ, իսկ ֆիտոպլանկտոնային հետազոտությունները ցույց են տվել լճում *Aphanizomenon*-ի գերակայություն *Dolichospermum*-ի նկատմամբ (նախորդ 3 տարիներին՝ հակառակը), ինչը թույլ է տալիս ենթադրել ցիանոբակտերիալ զարգացման համար արևային ճառագայթման ոչ նպաստավոր պայմանների մասին:

«Հայաստանի մակերևութային ջրերի և հողերի մակաբույծ նախակենդանիները՝ հետազոտության, նկարագրման և մշտադիտարկման մոտեցումները» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Ս.Աղայան) իրականացվել է լաբորատորիայի ընդլայնում, վերանորոգում և վերազինում նոր սարքավորումներով՝ սառեցնող ցենտրիֆուգ մինչև 18 000 պտույտ/րոպե արագությամբ՝ նախատեսված 24 նմուշի համար, ՊՇՌ և ELISA սարքեր, անվտանգության պահարան, ՊՇՌ բոքս, -80C⁰ աստիճանի սառցարան, մագնիսական խառնիչ և արժեքավոր այլ սարքավորումներ և ծախսվող նյութեր: Կազմակերպվել է 10 գործուղում 5 մարզերում՝ Կոտայք, Սյունիք, Վայոց ձոր, Գեղարքունիք, Արարատ, ընդգրկվել է 4 գետ ու 1 լիճ: Մակաբույծ նախակենդանիներ հայտնաբերելու համար յուրաքանչյուր թիրախային կետից վերցվել են ջրի նմուշներ 10 լիտր ծավալով: Զուգահեռաբար կատարվել է նաև հողի նմուշների հավաք և ուսումնասիրություն աղիքային պարազիտիկ նախակենդանիների առկայությունը պարզելու համար: Այդ նպատակով մերձափնյա տարածքից՝ փորձավայրից, յուրաքանչյուրից վերցվել է 200 գ քաշով 1 համակցված նմուշ, որը բաղկացած է 10-ական նմուշից՝ յուրաքանչյուրը 20 գ քաշով:

«Հայաստանում *Toxoplasma gondii*-ի տարածվածության և գենետիկական բազմազանության ուսումնասիրություն և որոշ քարաքոսերի հակատոքսոպլազմային ակտիվության որոշում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Հ.Գևորգյան) մի շարք մարզերի (Արարատ, Շիրակ, Կոտայք, Տավուշ, Վայոց ձոր, Լոռի, Սյունիք) ֆերմաներից և սպանդանոցներից կատարվել է կենսաբանական նյութի (արյուն, մկաններ) հավաք:

Ընդհանուր առմամբ նմուշառվել է 1156 օրինակ, այդ թվում՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիներից, խոզերից, շներից և աղվեսից: Բոլոր նմուշները համարակալվել են, դրանց հիման վրա ստեղծվել է համակարգչային տվյալների բազա, որը հետզհետե կհամալրվի նոր տվյալներով: Հավաքագրվել են տվյալներ կենդանու տեսակի, տարիքի, նմուշառման վայրի, լանդշաֆտային գոտու, սեզոնի, կենսաբանական նյութի բնույթի մասին: Գիտարշավների ընթացքում կատարվել է հիմնական մայրուղիների, հարձանապարհային հատվածների շրջագայքում հայտնաբերված սատկած վայրի կաթնասունների արյան և մկանային հյուսվածքի նմուշառում: Զուգահեռաբար կատարվել է կատուների կղանքի հավաք և հետազոտում Շչերբովիչի ձևափոխված եղանակով: Ազատ ապրող/թափառող և տնային կատուների կղանքի 18 նմուշներից 10-ում (55.56%) հայտնաբերվել են տարբեր դասերին պատկանող մակաբույծներ՝ *Cystoisospora felis* և *C. rivolta* (27.78%), *Giardia intestinalis* (5.56%), *Hydatigera taeniaeformis* (5.56%), *Toxocara cati* (16.67%), *Toxascaris leonina* (5.56%), *Trichuris vulpis* (5.56%): *Toxoplasma gondii* օոցիստներ հայտնաբերվել են հետազոտված կղանքի 3 նմուշում (16.67%): Կատարվել է ծրագրով նախատեսված մոլեկուլային գենետիկական մեթոդների հարմարեցում տեղական լաբորատորիայի պայմաններին, պլանով նախատեսված լաբորատոր նյութերի և սարքավորումների գնում:

«Հայաստանի սոճուտների վնասատու միջատների ֆաունայի արդի վիճակը. տեսակային կազմը, վնասակարության գնահատումը և պայքարի հնարավոր եղանակները» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Կարապյան) սոճիների չորացման և թառամելու պատճառները պարզելու համար կիրառվել է միջդիսցիպլինար մոտեցում, կատարվել են համակողմանի հետազոտություններ (միջատաբանական, սնկաբանական, ֆիտոպաթոգեն)՝ օգտագործելով ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից, այդ թվում՝ Հայաստանում հեռահար զոնդավորման և մոնիթորինգի մեթոդներ, որոնք հնարավորություն են ընձեռում ընդլայնել հետազոտությունների մեթոդաբանությունը և ստանալ ավելի ճշգրիտ տվյալներ թիրախային օբյեկտի խնդիրների վերհանման ու դրանց լուծման ուղիների ձևակերպման համար: Հետազոտվել են Տավուշի, Լոռու, Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում սոճու չորացող ու չորացած մասերը: Հարավային՝ Վայոց ձորի և Սյունիքի մարզերում առանձնացվել են հաջորդ տարվա աշխատանքների համար նախատեսված հետազոտական տեղամասեր: Սոճու ծառերից և դրանց բնակմիջավայրերից հավաքված հետազոտական նյութն ամբողջությամբ անցել է նախնական ուսումնասիրությունների փուլը, հայտնաբերվել են սոճիների հիվանդություններ առաջացնող որոշ ֆիտոպաթոգեն սնկատեսակներ և նեմատոդներ, պարզվել է սոճու որոշ վնասատու միջատների տեսակային կազմը և տարածվածությունը: Հավաքված վնասատու միջատների նմուշները ֆիքսվել են և պահվում են հետագա կարիոլոգիական և մոլեկուլային հետազոտությունների համար:

«Հայաստանի ջրավազանային կառավարման տարածքների էկոլոգիական վիճակի բազմաբաղադրիչ գնահատման մեթոդաբանության մշակում» թեմայի շրջանակում (ղեկ.՝ կ.գ.թ. Մ.Դավթյան) Հայաստանի ջրավազանային կառավարման տարածքների էկոլոգիական վիճակի բազմաբաղադրիչ գնահատման մեթոդաբանության մշակման նպատակով ուսումնասիրվել է ԵՄ երկրների փորձը, վեր են հանվել գիտելիքների բացերը, հստակեցվել են ԵՄ Զրի շրջանակային դիրեկտիվի պահանջներին համապատասխանող այն ջրակենսաբանական, ջրաքիմիական և ջրաձևաբանական ցուցանիշները, որոնց համադրումն անհրաժեշտ է բազմաբաղադրիչ գնահատման մեթոդաբանության մշակման համար: Հիմնվել և պարբերաբար լրացվել է ուսումնասիրվող գետավազանների աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (USZ) տվյալների շտեմարանը, որը թույլ է տալիս կատարել ստացված արդյունքների տարածական վերլուծություն և քարտեզագրում: Մշակվել են ԵՄ տիեզերական Copernicus ծրագրի շրջանակում

թողարկված Sentinel-2 արբանյակի լուսանկարները, ստացվել են Ադստն և Հրազդան գետավազանների 10մ լուծաչափի հողօգտագործման և հողածածկույթի (LULC) քարտեզները, որոնց հիման վրա մշակվել է դաշտային աշխատանքների դիտացանցը: Դաշտային աշխատանքների ընթացքում ուսումնասիրվել են Ադստն և Հրազդան գետերի ավազանների հարյուրից ավելի ջրակենսաբանական, ջրաքիմիական և ջրաձևաբանական ցուցանիշները: Հավաքված նյութի մի մասը ենթարկվել է լաբորատոր լիարժեք մշակման, բացահայտվել են այդ գետերի ավազանների հնարավոր բոլոր էտալոնային տարածքները: Բացահայտվել է նաև, որ այս գետավազաններում իրական էտալոնային տարածքները գետի մի շարք տիպերի համար բացակայել են: Ջրակենսաբանական հետազոտությունների արդյունքում մակրոբենթոսի և ձկների շուրջ 500 նմուշ ուղարկվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետություն և Վրաստան՝ ԴՆԹ-շտրիխոդավորման և կենսաբազմազանության ցուցանիշների հստակեցման համար: Աշխատանքները թույլ են տվել ուսումնասիրվող գետավազանների և Հայաստանի համար հայտարարագրել հատակային մակրո-անողնաշարների մի շարք նոր տեսակներ:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Vaseashta A., Gevorgyan G., Kavaz D., Ivanov O., Jawaid M., Vasović D., Exposome, biomonitoring, assessment and data analytics to quantify universal water quality, In: Water safety, security and sustainability. Advanced sciences and technologies for security applications, Springer, 2021, pp. 67-114. DOI: https://doi.org/10.1007/978-3-030-76008-3_4, ISBN 978-3-030-76008-3 (chapter in a book indexed in Scopus).

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

2. Բադալյան Մ.Ս., Սարգսյան Վ.Ս., Ղալաչյան Մ.Մ., Կունտներ Վ.Ի., Հայնշ Ս.Կ., Եղիազարյան Ա., Մանուկյան Ս, Զարիկյան Ն.Հ., Նահապետյան Ս.Գ., Կարմիր Բլուրի նորահայտ ախտո-քարավանատունը, «Մեծամորյան ընթերցումներ-2» միջազգ. II գիտաժող. նյութ. ժող., Ե., 2021, էջ 16-18:
3. Հարությունյան Ռ.Գ., Մարջանյան Մ.Ա., Նոր տվյալներ Երևան քաղաքի մի քանի գեղազարդ թփատեսակների վնասատու թեփուկաթևների (Insecta, Lepidoptera) վերաբերյալ, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», հտ. 73, N 3, 2021, էջ 27-31:
4. Թերլեմեզյան Հ.Լ., Չապանյան Ե.Ն., Սարգսյան Մ.Ա., Ոսկետուտի պտղաբերության, հարսնյակների կշռի և թրթուրների քանակության փուլային փոփոխությունները զանգվածային բռնկման շրջանում, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», հտ. LXXII, N 2, 2021, էջ 19-25:
5. Կոբեյան Հ.Հ., Ղուկասյան Է.Խ., Խոսրովյան Ա.Ս., Հրազդան գետի ներկա էկոլոգիական վիճակի գնահատականը, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», հտ. LXXIII, N 1, 2021, էջ 6-12: <https://arar.sci.am/dlibra/publication/293448/edition/269409>
6. Չապանյան Ե.Ն., Անտառային դարչնագույն հողերի կատալազի ակտիվությունը *Bacillus thuringiensis* տեսակի բակտերիական միջատասպաններով ցողումից հետո, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», հտ. LXXIII, N 1, 2021, էջ 26-31:
7. Ստեփանյան Լ.Գ., Կոբեյան Հ.Հ., Համբարյան Լ.Ռ., Ղուկասյան Է.Խ., Ախպարա ջրամբարի արդի էկոլոգիական վիճակի գնահատում, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», հտ. LXXIII, N 2, 2021, էջ 11-18: [//csiam.sci.am/am/996ZOAFD](https://csiam.sci.am/am/996ZOAFD)
8. Акопян С.А., Джендреджян К.Г., Геворгян Г.А., Мелконян Г.Ф., Оценка влияния малых гидроэлектростанций на экосистемы горных рек (на примере реки Арпа, Армения), Ер., “Биол. журн. Армении”, N 4 (73), 2021, с. 61-69.
9. Амбарцумян К.С., Степанян И.Э., Пипоян С.Х., Малоазиатский тритон *OMMATOTRITON OPHRYTICUS* в Армении – разведение и развитие в неволе, выпуск молодняка в ненарушенные естественные места обитания, Ер., “Биол. журн. Армении”, N 3 (73), 2021, с. 13-17. <https://arar.sci.am/dlibra/publication/307865>.
10. Ананян В.Ю., Калоян Г.А., Гёнджян А.А., Сипуха *Tyto alba* – новый вид в авифауне Армении, СПб., “Рус. орнитол. журн.”, 2021, с. 30 (2057), 1718-1727.

11. Габриелян Б.К., Геворкян С.А., Мкртчян Ф.А., Об оценке уязвимости биоразнообразия и биосложности озера Севан, Мат. межд. симп., Сер. Инженерная экология, вып. XI., М., 2021, с. 201-207.
12. Григорян Н.М., Оганисян В.С., Галстян А.Г., Балаян К.В., К фауне и экологии минирующих мух рода *Phytomyza* (Diptera: Agromyzidae) Нагорного Карабаха, Самара, "Самарский научн. вест.", т. 10, N 2, 2021, с. 24-30, DOI 10.17816/snv2021102103.
13. Дилбарян К.П., Степанян Н.Т., Пищевые связи акарифагов в экосистеме плодового сада, Осло, Norwegian Journal of development of the International Science VOL.2, N 59/2021, P. 3-5. Oslo. Norway, ISSN 3453-9875. DOI: <http://www.njd-iscience.com>.
14. Дилбарян К.П., Казарян Л.А., Степанян И.Э., Акарицидное действие комплексных экстрактов различных растений (Oleaceae, Verbenaceae, Simaroubaceae, Euphorbiaceae) на паутиного клеща (*Tetranychus urticae*), Мат. XLVI межд. научно-практ. конф. "Химия, физика, биология, математика: теоретические и прикладные исследования", М., "Интернаука", N 3(35), 2021, с. 41-46, ISSN 2541-9846.
15. Дилбарян К.П., Казарян Л.А., Степанян И.Э., Хачатрян А.Г., Инвазионные вредители, обнаруженные в некоторых теплицах города Еревана, М., "Рос. журн. биологич. инвазий", N 3, 2021, с. 7- 14. DOI: 10.35885/1996-1499-2021-14-3-07.
16. Калашян М.Ю., Новый вид рода *Endelus* Deyrolle, 1864 (Coleoptera: Buprestidae) из Индии с заметками по номенклатуре рода, Ростов-на-Дону, "Кавказский энтомологический бюллетень", т. 17, N 1, 2021, с. 223-226. DOI: 10.23885/181433262021171-223226
17. Калашян М.Ю., Новый вид златок рода *Cantonius* Théry, 1929 (Coleoptera, Buprestidae) из Китая с номенклатурными и синонимическими заметками к родам *Cantonius* и *Cantoniellus* Kalashian, 2004, Спб., "Энтомологическое обозрение", т. 100, N 1, 2021, с. 146-152. DOI: 10.31857/S0367144521010093.
18. Калашян М.Ю., Креджан Т.Л., Караган Г.А., Первая находка соснового семенного клопа *Leptoglossus occidentalis* Heid. (Heteroptera, Coreidae) в Армении, М., "Рос. журн. биологич. инвазий", N 2, 2021, с. 52-55.
19. Кобелян Р.О., Мкртчян Ж.Г., Эколого-микробиологическое исследование реки Раздан, Мат. IV всерос. конф. "Разнообразие почв и биоты северной и центральной Азии", Улан-Удэ, 2021, с. 215-217, <http://igeb.ru/images/biodiversity/materiali.pdf>.
20. Крылов А.В., Айрапетян А.О., Косолапов Д.Б., Сахарова Е.Г., Косолапова Н.Г., Сабитова Р.З., Малин М.И., Малина И.П., Герасимов Ю.В., Овсепян А.А., Гамбарян Л.Р., Мамян А.С., Болотов С.Э., Цветков А.И., Акопян С.А., Поддубный С.А., Габриелян Б.К., Особенности изменений структуры планктона пелагиали горного озера при увеличении плотности рыб летом и осенью, М., "Зоологич. журн.", 100, 2021, с. 147-158. DOI:10.31857/S0044513420120053, ISBN: 0044-5134.
21. Манасерян Н., Ископаемая фауна бассейна озера Севан, Книга - Археологическое наследие страны Удури-Этиуни", Ер., 2021, с. 87-94, ISBN 9789939886053.
22. Манасерян Н., Баян Л., Авифауна древней и средневековой Армении, Ер., ДНАН Армении, т. 121, 2, 2021, с. 163-166.
23. Манасерян Н., Баян Л., Влияние животных на экономические, религиозные и культурные аспекты жизни урартов, Ширакский центр арменоведческих исследований НАН РА, Гюмри, N 2 (24), 2021, с. 44-50.
24. Оганисян Р.Л., Рухкян М.Я., Исследование гельминтофауны рыб реки Раздан в окрестностях г. Еревана, Ер., "Биол. журн. Армении", т. 73, N 2, 2021, с. 6-10. <https://arar.sci.am/dlibra/publication/301079/edition/276158/content> ISSN 0366-5119
25. Степанян Л.Г., Гукасян Э.Х., Обогащение биогенными веществами и его влияние на сообщество фитопланктона р. Раздан на территории г. Ереван, Республика Армения, Трансформация экосистем, Череповец, 4 (3), 2021, с. 77-86.
26. Степанян И.Э., Караган Г.А., Оценка инсектицидных свойств комплексных растительных экстрактов некоторых растений, произрастающих в Армении, как агентов регуляции численности личинок колорадского жука, Мат. XLVI межд. научно-практ. конф. "Химия, физика, биология, математика: теоретические и прикладные исследования", М., "Интернаука" N 3(35), 2021, с. 25-32. ISSN 2541-9846.
27. Хуланхов О.О., Филиппова Н.В., Айрапетян А.О., Болотов С.Э., Сравнительная гидробиологическая характеристика зоопланктона поймы Нижнего Иртыша и заболоченных водоемов надпойменной террасы "Западно-Сибирские торфяники и цикл углерода: прошлое и настоящее", Мат. VI Межд. полевого симпозиума, Томск, изд. Томского ун-та, 2021, с. 95-97.

28. Церетян К., Манасерян Н., Мкртчян, Санамян О., Симонян А., Основные результаты раскопок в центральной цитадели городища Лчашен, Книга - Археологическое наследие страны Удур-Этиуни, Ер., 2021, с. 168-184, ISBN 9789939886053.
29. Asatryan V., Dallakyan M., The baseline rapid biological assessment of the ecological status of the Debed River system (Armenia), "Electronic Journal of Natural Sciences", 1(36), 2021, pp. 14-25.
30. Asatryan V., Dallakyan M., (2021), Principles to develop a simplified multimetric index for the assessment of the ecological status of Armenian rivers on example of the Arpa River system, Environmental Monitoring and Assessment 193-195. IF: 2,513 (2020); DOI: 10.1007/s10661-021-08994-3.
31. Balyan L., Ghasabyan M., et al., Evaluating the efficacy of non-traditional count methods in Armenia: A case study in Quail, "Electronic Journal of Natural Sciences", v. 37, issue 2, 2021, pp. 32-36.
32. Dallakyan M., Asatryan V., Studying macrozoobenthos community and assessing the ecological status of the Tandzut River for improving hydrobiological monitoring system in Armenia. Ecosystem Transformation 4 (4), 2021, pp. 1-8. <https://doi.org/10.23859/estr-210522>.
33. Dilbaryan K., Ghazaryan L., Stepanyan I., Khachatryan A., Invasive pests revealed in some greenhouses of Yerevan, "Russian Journal of Biological Invasions", v. 12 (4), pp. 341-347. DOI: 10.1134/S2075111721040032
34. Doan K., Niedziałkowska M., Manaseryan N., et al., Phylogenetics and phylogeography of red deer mtDNA lineages during the last 50 000 years in Eurasia, "Zoological Journal of the Linnean Society", XX, 2021, pp. 1-26.
Կոմպլեքս հավանականային ընթացքների շրջանակներում, որոնք բավարարում են Լանժմեն-Շրյոդինգերի տիպի ստոխաստիկ դիֆերենցիալ հավասարմանը, ուսումնասիրվել է պատահական շրջակայքում ընկղմված երկու կապված քվանտային տատանակների (օսցիլատորների) խնդիրը, որը քիմիապես փոխարկվող երկբաղադրիչ գազը նկարագրող հարմար մոդել է: Նշված մոդելի շրջանակում կառուցվել է քվանտային թերմոդինամիկական

ելնելով քվանտային մեխանիկայի հիմնական սկզբունքներից: Առաջին անգամ ցույց է տրվել, որ քվանտային համակարգը, փոխազդելով իր պատահական շրջակայքի հետ, ստեղծում է այսպես կոչված փոքր քվանտացված շրջակայք (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Գևորգյան):

Տարբեր ջերմաստիճաններում և ծծումբի երկօքսիդի տարբեր քանակների առկայության դեպքում մեթանի օքսիդացման ռեակցիայի հաշվարկային հետազոտությամբ հաստատվել է, որ գործընթացում կարևոր դերակատարություն ունի ծծումբի երկօքսիդի ռեակցիան շղթան կրող պերօքսիդադիկալների հետ:

Քվանտոքիմիական հաշվարկային եղանակով հետազոտվել են էթիլօքսի ռադիկալի (C_2H_5O) փոխարկման հնարավոր ուղիների պոտենցիալ մակերևույթները և էներգիական վիճակները:

Սառը բոցերի տիրույթում պրոպան-բութան խառնուրդների օքսիդացման ռեակցիայի հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ ռեակցիայի առավելագույն արագության և սառը բոցի ինտենսիվության արժեքներն ըստ բաղադրության գտնվում են ադիտիվության տիրույթում, իսկ ռեակցիայի հապաղման ժամանակամիջոցների նվազումը գերազանցում է ադիտիվության տիրույթի արժեքը 8-10%-ով (դեկ.՝ ք.գ.դ. Պ.Ղուկասյան):

Պրոպանի օքսիդացման ռեակցիայի՝ ZnO/SiO_2 կատալիզատորի ստացման նպատակով SiO_2 -ի մակերևույթը մոդիֆիկացվել է ZnO -ով՝ օգտագործելով զոլ-ժել (ԶԳ) և քիմիական տրանսպորտային ռեակցիայի (PSN) եղանակները: Հետազոտելով մակերևույթների միկրո-կառուցվածքների առանձնահատկությունները՝ հաստատվել է, որ PSN եղանակի դեպքում մակերևույթն ավելի համասեռ է, իսկ վակուումաջերմային մշակման արդյունքում ձեռք է բերում պարամագնիսական հատկություն, ինչը հանգեցնում է կատալիզային ակտիվության մեծացման:

Մոդելավորվել է մակերևութային ակտիվ կենտրոններում ջուր + քլորի բացասական իոնի առկայության պայմաններում ջրածնի և պրոպանի ցածրջերմաստիճանային օքսիդացման ընթացքում առաջացած թույլ հարվածային ալիքների դինամիկան (դեկ.՝ ք.գ.դ. Պ.Ղուկասյան):

Էլեկտրաթերմոգրաֆիական հետազոտություններով բացահայտվել է, որ քիչ քանակությամբ (1%) ջրածնի հավելումը մեթանին կամ կարճատև (0.05 վրկ) նախնական շփումը NiO -ի հետ կտրուկ արագացրել է մեթանով NiO -ի վերականգնման ռեակցիան, որն ընթանում է զգալի ինդուկցիոն տիրույթով: Փորձանմուշների մակերևույթի մանրադիտակային (SEM/EDS) հետազոտությունների համաձայն նկարագրված երևույթը կապված է NiO -ի հետ ջրածնի շփման ժամանակ արագ և մեծ քանակով նիկելի սաղմերի առաջացման հետ, ինչի շնորհիվ մեթանով վերականգնումն այլևս չի պահանջում որոշակի ինդուկցիոն տիրույթ՝ սաղմերի բավարար կոնցենտրացիա ապահովելու համար: NiO -ի մակերևույթին հենց այդ արագ ձևավորված նիկելի սաղմերն էլ ապահովում են մեթանի արագ քայքայումը և դրանով պայմանավորված՝ վերականգնման ռեակցիայի արագ ընթացքը: Անկախ փորձերով ցույց է տրվել, որ մեթանի քայքայումը նոր վերականգնված մետաղական նիկելի մակերևույթի վրա ընթանում է մոտ 2-3 կարգով ավելի արագ, քան NiO -ի վրա:

Արագագործ էլեկտրաթերմոգրաֆիական HS SET-3 սարքավորման միջոցով ուսումնասիրվել են ջրածնով և մեթանով նիկելի օքսիդի վերականգնման պրոցեսների կինետիկական օրինաչափությունները գծային տաքացման պայմաններում ($V_m=1 \div 1000$ K/վ) և ջերմաստիճանային 800-1100°C տիրույթում: Ցույց է տրվել, որ փոխարկման աստիճանի կախվածությունը ժամանակից ունի տոպոքիմիական պրոցեսներին բնորոշ S-աձև տեսք: Բացահայտվել է, որ վերականգնման պրոցեսը կարող է ընթանալ ինչպես տաքացման փուլում (ոչ իզոթերմ պայմաններ), այնպես էլ առավելագույն ջերմաստիճանի հաստատումից հետո (իզոթերմ պայմաններ):

Ուսումնասիրվել է լուծույթների այրմամբ սինթեզի (ԼԱՍ) եղանակով պղինձ-նիկել մանրահատիկ համաձուլվածքների ստացման հնարավորությունը՝ որպես ելանյութեր օգտագործելով պղնձի օքսիդային թափոնից (հիմնականում Cu_2O) ստացված պղնձի նիտրատ, նիկելի նիտրատ և կիտրոնաթթու (որպես վերականգնիչ): Ռեակցիայի բավարար կալորիականություն ապահովելու համար օգտագործվել է նաև ամոնիումի նիտրատ: Որոշվել են $\text{Cu}/\text{Ni}=2/1$ և $\text{Cu}/\text{Ni}=1/1$ մոլային հարաբերությամբ համաձուլվածքների ստացման օպտիմալ պայմանները (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Խառատյան):

Առաջին անգամ որոշվել են հիդրիդային ցիկլում տիտանի հիմքով MAX-ֆազերի ընտանիքի ամենաշատ ուսումնասիրված և հեռանկարային համարվող հեքսագոնալ Ti_3AlC_2 -ի ձևավորման օպտիմալ պարամետրերը՝ տաքացման ջերմաստիճանը 1000°C , տևողությունը 6 ժամ (հիմնական ֆազը 80%) և 1300°C , տևողությունը 1 ժամ (հիմնական ֆազը 89%): Առաջին անգամ MAX-ֆազերի սինթեզի համար որպես ելանյութ օգտագործվել է $\text{TiC}_{0.67}\text{H}_{0.31-0.39}$ ՆԿԽ բյուրեղային կառուցվածքով կարբոհիդրիդը:

Ազոտ պարունակող MAX-ֆազերի սինթեզի համար առաջին անգամ օգտագործվել են $\text{TiN}_{0.15-0.19}\text{H}_{1.5}$ բաղադրությամբ հիդրիդոնիտրիդներ՝ սինթեզված ԲԻՍ և Ti_2Al ալյումինիդը՝ սինթեզված ՀՅ եղանակներով: Որոշվել են միաֆազ Ti_2AlN -ի ստացման օպտիմալ պարամետրերը (տաքացման ջերմաստիճանը 1050°C , տևողությունը 1 ժամ): Առաջին անգամ ԲԻՍ եղանակով սինթեզվել է Ti_2AlN MAX-ֆազը Ti_2Al ալյումինիդի ազոտում այրման ռեժիմում և ցույց է տրվել, որ MAX-ֆազերի ձևավորումը ՀՅ-ում ընթանում է պինդֆազային մեխանիզմով (ղեկ.՝ տ.գ.դ. Ս.Դուլիսյան):

Դրուդեի տեսության սահմաններում դուրս են բերվել անալիտիկ արտահայտություններ, որոնք նկարագրում են մետաղական ատոմներով լեգիրացած մետաղօքսիդային կիսահաղորդիչների դիէլեկտրիկական թափանցելիություններն ինֆրակարմիր տիրույթում: Մասնավորապես մոտ և միջինալիքային ինֆրակարմիր տիրույթներում կիրառելի անալիտիկ արտահայտությունները գալիումով լեգիրացված ցինկի օքսիդի ($\text{Ga}:\text{ZnO}$) կոմպլեքս դիէլեկտրիկական թափանցելիության իրական և կեղծ մասերի համար թույլ են տվել որոշել վերջիններիս արժեքները՝ կախված լեգիրացված մասնիկների կոնցենտրացիայից, շարժունակությունից և էլեկտրոնի արդյունաբար զանգվածից: Դիէլեկտրիկական թափանցելիության ստացված արժեքներն օգտագործվել են քվադրատատիկ մոտավորության սահմաններում և վերջավոր տարրերի մեթոդի վրա հիմնված համակարգչային մոդելավորման միջոցով $\text{Ga}:\text{ZnO}$ -ից 25 նմ շառավղով գնդաձև նանոմասնիկների պլազմոնային հատկությունների ուսումնասիրման համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Մ.Երանոսյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Անցումային մետաղների (մոլիբդեն, վոլֆրամ) կարբիդների նանոմասնիկների մասնակի օքսիդացումից ստացվել են այդ մետաղների նանոօքսիդներ, որոնք ցուցաբերել են բարձր կատալիտիկ ակտիվություն ծծումբօրգանական միացությունների օքսիդացման ռեակցիաներում: Այդպիսի կատալիզատորները հեռանկարային են դիզելային վառելիքի ծծմբազրկման համար (ղեկ.՝ ք.գ.թ. Ռ.Մնացականյան):

Ուսումնասիրվել են պրոպանի գազաֆազ օքսիդացման հաշվարկման համար գրականության մեջ հայտնի մոդելների կիրառելիության շրջանակները: Ցույց է տրվել, որ փոփոխված NUIGMech1.1 մոդելի հիման վրա ստացված հաշվարկային տվյալները համապատասխանում են փորձին (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Արսենտև):

Բամբուկանման միկրոկառուցվածքով և տրված ֆիզիկամեխանիկական հատկություններով բորի և սիլիցիումի կարբիդների ստացման և կարբիդների միկրոկառուցվածքային էվոլյուցիայի հնարավորությունները բացահայտելու նպատակով հետազոտվել են այրման

օրինաչափությունները B_2O_3 -Mg-C-MgB₁₂ և Si-C-պոլիտետրաֆտորէթիլեն (C_2F_4) ելային համակարգերում: $Si+0.9C+0.05C_2F_4$ խառնուրդի այրմամբ ստացվել է մաքուր բետասիլիցիումի կարբիդի մինչև 200 նմ չափսերով փոշի խորանարդաձև մասնիկներով: $80\%(B_2O_3+3Mg+0.5C)+20\%(MgB_{12}+3C)$ ելային բովախառնուրդի այրման վերջնանյութը թթվային մշակումից հետո ձևավորել է միաֆազ բորի կարբիդ, իսկ միկրոկառուցվածքային անալիզով հաստատվել է, որ արգասիքը բավականին համասեռ է. հատիկների առավելագույն չափը 300 նմ է: Փորձերով ընտրված օպտիմալ պայմաններում սինթեզվել են 50-ական գրամ բորի և սիլիցիումի կարբիդների փոշիներ՝ կայծապլազմային եղանակով հետագա կոմպակտավորման նպատակով:

Լուծույթների այրմամբ սինթեզի (L.U.) եղանակով սինթեզվել է ինչպես միաֆազ մանրահատիկ $MnFeCoNiCu$ բարձր էնտրոպիական համաձուլվածք (ԲԷՀ), այնպես էլ միաֆազ $(MnFeCoNiCu)O$ բարձր էնտրոպիական օքսիդ՝ որպես օրգանական վերականգնիչներ օգտագործելով ալանին, գլիցին, կիտրոնաթթու, իսկ ռեակցիայի ջերմային էֆեկտը կարգավորելու նպատակով՝ ամոնիումի նիտրատ: Բացահայտվել է, որ որպես վերականգնիչ գլիցին օգտագործելու դեպքում վերջնանյութն ավելի մանրահատիկ է՝ պայմանավորված այրման ցածր ջերմաստիճանով: Ելային խառնուրդում, վերականգնիչի քանակից կախված, դիտվել են այրման ներքին և վերին սահմաններ: Այրման ամբողջ տիրույթում ստացված պինդ վերջնանյութերը ցուցաբերել են լավ արտահայտված մագնիսական հատկություններ:

Արագագործ ջերմաստիճանային սկաների (HSTS) միջոցով ուսումնասիրվել է չակտիվացված և մեխանաակտիվացված քառյակ ($Al+Co+Ni+Fe$) և հնգյակ ($Al+Co+Ni+Fe+Cr$) խառնուրդներում փոխազդեցության մեխանիզմը տաքացման բարձր արագության պայմաններում ($V_{տ}=100-2600$ °C/ր; $T_{max}=1300$ °C): Հետազոտված բոլոր խառնուրդներում հաստատվել է միափուլ էկզոթերմ փոխազդեցության առկայությունը: Տաքացման արագության ազդեցությունը չակտիվացված և ակտիվացված քառյակ և հնգյակ խառնուրդների փոխազդեցության վարքի վրա բացահայտել է մաքուր բարձր-էնտրոպիական համաձուլվածքների ստացման պայմաններ (դեկ.՝ ք.գ.թ. Ս.Այդինյան):

Ուսումնասիրվել է մեխանաուլտրաձայնային ակտիվացման ազդեցությունը Ni-Al խառնուրդում փոխազդեցության մեխանիզմի վրա տաքացման բարձր արագության պայմաններում: Ցույց է տրվել, որ ակտիվացված խառնուրդներում դիտվել է Ni_3Al և $NiAl$ ֆազերի հաջորդական առաջացում՝ ի տարբերություն չակտիվացված խառնուրդի, որում դիտվել է միայն $NiAl$ -ի առաջացումը (դեկ.՝ ք.գ.թ. Լ.Աբովյան):

Կատարելագործվել են լաբորատորիայում առկա 3 և 10 լ ծավալով ունիվերսալ ԲԻՍ ռեակտորները: Պատրաստվել և մոնտաժվել է հատուկ վակուումային վառարան, որը համապատասխանում է ներկայացված տեխնիկական առաջադրանքի պահանջներին, համալրված է պրոցեսի կառավարման և ջերմային էֆեկտների գրանցման համակարգչային ծրագրով: Վերակառուցված 10 լիտրանոց ԲԻՍ ռեակտորում իրականացվել են բեռնավորման և դրանից կախված տիտանի ու ցիրկոնիումի հիդրիդների սինթեզի պարամետրերը որոշող հետազոտություններ: Որոշվել են այդ ռեակտորում հիդրիդների սինթեզի օպտիմալ պարամետրերը, սինթեզվել են նշված հիդրիդների փորձնական քանակներ՝ յուրաքանչյուրից 300-ական գրամ: Ռենտգենաֆազային, քիմիական և դիֆերենցիալ ջերմային անալիզներով հաստատվել է, որ դրանք իրենց բնութագրերով համապատասխանում են ընդունված ստանդարտներին՝ ըստ ջրածնի պարունակության (TiH_2 ՝ 4.01 զանգ.% H_2 և ZrH_2 ՝ 2.14 զանգ.% H_2): Ստացված հիդրիդներն օգտագործվել են ՀՅ եղանակով ինտերմետաղական միացությունների՝ Ti_3Al , Zr_3Al սինթեզի համար (դեկ.՝ ք.գ.թ. Ն.Աղաջանյան):

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Манташян А.А., “Цепные реакции и сопряженные процессы”, Ер., изд. “Гитутюн”, 2021, 104 с.

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

2. Давтян А.Г., Арсентьев С.Д., Манташян А.А., Применение методов квантово-химических расчётов для исследования поверхностей потенциальной энергии систем, содержащих этилен, атомы водорода и кислорода, Ер., “Хим. журн. Армении”, т.74, N 3, 2021, с. 206-216.
3. Долуханян С.К., Алексанян А.Г., Мурадян Г.Н., Тер-Галстян О.П., Мнацаканян Н.Л., Получение сплавов на основе Ti-Nb-Zr перспективных для изготовления имплантов, Ер., “Химическая физика”, т. 40, N 7, 2021, с. 1-9.
4. Манташян А.А., Многообразие кинетических проявлений цепных разветвленных реакций, Ер., “Химическая физика”, т. 40, N 4, 2021, с. 18-26.
5. Манташян А.А., Макарян Э.М., Кинетический анализ влияния диоксида серы на окисленное превращение метана и водорода в широком диапазоне температур, Новосибирск, “Физика горения и взрыва”, т. 57, N 1, 2021, с. 3-16, DOI: 10.15372/FGV20210101.
6. Саркисян Г.П. Описание нелинейной диффузии в неидеальных многокомпонентных системах, Подход переменных стехиометрических векторов, Ер., “Изв. НАН Армении, Физика”, 56(4), 2021, с. 568-581.
7. Тавадян Л.А., Мартоян Г.А., Ценностное численное выявление и анализ критических состояний химических реакционных систем, Ер., “Химическая физика”, 40(5), 2021, с. 36-45.
8. Aleksanyan A., Dolukhanyan S., Ter-Galstyan O., Muradyan G., Mnatsakanyan N., Formation Ti₆Al₄V alloy by hydride cycle mode and its Ti₆Al₄V)H_{1.606} hydride in self-propagating high-temperature synthesis mode, “International Journal of Hydrogen Energy”, v. 46, 2021, pp. 15738-15747.
9. Asatryan A., Kalashyan A., Morozov V., Description of helix-coil transition in heteropolymers in frame of GMPC, “Journal of Contemporary Physics” (NAS RA), 2021, v. 56, issue 4, pp. 582-591.
10. Aydinyan S., Kharatyan S., Hussainova I., SHS-derived powders by reactions' coupling as primary products for subsequent consolidation, “Materials”, 2021, 14, 5117. <https://doi.org/10.3390/ma14175117>
11. Gevorgyan A., Golik S., Vanyushkin N., Borovsky A., Gharagulyan H., Sarukhanyan T., Harutyunyan M., Matinyan G., Some features of magneto-optics of cholesteric liquid crystals, “Journal of Modern Optics”, v. 68, issue 17, 2021, pp. 916-926. DOI: 10.1080/09500340.2021.1960446.
12. Gevorgyan A., Bogdanov A., Mareev V., Hidden dynamical symmetry and quantum thermodynamics from the first principles: quantized small environment, “Symmetry”, 2021, 13, 1546. <https://doi.org/10.3390/sym13081546>.
13. Gevorgyan A., Golik S., Vanyushkin N., Efimov I., Rafayelyan M., Gharagulyan H., Sarukhanyan T., Harutyunyan M., Matinyan G., Magnetically induced transparency in media with helical dichroic structure, “Materials”, 2021, v. 14, issue 9, 2172. <https://doi.org/10.3390/ma14092172>.
14. Gevorgyan S., Schubert R., Yerosyan M., Gabrielyan L., Trchounian A., Lorenzen K., Trchounian K., Antibacterial activity of royal jelly-mediated green synthesized silver nanoparticles, “AMB Express”, 2021, v.11 (1), article N 51. <https://doi.org/10.1186/s13568-021-01213-9>
15. Kirakosyan H., Nazaretyan Kh., Aydinyan S., Kharatyan S., The mechanism of joint reduction of MoO₃ & CuO oxides by combined Mg/C reducer at high heating rates”, MDPI “Journal of Composites Science”, 2021, 5, 318. <https://doi.org/10.3390/Jcs5120318>
16. Kirakosyan H., The reduction mechanism of copper molybdate at nonisothermal conditions, “Chem. J. of Armenia”, v.74, 2021, N.3-4, pp. 257-264.
17. Kirakosyan Kh., Mass, fine structure constant, and the classification of elementary particles by masses, “Journal of Modern Physics”, 2021, v. 12, pp. 988-1004.
18. Kamalyan T., Gukasyan P., Vardapetyan S., Kamalyan O., New possibilities of low-temperature generation of active centers during heterogeneous-homogeneous activation of propane on the silica gel surface, previously modified by the sol-gel and chemical transport reaction methods, “Proceedings of the YSU (ԵՊՀ գիտական տեղեկագիր)”, v. 55, N 1, 2021, pp. 1-6.
19. Mahmoudi H., Vardapetyan V., Abovyan L., Processing of copper (I) oxide waste into powders of copper and copper-nickel alloys by SCS method, “Chem. J. of Armenia”, v.74, 2021, N1-2, pp. 9-24.

20. Manucharova L., Tavadyan L., WO₃-doped titanium dioxide as photocatalyst in decomposition of methylene blue dye in aqueous solution, in: book series: Chemical Reactions Mechanisms. Series: Oxygen Atom Transfer Reactions. Editor: Bentham Science Publisher Pte. Ltd. (Singapore), chapter 5: 18, 2021, 18p.
21. Mnatsakanyan R., Davtyan D., Minasyan T., Aydinyan S., Hussainova I., Superhard B₄C-ReB₂ composite by SPS of microwave synthesized nanopowders, "Materials Letters", 285, 2021, 129163. <https://doi.org/10.1016/j.matlet.2020.129163>
22. Nazaretyan K., Kirakosyan H., Aydinyan S., Zakaryan M., Abovyan L., Kulak M., Khina B., The influence of high-energy ball milling and nanoadditives on the kinetics of heterogeneous reaction in Ni-Al system, in IOP Conference Series: Materials Science and Engineering 2021, v. 1140 (1), 012052. <https://iopscience.iop.org/article/10.1088/1757-899X/1140/1/012052>
23. Sargsyan H., Conditions for consistency of equations of nonlinear diffusion in complex systems with thermodynamic constraints, Armenian Journal of Physics, 14(3), 2021, pp.154-164.
24. Sarukhanyan M., Gharagulyan H., Rafayelyan M., Golik S., Gevorgyan A., Alaverdyan R., Multimode robust lasing in a dye-doped polymer layer embedded in a wedge-shaped cholesteric, "Molecules", 2021, v. 26, issues 19, 6089. <https://doi.org/10.3390/molecules26196089>.
25. Smirnov A., Ivakin Yu., Kornysushin M., Kholodkova A., Vasin A., Tarasovskii V., Aydinyan S., H. Kirakosyan, The cold sintering process of high-entropy ceramics (MnFeCoNiCu)₃O₄, "International Journal of Mechanical Engineering", 2021, pp. 1-6.
26. Vardanyan V., Chatilyan H., Kharatyan S., Kinetic features of nickel oxide reduction by methane & hydrogen at non isothermal conditions, "Chem. J. of Armenia", v. 74, 2021, N 3-4, pp. 245-256
27. Zakaryan M., Nazaretyan Kh., Aydinyan S., Kharatyan S., NiO reduction by Mg+C combined reducer at high heating rates, "Journal of Thermal Analysis & Calorimetry", 146(4), 2021, pp. 1811-1817. DOI: 10.1007/s10973-020-10148-5
28. Zakaryan M., Kharatyan S., Aprahamian A., Manukyan K., "Combustion in the ZrF₄-Mg-Si and ZrF₄-Al-Si systems for preparation of zirconium silicides, "Combustion & Flame", 232, 2021, 111514. <https://doi.org/10.1016/j.combustflame.2021.111514>
29. Zakaryan M., Nazaretyan Kh., Aydinyan S., Kharatyan S., Joint Reduction of NiO/WO₃ Pair and NiWO₄ by Mg + C Combined Reducer at High Heating Rates, "Metals", 2021, 11(9), 1351. <https://doi.org/10.3390/met11091351>

Պաշտպանվել է 3 թեկնածուական ատենախոսություն:

Մ.ՄԱՆՎԵԼՅԱՆԻ ԱՆՎ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ տ.գ.թ. Կ.Գրիգորյան

Փոխտնօրեն՝ տ.գ.դ. Ն.Կնյազյան

Գիտքարտուղար՝ տ.գ.թ. Գ.Մանուկյան

Էլեկտրոնային փոստ՝ ionx@sci.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Հիմք ընդունելով սպեկտրի ուլտրամանուշակագույն տիրույթում լուսակլանման առկայությունը սինթեզվել է ալյումինիումի (III) պոլիօքսիվանադատի նոր, ցածրա-մոլեկուլային, «միջուկային» ձև: Պարզվել է, որ ի տարբերություն հայտնի կոնգլոմերատային ձևերի, սինթեզված նոր ձևը ջրում լավ լուծելի է, կայուն: Ստացված տվյալները վկայում են (HO)₆[H₃Al^{III}V₆O₁₈] բաղադրությամբ նոր «միջուկային» ձևի առաջացման մասին, որը, շնորհիվ բարձր հիմնայնության, փոքր չափսերի և մեծ շարժունակության, կարող է օժտված լինել բարձր կենսաբանական ակտիվությամբ (դեկ.՝ ք.գ.թ. Է.Հայրիյան):

Կատարվել են բարիումի բորատ-բարիումի սիլիկատ էվտեկտիկայի հիմքով ցածր ջերմաստիճանային համատեղ եռակավոդ կերամիկական նյութերի (LTCC) ստացման և դրանց էլեկտրաֆիզիկական հատկությունների ուսումնասիրության հետազոտություններ: Ստացված ապակեբյուրեղային և կերամիկական նմուշների մագնիսական թափանցելիությունը և դիէլեկտրիկ կորուստների անկյան տանգենսն ունեն համապատասխանաբար $5 \div 9$ և $< 1.5 \cdot 10^{-4}$ արժեքներ (դեկ.՝ տ.գ.թ. Ա.Կոստանյան):

Հետազոտվել են քարամշակման թափոնների՝ պեոլիտի, ցեոլիտի, տուֆի և դրանց հիման վրա ստացված կոմպոզիտային նյութերի քիմիական, ռենտգենաֆազային, ԻԿ-սպեկտրալ և ջերմային անալիզները, ջերմամշակման ընթացքում տեղի ունեցող պրոցեսները: Ջերմամշակումն իրականացվել է միկրոալիքային սինթեզի եղանակով, $90-600^\circ\text{C}$ միջակայքում: Կատարված աշխատանքների արդյունքների հիման վրա մշակվել են կոմպոզիտային նյութերի օպտիմալ բաղադրություններ, ջերմամշակման ռեժիմներ, որոշվել է նմուշների օպտիմալ տեղադրումը վառարանում (դեկ.՝ տ.գ.թ. Ն.Գուրգենյան):

Ուսումնասիրվել են օքսիֆտորիդային համակարգերում երկֆազ ապակիների կառուցվածքային առանձնահատկությունները, ապակեգոյացման և վիճակի դիագրամների փոխկապվածությունը: Մշակվել են օպտիկական ապակիներ (ֆլինտներ, ծանր ֆլինտներ), սիտալներ ($15-30$)- 10^{-7} Կ $^{-1}$) և բիսիտալներ ($84-86$)- 10^{-7} Կ $^{-1}$ ԳՀԶԳ-ի համապատասխան արժեքներով: Հետազոտվել է $\text{CaO-Al}_2\text{O}_3\text{-MeF}_2(\text{Me-Ca,Mg})$ համակարգում SiO_2 և Fe_2O_3 ($5-10\%$) ազդեցությունը լիքվիդուսի ջերմաստիճանի, բյուրեղային ֆազերի առաջացման և արագ ամրացող կապակցողների շաղկապման ընթացքի վրա (դեկ.՝ տ.գ.դ. Ն.Կնյազյան):

Ուսումնասիրվել են ցինկի տարբեր աղերի և սերպենտինիտներից նոր տեխնոլոգիայով ստացված ամորֆ սիլիկահող պարունակող ռեազենտների միջև փոխազդեցությունները (դեկ.՝ ք.գ.դ. Ն.Զուլումյան):

Միկրոալիքային եղանակով (ՄԱ) սինթեզվել է իտրիումի օքսիօքսոսիլիկատ ելանյութերի լուծույթների խառնուրդի տաքացման պայմաններում և ջերմամշակվել $800-1400^\circ\text{C}$ միջակայքում: Կատարվել է ավանդական և միկրոալիքային եղանակներով տաքացմամբ ընթացող պրոցեսների համեմատական ուսումնասիրություն: Ստացված նմուշների հատկություններն ուսումնասիրվել են ֆիզիկաքիմիական անալիզի եղանակներով՝ ռենտգենաֆազային, դիֆերենցիալ թերմիկ, էլեկտրոնային միկրոսկոպիա, ԻԿ-սպեկտրոսկոպիա: Հաստատվել են ՄԱ սինթեզի առավելությունները՝ սինթեզի տևողության կրճատում, համասեռ նյութի ստացում, բյուրեղացման ջերմաստիճանի իջեցում (դեկ.՝ տ.գ.թ. Վ.Բադրամյան):

Հետազոտվել է ածխաջրածինների օքսիդացման գազաֆազ շղթայական ռեակցիայի ազդեցությամբ կապարի երկօքսիդի քիմիական փոխարկման պրոցեսը: ՇՌԱ-ռեժիմում PbO_2 -ի հետերաֆազ ռադիկալաշղթայական վերամշակման փորձնական տվյալները թույլ են տալիս առաջարկել փոշենման մետաղական կապար՝ իր օքսիդներից վերականգնման արդյունավետ մեթոդ (Pb -ի վերականգնման աստիճանը 98.5% -ից ոչ ցածր) զգալիորեն ցածր ջերմաստիճաններում ($T=260 \div 440^\circ\text{C}$): ՇՌԱ-պրոցեսի տարբեր փուլերում փոխարկման կարծրաֆազ արգասիքներում հայտնաբերվել են տարաբնույթ բյուրեղական կառուցվածքով միջանկյալ միացություններ՝ Pb_2O_3 , Pb_3O_4 , PbO , PbCO_3 և $2\text{PbCO}_3 \cdot \text{Pb}(\text{OH})_2$: Զուգորդված հետերաֆազ ՇՌԱ-փոխարկման ուժգնությունը կախված է շղթայական ազատ-ռադիկալային ռեակցիաների ընթացքը պայմանավորող չափանիշներից (դեկ.՝ ք.գ.թ. Կ. Մանթաշյան):

Մշակվել է նոր ջերմաքիմիական եղանակ, որը թույլ է տալիս պղնձի խտանյութից կորզել պղինձը բարձր ելքերով, ստանալ երկաթով հարստացած ֆազա որպես հումք և կլանել մթնոլորտ արտանետվող ծծմբային գազերը՝ ստանալով նոր բաղադրության պարարտանյութ (դեկ.՝ տ.գ.թ. Է.Նազարյան):

Դանդաղ գործող պարարտանյութ ստանալու նպատակով ուսումնասիրվել է նուրբ մանրացված դացիտային տուֆի փոխազդեցությունը կալցիումի հիդրօքսիդի հետ $\text{CaO/SiO}_2=0.3$ և հեղուկ/պինդ ֆազ = 6:1 հարաբերակցությամբ, 90°C ջերմաստիճանում և 150 րոպեում: Մանրացման արդյունքում կալիումի իոնները մասամբ անցել են լուծույթ, ինչը նպաստել է տուֆի ոչ ավտոկլավային մշակման եղանակով կալիումի հիդրոպլումինատի և կալցիումի հիդրոմոնոսիլիկատի նպատակային սինթեզին՝ շրջանցելով երկկալցիումական հիդրոսիլիկատի (C_2SH) առաջացումը (ղեկ.՝ տ.գ.թ. Կ.Գրիգորյան):

Ուսումնասիրվել և մշակվել են ազուրիտի, մալախիտի, կուպրիտի, տենորիտի, խրիզոկոլայի և այլ օքսիդացած միներալներից պղնձի կորզման տեսական և տեխնոլոգիական հիմունքները: Հետազոտվել է սուլֆիդացման ռեակցիաների ընթացքի թերմոդինամիկան, կինետիկան և մեխանիզմը (ղեկ.՝ տ.գ.դ. Ա.Հովսեփյան):

Դերիվատոգրաֆիկ, քիմիական, ֆիզիկական և ադսորբցիոն եղանակներով ուսումնասիրվել են բենտոնիտային և ցելլիտային հանքանյութերի ֆիզիկաքիմիական, սորբցիոն ծակոտկենային, իոնափոխանակման հատկությունները՝ կիրառելի որպես սորբենտներ: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ բենտոնիտներին հատուկ են սորբցիոն, իսկ ցելլիտներին՝ իոնափոխանակման հատկություններ (ղեկ.՝ տ.գ.թ. Վ.Մարտիրոսյան):

Աշխատանքներ են տարվել ՀՀ Սյունիքի մարզի Փխրուտի և Կոտայքի մարզի Հանքավանի հանքային դաշտերում՝ նպատակ ունենալով կազմել դրանց լիթոերկրաքիմիական և էկոերկրաքիմիական քարտեզները, առանձնացնել ծանր մետաղներով հագեցած ու աղտոտված տարածքները: Փխրուտի հանքային դաշտի սահմաններում կատարվել են երկրաքիմիական որոնողական դաշտային աշխատանքներ: Նմուշարկվել է 100 նմուշ, կատարվել է 30 նմուշի ատոմասպեկտրալ անալիզ, կազմվել են ուրանի համար երկրորդային ցրման պսակների քարտեզներ: Առկա են նաև հազվագյուտ հողի տարրերի օքսիդներ՝ հիմնականում լանթանի և սամարիումի, որոնց երկրաքիմիական անոմալիաները համընկել են ռադիոակտիվ տարրերի անոմալիաների հետ (ղեկ.՝ Ե.գ.թ. Լ.Հարությունյան):

Սինթեզվել են երկաթի և լիթիումի օքսիդներ պարունակող, բարիումի բորատ-բարիումի սիլիկատ էվտեկտիկայի հիմքով մագնիսական ապակիներ և ուսումնասիրվել են դրանց ֆիզիկաքիմիական հատկությունները: Ապակիների մագնիսական հատկությունները պայմանավորված են դրանց կառուցվածքում բարիումի հեքսաֆերիտի միկրոկառուցվածքային էլեմենտների՝ ներառուկների առկայությամբ: ԷՊՌ հետազոտություններով պարզվել է, որ երկաթի իոնների մի մասն ապակու կառուցվածքային ցանցում գտնվում է տետրաէդրիկ կոորդինատային վիճակում, իսկ մյուս մասը՝ օկտաէդրիկ՝ հանդիսանալով որպես մոդիֆիկատոր (ղեկ.՝ տ.գ.թ. Մ.Պողոսյան):

Ուսումնասիրվել է նոր համակարգերում կայուն ծածկույթների ստացման հնարավորությունը, որը կմեծացնի հրազենային զենքերի շփվող մասերի մաշակայունությունը, ջերմաստիճանային կայունությունը, կնվազեցնի մակերևույթների վրա այրման արգասիքների առաջացումը: Մշակվել է համակցված քիմիա և մեխանաքիմիական եղանակ մետաղյա մասերի ծածկութապատման համար այնպիսի նյութերով, ինչպիսիք են մոլիբդենի դիսուլֆիդը, բորի նիտրիդը, ալմաստանման գրաֆիտը, վոլֆրամի դիսուլֆիդը և այլն: Հետազոտվել է ծածկույթների հատկությունների կախվածությունը մակերևույթների քիմիական մշակումից, ծածկութապատող նյութերի մեխանաքիմիական ակտիվացման եղանակից և ժամանակից (ղեկ.՝ տ.գ.թ. Ա.Թաթարյան):

Սիլիկատային կերամիկական գունանյութերի ստացման ուղղությամբ սինթեզվել են վիլեմիտի ու ցիրկոնի հիման վրա առաջնային փոշենման գունանյութերի նմուշներ (ղեկ.՝ տ.գ.թ. Հ.Բեգլարյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ուսումնասիրվել են $\text{Pb}_3\text{Ge}_2\text{O}_7(\text{BaGeO}_3)\text{-Me}_2\text{O}_3/\text{MeF}_3\text{-PbF}$ (Me-Al, Ga, Bi) համակարգերի ապակեզոյացման և հալույթների լիքվացիայի տիրույթները, հալման դիագրամները և բյուրեղային ֆազերը մոդիֆիկատորների իզոմորֆ տեղակալման դեպքում, սինթեզված ապակիների օպտիկական և ջերմաֆիզիկական հատկությունները: Որոշվել է ապակիների օպտիկական թափանցելիության տիրույթը, չափվել են բեկման ցուցիչի (n_D -1.660-2.050) ու դիսպերսիայի ($v_D=55\div 25$) արժեքները, մշակվել են ԻԿ-տիրույթում բարձր թափանցելիությամբ (60-65% 6.5 մկմ) ապակիներ (դեկ.՝ տ.գ.դ. Ն.Կնյազյան):

Ուսումնասիրվել է $\text{MeF}_2\text{-MgO-Al}_2\text{O}_3\text{TiO}_2\text{-SiO}_2$ համակարգի հիմքով արծաթապատված մակերևույթներով ապակեբյուրեղների ու ապակիների քիմիական բաղադրության և հատկությունների փոփոխման հնարավորությունն արծաթի մոլեկուլների դիֆուզիայի միջոցով: Պարզվել է, որ դիֆուզիայի արդյունքում դիտվում են սպեկտրի ուլտրամանուշակագույն տիրույթում կլանման աճ և փոքր մոլեկուլների կլանման գոտիներ՝ կլաստերներ Agn ($n \leq 5$): Կլաստերների սպեկտրներն ունեն համընկնող կլանման գոտիներ, որոնք գտնվում են սպեկտրի լայն տիրույթում 250-ից մինչև 410 նմ, և համապատասխան լյումինեսցենտային գոտիների տիրույթ՝ 380-610 նմ: Արծաթապատված մակերևույթով ապակին, որպես ֆոտոակտիվ տարր, կարող է կիրառվել ուլտրամանուշակագույն սպեկտրի լայն տիրույթում որպես զգայուն սովիչ (դեկ.՝ տ.գ.դ. Ն.Կնյազյան):

Ֆոտոկատալիտիկ հատկություններով օժտված կոմպոզիտային նյութերի ստացման նպատակով ուսումնասիրվել են SiO_2 -ի և $\text{Zn}(\text{OH})_2$ -ի հաջորդական նստեցման պայմանները $\text{Na}_2\text{O-SiO}_2$ -ի և $\text{Zn}(\text{NO}_3)_2$ -ի լուծույթներից: Սինթեզվել է ցինկի օրթոսիլիկատ միկրոալիքային տաքացման պայմաններում, ելանյութերի լուծույթներից (դեկ.՝ ք.գ.թ. Ա.Սարգսյան):

Կիրառելով սերպենտինիտներից ստացված հիդրոսիլիկատներ և բարիումի ու ցինկի սիլիկատների կառուցվածք ներմուծելով ակտիվատորներ՝ ստացվել են լյումինաֆորների առաջնային նմուշներ (դեկ.՝ ք.գ.թ. Հ. Բեգլարյան):

Հրապարակումներ

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Айриян Э.Х., Мирзоян Л.А., Карапетян А.А., Оганян Н.А., Багдасарян Л.С. , “Условия синтеза и свойства устойчивого в водных растворах β -ядра полиоксимолибдата галлия(III)”, Ер., Хим. журн. Армении, N 4, 2021, с.24-34
2. Арутюнян В.В., Алексанян Э.М., Григорян Н.Е., Бадалян А.О., Арестакян А.Г., Баграмян В.В., Саргсян А.А., “Оптические свойства и адияционная стойкость силиката магния”, Тр. XXXI межд. конф. “Радиационная физика твёрдого тела”, Севастополь, 2021, с. 111-119.
3. Гургенян Н.В., Хачанова И.Б., Костандян М.Ф., Григорян А.Е., Варданян Н.К., Применение качественно улучшенного вспученного перлита (обзор), М., “Стекло и керамика”, N 5, 2021, с. 35-42. DOI 10.1007/s10717-021-00369-x
4. Ерицян С.К., Ерицян Л.С., Григорян К.Г., Хачатрян А.А., Разработка технологии получения фосфорного комбинированного удобрения из биогенных диатомитовых пород Армении и исследование его эффективности, Ер., “Агронаука и технология”, 2021, с. 52-58.
5. Еганян Дж. Р., Князян Н.Б., Синтез и исследование технических ситаллов с оксидом и фторидом магния в бороалмосиликатных системах, Сб. тр. межд. научно-технич. конф. “Актуальные проблемы инновационных технологий в развитии химической, нефте-газовой и пищевой промышленности”, Ташкент, 2021, с.182-183.
6. Зангинян А.А., Исследование стеклообразования и некоторых свойств стёкол системы $\text{LiPO}_3\text{-NaF}$, Ер., “Хим. журн. Армении”, 74, (1-2), 2021, с. 40-47.

7. Князян Н.Б., Баграмян В.В., Манукян Г.Г., Тороян В.П., Григорян Т.В., Еганян Дж.Р., Стеклование и оптические свойства стекол на основе свинцовогерманатных и барийгерманатных систем, Сб. тр. междунаучно-технич. конф. “Актуальные проблемы инновационных технологий в развитии химической, нефте-газовой и пищевой промышленности”, Ташкент, 2021, с.191-192.
8. Князян Н.Б., Оганесян М.Р., Еганян Дж.Р., Метод функций радиального распределения для выявления структурных перестроек при стекловании расплавов, III Рос. конф. с междунауч. уч. “Стекло: наука и практика” GlasSP, СПб., 2021, с.7-10.
9. Манукян Г.Г., Баграмян В.В., Тороян В.П., Григорян Т.В., Еганян Дж.Р., Князян Н.Б., Прозрачные стекла в ИК- области спектра на основе оксифторидных германатных систем, III Рос. конф. с междунауч. уч. “Стекло: наука и практика” GlasSP, СПб., 2021, с.115-116.
10. Меликян С.А., Получение силикатов стронция на основе гидросиликагеля, выделенного из серпентинов под воздействием микроволнового излучения, Ер., ДНАН Армении, т. 121, N 3, 2021, с. 201-207.
11. Оганесян М.Р., Князян Н.Б., Синтез биоактивных стеклокристаллических материалов в системе $\text{CaMgSiO}_4\text{-Al}_2\text{O}_3\text{-SiO}_2$, “Хим.журн. Армении”, 74,(1-2), 2021, с. 25-34.
12. Погосян М.А., Зангинян А.А., Ликвационные процессы в стеклах системы $\text{LiPO}_3\text{-B}_2\text{O}_3$, Ер., “Хим. журн. Армении”, 74, (1-2), 2021, с. 35-39.
13. Погосян А.К., Костанян А.С., Манукян А.С., Свойства и структура железосодержащих магнитных стекол на основе эвтектики $\text{BaB}_2\text{O}_4\text{-BaSiO}_3$, М., “Стекло и керамика”, N 11, 2021, с. 10-15.
14. Сагарунян С.А., Назарян Э.М., Арустамян А.Г., Агамян Э.С., Макарян И.М., Исследование процессов комплексной переработки сынырита, М., “Химическая технология”, N 9, 2021, с. 407-413.
15. Юрченко Д.А., Евстропьев С.К., Шашкин А.В., Князян Н.Б., Манукян Г.Г., Столярова В.Л., Модифицирование $\text{MgO-Al}_2\text{O}_3\text{-TiO}_2\text{-SiO}_2$ стекла диффузией серебра для формирования люминесцентных молекулярных кластеров, Доклады РАН. Химия, науки о материалах, М., т. 499, 2021, с. 40-44, DOI: 10.31857/S2686953521040099
16. Arutyunyan L., Compiling Geochemical Maps of Ore Areas of the Territory of Armenia, N., “NIPES Journal of Science and Technology Research”, 3(1), 2021, pp.162-165.
17. Yeganyan J., Physico-chemical properties and structural transformations in the synthesis of boroalumosilicate glass-crystal materials, T., “Chemistry and chemical engineering” v. 2021, N 1 (2021), pp. 3-8, DOI 10.51348/IAPA1538

Պաշտպանվել է 1թեկնածուական ատենախոսությամբ:

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ ք.գ.դ. Ա.Հարությունյան
 Փոխտնօրեն՝ Մ.Հարությունյան
 Գլխավոր տնօրեն՝ ք.գ.դ. Ա.Գյուլնազարյան
 Էլեկտրոնային փոստ՝ nanraifok54@mail.ru
 Կայքէջ՝ www.stcopc.sci.am

Մասնագիտական խորհուրդ 010՝ «Քիմիա»

Նախագահ՝ թղթ. անդ. Վ.Թովումյան, գլխավոր տնօրեն՝ ք.գ.թ. Ն.Հոբոսյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

2-ամինա-6-ցիանո-6-ֆենիլ-4,5,6,7-տետրահիդրոբենզո[b]-թիոֆեն-3-կարբոնաթթվի էթիլէթերի և ֆորմամիդի կոնդենսման արդյունքում սինթեզվել է համապատասխան թիենո[2,3-d]պիրիմիդին-4-(3H)-ոն, որը վերածվել է 4-քլոր-ածանցյալի: Վերջինի և

երկրորդային ամինների փոխազդեցությամբ ստացվել են 4-րդ դիրքում զանազան ամինային ֆրագմենտներ պարունակող նոր թիենոպիրիմիդիններ: Իսկ քլորածանցյալի և հիդրազին-հիդրատի փոխազդեցությամբ սինթեզված հիդրազինից սինթեզվել է աննելացված բենզո-թիենոտրիագոլ-պիրիմիդինային ածանցյալ: Հիդրազինհիդրատի և 3-[3-(1,4-բենզոդիօքսան-2-իլ)-4-ֆենիլ-5-թիօքսո-4,5-դիհիդրո-1H-1,2,4-տրիագոլ-1-իլ]պրոպիոնաթթվի էթիլէսթերի փոխազդեցությամբ սինթեզված հիդրազիդի և արիլկարբոնաթթուների քլորանհիդրիդների փոխազդեցությամբ ստացվել են համապատասխան ոչ սիմետրիկ երկտեղակալված հիդրազիդներ: Վերջինների ցիկլացման արդյունքում սինթեզվել են եռացիկլիկ միացություններ: Ուսումնասիրվել է 2-(բենզո[d][1,3]դիօքսոլ-5-իլ)ացետոնիտրիլի ալկիլացման ռեակցիան 1,4-դիբրոմբուտանով: Ստացված արիլցիկլոպենտան-կարբոնիտրիլը վերականգնվել է մինչև համապատասխան 2-(բենզո[d][1,3]դիօքսոլ-5-իլ) ցիկլոպենտիլ) մեթիլամինի (դեկ.՝ ք.գ.թ. Ա.Ադեկյան):

Սինթեզվել են 3-(4-ֆտորֆենիլ)-3-(4-մեթօքսիֆենիլ)-1-արիլոպրոպիոնամիդներ և պրոպանոատներ: 2-[4-(4-ֆտորֆենիլ)-2,6-դիիզոպրոպիլտետրահիդրոպիրան-4-իլ]-մեթիլամինի փոխազդեցությամբ տարբեր ալդեհիդների հետ սինթեզվել են ազոմեթիններ: Ստացվել են տեղակալված պրոպիոնաթթվի հիդրազիդներ: Վերջիններս վերածվել են համապատասխան ազինների, որոնց վերականգնումը բերել է նոր հիդրազիդների: Հակադեպրեսանտային ակտիվությամբ օժտված միացությունների որոնման նպատակով սինթեզվել են նոր մոնո-β-ամինոկետոններ՝ 3-ամինո-1-(հիդրօքսիֆենիլ)պրոպան-1-ոններ և ալկիլեն-դիօքսի-ֆրագմենտ պարունակող բիս-β-ամինոկետոններ: Սինթեզն իրականացվել է որոշ ամինաթթուների, 2-ամինո-1-(4-նիտրոֆենիլ)պրոպան-1,3-դիոլի կամ 2-ամինոբենզամիդի ալկիլացումով համապատասխան մոնո-/բիս-ամինոկետոններով (դեկ.՝ ք.գ.թ. Ա.Իսախանյան):

Սինթեզվել են կանաչ ֆլուորեցենցող սպիտակուցի խրոմոֆորի՝ 4-(4-հիդրօքսիբենզիլիդեն)-5-իմիդագոլոնի 2,4-երկտեղակալված ու 1,2,4-եռտեղակալված ածանցյալներ և ուսումնասիրվել են նրանց հակախոլինէսթերազային ու հակառադիկալային ակտիվությունները: Ցույց է տրվել տրիմեթիլքլորսիլան-տրիէթիլամին խառնուրդի էֆեկտիվությունը N,O-դիբենզոիլ-α,β-դեհիդրոտիրոզինի ամիդներից համապատասխան 5-իմիդագոլոնների ստացման գործում (դեկ.՝ թղթ. անդ. Վ.Թոփուզյան):

Մշակվել են նոր համակցված պիրիդոլ[3',2':4,5]թիենո[3,2-d]պիրիմիդինների ածանցյալների սինթեզի մեթոդներ 5,6-դիմեթիլ-2-օքսո-1,2-դիհիդրոպիրիդին-3-կարբոնիտրիլի հիման վրա: Իրականացվել է էթիլ-3-ամինո-5,6-դիմեթիլթի-ենոպիրիդին-2-կարբօքսիլատի փոխազդեցություն ֆորմամիդի հետ՝ բերելով համակցված թիենո[3,2-d]պիրիմիդին-4-ոնների: Վերջինիս հիման վրա սինթեզվել են մի շարք N-ալկիլտեղակալված ածանցյալներ և ուսումնասիրվել են դրանց կենսաբանական հատկությունները:

Սինթեզվել են 2-ամինո տեղակալված թիոպիրիդինի ածանցյալներ 6-ամինո-4-ֆենիլ-2-թիօքսո-2H-թիոպիրան-5-կարբոնաթթվի էթիլ էսթերի հիման վրա: Ուսումնասիրվել է վերջինիս փոխազդեցությունը ցիկլիկ ամինների հետ: Իրականացվել է 2-ամինո տեղակալված թիոպիրիդինի ածանցյալների ալկիլում α-դիրքում էլեկտրոնաակցեպտոր խումբ պարունակող տարբեր ալկիլ հալոգենիդներով: Պիրիդինի թիոալկիլ տեղակալված ածանցյալների ներմուկեկուլային ցիկլմամբ սինթեզվել են 3-հիդրօքսի-4-ֆենիլթիենո[2,3-b]-պիրիդինի համապատասխան ածանցյալներ: Իրականացվել է նոր 2-ամինո-3-ֆունկցիոնալ տեղակալված համակցված թիոֆենների ածանցյալների սինթեզ: Տարբեր կարբոնաթթուների քլորանհիդրիդների հետ փոխազդեցության արդյունքում ստացվել են համապատասխան ամիդներ: Վերջիններիս հիման վրա սինթեզվել են 2,3-տեղակալված համակցված թիենո[2,3-d]պիրիմիդինոնների նոր ածանցյալներ:

Իրականացվել է 1-ամինո-3-օքսո-2,7-նաֆթիրիդինների ինչպես ֆունկցիոնալ, այնպես էլ համակցված ածանցյալների սինթեզ: Ֆուրո[2,3-*c*]-2,7-նաֆթիրիդինների ստացման ժամանակ ուսումնասիրվել է Սմայլսի տիպի վերախմբավորումը, որի արդյունքում սինթեզվել են ինչպես համակցված ֆուրանների ածանցյալներ, այնպես էլ 2,7-նաֆթիրիդինների 1,3-դիամինոածանցյալներ: 7-քլորոցիկլոպենտա[4',5']-պիրիդո[3',2':4,5]ֆուրո[3,2-*d*]պիրիմիդինի հիման վրա սինթեզվել է ինչպես 7-ամինոածանցյալների նոր շարք, այնպես էլ ցիկլոպենտա[4',5']պիրիդո[3',2':4,5]ֆուրո[2,3-*e*][1,2,4]տրիազոլո[4,3-*c*]պիրիմիդին և 7-ազիդոպիրիդո[3',2':4,5]ֆուրո[3,2-*d*]պիրիմիդին: Վերջին համակարգերում հետազոտվել է 3,5-դիմեթիլ-1*H*-պիրազոլ-1-իլ խմբի ազդեցությունը Դիմրոտի վերախմբավորման և ազիդ-տետրազոլային հավասարակշռության վրա: Ուսումնասիրվել է սինթեզված միացությունների հակամանրեային ակտիվությունը և գտնվել են կառուցվածք-կենսաբանական ակտիվության օրինաչափություններ (դեկ. թ.գ.դ. Ե.Պարոնիկյան):

Սինթեզվել են (օ-, մ-, պ-) նիտրոբենզալդեհիդային խումբ պարունակող 5,7-դիալկիլ-1,3-դիագադամանտաններ, որոնց նիտրո խումբը վերականգնվել է Ni/Re-ով: Առաջացած ամիններից ստացվել են համապատասխան ազոմեթիններ: Տրիագադամանտանների շարքում սինթեզվել են 7-նիտրո- և 7-ամինո-1,3,5-տրիագա-ածանցյալներ: Սինթեզվել են զանազան 2-արիլ- α -ամինոնիտրիլներ, որոնց փոխազդեցությունը մի դեպքում 3-քլորպրոպիոնաթթվի քլորանհիդրիդի հետ և դրա հետագա ներմոլեկուլային ցիկլմամբ, իսկ մյուս դեպքում զանազան ալկօքսի տեղակալիչներ պարունակող ֆենիլքացախաթթվի քլորանհիդրիդների հետ և դրա հետագա ներմոլեկուլային ցիկլմամբ, որը բերել է համապատասխան պիրրոլ-իդինկարբոնիտրիլների և 4-ամինոպիրրոլոնների առաջացմանը (դեկ. թ.գ.դ. Ս.Գասպարյան):

4'-ամինո-1'*H*-սպիրո[ցիկլոհեպտան-1,2'-նավթալին]-3'-կարբօքսիլատը փոխազդեցության մեջ է դրվել ֆենեթիլիզոթիոցիանատի հետ, որի արդյունքում ստացված էթիլ 4'-(3-ֆենեթիլթիոուրեիդո)ամինո-1'*H*-սպիրո[ցիկլոհեպտան-1,2'-նավթալին]-3'-կարբօքսիլատը (թիոմիզանյութ), առանց ռեակցիոն միջավայրից անջատելու, ենթարկվել է ցիկլման՝ առաջացնելով 3-ֆենեթիլ-2-թիօքսո-2,3-դիհիդրո-3*H*-սպիրո[բենզո[*h*]խինազոլին-5,1'-ցիկլոհեպտան]-4(6*H*)-ոն: Վերջինս ռեակցիայի մեջ է դրվել տարբեր կառուցվածքի հալոգենիդների հետ, ինչը բերել է 2-ալկիլթիոտեղակալված 3-ֆենեթիլ-3*H*-սպիրո[բենզո[*h*]խինազոլին-5,1'-ցիկլոհեպտան]-4(6*H*)-ոների առաջացմանը: 2-թիօքսոածանցյալը հիդրազին հիդրատի ավելցուկում փոխարկվել է 2-հիդրազինիլ-3-ֆենեթիլ-3*H*-սպիրո[բենզո[*h*]խինազոլին-5,1'-ցիկլոհեպտան]-4(6*H*)-ոնի, որի հիման վրա իրականացվել է 1-մերկապտո-4-ֆենեթիլ-4*H*-սպիրո[բենզո[*h*][1,2,4]տրիազոլո[4,3-*a*]խինազոլին-6,1'-ցիկլոհեպտան]-5(7*H*)-ոնի սինթեզ: Ուսումնասիրվել են սինթեզված միացությունների հակառուտուցային և հակաբակտերիալ հատկությունները (դեկ. թ.գ.դ. Ա.Մարկոսյան):

Իրականացվել են կենտրոնի լաբորատորիաներում սինթեզված, տարբեր քիմիական 309 միացության առաջնային հետազոտություններ, այդ թվում՝ հակամանրեային 209, հակաօքսիդանտային 33, հակառուտուցային 40, հակաբորբոքային և ցավազրկող 5 միացություններ, ինչպես նաև *in vitro* պայմաններում ուսումնասիրվել է 22 միացության ազդեցությունն ուռուցքային ԴՆԹ-ի մեթիլացման մակարդակի վրա: Ուսումնասիրված միացությունները հիմնականում չեն ցուցաբերել արտահայտված ակտիվություն: Համեմատաբար ակտիվ երկու միացություն ընտրվել է մանրէաբանական մանրակրկիտ ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով: Պարբերաբար կատարվել է կենտրոնում արտադրվող դեղանյութերի և պատրաստի դեղաձևերի որակի կենսաբանական հսկում՝ թունականության, արդյունավետության և մանրէազերծության դեղագրքային փորձարկումներ (դեկ. կ.գ.թ. Ռ.Մուրադյան):

Ուսումնասիրվել են կենտրոնում սինթեզված 161 քիմիական միացության բժշկական սափական հատկությունները, այդ թվում՝ հակացնցումային և հոգեմետ հատկությունների հայտնաբերման ուղղությամբ 38 միացություն: Առավել ակտիվ 4 միացություն ենթարկվել է խորը հետազոտության: Ուսումնասիրվել են ֆոսֆոլիպիդների որակական և քանակական փոփոխությունները, լիպիդների գերօքսիդացման պրոցեսները և արյան մակարդելիության տարբեր ցուցանիշները կենտրոնի լաբորատորիաներում սինթեզված 27 նոր միացության ազդեցության պայմաններում: Ուսումնասիրվել է 63 քիմիական միացության (ամինոտիլենոպիտիմիդիններ 23, ինդոլային միացություններ 29, խիտոզան 5, հակախոլինէրգետիկային միացություններ 3, արոմատիկ միացություններ 19) հակամոնոօքսիդազային ակտիվությունը: Առանձնացվել են 6 և ավելի ակտիվ միացություններ հետագա մանրակրկիտ ուսումնասիրությունների համար: Ներդրվել է Ինդոպանի և Պիրազիդոլի ուսումնասիրման նոր եղանակ:

Ուսումնասիրվել է հակահիպոքսիկ և վեգետատիվ համակարգերի վրա ազդող, α և β ադրենոպաշարիչ, սիմպատոլիտիկ և ադրենոլիտիկ հատկություններ ցուցաբերող 16 միացություն: Ներդրվել է ԷՍԳ նոր մեթոդ, ըստ որի սրտազրությունը կատարվում է 9 գրանցողիներով միաժամանակ՝ 11 միացություն: Մշակվել է զարկերակային բարոտեֆլեքսի զգայունության գնահատման *in silico* եղանակը:

Իրականացվել է լյարդի ցեռոզի բուժման համար հիստոլոգիական նմուշների պրոցեսինգ, պարաֆինապատում և միկրոտոմային կտրվածքների առաջացում:

Իրականացվել է լյարդի տոքսիկ ցիռոզի դինամիկ ուսումնասիրման նոր մոտեցում շիճուկային սպիտակուցների ֆրակցիոն բաժանման մազանոթային էլեկտրաֆորեզի եղանակով, որը պետք է ներդրվի միացությունների լյարդապաշտպան հատկությունների դինամիկ ուսումնասիրության մեջ: Կատարվել են 6 նոր սինթեզված ակտիվ քիմիական միացության հիստոլոգիական և հիստոքիմիական հետազոտություններ: Հայ-Ռուսական համալսարանի հետ համատեղ իրականացվել են արծաթի բիոգեն նանոմասնիկների ազդեցության տակ մկան տարբեր օրգանների հիստոպաթոլոգիական ուսումնասիրություններ օքսիդատիվ սթրեսի և փորձարարական ուռուցքի պայմաններում (դեկ.՝ կ.գ.թ. Հ.Գասպարյան):

Արժեքավոր հատկություններով օժտված պ-տերֆենիլի նոր ածանցյալներ ստանալու նպատակով ուսումնասիրվել է դիէթիլ-, տետրամեթիլեն-, -պենտամեթիլեն(3-ֆենիլպրոպ-2-ենիլ)(1-ալիլ-3- α -նավթիլպրոպ-2-ինիլ)ամոնիում- և (3-ֆենիլպրոպ-2-ենիլ)(1-ալիլ-3- α -նավթիլպրոպ-2-ինիլ)մորֆոլինիում բրոմիդների ստիվենայան վերախմբավորման արդյունքում ստացված ամինների վարքը վակուում թորման պայմաններում: Պարզվել է, որ դիէթիլ նմանակի դեպքում ստացվում են երկու դիաստերիոիզոմեր ամիններ 50%/50% հարաբերությամբ, պիրոլիդին նմանակի դեպքում ստացվում է հիմնականում ծայրային վինիլ խմբով ամին, պիպերիդինիում նմանակի ժամանակ դիաստերիոիզոմերը ստացվում են 40%/60% հարաբերությամբ, այսինքն՝ նշված աղերի դեպքում ստիվենայան վերախմբավորումը հիմնականում իրականանում է միզրվող խմբի դարձով: Մորֆոլինիում նմանակի ժամանակ ստիվենայան վերախմբավորման արդյունքում ստացվում են միայն ծայրային վինիլ խումբ պարունակող դիաստերիոիզոմեր:

Վերոհիշյալ ամինները վակուում թորման ժամանակ ենթարկվում են դեզամինացման՝ բերելով զուգորդված դիենինի, որը էլեկտրոցիկլիկ ռեակցիայի շնորհիվ հանգեցնում է ցիկլիկ ալենային խմբավորում պարունակող միացության. ցիկլիկ ալենի 1,3- կամ 1,5-պրոտոնային տեղաշարժի արդյունքում ստացվում է 1-[(1,1'-բիֆենիլ)-4-իլ-նավթալին] (դեկ.՝ ք.գ.դ. Է.Չուխաջյան):

Հետազոտվել է CH-նուկլեոֆիլների փոխազդեցությունը որոշ ալկիլացետիլենների հետ սնդիկի (II) ացետատի ներկայությամբ: Մերկուրացման-դեմերկուրացման ռեակցիայի

արդյունքում հաջողվել է անջատել համապատասխան արումատիկ և գծային կառուցվածքով ածանցյալներ: Առաջարկվել է վերականգնման ժամանակ ստացվող ամոքֆ սնդիկի ռեգեներացման արդյունավետ ուղի սնդիկի ացետատի առաջացմամբ: Իրականացվել է O- և C-պիրանոպիրիդին-կարբոնիտրիլների փոխազդեցություն ացետիլացետոնի հետ սնդիկի (II) ացետատի ներկայությամբ: Ստացվել են կոնդենսացված պրոպարգիլտեղակալված ացետիլհիդրօքսիմեթիլենկարբոնիտրիլների ենոլային կառուցվածքով թիո- և օքսիիզոմերներ: Բացահայտվել են փոխազդեցության օպտիմալ պայմանները: Հետազոտվել են էթիլպրոպարգիլային էթերի և յոդի փոխազդեցության առանձնահատկությունները կադմիումի (II) ացետատի առկայության և բացակայության պայմաններում: Բացահայտվել են եռակի կապի CH-թթվային ատոմի տեղակալման և եռակի կապի անմիջական յոդացման ուղիները: Պարզաբանվել է լուծիչների դերը (դեկ.՝ ք.գ.թ. Հ.Սարգսյան):

Իրականացվել են կամրջակային ազոտի ատոմ պարունակող տարբեր ազոլո [1,5-a]պիրիմիդինների սինթեզներ և ուսումնասիրություն: α -Ամինոազոլների և β -դիկարբոնիլային կամ β -տրիկարբոնիլային միացությունների փոխազդեցության արդյունքում սինթեզվել են 1,2,4-տրիազոլո[1,5-a]- և պիրազոլո[1,5-a]պիրիմիդինների տարբեր մեթիլ տեղակալված ածանցյալներ: Սինթեզված միացությունների շարքում ուսումնասիրվել է պրոտոնների շարժունակությունը դեյտերացված լուծիչների մեջ, ինչպես նաև դրանց ռեգիոսելեկտիվությունն ալկիլհալոգենիդների հետ ռեակցիաներում: Պիրազոլային և ֆուրանային շարքի ալդեհիդների, ինչպես նաև տեղակալված բենզալդեհիդների և պիրիմիդինային օդակի մեթիլ խմբերի փոխազդեցությամբ սինթեզվել են զուգորդված π -կապերի երկարացված շղթաներ պարունակող մոնո- և բիցիկլային պիրիմիդիններ՝ նյութեր, որոնք հեռանկարային և արդիական են համարվում նոր կիսահաղորդչային օպտիկական սարքերի՝ արևային մարտկոցների, օրգանական լուսարձակող դիոդների (OLED), լյումինեսցենտային սենսորների ստեղծման համար: Նույն նյութերը կարող են օգտակար լինել նաև պայթուցիկ նյութերի բաղադրիչներ հանդիսացող նիտրոարումատիկ միացությունների որոշման և բացահայտման համար, որոնք կիրառելի են դրանց քեմոսենսորների ստեղծման համար: Շարունակվում են պիրիմիդինի և տետրազոլի հենքի վրա հակավիրուսային հիբրիդային համակարգերի սինթեզի ուղղությամբ իրականացվող համատեղ հետազոտությունները Սանկտ-Պետերբուրգի պետական տեխնոլոգիական ինստիտուտի (Տեխնիկական համալսարան) հետ (դեկ.՝ թղթ. անդ. Գ.Դանագուլյան):

Հետերոատոմ պարունակող դիֆենիլֆոսֆորիլային միացությունների սինթեզման նպատակով ուսումնասիրվել են դիֆենիլ-1-բրոմվինիլֆոսֆինօքսիդի ռեակցիաները A-H նուկլեոֆիլների հետ, որտեղ A=N, S, O (սպիրտներ, մերկապտաններ, պիրազոլներ, իմիդազոլ և տրիազոլ): Ցույց է տրվել, որ նույն ֆոսֆինօքսիդը հիմքի ներկայությամբ հեշտությամբ ռեակցում է CH-թթուների, մասնավորապես ացետոքացախաթթվի և մալոնաթթվի եսթերների հետ՝ բերելով ռադիկալում ցիկլոպրոպանային օդակ պարունակող ֆոսֆորիլային միացությունների առաջացման: Մոլեկուլում միաժամանակ ազոտ, ծծումբ և ֆոսֆոր պարունակող նոր հետերոցիկլիկ միացությունների սինթեզի նպատակով ուսումնասիրվել է β -արոիլվինիլտրի-ֆենիլֆոսֆոնիումբրոմիդների փոխազդեցությունը չտեղակալված և տեղակալված թիոմիզանյութերի հետ: Արդյունքում ստացվել են [2-ամինո(իմինո)-5-արիլ-թիազոլ(1,3)-4-իլմեթիլ]տրիֆենիլֆոսֆոնիումբրոմիդներ (դեկ.՝ ք.գ.դ. Մ.Հովակիմյան):

Ուսումնասիրվել է 1,2,4-տրիազոլի ալկիլացումը տարբեր հալոգենալկաններով, ինչպիսին են 1,2-դիբրոմէթանը, պրոպարգիլբրոմիդը և 1,4-դիբրոբրոմ-2-ենը՝ առանց օրգանական լուծիչների կիրառման, ջրահիմնային միջավայրում, N-մեթիլմորֆոլին-N-օքսիդի առկայությամբ: Որոշվել է, որ 1,2,4-տրիազոլի ալկիլման որոշիչ գործոն է

վերջինիս հիմնայնությունը, որն ակալու ազդեցությամբ հանգեցնում է դեպրոտոնացման, և ՄՖԿ/ՄՄՕ համակարգում ակիլման ռեակցիաներն ընթանում են առանց որևէ բարդության: Նույն համակարգում ուսումնասիրվել է նաև ստացված վերջնանյութերի դեհիդրոքլորացումը: Ուսումնասիրվել է պոտաշի ջրասպիրտային լուծույթներում 1-պրոպարգիլ-1,2,4-տրիագոլի մոդիֆիկացիան (ղեկ.՝ ք.գ.դ. Հ.Աթաբայան):

Սելեկցիոն հատկություններով օժտված իմունոդիագնոստիկ լատեքսներ ստանալու նպատակով առաջին անգամ կատարվել է մեթիլմեթակրիլատի ռադիկալային պոլիմերում ջուր-մոնոմեր ստատիկ համակարգում: Պոլիմերման հարուցումն ընթացել է պերսուլֆատ-հիդրոլիսինոն օքսիդավերականգման ռեակցիայով, որը հնարավորություն է տվել մոնոմերը պոլիմերել առանց նախնական թորման (ղեկ.՝ ք.գ.դ. Ա.Հովհաննիսյան):

Ամոնիումային աղերի հակաբակտերիալ հատկությունների ուսումնասիրման նպատակով սինթեզվել են 4-(1H-պիրագոլ-1-իլ)բուտ-2-ինիլ խումբ պարունակող ամոնիումային աղեր, ուր իրար հետ համատեղվել են պիրագոլայի օդակի ֆարմակոֆոր բաղադրիչները, պրոպարգիլային խումբը և ամոնիումային կատիոնը: Պրոպարգիլ-պիրագոլի հիման վրա սինթեզված N,N-դիմեթիլ-4-(1H-պիրագոլ-1-իլ)բուտ-2-ին-1-ամինի և մոնոքլոր/բրոմ/ քացախաթթվի ակիլ էսթերների փոխազդեցության արդյունքում ստացվել են մի շարք ամոնիումային աղեր: Ցույց է տրվել, որ սինթեզված աղերի մի մասը ցուցաբերել է արտահայտված հակաբակտերիալ ակտիվություն գրամբացասական և գրամդրական միկրոօրգանիզմների նկատմամբ (ղեկ.՝ ք.գ.դ. Ա.Գյուլնազարյան):

Իրականացվել է տեղակալված 2-խինոլինների սինթեզ ացետոքացախաթթվի N-արիլամիդների և 2-դիմեթիլամինոմեթիլդեն-5,5-դիմեթիլցիկլոհեքսան-1,3-դիոնի փոխազդեցությամբ: Հաստատվել է, որ այն ընթացել է պիպերիդինի կատալիտիկ քանակի առկայությամբ, իզոպրոպիլ սպիրտում, եռացման պայմաններում՝ առաջացնելով 3-ացետիլ-7,7-դիմեթիլ-1-արիլ-7,8-դիհիդրոխինոլին-2,5-(1H,6H)-դիոններ: Համաձայն ՄՄՌ սպեկտրոսկոպիայի տվյալների՝ նշված միացությունների ամիդային հատվածի արոմատիկ օդակում, օրթո-տեղակալիչների առկայության դեպքում, դրանք լուծույթում գտնվել են երկու ռոտամերների ձևով (ղեկ.՝ ք.գ.դ. Մ.Սարգսյան):

Տարվել են Enraf Nonius CAD-4 դիֆրակտոմետրի և Bruker GC-MS EM 640S գազ քրոմատոգրաֆ-մասս սպեկտրոմետրի ընթացիկ պլանային նորոգման աշխատանքներ՝ ապահովելով սարքավորումների անխափան և ճշգրիտ աշխատանքը: Կատարվել է 12 բյուրեղական փորձանմուշի ուսումնասիրություն, որոնցից 1-ը ԵՊՀ-ի, մնացած 11-ը ՕԴՔՏԿ-ի հետազոտական լաբորատորիաների սիթեզած նոր միացություններ են: Ստացված արդյունքների հիման վրա կատարվել է կառուցվածքի վերծանում, ճշգրտում և վերլուծություն: Արդյունքները հիմնականում հաստատել են ենթադրյալ կառուցվածքները: Գազ քրոմատոգրաֆ-մասս սպեկտրոմետրիկ եղանակով կատարվել է 50 փորձանմուշի ուսումնասիրություն, ստուգվել է նմուշների մաքրության աստիճանը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Թամազյան):

ՄՄՌ լաբորատորիայում ուսումնասիրվել և նկարագրվել են ընթացիկ տարում ՀՀ-ում սինթեզված տարբեր քիմիական միացությունների ^1H և ^{13}C սպեկտրալ հատկությունները, որոշվել են նրանց մոլեկուլների տարածական և կոնֆորմացիոն առանձնահատկությունները: Շարունակվել են լուծույթում մոլեկուլի տարածական կառուցվածքը որոշելու ՄՄՌ սպեկտրոսկոպիկ եղանակների զարգացման հետազոտությունները (ղեկ.՝ ք.գ.թ. Հ.Փանոսյան):

Կատարվել են արգոնային մատրիցայում (10^4) $\text{Cr}(\text{por})(\text{O}_2)$ կոմպլեքսում թթվածնի կոորդինացման եղանակը պարզելու հետազոտություններ: Փորձերում օգտագործվել է ($^{16}\text{O}_2 + ^{16}\text{O}^{18}\text{O} + ^{18}\text{O}_2$)-ի խառնուրդը, որի արդյունքում ցույց է տրվել, որ թթվածինը $\text{Cr}(\text{por})(\text{O}_2)$ կոմպլեքսում կոորդինացված է կողային եղանակով: Ուսումնասիրվել է $\text{Co}(\text{Por})$ (TPP-մեզո-

տետրա-ֆենիլ պորֆիրինատո դիանիոն և TTP-մեզո-տետրա-տոլիլ պորֆիրինատո դիանիոն) պորֆիրինի ցածր ջերմաստիճանային փոխազդեցությունը H_2S , DMS-ի հետ: Ուսումնասիրվել է նաև ստացված 5-կոորդինացված կոմպլեքսների (CoPor(H_2S), CoPor(DMS)) փոխազդեցությունը թթվածնի, ազոտի օքսիդի և ածխածնի օքսիդի հետ: Ստացվել են համապատասխան 6-կոորդինացված կոմպլեքսները, ուսումնասիրվել է վերջիններիս կայունությունը: Արդյունքների լիարժեք մեկնաբանման նպատակով հետազոտություններում լայնորեն օգտագործվել են թթվածնի, ազոտի օքսիդի և ածխածնի օքսիդի իզոտոպատեղակալված միացությունները (դեկ.՝ ք.գ.դ. Տ.Կուրտիկյան):

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Իրականացվել է օրգանական և նուրբ օրգանական սինթեզ՝ կիրառելով իոնական հեղուկները (ԻՀ) և՛ որպես միջավայր, և՛ որպես կատալիզատոր: Մշակվել է ԻՀ-ների ուսումնասիրման ՄՄՌ մեթոդաբանություն և թեստավորում: Նոր ԻՀ-ների ստացման նպատակով սինթեզվել են ցիկլոհեքսանի և պիրանոնի ածանցյալների հետ համակցված S-ալկիլթիոպիրանային աղեր: Այնուհետև կատարվել են չորրորդային պիրիդինային աղերի և չորրորդային պիպերազինային աղերի առաջացմամբ չորրորդայնացման ռեակցիաներ: Ուսումնասիրվել են ստացված ԻՀ-ների հատկությունները: Կենսաբանական *in silico* ուսումնասիրություններով որոշվել են թունականության աստիճանները: Տարվել է սինթեզված միացությունների հակամանրեային ակտիվությունների ուսումնասիրություն: Գտնվել են կառուցվածք-կենսաբանական ակտիվություն օրինաչափություններ (դեկ.՝ ք.գ.թ. Ա.Հարությունյան):

- Հոդվածները հրատարակվել են «Этнокультурные процессы с XX-XXI вв.: сравнительные исследования городов Армении и Беларуси», գիտաժողովի նյութերի ծոդովածուում, Եր., изд. ИАЭ НАН РА, 2021, 135 с.
260. Карапетян Р.С., Динамика этносоциальной структуры населения городов Армении в контексте миграций (XX-начало XXI вв.), с. 101-135.
261. Карапетян Р.С., Захаркевич С.А., Нерсисян С.А., Погосян С.Г., Танаджян Л.А., Сопоставительное исследование городов Армении и Беларуси: цели и задачи международного проекта, с. 7-18.
262. Нерсисян С.А., Танаджян Л.А., Этнокультурные и социальные процессы в г. Иджеване: изменения и развитие, с. 84-100.

Պաշտպանվել են 1 դոկտորական, 4 թեկնածուական ատենախոսություններ:

Ռ.Բադալյանն ընտրվել է Գերմանական հնագիտական ինստիտուտի թղթակից անդամ:

ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրենի ժ/պ՝ արվ.դ. Ա.Ասատրյան
 Գիտական ղեկավար՝ թղթ.անդ. Ա.Ադալյան
 Գիտքարտուղար՝ արվ.թ. Մ.Քամալյան
 Էլեկտրոնային փոստ՝ instart@sci.am
 Կայքէջ՝ www.arts.sci.am

Մասնագիտական խորհուրդ 016՝ «Արվեստագիտություն»

Նախագահ՝ թղթ.անդ. Հ.Հովհաննիսյան, գիտքարտուղար՝ արվ.դ. Ա.Ասատրյան

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Հայ արվեստի համալիր ուսումնասիրություն» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Ադալյան) ավարտվել է կերպարվեստի պատմությանը նվիրված հայերեն, ոչ թարգմանական առաջին ուսումնական ձեռնարկի՝ «Արվեստի պատմություն. կերպարվեստ» եռամաս դասագրքի II գիրքը, որտեղ ներկայացվել է եվրոպական Վերածննդի դարաշրջանի կերպարվեստից մինչև 20-րդ դարասկզբի կերպարվեստի համառոտ պատմությունը, համատեքստում դիտարկվել է նաև հայկական կերպարվեստը:

«Կոստանդնուպոլսի հայ երաժիշտ-տեսաբանները. XVIII-XIXդդ.» մենագրությունը նվիրված է Գրիգոր Գապասաքալյանի, Համբարձում Լիմոնջյանի, Նիկողայոս Թաշյանի, Եղիա Տնտեսյանի, Արիստակես Հիսարյանի գործունեությանը, ովքեր կարևոր դեր են կատարել հայ ազգային մասնագիտացված երաժշտական արվեստի զարգացման գործում:

«Համամ Արևելցուն վերագրվող «Համառոտ յերաժշտական արուեստի ի յարապ գրոց» երկը» գրքույկի բնագիրն ուշագրավ է արժարժված անտիկ ու հելլենիստական ժամանակաշրջաններում, ինչպես նաև միջնադարում լայնորեն շրջանառվող երաժշտական գեղագիտությանը բնորոշ մի շարք տեսությունների և ուսմունքների ուսումնասիրությամբ:

Հայ արվեստի գործիչների հուշագրության հրատարակության շրջանակներում լույս է տեսել անվանի արվեստաբան Ռ.Դրամբյանի «Իմ հուշերը» գրքի I հատորը, որն ընդգրկում է նրա մանկական տարիներից մինչև 1924թ. հիշողությունները, երբ Հայաստանի կառավարության հրավերով նա Պետրոգրադից տեղափոխվել է Երևան և ստանձնել թանգարանի գեղարվեստական բաժնի ղեկավարությունը: Հրատարակվել է նաև տաղանդավոր ջութակահար Հովհ.Նալբանդյանի հուշագրությունը Յոզեֆ Իոսիփի մասին:

«ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կազմակերպած գիտական միջոցառումները» մենագրությունում առաջին անգամ ի մի է բերվել ինստիտուտի կազմակերպած գիտական նստաշրջանների պատմությունը: Կազմվել է գիտական միջոցառումների մասին ակադեմիական ու պարբերական մամուլում տպագրված արձագանքների գիտական լրատուն և գիտական միջոցառումների նյութերի կամ հիմնադրույթների հրատարակված ժողովածուների մատենագիտությունը ժամանակագրական և այբբենական կարգով:

Հրատարակվել են «Արվեստագիտական հանդես» գիտական պարբերականի I և II համարները:

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Հայկական սփյուռքի կենտրոնների արվեստը. Նոր-Նախիջևանի հայկական գաղթավայր. Դոնի Ռոստով» թեմայի շրջանակում կատարվել է Նոր Նախիջևանում ծնված, ապրած և գործած հայ երաժիշտների, նկարիչների և դերասանների, այդ թվում՝ Հ.Արծաթապանյանի, Գ.Բաշինջադյանի, Մ.Սարյանի, Գ.Շլյյանի, Ք.Կարա-Մուրզայի, Բ.Ամիրջանյանի, Ն.Շահլամյանի, Գ.Ղորղանյանի, Կ.Սարաջյանի, Պ.Ադամյանի, Հ.Արելյանի և այլոց մասին առկա հայալեզու և օտարալեզու գրականության ուսումնասիրություն: 2021թ. սեպտեմբերին և նոյեմբերին Դոնի-Ռոստովում տեղի են ունեցել «Армяне юга России: история, культура, общее будущее» IV միջազգային գիտական և «Архитектура и искусство: от теории к практике» խորագրով միջազգային գիտագործնական կոնֆերանսները, որոնց մասնակցել և ելույթ են ունեցել ինստիտուտի աշխատակիցները:

«Հայ գեղարվեստական և երաժշտական քննադատությունը XIX դարում և XX դարակազմի (ձևավորումն ու զարգացման միտումները)» թեմայի շրջանակում մեկնարկել են XIXդ. և XX դարակազմի արևելահայ պարբերականների՝ թերթերի և շաբաթաթերթերի ուսումնասիրության, կերպարվեստին ու երաժշտությանը վերաբերող հոդվածների ու հրապարակումների առանձնացման աշխատանքները: Նոյեմբերին Դոնի-Ռոստովում գումարված «Архитектура и искусство: от теории к практике» խորագրով միջազգային գիտագործնական կոնֆերանսում ներկայացվել է «Неизвестная страница айвазовскиоведения: статья “Иван Константинович Айвазовский” Василия Корганова», որտեղ բացահայտվել է երաժշտագետ, երաժշտական-հասարակական գործիչ Բարսեղ Ղորղանյանի՝ հանճարեղ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու մահից մի քանի օր անց Թիֆլիսի «Кавказский вестник» հանդեսի 1900թ. մայիսյան համարում տպագրված «Иван Константинович Айвазовский» հոդվածի դերն ու նշանակությունը կերպարվեստագիտության և երաժշտագիտության մեջ (ղեկ. թղթ. անդ. Ա.Ադասյան):

«Հայկական ճարտարապետության առկա մեթոդական ուսումնասիրությունների քննական վերանայումը» թեմայի շրջանակում (ղեկ.՝ ճարտ.դ. Դ.Քերթմենջյան) հայալեզու և օտարալեզու գրականությունից կատարվել են նյութերի հավաքման աշխատանքներ:

«Հայաստանի Հանրապետության կոմպոզիտորական արվեստը» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ արվ.թ. Լ.Արտեմյան) ներկայացվել են հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործական դիմանկարները:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. «Արվեստագիտական հանդես», Ե., «Գիտություն» հրատ., 2021, N1, 246 էջ:
2. «Արվեստագիտական հանդես», Ե., «Գիտություն» հրատ., 2021, N2, 277 էջ:
3. Արևշատյան Ա.Ս., Կոստանդնուպոլսի հայ երաժիշտ-տեսաբանները. XVIII-XIX դդ., Ե., «Գիտություն»

հրատ., 2021, 126 էջ:

4. Արևշատյան Ա.Ս., Համամ Արևելցուն վերագրվող «Համառոտ յերաժշտական արուեստի ի յարապ զրոց» երկը, Ե., «Գիտություն» հրատ., 2021, 99 էջ:
5. Կիրակոսյան Մ.Ա., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կազմակերպած գիտական միջոցառումները, Ե., «Գիտություն» հրատ., 2021, 92 էջ:
6. Հայ արվեստաբանների կենսամատենագիտություն N 9, Աննա Արևշատյան, Ե., «Գիտություն» հրատ., 2021, 57 էջ:
7. Оганесян С.Э., Армянский народный духовой инструмент – дудук, Ер., изд. “Гитутюн”. 2021, 140 с.
8. Рубен Драмбян, Мои воспоминания, т. 1, Ер., Авторское издание, 2021, 376 с.

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

9. Ասլիբեկյան Ա.Գ., Գասպարյան Վ.Վ., Սցենարադրամատուրգիական արվեստ. գրական վարպետություն (մեթոդական ուղեցույց), Ե., «Լիմուշ» հրատ., 71 էջ:

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

10. Աղայան Ա.Վ., Դասական կերպարվեստ. քանդակագործ Տիգրան Դավթյան, Ե., «Ռոսլին. արվեստի հանդես», N 2, 2021, էջ 40:
11. Աղայան Ա.Վ., Բարու և գեղեցկության սպասավորը» (քանդակագործ Գագիկ Ղազարյանի ստեղծագործական աշխարհը), Ե., «Ռոսլին. արվեստի հանդես», N 4, 2021, էջ 32-35:
12. Ամիրադյան Գ.Ա., Աննա Արևշատյան, Գրիգոր Մագիստրոսը՝ շարականագիր և գեղագետ (գրախոսություն), Ե., «Արվեստագիտական հանդես», N 1, 2021, էջ 225-229:
13. Ասատրյան Ա.Գ., Երաժշտագիտության հարցերը «Լրաբերի» էջերում. ակադեմիական սպենդիարյանագիտության ձևավորումն ու զարգացումը, Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1, 2021, էջ 171-186:
14. Ասատրյան Ա.Գ., Երաժշտագիտության հարցերը «Լրաբերի» էջերում. ակադեմիական չուխաճյանագիտության ձևավորումն ու զարգացումը, Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 2, 2021, էջ 251-265:
15. Ասատրյան Ա.Գ., Պետրոս Աղամյանը ժամանակակիցների հուշերում, Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 2, 2021, էջ 358-364:
16. Ասատրյան Ա.Գ., Արարատ Աղայան. բազմալաստակ արվեստաբանը և գիտության հմուտ կազմակերպիչը, Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 3, 2021, էջ 343-357:
17. Ասատրյան Ա.Գ., Արվեստագիտության եռանդուն գործիչը (Ա.Աղայանի ծննդյան 65-ամյակի առթիվ), Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 2, 2021, էջ 308-317:
18. Ասատրյան Ա.Գ., Անահիտ Զոյան. Հայ թատրոնը Եգիպտոսում: Ակնարկներ սփյուռքահայ թատրոնի պատմության, Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 2, 2021, էջ 284-287:
19. Ասատրյան Ա.Գ., Հայ թատերագիտության պատրիարքը (Հ.Հովհաննիսյանի ծննդյան 85-ամյակի առթիվ), Ե., «Բանբեր հայագիտության» հանդես, N 3, 2021, էջ 255-263:
20. Ասատրյան Ա.Գ., Արփիար Արփիարյանի դերը Կոմիտասի ստեղծագործական ճակատագրում, Ե., «Արվեստագիտական հանդես», N 1, 2021, էջ 9-17:
21. Ասատրյան Ա.Գ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ներդրումը ակադեմիական սպենդիարյանագիտության կայացման ու զարգացման գործում. Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2021, էջ 13-32:
22. Ասատրյան Ա.Գ., Հայոց ցեղասպանության արձագանքները կոմպոզիտոր Արամ Սաթյանի ստեղծագործության մեջ, Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2021, էջ 65-85:
23. Ասատրյան Ա.Գ., Աննա Մենի Արևշատյան, Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2021, էջ 247-256:
24. Ասատրյան Ա.Գ., Մարիաննա Ալբերտի Տիգրանյան, Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2021, էջ 257-262:
25. Ասատրյան Ա.Գ., Ալեքսանդր Սպենդիարյան-150, Ե., «Գիտության աշխարհում», N 3, 2021, էջ 12- 19:
26. Ասատրյան Ա.Գ., Առոժ Բաբաջանյան - 100, Ե., «Գիտության աշխարհում», N 4, 2021, էջ 2-10:
27. Ասատրյան Ա.Գ., Հայ երաժշտագետները ժամանակակից նկարիչների աչքերով, Ե., «Ռոսլին. արվեստի հանդես», N 2, 2021, էջ 22-27:
28. Ասատրյան Ա.Գ., Տիգրան Զուխաճյանի «Արիֆի խորամանկությունը» օպերան, Ե., «Ռոսլին. արվեստի հանդես», N 2, 2021, էջ 54-58:
29. Ասատրյան Ա.Գ., Երաժշտական կյանքը Շուշիում, Ադրբեջանի ցեղասպանական վարքը. պատմություն և արդիականություն (իրավաբաղադրական գնահատականից մինչև միջազգային

դատարան): Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջազգ. անցանց գիտաժող. զեկ. ժող., Ե., 2021, էջ 300-319:

30. Ասատրյան Ա.Գ., Արարատ Աղասյան. վաստակաշատ արվեստաբանը, գիտության բազմահմուտ կազմակերպիչը, Ե., «Ռոսլին. արվեստի հանդես», N 4, 2021, էջ 78-86:
31. Ասատրյան Գ.Ե., Արդի սոցիալ-քաղաքական գործընթացների հումանիստական չափումները, Историческая память и современные процессы, монография, СПб., изд. «Спектр Плюс», с. 6-20:
32. Ասատրյան Գ.Ե., Հեգելը արվեստի դերի մասին (նվիրվում է Հեգելի ծննդյան 250-ամյա հոբելյանին), Ե., «Արվեստագիտական հանդես», N 1, 2021, էջ 188-200:
33. Ասատրյան Գ.Ե., Մարդու հիմնախնդրի հեգելյան ըմբռնումը, Ե., «Հյուսիսափայլ» հանդես, N 1, 2021, էջ 78-91:
34. Ավագյան Ա.Վ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ներդրումը նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի ուսումնասիրության մեջ, Ե., «Արվեստագիտական հանդես», N 1, 2021, էջ 116-126:
35. Արտեմյան Լ.Ռ., Երվանդ Երկանյանի գործունեությունը ՀՀ անկախության շրջանում, Ե., «Գիտական Արցախ», N 2, 2021, էջ 252-261:
36. Արտեմյան Լ.Ռ., Վահրամ Բաբայանի ստեղծագործական գործունեությունը ՀՀ անկախության շրջանում, Ե., «Պատմություն և քաղաքականություն» հանդես, N 4, 2021, էջ 76-85:
37. Արևշատյան Ա.Ս., Կոմիտասին և հայոց ցեղասպանությանը նվիրված Տիգրան Մանսուրյանի երկերը, Ե., «Արվեստագիտական հանդես», N 1, 2021, էջ 18-24:
38. Երնջակյան Լ.Վ., Քրիստափոր Քուչնարյան՝ արևելագետը, Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2021, էջ 86-97:
39. Կիրակոսյան Մ.Ա., Հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումները և դրանց դերը նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի ուսումնասիրման գործում, Ե., «Արվեստագիտական հանդես», N 1, 2021, էջ 127-136:
40. Հակոբյան Ա.Ս., Տարոն աշխարհի բուրիներ, Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 3, 2021, էջ 199-205:
41. Հակոբյան Ա.Ս., Ազգային մշակույթի պահպանը. Պետրոս Ալահայտոյան, Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2021, էջ 98-103:
42. Համբարձումով Ա.Լ., Դատարկ կադր (նշանակությունը և իմաստը ֆիլմի համատեքստում), Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2021, էջ 135-139:
43. Հովհաննիսյան Հ.Վ., Լույսի և ստվերի գեղագիտությունը, Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 3, 2021, էջ 180-198:
44. Ղազարյան Վ.Հ., Պատկերագրության և պատկերաբանության շուրջ (մաս 1), Ե., «Գեղարվեստի պետական ակադեմիայի տարեգիրք», N 1, 2021, էջ 9-18:
45. Մկրտչյան Մ.Գ., Մարտիրոս Սարյանի «Գիսաստղը», Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2021, էջ 198-205:
46. Նավոյան Մ.Ռ., Հենրիկ Հովհաննիսյան (ծննդյան 85-ամյակի առթիվ), Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 3, 2021, էջ 289-296:
47. Շախկուլյան Տ.Ռ., Կոմիտասից դեպի բեթհովենյան տիրույթի որոշ տարրեր, Ե., «Արվեստագիտական հանդես», N 1, 2021, էջ 41-47:
48. Շախկուլյան Տ.Ռ., Դոդեկաֆոնիայի դրսևորումները Առնո Բաբաջանյանի ստեղծագործության մեջ, Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2021, էջ 104-112:
49. Զոյան Ա.Գ., Արբի Հովհաննիսյանը հայ թատրոնի և Իրանի կինոարվեստի գործիչ, Ե., «Արվեստագիտական հանդես», N 1, 2021, էջ 72-93:
50. Զոյան Ա.Գ., Մկրտիչ Թաշճյան. տաղանդավոր դերասանը, բեմադրիչը, նկարիչը, Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2021, էջ 140-150:
51. Սարգսեան Ն.Գ., Պարային տեսարանների դերն ու նշանակությունը «Ալմաստ» եւ «Անուշ» օպերաներում, Պեյրոթ, «Հայկազեան հայագիտական հանդես», հտ. 41, 2021, էջ 527- 537:
52. Տեր-Մինասյան Ա.Ա., Եվ մենք կքայլենք Ղազանչեչոց փողոցով դեպի նվիրական այդ վայրը..., Ե., «Ճարտարապետություն, շինարարություն», N 1-2, 2021, էջ 36-40:
53. Տիգրանյան Մ.Ա., Բինգյոլի ժանրը և Կոմիտասի «Մշեցոց Բինգյոլը», Ե., «Արվեստագիտական հանդես», N 1, 2021, էջ 48-71:
54. Տիգրանյան Մ.Ա., Սարգսյան Լ.Ս., Արցախյան հորովելներ, Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2021, էջ 123-134:

55. Տիգրանյան Մ.Ա., Հ.Ղեւոնդ Ալիշանի «Ի Լեւոն որդի Հեթումյ Ա» երգի պատմությունը, Վենետիկ-Ս.Ղազար, «Բազմավեպ» հանդես, ՃՀԹ տ., N 1-2, 2021, էջ 143-167:
56. Քամայան Մ.Ա., Արարատ Աղասյան, Արվեստի պատմություն. կերպարվեստ, Ե., «Արվեստագիտական հանդես», N 1, 2021, էջ 220-224:
57. Քամայան Մ.Ա., Հայր Ղեւոնդ Ալիշանի կերպարը կերպարունեստում, Վենետիկ-Ս.Ղազար, «Բազմավեպ» հանդես, ՃՀԹ տ., N 1-2, 2021, էջ 136-142:
58. Арутюнян М.В., Новые жилые кварталы Еревана, М., “ Архитектура и строительство”, N 2, 2021, с. 5-9.
59. Асатрян А.Г., Роль и значение творчества Комитаса для армянской культуры, Ե., «Բանբեր հայագիտության» հանդես, N 1, 2021, էջ 177-190:
60. Асатрян А.Г., «Плпун Аварайри» («Соловей Аварайра») Гевонда Алишана в музыке, Ե., «Բանբեր հայագիտության» հանդես, N 2, 2021, էջ 145-157:
61. Асатрян А.Г., Плодотворный научный и творческий путь замечательного искусствоведа (к 65-летию со дня рождения Арарата Агасяна), Ե., «Բանբեր հայագիտության» հանդես, N 3, 2021, էջ 264-270:
62. Асатрян А.Г., Воспоминания Иоаннесса Романовича Налбандяна о Йозефе Иоакиме, Ե., «Արվեստագիտական հանդես», N 1, 2021, էջ 201-209:
63. Асатрян А.Г., Круглый стол «Искусство центров армянской диаспоры: проблемы изучения и сохранения», Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2021, էջ 263-267:
64. Асатрян А.Г., Концерты Беглара Амирджаняна в Ростове-на-Дону, мат. IV межд. научн. конф. “Армяне юга России: история, культура, общее будущее”, Ростов-на-Дону, изд. ЮФУ, 2021, с. 56-62
65. Асатрян А.Г., Первая армянская опера “Аршак Второй” Тиграна Чухаджяна, Национальная опера в контексте музыкально-исторического процесса, сб. мат. межд. научно-практич. конф. “Лаборатория современной башкирской оперы”, Уфа, 2021, с. 23-29.
66. Манукян О.К., Пространство динамического звука Сергея Косемяна, Ե., «Ռուսին. արվեստի հանդես», N 2, 2021, էջ 50-53:
67. Манукян С.С., “Успение Богородицы” в средневековом искусстве Армении и Руси, Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2021, էջ 160-174:
68. Нерсисян А.Г., Превратности таланта: Дмитрий Налбандян, Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2021, էջ 206-218:
69. Овсепян Г.С., Григорий Шлтян неореалист-классик XX вв., Ե., «Ռուսին. արվեստի հանդես», N 4, 2021, էջ 6-10:
70. Манукян С.С., Киликийская миниатюра и традиции византийского искусства XI века: образец или импульс к творчеству, Искусство византийского мира. Индивидуальность в художественном творчестве, сб. ст. в честь Ольги Сигизмундовны Поповой, М., 2021, с. 248-273.
71. Саргсян Н.Г., Жанр портрета в творчестве хореографа Рудольфа Харатьяна, Київ, Танцювальні студії. Науковий журнал, т. 4, N 1, 2021, с. 40-50.
72. Саргсян Н.Г., Опера Анушавана Тер-Гевондяна “Седа” (к вопросу о формировании армянской национальной оперы), Национальная опера в контексте музыкально-исторического процесса, сб. мат. межд. научно-практич. конф. “Лаборатория современной башкирской оперы”, Уфа, 2021, с. 100-105.
73. Саргсян Н.Г., Деятельность Србуи Степановны Лисициан в 10-20-е гг. XX века. Ե., «Արվեստագիտական հանդես», N 1, 2021, էջ 94-113:
74. Саргсян Н.Г., Жанр парафраза в балете (на примере «Маскарад»-а Арама Хачатуряна-Эдгара Оганесяна), Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2021, էջ 113-122:
75. Чтян А.Г., Петрос Адамян на театральных сценах Новой Нахичевани и Ростова-на-Дону, мат. IV межд. научн. конф. “Армяне юга России: история, культура, общее будущее”, Ростов-на-Дону, 2021, с. 415-422.
76. Arevshatyan A., Le traité “Brefs extraits des livres arabes sur l’art musical”, attribué à Hamam Arewelc’i, Paris, Revue des études arméniennes, t. 40, 2021, pp. 297-330.
77. Asatryan A., Memories of the contemporaries about Bedros Adamian, Ե., «Պատմաբանասիրական հանդես», N 3, 2021, էջ 262-266.
78. Harutyunyan M., Architecture-design problems and improvement of gardens/parks in Armenia, Ե., „Journal of Art Studies”, 2021, N 2, pp. 172-179.
79. Harutyunyan M., Architectural design enhancement of gardens/parks in Yerevan, “Heritage and Sustainable Development”, Sarajevo, v. 3, N 2, 2021, pp. 148-153.
80. Kertmenjian D., Developments of Armenian industrial architecture from contemporary period, proceedings of

- the 13th International Conference “Contemporary Problems of Architecture and Construction”, Yerevan – Armenia, 2021, pp. 72-79.
81. Muradyan Sh., Ara Bekaryan's papers on Armenian art in «The Soviet Art Journal», Ե., «Բանբեր հայագիտության» հանդես, N 2, 2021, էջ 158-168:
 82. Petrosyan A., The flavor of Tiflis in Hmayak Hakobian's art, Ե., «Բանբեր հայագիտության» հանդես, N 3, 2021, էջ 121-128:
 83. Shakhkulyan T., Komitas und die Deutsch-Armenischen kulturellen Beziehungen. <http://goethe-zentrum.am/komitas-und-die-deutsch-armenischen-kulturellen-beziehungen/> 23.04.2021
 84. Yernjakyan L., Armenian-Iranian musical interrelations, Ե., «Երաժշտական Հայաստան», N 2, 2021, էջ 13-15:
Հոդվածները հրատարակվել են «Հ.Ղևոնդ Ալիշան-200» հոբելյանական միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., «Գիտություն» հրատ., 2021, 604 էջ:
 85. Ասատրյան Ա.Գ., Հայր Ղևոնդ Ալիշանի «Պլպուլն Աւարայրի» պոեմի երաժշտական մարմնավորումները, էջ 508-518:
 86. Բեքարյան Ա.Ա., Բայրոնը և Ալիշանը, էջ 419-432:
 87. Տիգրանյան Մ.Ա., Հայր Ղևոնդ Ալիշանի «Ի Լեւոն որդի Հեթումյ Ա» երգի պատմությունը, էջ 526-549:
 88. Քամալյան Մ.Ա., Հայր Ղևոնդ Ալիշանի կերպարը կերպարվեստում, էջ 519-525:
 89. Քերթմենջյան Դ.Գ., Հ. Ղևոնդ Ալիշանի հայկական ճարտարապետությանը վերաբերող հոդվածները «Բազմավեպի» էջերում, էջ 565-571:
Հոդվածները հրատարակվել են “Русское искусство” հանդեսի 2021թ. N 3՝ “Россия-Армения. Диалог культур на языке искусства” բացառիկ համարում, М., ISSN 1729-9063, Благотворительный Фонд им. П.Третьякова, 144 էջ
 90. Агасян А.В., Листая страницы истории: армяно-русские художественные связи, с. 10-25.
 91. Авагян А.В., Армянские скульпторы Москвы: Никогосян, Согоян, Франгулян, с. 108-115.
 92. Асатрян А.Г., Могучий царь морской стихии. Музыкальные посвящения И.К.Айвазовскому, с. 124-129.
 93. Драмбян И.Р., Лидия Дурово – историк средневекового армянского искусства, с. 32-37.
 94. Манукян С.С., Иконография «Успения Богоматери» в средневековом искусстве Армении и Руси, с.26-31.
 95. Нерсисян А.Г., Дмитрий Аркадьевич Налбандян. После триумфа, с. 102-107.
 96. Тер-Минасян А.А., Александр Таманян - основатель современной армянской архитектуры, с. 116-123.
Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, հոդվածներ, որոնք լույս են տեսել 2021թ., բայց թվագրված են 2020թ. և դուրս են մնացել 2020թ. հաշվետվությունից
 97. «Արվեստագիտական հանդես», Ե., N 2, 2020, 195 էջ:
 98. Նավոյան Մ.Ռ., Ազգային կոմպոզիտորական դպրոցի հայեցակարգն ըստ Կոմիտասի, Ե., Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատ., 2020, 184 էջ:
 99. Աղապյան Ա.Վ., Ասատրյան Ա.Գ., Հայ արվեստաբանության նվիրյալը. Հրավարդ Հակոբյան, Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2020, էջ 178-184:
 100. Ասատրեան Ա.Գ., Հայր Ղևոնդ Ալիշանի «Պլպուլն Աւարայրի» քերթումների երաժշտական մարմնավորումները, Վենետիկ-Ս.Ղազար, «Բազմավեպ» հանդես, ՃՀՀ տ., N 3-4, 2020, էջ 191-202:
 101. Ասատրյան Ա.Գ., Էջեր երաժշտական թումանյանապատումից. «Աղթամար», Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2020, էջ 5-14:
 102. Ասատրյան Գ.Ե., Հեգելը արվեստի ձևերի մասին (նվիրվում է Հեգելի ծննդյան 250-ամյա հոբելյանին), Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2020, էջ 151-165:
 103. Ասատրյան Գ.Ե., Հումանիզմը արդի սոցիալ-քաղաքական պրոցեսների համատեքստում, Ե., «Հյուսիսսփայլ» հանդես, N 2, 2020, էջ 4-14:
 104. Ավագյան Ա.Վ., Ռուբեն Դրամբյանի դերը Եղիշե Թադևոսյանի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրության գործում, Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2020, էջ 96-105:
 105. Բաղդասարյան Ա.Հ., Երկխոսում են հեղինակը և Ալինա Փահլևանյանը, Ե., «Երաժշտական Հայաստան», N 2, 2020, էջ 25-30:
 106. Բեքարեան Ա.Ա., Բայրոնը և Ալիշանը, Վենետիկ-Ս.Ղազար, «Բազմավեպ» հանդես, ՃՀՀ տ., N 3-4, 2020, էջ 88-101:
 107. Թագակչյան Զ.Պ., Աշուղական հոգեւոր երգը Զաւախքի աւանդական մշակոյթում, Վիեննա, «Հանդես ամսօրեայ» ուսումնաթերթ, 2020, էջ 411-143:
 108. Թագակչյան Զ.Պ., Ավանդական աղոթքները Զավախքի ժողովրդական երգարվեստում, Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2020, էջ 23-71:

109. Կիրակոսյան Մ.Ա., Եղիշե Թադևոսյան և Փանոս Թերլեմեզյան (Էջեր մշակութային փոխառնչության պատմությունից), Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2020, էջ 121-128:
110. Հակոբյան Ա.Ս., Ավետիս Ահարոնյանի «Նազեի օրորը» ժողովրդական երգարվեստում, Ե., ՎԷՄ, N 4, 2020, էջ 206-217:
111. Հովսեփյան Հ.Ա., Միջնադարյան եկեղեցիների նախագծման սկզբունքները, Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2020, էջ 138-143:
112. Զոյան Ա.Գ., Հովհաննես Թումանյանի «Գիքորը» Իրանի հայ թատրոնում. Արման, Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2020, էջ 78-86:
113. Տեր-Մինասյան Ա.Ա., Ջուրն ու քարը՝ ոգեշնչման աղբյուր, Ե., «Ճարտարապետություն, շինարարություն», N11-12, 2020, էջ 47-49:
114. Քամայան Մ.Ա., Եղիշե Թադևոսյանը Թիֆլիսի Քամոյենց եկեղեցու շինության մասին, Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2020, էջ 166-177:
115. Քերթմենջեան Դ.Գ., Հ.Ղևոնդ Ալիշանի հայկական ճարտարապետութեանը վերաբերող յօդուածները «Բազմավէպի» էջերում, Վենետիկ-Ս.Ղազար, «Բազմավէպ հանդես, ՃՀՀ տ., N 3-4, 2020, էջ 102-108:
116. Аревшатын А.С. К вопросу о мелодическом мышлении в монодиях Литургии в обработках Екмаляна и Комитаса, Ե., «Երաժշտական Հայաստան», N 1, 2020, էջ 33-42:
117. Багдасарян А.О., Христофор Степанович Кушнарев и армянская музыкальная культура. Ե., «Երաժշտական Հայաստան», N 2, 2020, с. 59-62.
118. Нерсисян А.Г., Егише Тадевосян. Портреты, Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2020, էջ 129-131:
119. Рухкян М.А., Эдуарду Айрапетяну 70 лет. Художник высокого полета, Ե., «Արվեստագիտական հանդես», N 2, 2020, էջ 185-188:
120. Тигранян М.А. Два архимандрита: Саак Аматауни и Комитас, Ե., «Երաժշտական Հայաստան», N 2, 2020, էջ 63-69:
121. Manukyan S., The Romanian-Armenian art of icon painting, Armenian treasures in Romania, Bucharest, "Zamka", 2020, pp. 98-100.
122. Lamoureux Ch., Zarian A., Introduzione SEYRANOUSH MANOUKYAN, Haghat, Restauro Conservativo dei Dipinti Murali del X, XII-XIII secolo nella chiesa del Santo Segno, 976-991. Yerevan, "Tigran Metz", 2020, Dall'Incomprensibile'al Leggibile. Il restauro dei dipinti murali di Haghat", pp. 24-29.
Հոդվածները հրատարակվել են «Հովհաննես Թումանյան-150» հոբելյանական միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուում, Ե., «Գիտություն» հրատ., 2020, 607 էջ:
123. Ասատրյան Ա.Գ., Հովհաննես Թումանյանի «Աղթամար» լեգենդի երաժշտական մարմնավորումները, էջ 507-516:
124. Ասատրյան Գ.Ե., Անտրոպոմորֆիստական պատկերները Հովհաննես Թումանյանի քառյակներում, էջ 472-483:
125. Ասլիբեկյան Ա.Գ., Մալյան թատրոնի «Հեքիաթներ» ներկայացման բեմադրական հարցերի շուրջ, էջ 562-573:
126. Համբարձումով Ա.Լ., Ռոբերտ Սահակյանցի մուլտիպլիկացիոն ֆիլմերը Հովհաննես Թումանյանի հեքիաթների մոտիվներով, էջ 545-550:
127. Նալբանդյան Մ.Ա., Ալ.Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի գրական հիմքի քննություն, էջ 529-535:
128. Սարգսյան Ն.Գ., Ժամանակակից համաշխարհային բալետի միտումների դրսևորումները Հովհաննես Թումանյանի պոեմների հիմքով ստեղծված պարային երկերում, էջ 517-528:
129. Քամայան Մ.Ա., Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթը» և «Թմկաբերդի առումը» էդուարդ Իսաբեկյանի աչքերով, էջ 551-555:
130. Քերթմենջյան Դ.Գ., Նվիրված են ամենայն հայոց բանաստեղծի՝ Հովհաննես Թումանյանի հանճարին, էջ 536-544:

Հ.Հովհաննիսյանը պարզևատրվել է Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանով և արժանացել է Երևանի պատվավոր քաղաքացու կոչման, Դ.Քերթմենջյանը պարզևատրվել է ՀՀ քաղաքաշինության նախարարության «Մոմիկ ճարտարապետ» ոսկե մեդալով:

ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ պ.գ.թ. Ա.Հայրապետյան
Գիտքարտուղար՝ պ.գ.թ. Ա.Ակոպով
Էլեկտրոնային փոստ՝ info@shirakcenter.sci.am, hkentron@mail.ru
Կայքէջ՝ www.shirakcenter.sci.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Շարունակվել է «Շիրակի հնագիտական և պատմագագազրական ուսումնասիրություններ-3» գիտահետազոտական ծրագիրը (ղեկ.՝ պ.գ.թ. Ա.Հայրապետյան):

- Հնագիտություն. Պատրաստվել և ՀՀ հնագիտական միջգերատեսչական հանձնաժողովին են հանձնվել Մեծ Սեպասարի, Ջրաձորի, Ջրափիի, Ագատանի հնավայրերի պեղումների գիտական ամփոփ հաշվետվությունները: Կատարվել են հայ-գերմանական համատեղ արշավախմբի պեղումներ Ջրաձորի երկաթիդարյան ամրոց-բնակավայրում: Հետազոտվել են նաև Լեռնակերտի միջին և ուշ բրոնզեդարյան, ինչպես նաև երկաթեդարյան դամբանային համալիրները, փաստագրվել են մինչ այժմ Շիրակի համար ոչ տիպական թաղման կառույցներ և իրադրություններ: Ստացված մարդաբանական տվյալները ենթարկվում են հետազոտության:

- Պատմագիտություն. Ապացուցվել է, որ Հայկական լեռնաշխարհի հարևան մի շարք երկրանունների (Գամիռա, Իբերիա/Վիրք, Ադիաբենե և այլն) գոյությունը, պայմանավորված Հայկական լեռնաշխարհի նկատմամբ այդ երկրների իրական դիրքով, ունի հնդեվրոպական-հայկական ծագում: Շարունակվել է պատմական Տայքի և հարակից տարածքների պատմաժողովրդագրական ուսումնասիրությունը, քննվել է XVI դ. օսմանյան հարկացուցակներում առկա ժողովրդագրական նյութը, ներկայացվել են Տայքի Կիսկիմի և Մամրվանի գավառների բնակչության թվաքանակն ու էթնոկրոնական կազմը: Հիմնավորվել է, որ XIX դ. վերջին հասարակական-քաղաքական կյանքում սկսված տեղաշարժերը և բանվորական շարժման վերելքը նպաստավոր պայմաններ են ստեղծել հայ իրականության մեջ բանվորական մարքսիստական խմբակների ստեղծման համար: 1904-1905 թթ. այս կազմակերպություններն Ալեքսանդրապոլում կազմակերպել և ղեկավարել են երկաթուղային բանվորների ու աշխատավորական մյուս խավերի զանգվածային ելույթները: Բացահայտվել է, որ Ալեքսանդրապոլից և համանուն գավառի գյուղերից մեծ թվով հայ կաթոլիկներ XIX դ. երկրորդ կեսին մեկնել են Սբ. Ղազար՝ ուսանելու: Նրանցից շատերը հետագայում դարձել են միաբանության անդամներ, մյուսները, ուսում ստանալով, վերադարձել ու աշխույժ գործունեություն են ծավալել Ալեքսանդրապոլի գավառի և Անդրկովկասի հայ կաթոլիկների շրջանում: Ուշագրավ փաստեր են հայտնաբերվել նաև ալեքսանդրապոլցի հասարակական գործիչների և հայր Ղևոնդ Ալիշանի առնչությունների մասին: XXI դ. սկզբին տարածաշրջանի բնակչության թվի շարժընթացի, սեռատարիքային կազմի, բնական վերարտադրության և միգրացիայի փոփոխության ընթացքի մասին ներկայացվել են ժողովրդագրական բնույթի նոր տվյալներ:

- Ազգագրություն. Խնդիր էր դրվել հետազոտել Շիրակի XIX-XX դդ. գեղարվեստական գործվածքն իր ողջ բազմազանությամբ: Այդ ուղղությամբ կատարվել է գորգագործության, կարպետագործության, ասեղնագործության, ժանեկագործության ու դաջագարդության, դրանց ոճական գեղագարդման և գունային առանձնահատկությունների, ինչպես նաև կիրառման ոլորտների ուսումնասիրություն: Քննության են ենթարկվել նաև խորհրդային շրջանում Լենինականի առաջնային արտադրության մշակույթի խնդիրները: Կատարվել է հին զբաղմունքների, վերափոխումների (տրանսֆորմացիաների), արհեստագործական որոշ ճյուղերի վերապրոֆիլավորման և նոր՝ մինչ այդ քաղաքում գոյություն չունեցած

արդյունաբերական մասնագիտությունների առաջացման ու արմատավորման հարցերի ուսումնասիրություն: Շարունակվել է Շիրակի բանավոր երգաստեղծության տեքստի լեզվական ուսումնասիրությունը: Քննության է առնվել ժողովրդական բանահյուսության առավել կենսունակ ժանրերից ողբերգը, որի կատարումը ենթադրում է խիստ որոշակի հանգամանքներ. այն սահմանափակվում է միայն թաղման ծիսական շղթայով, հետևապես ողբերգն ուսումնասիրվել է հենց թաղման ծեսն ուղեկցող ողբասացության համապատկերում: Իրականացված բանահավաքչական աշխատանքների արդյունքում ձայնագրվել է ժամանակակից ողբասացների շուրջ 200 ստեղծագործություն: Կատարվել է Ալեքսանդրապոլ-Գյումրու հայտնի գերդաստանների, դրանց առնչվող բանավոր պատմումների ու զրույցների, Գյումրու երգային ու բանաձևային բանահյուսության համակարգման ու տարբերակայնության քննություն:

- Բանագիտություն. Քննվել են Գյումրու արդի խոսվածքի ձևաբանական իրողությունները պատմական զարգացման մեջ: Ուսումնասիրության կիզակետում է եղել նաև մանկական բանահյուսական նյութերի տեքստաբանական քննությունը: Դիտարկվել է օրորոցայինը որպես արթնացումի տեքստ: Հետազոտության առանցքում են եղել թե՛ բանահյուսական, թե՛ հեղինակային օրորները, որոնք բովանդակային տարբեր շերտերում ամփոփում են զարթոնումի զարթոնքի բաղադրիչներ:

Իրականացվել են՝ ականավոր հնագետ Հ.Մարտիրոսյանի 100-ամյակին նվիրված «Գիտությունը սկսվում է նախնադարում» խորագրով միջազգային եռօրյա առցանց գիտաժողովը (62 մասնակից, 6-ն արտերկրից), «Հյուսիսային Հայաստանը պատմության խաչուղիներում (պատմամշակութային համադրություններ)» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողովը (54 մասնակից, 3-ն արտերկրից), հնագետ Լ.Եզանյանի հիշատակին նվիրված «Հանրապետական գիտական ընթերցումներ», ազգաբան-երաժշտագետ Հ.Ափինյանի հիշատակին նվիրված «Ազգագրական ընթերցումներ», Կարսի պայմանագրի 100-ամյակին նվիրված «Պատմագիտական ընթերցումներ», 4 հնավայրերի պեղումներ, 34 ազգագրական գիտարշավ և 13 գիտական սեմինար: ՇՀՀ կենտրոնի գիտական, գիտակազմակերպական և հրատարակչական գործունեության մասին մանրամասն տեղեկատվությամբ գործել են ֆեյսբուքյան էջը և համացանցում տեղադրված երկլեզվյա կայքէջը /www.shirakcenter.sci.am/:

Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Տայքը IX-XI դարերում (պատմաճարտարապետական ուսումնասիրություն)» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ պ.գ.թ. Ա.Ակոպով) առաջին եռամսյակում կատարվել է միջնադարյան հայկական, վրացական, բյուզանդական և այլ սկզբնաղբյուրների հանգամանալի ուսումնասիրություն, դրանցում առկա թեմային վերաբերող նյութի համեմատություն և համադրություն:

«Հայ աշուղական արվեստը պատմաքննական լույսի տակ» ծրագրի շրջանակում (ղեկ.՝ արվ.թ. Հ.Հարությունյան) սկսվել են Թիֆլիսի նշանավոր հայ աշուղների կյանքին և ստեղծագործական գործունեությանը վերաբերող նյութերի հավաքագրման, համակարգման ու անվանացանկի կազմման գիտահավաքչական աշխատանքներ: Արխիվային աշխատանքներ են տարվել Երևանի Ե.Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի պահոցներում, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ֆոլկլորագիտության ամբիոնի ձայնադարանում:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածու, N 24, պրակ 1, Գյումրի, 2021, 200 էջ:
2. ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածու, N 24, պրակ 2, Գյումրի, 2021, 260 էջ:
3. ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածու, N 24, պրակ 3, Գյումրի, 2021, 324 էջ:
4. Խաչատրյան Հ.Ռ., «Լարիսա Գրիշայի Եգանյան, կենսամատենագիտություն», Ե., ՀԱԻ հրատ., 2021, 50 էջ:

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

5. Ալեքսանյան Կ.Վ., Քաղաքական բնություններն Ալեքսանդրապոլի գավառում խորհրդային իշխանության հաստատման առաջին ամիսներին (1921թ. ապրիլ-դեկտեմբերին), Պեյրուք, «Հայկազեան հայագիտական հանդես», N 41, 2021, էջ 157-171:
6. Հայրապետյան Ա.Ս., Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին (Ալեքսանդրապոլի օրինակով), Ե., «Регион и мир» научно-аналитический журнал, т. XII, N 6, 2021, с. 43-49:
7. Պետրոսյան Ս.Գ., Հարևան երկրների հայկական անվանումները «հյուսիս-հարավ» հակադրամիասնական հասկացությունների լույսի ներքո, «ՎԷՍ» հանդես, N 3, 2021, էջ 66-90:
8. Авагян И.Э., Оганнисян Г. А., Архитектурно-исторический центр “Кумайри” в г. Гюмри и советские фильмы, снятые здесь, Махачкала, мат. VII межд. научно-практич. конф. “Актуальные проблемы современной науки: взгляд молодых ученых”, изд. “Алеф”, 2021, с. 25-30.
9. Айрапетян С.А., Международные научные конференции в Гюмри, Ер., “Регион и мир”, т. XII, N 6, 2021, с. 196-199.
10. Хачатрян А.А., Худавердян А.Ю., Енгибарян А.А., Матевосян Р.Ш., Алексанян Н.Г., Физический тип населения Армянского нагорья в эпоху античности (по остеометрическим материалам городских и сельских поселений), Вестник археологии, антропологии и этнографии, N 1 (52), 2021, с. 118-131.
11. Harutyunyan H., About some stylistic features of Shirak dance songs written in the early 20th century, Warsaw, “International Journal of Innovative Technologies in Social Science”, N 6, 2021, pp. 121-128.
12. Harutyunyan H., Alexander Spendaryan and Shirak ashough art, Dnipro, Ukraine, “Integration of Education, Science and Business in Modern Environment: Summer Debates”, 2021, pp. 81-84.
13. Harutyunyan H., Asatryan A., Khachtryan D., Sayat Nova and the Armenian ashug art, “International Journal of Innovative Technologies in Social Science”, Warsaw, N 4 (32), 2021, pp. 125-138.
14. Harutyunyan H., Asatryan A.H., Khachtryan D., Armenian ashug art of the 18th century, “International Journal of Innovative Technologies in Social Science”, Warsaw, N 4 (32), 2021, pp. 139-149.
15. Hayrapetyan A., Activities of Alexandrapol municipal autonomy bodies in 1918-1920, Yerevan, “Review of Armenian studies”, 2021, N 2 (26), pp. 8-19.
16. Matikyan H., Torosyan R., Fairy Tale: a unique method of enriching vocabulary, ՇՀՀ Գիտական տեղեկագիր, 2021, N 2, pp. 34-40.
Հոդվածները հրատարակվել են ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուում, N 24, պրակ 1, Գյումրի, 2021, 200 էջ:
17. Ակոպով Ա.Ա., Բերդագրակի գավառի բնակչության ազգային կազմը XVI-XVIII դարերում, էջ 19-29:
18. Այվազյան Գ.Ս., Մովսես Խորենացու երկասիրությունների հրատարակությունների պատկերազարդման խորհրդաբանությունը (XVII-XIX դդ.), էջ 30-38:
19. Ավազյան Ի.Է., Գյումրու Պատվո բլուրը որպես պատմամշակութային պահպանական միավոր, էջ 64-72:
20. Բոյաջյան Ա.Գ., Շիրակի մարզի բնակչության սեռատարօրբային կառուցվածքի փոփոխությունը (XXդ. վերջ-XXIդ. սկիզբ), էջ 73-84:
21. Հարությունյան Հ., Ալեքսանդրապոլի ավանդական երաժշտությունը Ալ.Սպենդիարյանի ստեղծագործության մեջ, էջ 147-153:

22. Հովհաննիսյան Ա.Լ., Թանգարանների դերը քաղաքի մշակութային կյանքում (Շիրակի երկրագիտական թանգարանի և Կոմայրի պատմամշակութային արգելոց-թանգարանի օրինակով), էջ 172-180:
23. Հովհաննիսյան Ռ.Պ., Ալեքսանդրապոլի երևելի դեմքը՝ գրական կերպարի նախատիպ, էջ 130-139:
24. Մատիկյան Հ.Հ., Օրոր-ողբերգ տեքստերը հայկական բանահյուսության մեջ (գրական միջավայրի համատեքստում), էջ 97-107:
25. Պետրոսյան Ս.Գ., Տարոն-Բզունիքի արտոնյալ դասերի և պաշտամունքի մասին, էջ 5-18:
26. Սահակյան Կ.Ա., Հայրական դպրոցի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, էջ 181-190: Հոդվածները հրատարակվել են ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուում, N 24, պրակ 2, Գյումրի, 2021, 260 էջ:
27. Ակոպով Ա.Ա., Մամրվանի գավառի ժողովրդագրական պատկերն ըստ XVI դարի օսմանյան հարկացուցակների, էջ 101-110:
28. Այվազյան Գ.Ս., Հայրապետյան Ս.Ա., Ալեքսանդրապոլի գրական-երաժշտական բարքերի արտացոլումը «Սոխակ Հայաստանի» երգարանում, էջ 243-251:
29. Ավագյան Ի.Է., 2021, Ինչու փակվեց Ալեքսանդրապոլի Պատվո բլուրի գերեզմանոցը (ըստ ՀՀ ազգային արխիվի փաստաթղթերի), էջ 124-131:
30. Բազեյան Կ.Ռ., Շիրակի կանացիակերպ աղամանները, էջ 183-190:
31. Հայրապետյան Ա.Ս., ՌՄԴԲԿ Ալեքսանդրապոլի զինվորական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը ռուսական առաջին հեղափոխության տարիներին, էջ 132-141: Հոդվածները հրատարակվել են ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ» հոդվածների պարբերական ժողովածուում, N 24, պրակ 3, Գյումրի, 2021, 324 էջ:
32. Ալեքսանյան Կ.Վ., Սողացող էքսանսիայի թուրքական ռազմավարությունը 1920թ. թուրք-հայկական պատերազմի շրջանում, էջ 140-147:
33. Ակոպով Ա.Ա., Հայրապետյան Ա.Ս., Կիսկիմի (Բերդագրակի) գավառի պատմաճարտարապետական հուշարձանների տեղագրության ու արդի վիճակի շուրջ, էջ 105-114:
34. Այվազյան Գ.Ս., Վենետիկի Միթիթարյանների հոգևոր ներկայությունն Ալեքսանդրապոլի հասարակական կյանքում, էջ 78-86:
35. Ավագյան Ի.Է., Սարգսյան տարեգրությունը Էրիախի երկրի մասին, էջ 5-14:
36. Բազեյան Կ.Ռ., Շիրակի գեղարվեստական գործվածքը XIX դ.վ. - XX դարասկզբին, էջ 204-211:
37. Բոյաջյան Ա.Գ., Շիրակի մարզի բնակչության ազգային փոքրամասնությունների թվի շարժընթացը (XXդ. վերջ XXIդ. սկիզբ), էջ 177-187:
38. Խաչատրյան Հ.Հ., Մելիք-Աղամյան Հ.Հ., Հովհաննիսյան Ա.Լ., Բաբայան Տ.Օ., Ռուս և եվրոպացի ճանապարհորդների մշակութաբանական և բնագիտական ուսումնասիրությունները հյուսիս-արևելյան Հայաստանում (մինչև 1820թ.), էջ 155-162:
39. Հովհաննիսյան Ա.Լ., Հին Հայաստանի գենքերի և զինատեսակների ուսումնասիրության պատմագրությունը (նախնական ակնարկ), էջ 15-20:
40. Մատիկյան Հ.Հ., Օրորոցայինը՝ որպես արթնացումի տեքստ բանահյուսական և հեղինակային մտածիրում, էջ 236-245:
41. Մելքոնյան Վ.Գ., Լենինականի արդյունաբերական քաղաք դառնալու ճանապարհը. մարդկանց ձայները որպես ուսումնասիրության աղբյուր, էջ 212-217:
42. Պետրոսյան Լ.Ս., Մովսես Խորենացու հիշատակած «շերտավոր» եզրույթի շուրջ, էջ 42-48:
43. Պետրոսյան Ս.Գ., Ուրարտական թագավորության կազմավորման մասին, էջ 33-41:
44. Սահակյան Կ.Ա., Հովհաննիսյան Ռ.Պ., Գյումրի-Ալեքսանդրապոլի հայտնի գերդաստանների մասին տեղական գրույցներ, էջ 194-203:
45. Վարդանյան Բ.Վ., Մկրտչյան Լ., Լեռնակերտի բրոնզ-երկաթդարյան հուշարձանների մոդելավորման և թվայնացման խնդիրները, էջ 21-32:
46. Наатакян Д.С., Церковь Норашен в контексте армянской архитектурной школы Тайка и Гугарка X-XI вв., с. 293-306.
47. McDowel R., Matikyan H., Childlore and Children's Folklore in the UK and in Armenia: an Historical and Current Perspective, pp. 218-228.

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր-տնօրեն՝ ք.գ.դ. Հ.Այվազյան

Էլեկտրոնային փոստ՝ encyclop@sci.am

Կայքէջ՝ www.encyclopedia.am

Հրատարակչությունը 2021թ. պատրաստել է «Հայկական համապարփակ հանրագիտարանի» բառացանկը, կազմվել են հատորներում (VII-VIII) ներառվելիք նյութի եզրույթ-հասկացությունների թեմատիկ բառացանկերը, որոնց մեծ մասն արդեն պատրաստ է վերջնական տեսքով և ակադեմիական, բուհական ու այլ գերատեսչական շրջանակներում քննարկվելուց հետո կամբողջացվի մեկ ընդհանուր մայր բառացանկում:

Շարունակվել են «Հայաշխարհ» հանրագիտարանի բառացանկի համալրման և հոդվածների պատրաստման աշխատանքները, որոնք կամբողջացվեն 2022թ., և գիրքը (2 հատոր) կպատրաստվի հրատարակման թվային տարբերակով:

* * *

ԳԱԱ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ

Տնօրեն՝ ք.գ.թ. Ա.Հովսեփյան

Փոխտնօրեն՝ ք.գ.թ. Պ.Ոսկանյան

Գիտքարտուղար՝ տ.գ.թ. Կ.Մամիկոնյան

Էլեկտրոնային փոստ՝ info@nbe.am

Կայքէջ՝ www.nbe.am

Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Գիտամեթոդաբանական և գիտահետազոտական աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպությունը 26 պրոֆիլային թեմայով իրականացրել է գիտամեթոդաբանական և գիտահետազոտական աշխատանքներ:

«Հայատառ ազատ նմուշների հետազոտման առանձնահատկություններն ու դերը ձեռագրի ընդհանուր և մասնավոր հատկանիշների հայտնաբերման, նաև համեմատական հետազոտությունների իրականացման միջոցով դիտավորյալ փոփոխված ձեռագրով կատարված փորձառնական նմուշների պարզման նպատակով» թեմայի շրջանակում (դեկ.՝ Մ.Ալոյան) վեր են հանվել փորձաքննությունների կատարման գործընթացում առկա մեթոդական մոտեցումների կիրառման հետ կապված մի շարք խնդիրներ՝ իրականացվել են դիտավորյալ փոփոխված ձեռագրով կատարված կարճ գրառումների առանձին հետազոտություններ՝ ըստ կատարման փաստի բացահայտման և կատարողի նույնացման, ուշադրություն է դարձվել հայերենով կատարված գրառումների սեղմման աստիճանին, շարժման տեմպի դանդաղեցմանը, գրելագործիքի անհիմն կանգառներին, շարժումների ոչ հստակ սկզբնակետերին և վերջնակետերին, դիտավորյալ փոփոխված ձեռագրի թեքության փոփոխման առկայությանը:

«SERATEC PMB» թեստի միջոցով դաշտանային և դիակային արյան մեջ D-դիմերի հայտնաբերման մեթոդի տեղայնացման, կիրառման և արդյունքների գնահատման

առանձնահատկությունները դատակենսաբանական հետազոտությունների բնագավառում» թեմայի շրջանակում (դեկ.՝ Լ.Ավագյան) մշակվել է նոր մեթոդաբանություն դատակենսաբանական փորձագիտական հետազոտություններում մարդու դաշտանային, դիակային և/կամ ծայրամասային արյան տարբերակման համար:

«Պոչամբարների աղտոտված հողային տարածքների քարտեզագրումը (Գեղանուշի պոչամբարի օրինակի հիման վրա)» թեմայի շրջանակում (դեկ.՝ Ա.Գալստյան, Գ.Համբարյան) Կապանին մոտ գտնվող Գեղանուշ պոչամբարի օրինակի վրա իրականացվել են հետազոտական աշխատանքներ՝ պարզելու վերջինիս ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Կատարվել են հողի ծածկություն և գյուղատնտեսական բույսերում, որոնք աճեցվել են պոչամբարի ազդեցության գոտում, ծանր մետաղներով աղտոտվածության աստիճանի գնահատման ուսումնասիրություններ: Դաշտային ուսումնասիրությունները կատարվել են գարուն-ամառ ժամանակահատվածում, հողի նմուշներով վերցված շերտերի 0-10 և 20-30 սմ երեք մակերեսներից, պոչամբարի տարբեր ավերից՝ 10-500մ հեռավորության վրա: Մշակվել են հողում վնասակար նյութերի կլանման նվազեցմանը նպաստող նոր մեթոդներ, որոշվել են մարդկանց առողջության ու շրջակա միջավայրի վրա ազդող գործոնները և ազդեցությունների ցուցիչները: Հաշվի առնելով մեծ թվով գործող և կոնսերվացված պոչամբարների առկայությունը ՀՀ-ում՝ սկսվել են պոչամբարների մակերևույթից գազային արտանետումների բացասական ազդեցության նվազեցման համատեղ ուսումնասիրություններ, մշակվել է պոչամբարների մակերևույթից գոլորշիացման ընթացքում ծանր մետաղների արտանետումների նվազեցման մեթոդի նախնական տարբերակ, համաձայն որի պոչամբարների ջրային մակերեսը պետք է ծածկվի փքեցված պեռլիտի շերտով: Ըստ նախնական արդյունքների՝ ծանր մետաղների իոնների 70-80%-ը կլանվում է փքեցված պեռլիտի շերտով՝ դրանով իսկ նպաստելով շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցման խնդրի լուծմանը:

«Հայաստանի Հանրապետության տարածքում աճող սոճի ցեղի ծառերի տարեկան օղակների համեմատական գնահատումը տարբեր բնակլիմայական և էկոլոգիական պայմաններում «LINTAB» LTM06-E սարքավորման միջոցով» թեմայի շրջանակում (դեկ.՝ Ա.Պետրոսյան) հետազոտվել և համադրված վերլուծվել են ծառերի աճի ինտենսիվության առանձնահատկությունները, կառուցվել են տարբեր բնակլիմայական պայմանների տարբերակման մոդելներ, որոնք կարող են գործնականում օգտագործվել ինչպես անտառվերականգնման աշխատանքներում, այնպես էլ կլիմայի հետագա փոփոխությունների դեպքում անտառահամակարգերի հնարավոր փոփոխությունների հիմնավոր կանխատեսման համար: Վերլուծվել են դենդրոխրոնոլոգիական մեթոդով ծառերի հատման վաղեմության պարզման, ծառերի կտորների նույնականացման և մինչ հատելը ծառերի կենսական վիճակի պարզման փորձագիտական հետազոտությունների վիճակագրական տվյալները՝ ըստ տարիների և տեղանքի, բացահայտվել են միևնույն բնակլիմայական պայմաններում տվյալ ցեղի ծառերի աճի ինտենսիվության օրինաչափություններն ու փորձագիտական նշանակություն ունեցող առանձնահատկությունները:

«Փաստաթղթի վրայից գրառումների, պատկերների ներհրվածությունների և մատների քրտնաճարպային հետքերի երևակման ժամկետները և քրտնաճարպային հետքերում առկա նյութերի (արտաքին և օրգանիզմից դուրս մղվող նյութերի պահպանման ժամկետների) հետազոտությունը «Projectina Docustat DS-210» սարքի և «IR Prestige-21 FTIR» մոդելի սպեկտրոֆոտոմետրի միջոցով» թեմայի շրջանակում (դեկ.՝ Ա.Բաղդասարյան) պատրաստվել և հետազոտվել է 500-ից ավելի փորձարարական նմուշ: Մշակվել է նոր մեթոդաբանություն, որը հնարավորություն է տալիս չքայքայող եղանակով մարդու՝ առանձին դեպքերում թողնված բավարար որակի քրտնաճարպային հետքերի միջոցով

նույնականացնել տվյալ հետք թողած անձին կամ բացառել որևէ անձի առնչությունը՝ ըստ ձեռքի ավիի և/կամ մատների ձևաբանական և կառուցվածքային յուրահատկությունների:

Գիտագործնական աշխատանքներ

Կազմակերպության աշխատակիցներն անցկացրել են վերլուծական բնույթի 90 սեմինար՝ միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրման, հնարավոր ներդրման և ՀՀ-ում կիրառման նպատակով, շարունակել են ակտիվորեն մասնակցել փորձագիտական բնագավառներին առնչվող առցանց սեմինարներին, մասնավորապես Ամերիկյան քրեագիտական լաբորատորիաների տնօրենների միության (ASCLD), Եվրոպական միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության (CEPOL), «cfre»-ի, «LF Академия»-ի, «BUCHI Switzerland»-ի, IAS-ի, «DONAU LAB MOSCOW»-ի, «SABIT»-ի, «Directum»-ի, «Ultra Forensic Technology»-ի, «Bruker Corporation»-ի, «Cannabis Science and Technology» և այլն:

Կազմակերպության փորձագետները շարունակել են մասնակցել ներպետական և միջազգային առցանց գիտաժողովներին, սեմինարներին, գործնական դասընթացներին, գիտագործնական կլոր սեղաններին, «Դատափորձաքննության» միջպետական տեխնիկական կոմիտեի աշխատանքներին և այլն:

Շարունակվել են տվյալների շտեմարանների համալրման աշխատանքները՝ փամփուշտների և պարկուճների (199), ներկանյութերի, սառը զենքերի նմուշների (443), տարբեր մակնիշի մեքենաների անվադողերի և դրանց գծանախշերի (76), կեղծ մետաղադրամների բաղադրությունների (483), կեղծ թղթադրամների (ՀՀ, ՌԴ, ԱՄՆ, Եվրո, 3600), գրելագործիքների (2078), պայթուցիկ նյութերի արգասիքների (34), պարենային և ոչ պարենային ապրանքների, անշարժ գույքի արժեքների, հայտնի հեղինակների ռճային և կենսագրական տվյալների (61), ինչպես նաև GC-7890A MSD-5975C մոդելի մասս-սպեկտրոմետրի համար նոր SUDMED-MS_3016 գրադարանի ներդրումը (3016 անվանում նյութերի տեսականի), GC-7890A MSD-5975C մոդելի մասս-սպեկտրոմետրի համար նոր Cayman Spectral Library.new (CSL) գրադարանի ներդրումը (2000 անվանում նյութերի տեսականի) և GC-7890A MSD-5975C մոդելի մասս-սպեկտրոմետրի համար նոր SWGDRUG.3.9L գրադարանի ներդրումը (4000 անվանում նյութերի տեսականի):

Շարունակվել են դատափորձագիտական բնագավառում նոր դենդրոխրոնոլոգիական գործիքային «LINTAB» LTM06-E մոդելի սարքի և TSAP-Win համակարգչային ծրագրի միջոցով ապօրինի ծառահատումների հիմնական օբյեկտ հանդիսացող ծառատեսակներից վերցված նմուշների տարեկան օղակների պատկերների բազայի համալրման աշխատանքները:

Ստորև ներկայացվում են 2021թ. իրականացված դատափորձաքննությունների տեսակների և քանակի ամփոփ տվյալները

N	Տարեթիվ	Քրեադատավարական շրջանակներում կատարված դատական փորձաքննություններ	
		քանակային ցուցանիշը (հատ)	տեսակների քանակը (հատ)
1	2021	10007	27 (31 ուղղություններով)

Գիտաուսումնական աշխատանքներ

Համաձայն ՀՀ դատախազության և կազմակերպության միջև կնքված պայմանագրի՝ դատական փորձագետի որակավորման դասընթացներ է անցել 13 մասնագետ, ԳԱԱ համակարգում դատական փորձագետի որակավորում է ստացել 22 հավակնորդ:

Կազմակերպությունում արտադրական պրակտիկա են անցել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնի 12 ուսանող, ճանաչողական այցեր են կազմակերպվել ԵՊՀ 36, ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնի 28 և Եվրասիա միջազգային համալսարանի 21 ուսանողի համար:

Գիտափորձական-վերլուծական աշխատանքներ

2021թ. նորագույն տեխնոլոգիաներով իրականացվել են տոքսիկոլոգիական փորձաքննությունների անցկացման գիտական ուսումնասիրություններ, մասնավորապես՝ ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC), Դատական թունաբանների միջազգային ասոցիացիայի (TIAFT) համակարգային թունաբանական վերլուծության կոմիտեի հրապարակած ուղեցույցները, գրքերն ու ձեռնարկները, Մազերի թեստավորման ընկերության (SoHT), Դատական թունաբանների միության և Դատական փորձագիտությունների ամերիկյան ակադեմիայի (SOFT/AAFS) լաբորատոր ուղեցույցներն ու ձեռնարկները, Թունաբանական և դատաբժշկական քիմիայի ընկերության GTFC ուղեցույցները: Առանձնահատուկ ուշադրության են արժանացել վերոնշյալ ուղեցույցների վալիդացիայի ու անալիտիկ մեթոդների պահանջներն ու առաջարկները:

Վերանայվել են հետազոտական մեթոդիկաների ընթացակարգերը, իրականացվել են մի շարք ուսումնասիրություններ կենսաբանական օբյեկտներում, մասնավորապես մազի, մեզի, արյան, եղունգի, քրտինքի, թքի, ներքին օրգանների փորձանմուշների մեջ առավել տարածված թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դեղամիջոցների, ցնդելի նյութերի, մասնավորապես էթիլ սպիրտի, որոշ տեսակի թունավոր նյութերի հայտնաբերման և որոշման համար:

«Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքում և «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, դրանց մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկլորատորների խոշոր և առանձնապես խոշոր չափերը, թունավոր նյութերի ցանկը, խիստ ներգործող նյութերի ցանկը և դրանց խոշոր չափերը սահմանելու մասին» կառավարության որոշման մեջ անհրաժեշտ փոփոխություններ կատարելու նպատակով կազմակերպության մասնագետներն ակտիվորեն մասնակցել են ՀՀ առողջապահության նախարարության հանձնաժողովի աշխատանքներին:

«55 AA» մոդելի բոցային և «200 AA» գրաֆիտային ատոմային աբսորբցիոն սպեկտրոմետրերի միջոցով գնահատվել է Na, K, Mg, Ca, Cr, Mn, Fe, Co, Ni, Cu, Zn, Cd, Hg, Al, Si, Pb, P, As, Be, Sn, Sb և Mo քիմիական տարրերի քանակական պարունակությունը պոչամբարներում ու դրանց հարակից տարածքներում առկա հողերում, ջրերում, հանքային ապարներում:

Ուսումնասիրվել են «Niton XL3T 980» մոդելի ռենտգեն ֆլուորեսցենտային անալիզատորներով աշխատելու մեթոդի և ընթացակարգի հիման վրա տարբեր հողերի, հանքային բաղադրակազմերի, մետաղների և դրանց համաձուլվածքների, մետաղադրամների, թանկարժեք մետաղների փորձագիտական հետազոտությունների առանձնահատկությունները, կատարվել են նմուշապատրաստման օպտիմալ մեթոդների կատարելագործման աշխատանքներ, կատարելագործվել է ներդրված ձուլման եղանակով մետաղական խառնուրդը համասեռ համաձուլվածքի վերածելու մեթոդը:

«Berla iVe» ապարատաճրագրային միջոցների փաթեթով իրականացվել են նոր (հիմնականում 2010թ. հետո արտադրված) տրանսպորտային միջոցների ներկառուցված հիշողության կրիչներում պարունակվող տեղեկատվության արտածման և վերլուծության աշխատանքներ, ուսումնասիրվել և տեղայնացվել են համակարգի կիրառման սկզբունքները, իրականացվել են գործնական հետազոտություններ:

Հրապարակումներ

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. «Դատական փորձաքննություն և քրեագիտություն հայկական հանդես», N 5, Ե., «Էդիթ պրինտ» հրատ., 2021, 159 էջ:
2. «Դատական փորձաքննություն և քրեագիտություն հայկական հանդես», N 6, Ե., «Էդիթ պրինտ» հրատ., 2021, 180 էջ:

Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ

3. Ժավորնկովա Յու.Մ., Ժավորնկովա Դ.Յու., Հովսեփյան Ա.Ն., Գահինապետյան Ա.Պ., Ոսկանյան Պ.Ս., Պետրոսյան Ա.Ա., Հայրապետյան Տ.Ա., Այվազյան Հ.Գ., Դատական փորձաքննությունների նշանակումն ապօրինի անտառահատումների հետ կապված հանցագործությունների բացահայտման և քննության ընթացքում, Ե., «ԹԱՍԿ ՍՊԸ», 2021, 88 էջ:

Գրախոսվող ամսագրերում ու գիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

4. Ավանեսով Է.Ս., Մշակութային արժեքների հանդեպ ոսնձգությունները, որպես կանոն, չունեն ազգային առանձնահատկություններ, Ե., «Ռոսլին արվեստի հանդես», N3, 2021, էջ 77-80:
5. Агузумцяң Р.В., Шахвердяң Г.Д., Особенности судебно-психологической экспертизы психологического насилия, “Теорія та практика судової експертизи і криміналістики: зб. наук. пр.”, Харків: Право, 2021, вип. 24, с. 4-19.
6. Айвазяң Г.Г., Будагяң М.С., Некоторые актуальные проблемы судебно-трасологических экспертиз (Опыт Национального бюро экспертиз РА), “Sud ekspertizasi: kecha va bugun. Respublika ilmiy-amaliy konferensiya materiallari”, Toshkent, 2021, с. 263-268.
7. Алоян М.А., Некоторые особенности диагностических исследований кратких почерковых объектов, выполненных на армянском языке, М., “Теория и практика судебной экспертизы”, т. 16, N2, 2021, с. 116-121.
8. Арутюнян А.А., Восканяң П.С., Неохраняемые элементы товарного знака. Обзор нормативно-правового обеспечения в Республике Армения, мат. V Міжнар. наук.-практ. конф. “Проблеми теорії та практики судової експертизи з питань інтелектуальної власності (Крайнівські читання)”, Київ, Видавництво Ліра, 2021, с. 85-89.
9. Арутюнян А.А., Габриелян О.Б., Тавадьяң Г.К., О специфике судебно-товароведческих экспертиз по делам незаконной вырубкы леса в Республике Армения, мат. I міжнар. наук.-практ. конф. “Роль і перспективи розвитку товарознавчих та еконо- мічних експертиз у державному і приватному секторах”, Одеса, Видавничий дім “Гельветика”, 2021, с. 7-12.
10. Багдасаряң Т.С., Восканяң П.С., Аракелова Э.Р., Григоряң С.Л., Галстяң А.С., Казаряң Г.Г., Метод уменьшения выбросов тяжелых металлов с испарениями с поверхности хвостохранилища, Ер., “Вестник АГИУ”, сер. Химич. и природоохран. технологии, N 2, 2021, с. 52-57.
11. Восканяң П.С., Титаняң Э.Л., К вопросу о формировании государственных реестров судебных экспертов и научных методик в Республике Армения, зб. мат. міжнар. наук.-практ. конф.-полілогу “Актуальні питання судової експертизи і криміналістики”, Харків, Право, 2021, с. 24-26.
12. Восканяң П.С., Декриминализация промышленного конопляного рынка в Республике Армения. Особенности проявления новой реальности, мат. III міжнар. наук.-практ. конф. “Актуальні питання судової експертології, криміналістики та кримінального процесу”, К. : Видавництво Ліра-К, 2021, с. 77-81.
13. Габриелян О.Б., Арутюнян А.А., Мовсисяң Ш.А., О судебно-товароведческих экспертизах, проводимых в Национальном бюро экспертиз РА, М., “Восток-Запад: партнерство в судебной экспертизе. Актуальные вопросы судебной экспертизы”, 2021, с. 89-95.

14. Гукасян А.П., Правовая регламентация предотвращения семейного насилия в Армении и опыт правоприменения, "Contemporary approaches when performing judicial expertise: Theory and practice", "International scientific-practical conference of judicial expert", journal Legea si Yiata, Chisinau, N 11-12, 2021, p. 37-41.
15. Мамиконян К.О., Объекты исследования экономической экспертизы на примере Республики Армения, "Електронні документи як об'єкт дослідження в економічній експертизі: сьогодення і перспективи", Дніпро, 2021, с. 20-22.
16. Мамиконян К.О., Финансово-экономическая экспертиза при банкротстве юридических лиц, мат. VIII международной научно-практической конференции "Теория и практика судебной экспертизы в современных условиях", М., "РГ-Пресс", 2021, с. 189-192.
17. Мамиконян К.О., Методология расчета упущенной выгоды в рамках финансово-экономической экспертизы, М., "Труды Академии управления МВД России", N 1 (57), 2021, с. 164-169.
18. Мамиконян К.О., К вопросу об определении рыночной стоимости акций компании в рамках финансово-экономической экспертизы, "Криміналістика і судова експертиза: міжвідом. наук.-метод. зб.", Київ, Видавництво Ліра-К, вип. 66, 2021, с. 861-878.
19. Мамиконян К.О., Вопросы переоценки основных средств, зб. наук. пр., Харків, "Теорія та практика судової експертизи і криміналістики", вип. 25, "Право", 2021, с. 48-59.
20. Мартиросян С.Т., Андреасян Н.А., Цаканян А.В., К вопросу о сроках годности скоропортящейся продукции, зб. мат. міжнар. наук.-практ. конф.-полілогу "Актуальні питання судової експертизи і криміналістики", Харків, "Право", 2021, с. 212-214.
21. Мелкумян Д.Я., Взрывы газовых баллонов на автотранспорте, "Вісник ОНДІСЕ. Наукове-практичне видання", вип.10, Одеса, 2021, с. 56-61.
22. Мовсисян Ш.А., Габриелян О.Б., Определение рыночной стоимости исследуемых объектов по методу ретроспективного пересчета в рамках проводимых судебных товароведческих экспертиз, мат. III міжнар. наук.-практ. конф. "Актуальні питання судової експертології, криміналістики та кримінального процесу", К., Видавництво Ліра-К, 2021, с. 196-200.
23. Овсепян А.Н., Ованесян Р.А., Мхитарян К.Г., Причинно-следственная связь между дефектами медицинской помощи и летальным исходом, "Узбекистон суд експертизаси", Тошкент, N 2, 2021, с. 6-9.
24. Титанян Э.Л., Некоторые особенности эффективного противодействия преступлениям, непосредственно связанным с коррупцией: повторная экспертиза как метод выявления, Ё., «Օրէնքի պարզութիւն», N 12, 2021, էջ 161-169:
25. Товмасян А.Г., Восканян П.С., Анализ статданных по обнаруженным наркотическим средствам в рамках выполненных в Национальном бюро экспертиз РА экспертных исследований за период 2016-2020 годы, "Актуальні питання та перспективи розвитку судової експертизи та криміналістики: мат. міжн. наук.-практ. конф.", Одеса, Видавничий дім "Гельветика", 2021, с. 304-313.
26. Lutsenko Kh., Roman A., Grigoryan S., Kocharyan V., Research on a voice changed by distortion, "Теорія та практика судової експертизи і криміналістики: зб. наук. пр.", вип. 23, Харків: „Право“, 2021, с. 188-202. Հոդվածները հրատարակվել են «Դատական փորձաքննություն և քրեագիտություն հայկական հանդես»-ում, N 5, Ե., «Էդիթ պրինտ» հրատ., 2021, 160 էջ
27. Հովհաննիսյան Գ.Ա., Կերպարվեստի նմուշների գնահատման Հայաստանի Հանրապետության և միջազգային փորձը, էջ 82-91:
28. Մամիկոնյան Կ.Հ., Գալստյան Է.Լ., Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության շրջանակներում պետությանը պատճառված վնասի հետազոտության հարցերի շուրջ, էջ 66-73:
29. Պետրոսյան Ա.Ա., Հարությունյան Ա.Ա., Թավադյան Գ.Գ., Հայրապետյան Տ.Ա., Հայաստանի Հանրապետությունում ապօրինի ծառահատումների հետ կապված դատական փորձաքննությունների իրականացման մոտեցումները, էջ 9-18:
30. Սարգսյան Մ.Վ., Իրավական և տեխնիկական գիտելիքների համադրումը դատական ավտոտեխնիկ-փորձագետի պրակտիկայում, էջ 26-31:
31. Վարդանյան Ա.Ռ., Ալեքսանյան Յ.Ս., Անչափահասների տագնապայնության ուսումնասիրման առանձնահատկությունները դատահոգեբանական փորձաքննությունների շրջանակներում, էջ 74-81: Հոդվածները հրատարակվել են «Դատական փորձաքննություն և քրեագիտություն» հայկական հանդեսում, N 6, Ե., «Էդիթ պրինտ» հրատ., 2021, 152 էջ
32. Ավագյան Լ.Ա., Տեր-Գևորգյան Ա.Գ., «SERATEC PMB» թեստի միջոցով դաշտանային և դիակային արյան մեջ D-դիմերի հայտնաբերման մեթոդի տեղայնացման, կիրառման և արդյունքների

գնահատման առանձնահատկությունները դատակենսաբանական փորձագիտական հետազոտություններում, էջ 9-17:

33. Բադեյան Ա.Վ., Անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումների հետևանքով տեղի ունեցած դժբախտ դեպքերում մարդկային գործոնի ազդեցության նշանակությունը, էջ 56-61:
34. Բուդաղյան Մ.Ս., Այվազյան Հ.Գ., Հակոբյան Հ.Պ., Կաչուն Ժապավենների հետազոտության և դրանց նույնացման առանձնահատկությունները, էջ 51-55:
35. Դալլաքյան Դ.Ա., Ավտոտրանսպորտային միջոցների վարորդների գործողությունների վերլուծության և գնահատման առանձնահատկությունները վրաերթերի ժամանակ՝ տեսանելիության գործոնների ազդեցության համատեքստում, էջ 62-71:
36. Նիկոլյան Ս.Հ., Ցականյան Ա.Վ., Անդրեասյան Ն.Ա., Սննդամթերքի փորձաքննության ընթացքում կիրառվող մանրէաբանական աղտոտվածության արագ հայտնաբերման մեթոդների ընդհանուր բնութագիրը, էջ 18-31:
37. Սարգսյան Մ.Վ., Հետընթացի ժամանակ վարորդի գործողությունների գնահատումը տեխնիկական և իրավական տեսանկյունից, էջ 72-79:
38. Агузумцяи Р.В., Психологические принципы проектирования системы профессионального обучения, с. 80-86.
39. Саркисян П.Г., Мхитарян К.Г., Гистологические и гистохимические аспекты оценки определения давности внутричерепных гематом при черепно-мозговых повреждениях, с. 42-46:

Ա.Հովսեփյանը պարգևատրել է ՀՀ քննչական կոմիտեի «Համագործակցության համար» և Հայ փորձագետների միության ոսկե մեդալներով, շնորհվել է «Հայ փորձագետների միավորում» հասարակական կազմակերպության «Պատվավոր դատական փորձագետի» կոչում:

ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

Հաշվետու տարում անցկացվել է 3 ընդհանուր ժողով:

Հայաստանի Հանրապետությունում COVID-19 համավարակով պայմանավորված՝ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովն անցկացվել է հեռավար: ԳԱԱ անդամներին ներկայացվել է ԳԱԱ 2020թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության արդյունքների մասին հաշվետվությունը: Հաշվի առնելով արված դիտողություններն ու առաջարկությունները՝ ԳԱԱ նախագահությունը հաստատել է ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի որոշումը:

Հունիսի 28-29-ի ընդհանուր ժողովում անցկացվել են ԳԱԱ կառավարման մարմինների ընտրություններ: ԳԱԱ նախագահ է ընտրվել ակադեմիկոս Ա.Սադյանը, փոխնախագահ՝ թղթակից անդամ Հ.Մաթևոսյանը, ակադեմիկոս-քարտուղար՝ թղթակից անդամ Ա.Իշխանյանը: ԳԱԱ գիտական բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարներ են հաստատվել և ԳԱԱ նախագահության անդամներ են ընտրվել ակադեմիկոսներ Լ.Աղալովյանը (Մաթեմատիկայի և տեխնիկական գիտությունների բաժանմունք), Ռ.Կոստանյանը (Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք), Լ.Թավադյանը (Քիմիայի և Երկրի մասին գիտությունների բաժանմունք), Յու.Սուվարյանը (Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք) և թղթակից անդամ Ռ.Հարությունյանը (Բնական գիտությունների բաժանմունք): ԳԱԱ նախագահության անդամներ են ընտրվել նաև ակադեմիկոսներ Գ.Գևորգյանը, Գ.Ղազինյանը, Ռ.Մարտիրոսյանը, Ա.Մելքոնյանը, Գ.Պողոսյանը, թղթակից անդամներ Ա. Հախումյանը, Վ.Մելիքյանը:

Հոկտեմբերի 21-ի ընդհանուր ժողովում հարցման կարգով անցկացված քվեարկության արդյունքում Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Ա.Սերգենին ընտրվել է ԳԱԱ պատվավոր անդամ:

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում անցկացվել է նախագահության 14 նիստ, քննարկվել է շուրջ 25 հարց:

Նախագահության նոյեմբերի 5-ի ընդլայնված նիստում ԳԱԱ և ՌԳԱ նախագահներ Ա.Սադյանը և Ա.Սերգենին ստորագրել են Ռուսաստանի և Հայաստանի գիտությունների ակադեմիաների գիտատեխնիկական համագործակցության համաձայնագրի դրույթների իրականացման ճանապարհային քարտեզը: Նիստում ՌԳԱ նախագահ ակադեմիկոս Ա.Սերգենին է հանձնվել ԳԱԱ պատվավոր անդամի դիպլոմը:

Նախագահության որոշմամբ հաստատվել են ԳԱԱ 2021թ. տարեկան ընդհանուր ժողովի որոշումը, գիտական բաժանմունքների բյուրոների նոր կազմերը, կատարվել է փոփոխություն ԳԱԱ բաժանմունքի կանոնադրության մեջ, նշանակվել են ԳԱԱ նախագահության խորհրդականներ, հաստատվել են ԳԱԱ՝ արտադրությունից կտրված, հեռակա և վճարովի ասպիրանտուրայի 2021թ. ընդունելության արդյունքները, Էթիկայի հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի կազմը և կանոնակարգը, ԳԱԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի նախագահը, ԳԱԱ «Հայաստանի քիմիական հանդեսի» գլխավոր խմբագիրը, ԳԱԱ կազմակերպությունների կողմից առաջադրված լիազոր ներկայացուցիչների ցուցակը, փոփոխվել է ԳԱԱ Արզականի գիտաժողովների տան գործարկման կարգը:

Նախագահության նիստում ընտրվել է ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, նշանակվել են ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի և Արվեստի ինստիտուտի գիտական ղեկավարներ:

Նախագահությունը դիմել է ՀՀ կառավարությանը խնդրանքով՝ անվանակոչել ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտն ակադեմիկոս Միքայել Տեր-Միքայելյանի անվամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՑԱՆՑ (ASNET-AM)

Ակադեմիական գիտահետազոտական կոմպյուտերային ցանցը (ASNET-AM) GEANT համաեվրոպական գիտակրթական ցանցային միջավայրում ներկայացնում է Հայաստանը որպես ազգային հետազոտական ու կրթական ցանց և նույն ծրագրերի շրջանակում մասնակցում Արևելյան գործընկերության (EaPConnect) նախագծին, որի արդյունքում ստեղծվում է գիտության և կրթության ոլորտի համար տարածաշրջանային գերաբազ ինտերնետային ցանցը: ASNET-AM ցանցը շարունակել է կիրառական հետազոտական աշխատանքները, իրականացրել ցանցի կապուլիների ապահովման ու զարգացման, վստահության, ինքնության ու անվտանգության ծառայությունների ընդլայնման, ամպային ծառայությունների ներդրման և առցանց իրական ժամանակի ծառայությունների ընդլայնման բարելավման աշխատանքներ:

Ցանցի կապուլիների սպասարկում և զարգացում: Իրականացվել է ASNET-AM ցանցի հիմնական հանգույցների և կապուլիների շուրջօրյա (24/7) անխափան աշխատանք՝ ապահովելով ցանցի ընդհանուր կապուլու թողունակությունը (10 Գբ/վրկ), ցանցի մուտքը GEANT համաեվրոպական գիտական ու կրթական ցանց և միջազգային այլ գիտական և կրթական ցանցեր, գումարային 2048 Մբ/վրկ երաշխավորված երկկողմանի IP կապուլի (առնվազն 2 անկախ ելքային/մուտքային IP կապուլիներով): Կատարվել է ցանցային հանգույցներում տեղադրված շուրջ 50 սարքավորման ծրագրային փաթեթների թարմացում և սպասարկում: Ստեղծվել և սպասարկվում է Բիլայն ցանցի հետ peering փոխանակման ծառայությունը: Կատարվել են Մատենադարանի միացման ցանցային արդիականացման աշխատանքները: COVID-19 համավարակի պայմաններում շարունակվել են BGP միացումների հայկական տիրույթում գտնվող կայքերի և ծառայությունների հասանելիության բարձրացման աշխատանքները:

Վստահության, ինքնության և անվտանգության ծառայությունների զարգացում: Շարունակվել է GEANT ցանցի eduroam (educational roaming) ծառայության զարգացումը: ASNET-AM ցանցում գործող eduroam համակարգի զարգացման հետազոտությունների ու կիրառական մշակումների արդյունքում GEANT-ի եվրոպական գործընկերների հետ հետազոտվել և փորձարկվել է Wi-FiMon լուծումը: Փորձարկվել է նաև eduroam համակարգի գաղտնաբառի ստուգումն իրականացնող IMAP connector-ների նոր լուծում: Կատարվել են համապատասխան աշխատանքներ, ստեղծվել է «eduroam» wifi ռոումինգային ծածկույթ Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, Հայաստանի ազգային գրադարանի, Ֆրանսիական համալսարանի, Գիտակրթական միջազգային կենտրոնի տարածքներում և Հիմնարար գրադարանի ընթերցասրահներում:

Ստեղծվել է կենտրոնացված տարաբաշխման ավտոմատացված SSL հավաստագրերի համակարգի թարմացված տարբերակ, որը տրամադրում է անվճար SSL հավաստագրեր տարբեր Certificate Authorities (CA) աղբյուրներից, օրինակ՝ ZeroSSL, LetsEncrypt:

Համակարգը հիմնված է ժամանակակից Automatic Certificate Management Environment (ACME) արձանագրության 2-րդ սերնդի (version 2) վրա և ունի նոր հավաստագրերի ադրյուրներ ընդգրկելու հնարավորություն: Աշխատանքը ներկայացվել է CSIT-2021 գիտաժողովում և ընդունվել տպագրության արտերկրում: ASNET-AM ցանցի անդամ-կազմակերպությունների համար կազմակերպվել է «ASNET-AM ցանցի ծառայությունների անվտանգ և արդյունավետ օգտագործում» վերինարների շարք, որոնց ընթացքում ներկայացվել են ցանցի որոշ ծառայությունների գրագետ, անվտանգ և արդյունավետ օգտագործման կանոնները:

Ամպային ծառայությունների ներդրում: Շարունակվել են ենթակառուցվածքը որպես ծառայություն (Infrastructure as a Service) ամպային ծառայության զարգացման աշխատանքները: Վիրտուալ հաշվողական ռեսուրսների ամպային միջավայր է տրամադրվել ԵՊՀ-ին, Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտին, Էկոկենտրոնին, Սլավոնական համալսարանին և Մաշտոց կրթական համալիրին: Ծառայությունը հնարավորություն է տալիս վեր միջավայրում մեկ հպումով կառավարել վիրտուալ մեքենաները, այդ թվում՝ ոչնչացնել կամ կապակցել վիրտուալ միջավայրերը:

Առցանց իրական ժամանակի ծառայությունների ընդլայնում: Վարակի կանխարգելման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ շարունակվել են meet.asnet.am հարթակի սպասարկման ու արդիականացման աշխատանքները: Հարթակը, որտեղ գրանցված է ավելի քան 100 օգտատեր, կազմակերպություններ, ապահովում է գիտական և կրթական ոլորտների կազմակերպությունների առցանց տեսակոնֆերանսների և հեռավար հանդիպումների կազմակերպումը: Ցանցի edu.asnet.am հեռավար կրթական հարթակում մշակվել և մեկնարկել է «Տվյալների վերլուծություն R միջավայրում սկսնակների համար» առցանց եռամսյա կրթական ծրագիրը, որին մասնակցել են նաև ԳԱԱ համակարգի ասպիրանտներ և գիտաշխատողներ:

Առցանց իրական ժամանակի մշտադիտարկման ծառայությունների և log ֆայլերի կառավարման ծառայությունների բարելավում: Շարունակվել են ցանցի մշտադիտարկման ծառայության աշխատանքները: Թեստավորվել և անընդհատ մշտադիտարկվել են ցանցային OSPF արձանագրությունները: GEANT-ի գործընկերների հետ նախատեսվում է համատեղ կարգավորել և տեղադրել Raspberry Pi-ն թեստային սարքերը:

ASNET-AM ցանցի ծառայություններից 2021թ. օգտվել են հանրապետության 5 քաղաքում տեղակայված հանգույցներից օգտվող գիտնականներ, գիտական և տեխնիկական աշխատողներ, ասպիրանտներ, ուսանողներ և այլ օգտագործողներ:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը ստեղծվել է համաձայն «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի՝ որպես ԳԱԱ կառուցվածքային ստորաբաժանում:

Հանձնաժողովի գործունեության նպատակն է՝ ուղղորդել և պաշտպանել Սևանա լճի, որպես ՀՀ բնապահպանական, տնտեսական, սոցիալական, ռեկրեացիոն արժեք ունեցող ռազմավարական նշանակության էկոհամակարգի բնականոն զարգացման, վերականգնման, բնական պաշարների պահպանման, վերարտադրման և ռացիոնալ օգտագործման պետական քաղաքականության իրավական և տնտեսական հիմունքները:

Ղեկավարվելով «Սևանա լճի մասին» օրենքի 20 և 21 հոդվածների դրույթներով և ՍԼՊԳ հանձնաժողովի 2021թ. աշխատանքային տարեկան ծրագրով, հաշվի առնելով հանրապետությունում սահմանված որոշակի սահմանափակումները՝ Սևանա լճի

էկոհամակարգի, բնական ռեսուրսների պահպանման, վերականգնման, վերարտադրության և արդյունավետ օգտագործման վերաբերյալ խնդիրները հիմնականում քննարկել են հեռավար տարբերակով:

ՄԼՊՓ հանձնաժողովը հաշվետու տարում անցկացրել է 28 նիստ, քննարկվել են Սևանա լճի ու նրա ջրավազանի հետ առնչվող ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների, մարզպետարանների և մի շարք ՓԲԸ ու ՍՊԸ ներկայացված ծրագրերի, նախագծերի, տեխնիկատնտեսական հիմնադրույթների վերաբերյալ փորձագիտական եզրակացությունների, կարծիքների հետ կապված խնդիրները:

Հանձնաժողովը շարունակում է ակտիվ համագործակցությունը ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և նրա ենթակա կառույցների, այդ թվում՝ «Սևան» ազգային պարկ», «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ների, ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի և Գեղարքունիքի մարզպետարանի հետ:

Հանձնաժողովին փորձաքննության ներկայացված 24 ծրագրերին, նախագծերին և առաջարկություններին տրվել են կարծիքներ, այդ թվում՝ բացասական 8 կարծիք է ներկայացվել Սևանա լճի ջրավազանում տարբեր բնույթի հանքավայրերի բացման և նախատեսվող քոթեջների կառուցման վերաբերյալ ներկայացված ծրագրերին ու նախագծերին, դրական 8 կարծիք՝ Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման և օգտագործման, ռոտզման նպատակով լճից ջրառի, իշխանի պաշարների վերականգնման, ձկնաբուծության զարգացման և հանգստի գոտու ընդլայնման վերաբերյալ ծրագրերին ու նախագծերին: Հանձնաժողովը փորձագիտական եզրակացությունով 8 առաջարկություն է ներկայացրել Արփա-Սևան թունելի թիվ 2 վթարային հատվածի վերականգնման, Սևանա լճի ջրածածկման ենթակա տարածքների մաքրման, նոր ջրամբարների կառուցման, լճի բացասական հաշվեկշռի կարգավորման և լճում ձկան ու խեցգետնի արդյունագործական որսի տարեկան առավելագույն չափաքանակների բնութագրման վերաբերյալ:

ՄԼՊՓ հանձնաժողովի նիստերում քննարկվել ու հաստատվել են 2022թ աշխատանքային ծրագիրը և տարեկան գործունեության հաշվետվությունը, իրականացվել է այց Սևանա լճի ջրավազան, կազմակերպվել են քննարկումներ «Սևան» ազգային պարկ ՓԲԸ մասնագետների հետ:

Հանձնաժողովը տարբեր բնույթի խնդիրներ քննարկելիս առաջնորդվել է հետևյալ սկզբունքներով՝ Սևանա լճից ռոտզման և այլ նպատակներով ջրթողումներն իրականացնել միայն լճի դրական հաշվեկշիռը պահպանելու պայմանով, ապահովել լճից ձկնատեսակների որսի քանակական և որակական ցուցանիշները, կատարելագործել լճի էկոլոգիական համակարգի հիդրոէկոլոգիական մոնիթորինգի պայմանները, ներդնել բնապահպանական նորագույն տեխնոլոգիական առաջարկություններ լճի ջրային ռեսուրսների պահպանման և օգտագործման ոլորտում, վերահսկել ու կանխարգելել լճի էկոլոգիական գոտիների՝ շրջակա միջավայրին վտանգ սպառնացող երևույթներն ու միջոցառումները:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Հաշվետու տարում ԳԱԱ-ն, աշխարհում մոլեգնող COVID-19 համաճարակի պայմաններում, շարունակել է ակտիվ համագործակցությունը միջազգային գիտական կառույցների և գիտությունների ակադեմիաների հետ: Առկա համագործակցություններն

ակտիվ պահելու և նոր համագործակցություններ նախաձեռնելու նպատակով ԳԱԱ ներկայացուցիչները մասնակցել են մի շարք քննարկումների և կոնֆերանսների:

Մայիսին առցանց տեղի է ունեցել ԱԼԼԵԱ գլխավոր ասամբլեան «Գիտության սահմանների միջով» խորագրով: Հիմնական տեսությունների, լիագումար քննարկումների ու նիստերի բազմազան ծրագիրը մասնակիցներին հրավիրել է ուսումնասիրել միջոցիցիպլինար հետազոտությունների օգուտներն ու մարտահրավերները և գիտության սահմանները տարածաշրջանների, առարկաների ու սերունդների միջև: Համաժողովը եզրափակվել է ԱԼԼԵԱ-ի հրապարակած «Փաստ, թե՞ կեղծիք. գիտության ապատեղեկատվության դեմ պայքար» զեկուցման քննարկմամբ, որին մասնակցել է ԳԱԱ ներկայացուցիչը:

ԳԱԱ պատվիրակությունը նախագահ ակ. Ա.Սադյանի գլխավորությամբ սեպտեմբերին Մինսկում մասնակցել է «Անկախ պետությունների համագործակցության 30 տարին. արդյունքներ, հեռանկարներ» միջազգային գիտագործնական համաժողովին և Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի նիստին:

Սեպտեմբերին ԳԱԱ նախագահ Ա.Սադյանը, ակադեմիկոս-քարտուղար Ա.Իշխանյանը Մոսկվայում հանդիպել են ՌԴ ԳԱ նախագահ Ա.Սերգենի հետ, քննարկվել է երկու պետությունների ակադեմիաների միջև ստորագրվելիք համագործակցության ճանապարհային քարտեզը, որտեղ ներառված են և՛ ՀՀ-ի, և՛ ՌԴ-ի համար գերակա ուղղությունները:

Նոյեմբերին ԳԱԱ-ն հյուրընկալել է ՌԴ ԳԱ պատվիրակությանը նախագահ Ա.Սերգենի գլխավորությամբ, ստորագրվել է գիտատեխնիկական համագործակցության համաձայնագրի դրույթների իրականացման ճանապարհային քարտեզը, որտեղ նշված համատեղ հետազոտությունները ներառում են ֆիզիկայի, մաթեմատիկայի, ինֆորմատիկայի, նանոտեխնոլոգիաների, կենսաբանական գիտությունների և կենսատեխնոլոգիայի, քիմիայի և նյութերի մասին գիտության, պատմաբանասիրական, բժշկական, գյուղատնտեսական հետազոտությունների, էներգետիկայի, մեխանիկայի ոլորտները:

Նոյեմբերին Մինսկում կայացել է ԱՊՀ երկրների գիտնականների համաժողովը, որին մասնակցել է ԳԱԱ պատվիրակությունն ակադեմիկոս-քարտուղար Ա.Իշխանյանի գլխավորությամբ: Համաժողովի հիմնական նպատակն էր զարգացնել ԱՊՀ երկրների գիտական հաստատությունների գիտատեխնիկական համագործակցությունը, խթանել համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, մշակել առաջարկություններ ԱՊՀ երկրների նորարարական քաղաքականության զարգացման համար, նպաստել ԱՊՀ երկրների երիտասարդության շրջանում գիտության տարածմանը և փորձի փոխանակմանը: Համաժողովում ընդունվել է մի շարք ոլորտներում համատեղ փոխգործակցության հռչակագիր:

Համաժողովին զուգահեռ տեղի են ունեցել Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի (ԳԱՄԱ) գիտական խորհուրդների նիստեր, քննարկվել են ԳԱՄԱ գիտական տարբեր ոլորտներին վերաբերող խորհուրդների աշխատանքների համակարգման հարցերը, կայացվել են գիտական խորհուրդների աշխատանքն էլ ավելի ամրապնդելու և զարգացնելու որոշումներ:

Շարունակվել է համագործակցությունը Չինաստանի գիտությունների ակադեմիայի հետ Միջազգային գիտական կազմակերպությունների դաշինքի (ՄԳԿԴ) շրջանակում: Վերջինս հայտարարել է ինստիտուտների ցանց ստեղծելու մասին (ANSO-BIDI school), որի նպատակն է կազմակերպել եռամսյա դասընթացների շարք կառավարում, նորարարություններ, առաջնորդություն ու կայուն զարգացում թեմաներով: Դասընթացների մասնակիցները «Մեկ գոտի և մեկ ճանապարհ» նախագծին միացած երկրների

կառավարական կազմակերպությունների և գիտահետազոտական ինստիտուտների ներկայացուցիչներ էին: ԳԱԱ շուրջ 20 գիտնական է մասնակցել դասընթացին:

Հաշվետու տարում ԳԱԱ ինստիտուտները կազմակերպել են մի շարք միջազգային գիտաժողովներ և կոնֆերանսներ:

Մարտին ԳԱԱ-ում կայացել է Մոսկովյան պայմանագրի 100-ամյակին նվիրված կլոր սեղան, որը կազմակերպել էր Պատմության ինստիտուտը, որին մասնակցել են ականավոր գիտնականներ ՌԴ առաջատար գիտական կենտրոններից:

Հուլիսին ԳԱԱ-ում անցկացվել է Չինաստանի կոմունիստական կուսակցության հիմնադրման 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, որը կազմակերպել էին «Չինաստան-Եվրասիա» քաղաքական և ռազմավարական հետազոտությունների խորհուրդը, Արևելագիտության ինստիտուտը, ՀՀ ԶԺՀ դեսպանատունը:

Սեպտեմբերին Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում մեկնարկել է «Համակարգչային գիտություն և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ՝ CSIT-2021» 13-րդ միջազգային գիտաժողովը, որի նպատակն էր խրախուսել գիտական և տեխնոլոգիական տեղեկատվության փոխանակումը համակարգչային գիտության և ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառում, ինչը հնարավորություն կտա հայ և արտասահմանցի գիտնականներին ներկայացնել և քննարկել իրենց գիտական գաղափարները, հետազոտությունների արդյունքները, զարգացման հեռանկարները, փոխանակել փորձը: Գիտաժողովին առկա և առցանց մասնակցել է ավելի քան 70 հետազոտող և ճարտարագետ Հայաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Ուկրաինայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Կանադայից, Ֆրանսիայից, Հունաստանից, Մակեդոնիայից, Վրաստանից, Իրանից:

Հոկտեմբերին ԳԱԱ-ում մեկնարկել է «Հայաստանը և տարածաշրջանը. դասեր, արժևորումներ, հեռանկարներ» խորագրով միջազգային գիտաժողովը՝ նվիրված 1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի 100-ամյակին:

Հոկտեմբերին ԳԱԱ-ում անցկացվել է «Գենետիկա XXI» կլոր սեղանը, որը կազմակերպել էին ԳԱԱ-ն և Հայաստանում «Ռոսսոտրոդնիչեստվո»-ի ներկայացուցչությունը՝ Ռուսաստանի Դաշնության «Գիտության և տեխնոլոգիայի տարի-2021»-ի շրջանակում:

Նոյեմբերին ԳԱԱ-ն ընդունել է ԱՄՆ Ռազմածովային հետազոտությունների գլոբալ գրասենյակի պատվիրակությանը: Հանդիպման նպատակն էր տեղում ծանոթանալ նորարարական գաղափարներին և նախագծերին, բացահայտել ապագայում դրանց ֆինանսավորման հեռանկարները:

Միջակադեմիական համագործակցությունը շարունակվել է նաև նախկինում կնքված պայմանագրերի հիման վրա Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Մոլդովայի, Ուզբեկստանի, Չինաստանի, Լիտվայի, Ռումինիայի, Ավստրիայի, Տաջիկստանի, Թուրքմենստանի գիտությունների ակադեմիաների, Ուկրաինայի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի գիտությունների ազգային ակադեմիաների ու գիտական կառույցների հետ:

Միջպետական և միջգերատեսչական համագործակցություններից են տնտեսական միջկառավարական հանձնաժողովի կողմից իրականացվող հայ-լիտվական, հայ-լատվիական, հայ-թուրքմենական, հայ-հնդկական, հայ-չեխական, հայ-չինական, հայ-եգիպտական, հայ-տաջիկական համագործակցությունները: Հայ-ռուսական տնտեսական միջկառավարական համագործակցության շրջանակում շարունակվել է համագործակցությունը Բյուրականի աստղաֆիզիկական աստղադիտարանի և ՌԴ «Ռոսկոսմոսի», ՌԳԱ հատուկ աստղաֆիզիկական աստղադիտարանի հետ տիեզերական տարածության հետազոտման և խաղաղ նպատակներով օգտագործման ասպարեզում:

Ելնելով իր ռազմավարությունից՝ ԳԱԱ-ն մշտապես ապահովել է երիտասարդ գիտնականների մասնակցությունը գիտության տարբեր ոլորտներում իրականացվող միջազգային հանդիպումներին և միջոցառումներին: Համաձայն ԳԱԱ-ի, Լինդաուում Նոբելյան մրցանակակիրների հանդիպումների Խորհրդի և Լինդաուում Նոբելյան մրցանակակիրների հանդիպումների հիմնադրամի միջև փոխըմբռնման հուշագրի՝ յուրաքանչյուր տարի ԳԱԱ-ի ներկայացրած երիտասարդ գիտնականները մասնակցել են Նոբելյան մրցանակակիրների հետ հանդիպմանը: Համաձայն պատճառով 2021թ. 70-րդ ամենամյա հանդիպումն իրականացվել է առցանց, որին մասնակցել է Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի ներկայացուցիչը:

ԳԱԱ-ն շարունակում է մասնակցել և իրականացնել տարբեր միջազգային գիտական ծրագրեր, այդ թվում՝ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ISTC), Եվրոպական համալսարանական կրթության ՏԵՄՊՈՒՍ համաեվրոպական շարունակական (TEMPUS) և այլն: ԳԱԱ կազմակերպություններն ակտիվորեն մասնակցել են նաև ԱՄՆ ծրագրերին՝ Քաղաքացիական հետազոտությունների և մշակումների (CRDF Global), Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ANSEF), ՆԱՏՕ-ի (NATO), Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության (BMBF) գերմանական Շտիֆտունգ Ֆոլքսվագեն հիմնադրամի (Volkswagen Stiftung Foundation) և այլ հիմնադրամների ծրագրերին: Միջազգային գիտական ծրագրերի և հիմնադրամների մասնակցության արդյունքները ներկայացվում են ստորև:

2021թ. արտասահմանյան երկրներ գործուղման է մեկնել ԳԱԱ 136 գիտաշխատող, որոնցից գիտաժողովների մասնակցել է 39, համատեղ աշխատանքներ է կատարել 53, բանակցություններ է վարել և կոնսուլտացիաների մասնակցել 44 գիտաշխատող: Արտասահմանից ժամանել է 266 գիտնական, որոնցից գիտաժողովների մասնակցել է 107, համատեղ աշխատանքներ է կատարել 76, բանակցություններ է վարել և կոնսուլտացիաների մասնակցել 83 գիտաշխատող:

Վարչությունը 2021թ. աջակցել է ԳԱԱ ինստիտուտներին ու կենտրոններին՝ տրամադրելով հավելյալ տեղեկություններ:

ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

N	Կազմակերպությունը	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնորհի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը (\$, €, դր., ռուբ., GBP, CHF)		Թեմայի ղեկավարը
				սկիզբ	ավարտ	ընդհանուր	2021թ. համար	
1	Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ	Macrovipera lebetina obtusa գյուրգայի թույնի A2 ֆոսֆոլիպազների և դեզինտեգրինների կառուցվածքաֆունկցիոնալ հետազոտությունները	ԿԳՄՄՆ ԳԿ, Հայ-բելառուսական համատեղ ծրագիր	2018-2021		10 800 000 դրամ		Գ. Կիրակոսյան
2		Բազմաբաղադրիչ ալոգեն բջիջների կենսասահմանադրությունը լյարդի ապաքոչայնացված սքաֆոլդի հետ	ԿԳՄՄՆ ԳԿ, Հայ-բելառուսական համատեղ ծրագիր	2019-2021		8 100 000 դրամ	1 687 500 դրամ	Զ. Կարաբեկյան

3		European Venom Network	COST Action CA19144 (EU, Horizon2020)	2020-2024	520 000 €		Ն.Այվազյան
4		Հուզական ակտիվացման և ճանաչման վրա հիմնված հոգեֆիզիոլոգիական դիագնոստիկ և ինտերվենցիոն մոտեցումներ վիրտուալ իրականության միջավայրում	Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ (EIF)	2022	7 400 000 դրամ		Ա.Խաչունց
5		Վիրտուալ իրականությունը որպես կախվածության և հուզական ընկալման շտկման միջոց	«Լավագույն տեխնոլոգիական լուծումները ոչ տեխնոլոգիական ոլորտներում» գաղափարների մրցույթ («Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ (EIF)), «Ֆիլիպ Մորիս Արմենիա», ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն)	միանվագ ֆինանսավորում	1 440 000 դրամ	1 440 000 դրամ	Ա.Թումանյան
6		Էլեկտրամագնիսական ալիքների <i>in vitro</i> կենսաբանական և թունավոր ազդեցություններն էրիթրոցիտների ուրվականների և նյարդային հյուսվածքի վրա	Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ (EIF)	2020-2021	1 087 470 դրամ	1 087 470 դրամ	Դ.Ղազարյան
7		Եռաչափ բիոտպագրությամբ սրտի փականների ստեղծում կենսահամատեղելի բիոպոլիմերների կիրառմամբ	Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ (EIF)	2020-2021	1 087 470 դրամ	1 087 470 դրամ	Է.Ղանդիլյան
8		Կենդանական թույների նեյրոպրոտեկտորների ուսումնասիրումը Պարկինսոնի և Ալցհեյմերի հիվանդությունների <i>in vitro</i> և <i>in vivo</i> մոդելներում	Հայ-ռուսական համատեղ ծրագիր	2021-2022	11 839 300 դրամ	6 159 500 դրամ	Ն.Այվազյան
9		Մոդիֆիկացված նանոմասնիկների և 5-ֆտորուրացիլի համակցված ազդեցության վերլուծությունը Քրոքերի սարկո-	Հայ-բելառուսական համատեղ ծրագիր	2021-2023	9 000 000 դրամ	2 080 000 դրամ	Գ.Կիրակոսյան

		մայի և ռաբոտմիոսարկունայի աճի և զարգացման վրա					
10		Տարիքի նույնականացումը ֆիզիոլոգիական բիոմարկերների միջոցով	«Ֆիլիպ Մորիս Արմենիա» ՍՊԸ	2021	4 010 000 դրամ	4 010 000 դրամ	Ն.Այվազյան
11		Եռաչափ բիոտպագրության սրտի փականների ստեղծում կենսահամատեղելի բիոպոլիմերների կիրառմամբ	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2020-2021	5000 \$	5000 \$	Է.Ղանդիլյան
12		Նախկին խորհրդային երկրների համար կենսաբժշկական պատկերավորման ցանցի ստեղծում	Զան-Ցուկերբերգ նախաձեռնություն	2020-2023	300 000 \$		Ն.Մարվազյան, Ն.Այվազյան
13	Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ	Խաղողի բազմազանության պահպանման և հարմարվողական հատկանիշների մոբիլիզացման խթանում	Միջազգային գիտական կազմակերպությունների դաշինք (ANSO)	2021-2023	150 000 \$	15 000 \$	Ք.Մարգարյան
14		Մոլեկուլային և բջջային կենսաբանության գործնական ուսուցում Հայաստանի երկու ռազմավարական համալսարաններում	Ֆոլքսվագեն հիմնադրամ	2021-2024	142 100 €	12 €	Վ.Վարդանյան
15		Պատտերն ճանաչող ընկալիչները որպես միջավայրային գործոնների առանցքային անցակետեր ռևոլյուցիոնար թափափուկ զարգացման ժամանակ	ԿԳՄՄՆ ԳԿ, Հայ-ռուսական համատեղ ծրագիր	2021-2023	11 860 000 դրամ	5 930 000 դրամ	Գ.Մանուկյան
16		Քաղցկեղների համալիր կենսամարկերների որոշման և ֆենոտիպերի դասակարգման մեթոդների մշակումը կենսաբանական ուղիների և բարձր թողունակության տվյալների հիման վրա	ԿԳՄՄՆ ԳԿ, Հայ-բելառուսական համատեղ ծրագիր	2021-2023	9 000 000 դրամ	1 500 000 դրամ	Ա.Առաքելյան
17		Համակարգչային սքրինինգի, մոլեկուլային մոդելավորման և կենսաքիմիական վերլուծության տեխնոլոգիաների կիրառումը կորոնավիրուսային վարակի բուժման նոր պոտենցիալ պատրաստուկ-	ԿԳՄՄՆ ԳԿ, ԲՀԳՏՊԿ	2021-2023	9 000 000 դրամ	3 216 000 դրամ	Զ.Կարալյան

		ների մշակման համար					
18		CD5 ^{բարձր} և CD5 ^{ցածր} նեոպլաստիկ կլոնները որպես քրոնիկ լիմֆոցիտային լեյկոզի կանխագուշակիչ մարկերներ	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2020-2021	5000 \$	2500 \$	Գ.Մանուկյան
19		Լիմֆոմայի տարբեր տեսակների համար հիվանդության զարգացման կանխագուշակում և ռիսկի գնահատում մեքենայական ուսուցման մոտեցման միջոցով	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2020-2021	5000 \$	2500 \$	Մ.Նիկողոսյան
20		Խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի արգելակման մոլեկուլային մեխանիզմները	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2020-2021	4951 \$	3295 \$	Վ.Առաքելով
21		Իմունոֆենոտիպավորումը որպես արդյունավետ միջոց բջիջների ենթախմբերի և ենթակլոնների որոշման համար	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2021-2022	5000 \$	5000 \$	Գ.Մանուկյան
22		Արցախի տարածքում պալեոէկոլոգիայի և վաղ մարդկային բնակեցման մոլեկուլային ուսումնասիրություն	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2021-2022	5000 \$	2500 \$	Մ.Անտոնոսյան
23		Խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի դեմ հակամանրէային պեպտիդների ուսումնասիրություն	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2021-2022	5000 \$	4500 \$	Հ.Զաքարյան
24		Խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի դեմ ցինկի և պղնձի հակավիրուսային ակտիվության <i>in vitro</i> գնահատումը	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2021-2022	5000 \$	4500 \$	Ա.Հակոբյան
25		Խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի ազդեցությունը ռեզիդենտ մակրոֆագի բջջային ցիկլի պրոֆիլի վրա	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2021-2022	5000 \$	4500 \$	Հ.Ավագյան
26		<i>Paramecium Caudatum</i> -ը որպես խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի հնարավոր էկոլոգիական կենսավայր	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2021-2022	5000 \$	4500 \$	Ն.Բայրամյան
27		Ai-ի վրա հիմնված դեղամիջոցի վերաթիրախավորում COVID-19-ի	Գիտության և կրթության հայկական ազգային	2021-2022	5000 \$	4500 \$	Ա.Առաքելյան

		բուժման համար բազմա- մոդալ կենսաբանական տվյալների կիրառմամբ	հիմնադրամ (ANSEF)				
28		ΚCΝΒI գենի մուտացիա- ների հետ ասոցացված զարգացման և էպիլեպ- տիկ էնցեֆալոպաթիանե- րի հիմքում ընկած ախ- տաբանական մեխանիզմ- ների ուսումնասիրություն	Գիտության և կրթության հայ- կական ազգային հիմնադրամ (ANSEF)	2021-2022	5000 \$	2850 \$	Վ.Վարդանյան
29		Մոտեցնելով անցյալը. շրջակա միջավայրի փո- փոխությունը և կենդանի- ների բազմազանությունը Հարավային Կովկասում վերջին 60000 տարում	DAAD	2021	6725 €	6725 €	Մ.Աստոնոս- յան
30		Էպիգենետիկ ազդեցու- թյունները հոգեբուժական հիվանդություններում	DAAD	2021	5525 €	5525 €	Դ.Ավետյան
31		Մարդու զգայական ըն- կալման համակարգերի գենետիկական փոփոխա- կանության լանդշաֆտի արդյունահանում գենո- մային մեծ տվյալների հա- վաքածուներում. ճանա- պարհի դեպի տվյալների վրա հիմնված նոր զգայա- կան նյութերի և միացու- թյունների մշակում	Ձեռնարկու- թյունների ինկու- բատոր հիմնա- դրամ (EIF)	2021	8 070 000 դրամ	8 070 000 դրամ	Ա.Առաքելյան
32		Հաշվողական մոտեցում- ների համապարփակ կիրառում բարդ հիվան- դությունների հետ կապ- ված խիստ անկանոն մո- լեկուլային գործընթացնե- րը հասկանալու համար	Ձեռնարկու- թյունների ինկու- բատոր հիմնա- դրամ (EIF)	2021	8 882 640 դրամ	8 882 640 դրամ	Գ.Զիլինգար- յան
33	«Հայկենսա- տեխնոլո- գիա» ԳԱԿ	«Կենսատեխնոլոգիա. գիտություն և պրակտի- կա, նորարարություն և բիզնես» միջազգային գիտաժողով	Միջազգային գիտատեխնի- կական կենտ- րոն (ISTC)	2021	5000 \$	5000 \$	Վ.Գոգինյան
34		5-ամինոլևուլինաթթվի ռեկոմբինանտ արտա- դրողների կառուցում՝ օգտագործելով ցիանո- բակտերիում Synecocystis-ը որպես հյուրընկալող շտամ	Coimbra Group	2021	2900 \$	2900 \$	Բ.Հարություն- յան
35		Միաբջիջ կանաչ ջրի- մուռների համեմատական	FEMS	2022, 3 ամիս	3500 \$	3500 \$	Լ.Սաղաթելյան

		բնութագիրը որպես բնական աստաքսանտինի աղբյուր: Կարոտինոիդների արտադրությունը խթանելու ռազմավարություններ					
36	Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն	Բնության հետ քաղաքների զարգացման, ինովացման և կառավարման համար համատեղ արտադրություն	EU Horizon 2020	2017-2022	190 000 €	28 500 €	Շ.Ասմարյան
37		Հայաստանում Սևանա լճի կառավարման գիտահեն գործիքակազմի ստեղծում	Գերմանիայի կրթության և գիտության ֆեդերալ նախարարություն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	2020-2023	11 200 €	4368 €	Շ.Ասմարյան
38		Հարավային Կովկասում զոոնոտիկ հիվանդությունների ատլասի ստեղծում	ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի վտանգների նվազեցման գործակալություն	2020-2022	38 400 \$	15 000 \$	Վ.Մուրադյան
39		«Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար	MENVIPRO, ERASMUS+ CBHE	2018-2022	24 735 €	11 855 €	Լ.Սահակյան
40		Միջուկային դատափորձաքննության ոլորտում կարողությունների զարգացում Հայաստանի և Վրաստանի միջև	Միջազգային գիտական և տեխնոլոգիական կենտրոն (ISTC)	2021-2023	300 000 \$	21 035 \$	Օ.Բելյակ
41	Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն	Կլիմայի գլոբալ տաքացման ազդեցությունը հարթավայրային և լեռնային լիմնոհամակարգերի կենսաբազմազանության վրա Բելառուսի և Հայաստանի օրինակով	ԿԳՄՄՆ ԳԿ, Հայ-ռուսական համատեղ ծրագիր	2021-2023	9 000 000 դրամ	1 147 400 դրամ	Բ.Գաբրիելյան
42		Բզեզների օտարածին տեսակների ինվազիա դեպի Կովկաս	ԿԳՄՄՆ ԳԿ, Հայ-ռուսական համատեղ ծրագիր	2021-2022	11 880 000 դրամ	6 000 000 դրամ	Մ.Քալաշյան
43		Կովկասի տարածաշրջանի մոծակների տեսակային կազմը և համաճարակաբանական կարգավիճակը	ԿԳՄՄՆ ԳԿ, Հայ-բելառուսական համատեղ ծրագիր	2021-2022	11 880 000 դրամ	5 940 000 դրամ	Օ.Շչեքբակով

44		Արբովիրուսային և մակարոնային վարակներ փոխանցող առյուծածուծ հողմածուծանիների բազմազանությունը, տարածվածությունը և համաճարակաբանական կարգավիճակը Հայաստանում և Բելառուսում	ԿԳՄՄՆ ԳԿ, Հայ-բելառուսական համատեղ ծրագիր	2019-2021	10800 000 դրամ	2 700 000 դրամ	Ս.Աղայան
45		Դեղաբույսերի վնասատուներ. դեղագործական և կենսատեխնոլոգիական արժեքավոր նյութեր պարունակող բույսերի հետ համակցված բուսակեր միջատների և տզերի գենոմային կազմավորման և միկրոբիոմի կազմի առանձնահատկությունները	ԳԿԳՀԱԵԱ-20 (եվրասիական)	2020-2023	24 000 000 դրամ	7 730 000 դրամ	Մ.Քալաշյան
46		Հայաստանի Սևանա լճի համար գիտելիքահենք կառավարման գործիքների ստեղծում	Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարություն (BMBF)	2020-2023	78 248 €	10 468 000 դրամ	Գ.Գևորգյան
47		Կովկասի կենսաբազմազանության հետազոտական համատեղ հարթակ հիմնելու վրաց-հայ-գերմանական եռակողմ նախաձեռնություն	Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարություն (BMBF)	2020-2023	73 530 €	16 892 000 դրամ	Բ.Գաբրիելյան
48		Կենսաբազմազանությունը մեռած փայտում. Գերմանիայի և Կովկասի հաճախեղ անտառների կայուն պահպանության հիմք	Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարություն (BMBF)	2021-2024	20 000 €	2 888 000 դրամ	Մ.Քալաշյան
49	Բուսաբանության ինստիտուտ	Հայաստանի վայրի տանձենիների (Pyrus L.) պահպանումը Երևանի բուսաբանական այգում	Արբորետումի ցանց	2021	2 500 \$	2 500 \$	Ժ.Հակոբյան
50	Հ. Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտ	Փորձարարական պայմաններում ինսուլտի բուժման բժշկական ձևակերպման կրիչներ	«Ֆիլիպ Մորիս Արմենիա» ՍՊԸ	2020-2021	5 799 840 դրամ	4 500 000 դրամ	Ք.Դանիելյան
51		Վերականգնողական, պաշտպանիչ մեխա-	Գիտության և կրթության հայ-	2021-2022	5000 \$	4500 \$	Ք.Դանիելյան

		նիզմների խթանումը հետինսուլտային փոր- ձարարական պայման- ներում	կական ազգային հիմնադրամ (ANSEF)				
52		Ադենոզինդեամինազի ԱԴԱ1 և ԱԴԱ2 իզոմերների ակտիվությունների տար- բերությունները շաքար- ախտով հիվանդների ար- յան պլազմայում այլ պա- թոլոգիայի առկայության դեպքում	Գիտության և կրթության հայ- կական ազգա- յին հիմնադրամ (ANSEF)	2021-2022	5000 \$	4500 \$	Է.Սարգսյան
53		Քաղցկեղածին և բակտե- րիալ բջիջների դեղամի- ջոցների թիրախային առաքումը լեկտին պա- րունակող տրանսպոր- տային համակարգերի միջոցով	ԿԳՄՄՆ ԳԿ- ԲՀ ԳՏՊԿ-2021 միջազգային գիտական համագործակ- ցություն	2021-2023	9 000 000 դրամ	2 428 000 դրամ	Վ.Գասպարյան
54		Ֆոլաթթվի և կատիոնային պորֆիրինների հիմքով նոր վեկտորային կոմպո- զիտներ ուռուցքների ֆո- տոդինամիկ թերապիայի համար	ԿԳՄՄՆ ԳԿ- ԲՀ ԳՏՊԿ -2021 միջազգային գիտական համագործակ- ցություն	2021-2023	9 000 000 դրամ	1 500 000 դրամ	Թ.Սեֆերյան
55	Ա.Նալբանդ- յանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտ	Հրազդան գետի ավազա- նի համար գետավազա- նային կառավարման նա- խագծի մշակում. (մաս 2)	ԵՄ ջրային նա- խաձեռնություն +ԱլԳի, Ջրային միջազգային գրասենյակ	2019- 2021	32522 €	17796 €	Ս.Մինասյան
56		«Սևանա լճի ավազանի գետերում առաջնահերթ նյութերի և որոշ այլ աղ- տոտիչների պարբերա- կան մոնիթորինգի բարե- լավման ճանապարհային քարտեզի մշակում	Գիտության և կրթության հայ- կական ազգային հիմնադրամ (ANSEF)	2021-2022	7 000 000 դրամ	1 700 000 դրամ	Ս.Մինասյան
57	Երկրաբա- նական գի- տություննե- րի ինստի- տուտ	Մեծ Կովկասի սեյսմիկ կառուցվածքը և բարձ- րացումը	Միջազգային գիտատեխնի- կական կենտրոն (ISTC)	2017-2021	72000 \$, որից ինս-տի միջոցով՝ 32 100 \$	5 000 \$	Հ.Բաբայան
58		Բարձր լեռնային լճերը որպես լուրջ միջավայրի կարևոր բաղկացուցիչ, մարդածին և բնական ազդեցություններ	Միջազգային գիտատեխնի- կական կենտրոն (ISTC)	2016 -2020, երկարացվել է մինչև 2021թ. դեկտեմբերը (առանց ֆինանսա- վորման)	127427.7 \$, որից ինս-տի միջոցով՝ 11727.7 \$		Հ.Բաբայան

59		Մեյամիկ ցանցի ընդարձակում Կոմկասում և Կենտրոնական Ասիայում	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2019-2021	754 757 \$, որից ինս-տի միջոցով՝ 75 900\$	Ստացվել են 90 142 \$ և 2 093.4 մլն դրամ արժեքով սարքավորումներ	Հ.Բաբայան
60		Երկրաչափային էներգետիկ ռեսուրսների և բնական վտանգների գնահատումը Հայաստանում	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) կողմից ֆինանսավորվող, PEER Science	2021-2023	75 000\$	35 000\$	Խ.Մելիքսեթյան
61	Հնագիտության և ազգագրության ինստիտուտ	Սուրբ ձեռագրեր և հնատիպ գրքեր	Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ	2019-2021	26 000 \$	4 249 600 դրամ	Լ.Սիմոնյան
62		Հնագիտական պեղումների համատեղ ծրագրեր	CNRS, Իտալիայի Միջերկրածովյան և արևելյան երկրների ուսումնասիրության միջազգային ասոցիացիա, Հոնկոնգի համալսարան	2021	1 912 200 դրամ	1 912 200 դրամ	Ռ.Բադալյան, Ա.Պետրոսյան
63		Գիտելիքի փոխանցման ձևերն ավանդական արհեստագործության մեջ	Բրիտանական խորհուրդ	2020-2021	2 424 500 դրամ	2 196 000 դրամ	Ռ.Ծատուրյան
64		Լեռնային Ղարաբաղի պատերազմի ազդեցությունը քաղաքացիական բնակչության վրա. կորստի և տառապանքի մարդաբանություն	NAWA (Լեհաստան)	2021-2021	1 914 600 դրամ	1 914 600 դրամ	Ա.Թադևոսյան
65		Փողոցային խոսույթի ժարգոնային բառարան	Եվրասիա համագործակցության հիմնադրամ	2021-2022	2 801 000 դրամ	2 801 000 դրամ	Ն.Մարգարյան
66	Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ	Հայերենի բառակազմության ձևային նկարագրություն և համապատասխան էլեկտրոնային շտեմարանի ստեղծում	Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ	2018-2022	30 000 \$	10 000 \$	Մ.Սարգսյան
67	Ինֆորմատիկայի և	Համաեվրոպական գիտակրթական մուլտիգի-	Հորիզոն 2020 (GEANT)	2017-2021	126 591 €	19 340 €	Վ.Սահակյան

	ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ	գաբիթ ցանց և հարակից ծառայություններ					
68		Արևելյան համագործակցության կապուղիներ	ԵՄ ԱլԳ կապուղիներ	2015-2021	944 232 €	18 176 €	Հ.Ասցատրյան
69		Արևելյան համագործակցության կապուղիներ	ԵՄ ԱլԳ կապուղիներ 2	2020-2025	60 016 €	28 070 €	Հ.Ասցատրյան
70		Նպաստել գիտական և արդյունաբերական դաշինքների R&D զարգացմանը՝ համագործակցային և բաց նորարարական պլատֆորմի միջոցով	ERASMUS+ ALL4R&D	2018-2022	12 227 €	166 €	Ս.Աբրահամյան
71		Եվրոպայում բաց գիտության ազգային նախաձեռնություններ	Հորիզոն 2020	2019-2021	97100 €	34 396 €	Հ.Ասցատրյան
72		Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան	ARMDOCT	2020-2023	59996 €	23800 €	Վ.Սահակյան
73	Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարան	Նոր սպիտակ թզուկների հայտնաբերում և ուսումնասիրություն Գայա-ի ճշգրիտ աստղաչափության միջոցով	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2021-2022	5000 \$	5000 \$	Ա.Միքայելյան
74		Փախչող աստղերի առաջացումը Vel OB1 աստղասփյուռում	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2021-2022	5000 \$	5000 \$	Ն.Ազատյան
75		IAU SWCA ROAD և IAU EROAD միջև «Project Management»	EU H2020, Erasmus+	2020-2023	15 432 €		Ա.Միքայելյան
76	ԻԿԴԱՆԵՏ կենտրոն ՄԿ	ANSEF 21AN: PS-astroth-	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2020-2021	5000 \$	5000 \$	Ս.Գասպարյան
77	Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ	Շրջակա միջավայրի հետազոտության զննման օպտիկական համակարգ՝ ըստ շտապի վրա քառակուսային բացթողումով ապոդիզացնող ֆիլտրով	ISTC	2017-2021	201 200 \$	8500 \$	Ա.Մարտիրոսյան

78		Օպտիկական մագնիսական սենսորային համակարգի մշակում՝ անվտանգության անցակետերի համար	NATO SPS, MYP G5794	2020-2023	150 790 €	60 942.2 €	Ա.Պապոյան
79		Ոչ գծային նյութական ալիքների քվանտային անցումը նանոկառուցվածքներով	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2021	5000 \$	5000 \$	Ա.Իշխանյան
80		Մագնիսական նանոհիբրիդները քաղցկեղի բուժման համար	Horizon-2020	2019-2022	364 162,5 €	61 987,2 €	Ա.Մանուկյան
81	Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ	p-InSb-n-CdTe հետերոկառուցվածքի հիման վրա քառատարր կոորդինատազգայուն ինֆրակարմիր ֆոտոդետեկտորի ստեղծում և բնութագրերի ուսումնասիրում	ԿԳՄՄՆ Գ.Կ, Հայ-բելառուսական համատեղ ծրագիր	2021-2023	9 000 000 դրամ	2 930 000 դրամ	Ս.Պետրոսյան
82		Cu ₂ Sn(S,Se) թաղանթների երկքայլանի սինթեզ և հետազոտում որպես բարակթաղանթային արեգակնային տարրերի ֆոտոակտիվ շերտ	ԿԳՄՄՆ Գ.Կ, Հայ-բելառուսական համատեղ ծրագիր	2021-2023	9 000 000 դրամ	1 350 000 դրամ	Ա.Մանուկյան
83		Նանոլարային բիոսենսորներ վիրուսների հայտնաբերման համար	UNIGE Leading House, սերմերի ֆինանսավորման դրամաշնորհ (Շվեյցարիա)	2021-2022	4000 \$	1000 \$	Ա.Եսայան
	Ընդամենը՝				226 989 020 դրամ 2 182 636 \$ 2 935 132 €	123 090 780 դրամ 289 722 \$ 260 716 €	

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն իրականացրել է իր կանոնակարգային գործառնությունները՝ խթանել ԳԱԱ ինստիտուտների և անհատ գիտնականների ավելի ակտիվ մասնակցությունը միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին՝ հիմնական շեշտը դնելով Եվրոպական Միության հետազոտությունների և զարգացման «Հորիզոն 2020» (Հ2020) ու 2021թ. մեկնարկած «Հորիզոն Եվրոպա» (ՀԵ) ծրագրերի վրա: Մասնակցության խթանման գործընթացն իրականացվել է միջազգային և եվրոպական գիտական ծրագրերի մասին տեղեկատվության տարածման և իրազեկության բարձրացման, դրամաշնորհային ծրագրերի մասնակցությանն առնչվող հարցերի շուրջ խորհրդատվության տրամադրման, արտասահմանյան գործընկերների փնտրման գործում օժանդակության

ցուցաբերման, տեղեկատվական միջոցառումների կազմակերպման միջոցով: Նկատի ունենալով համաճարակային իրավիճակով պայմանավորված սահմանափակումները՝ միջոցառումները հիմնականում կազմակերպվել են առցանց:

Բաժնի կողմից ստեղծված շահառուների շտեմարանը համալրվել է նոր շահառուներով: Տարվա ընթացքում գրանցված շահառուներին էլեկտրոնային ցանցով տարածվել է մոտ 300 տեղեկատվություն՝ եվրոպական և այլ միջազգային դրամաշնորհային գիտահետազոտական ծրագրերի, հայտարարված բաց մրցույթների, իրականացվող նախագծերի, կայանալիք միջոցառումների մասին: Տարածվել են նաև տարբեր աղբյուրներից (Հ2020/ՀԵ կոնտակտային կազմակերպությունների եվրոպական ցանցեր, ԳԱԱ մասնակցությամբ միջազգային նախագծեր) ստացված գործընկերների փնտրման տեղեկատվական թերթիկներ, որոնք կօժանդակեն գիտնականներին գտնել գործընկերներ համատեղ նախագծերի առաջարկներ նախապատրաստելու համար: Տարվա ընթացքում տրամադրվել է մոտ 200 անհատական խորհրդատվություն՝ միջազգային դրամաշնորհային ծրագրերի մասնակցությանն առնչվող տարբեր հարցերի շուրջ: Հ2020 ծրագրի տեղեկատվական կայքում (<http://h2020.sci.am/>) պարբերաբար տեղակայվել է մանրամասն տեղեկատվություն ծրագրի, կոնտակտային անձանց ցանցի, բաց մրցույթների, գործող նախագծերի, միջազգային միջոցառումների, առցանց սեմինարների և գործընկերների փնտրման առաջարկների վերաբերյալ, որը հասանելի է եղել նաև «Հորիզոն Եվրոպա» ծրագրի հայաստանյան ֆեյսբուքյան էջում (<https://www.facebook.com/HorizonEuropeArmenia/>): Տարվա ընթացքում էջին գրանցվել է 142 մասնակից՝ գրանցվածների ընդհանուր թիվը հասցնելով 1545-ի: «Հորիզոն Եվրոպա» հայաստանյան Թվիթեր սոցիալական ցանցի նորաստեղծ էջն այժմ ունի գրանցված 91 մասնակից (<https://twitter.com/H2020Armenia>):

Հանդիսանալով Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՅ) հաղորդակցման կենտրոն՝ բաժինը մատուցել է նորարարության կառավարման և առևտրայնացման աջակցության ծառայություններ ՀՀ 5 կազմակերպությունների, և տարվա ընթացքում 1 կազմակերպություն կնքել է միջազգային համագործակցության պայմանագիր:

Պատրաստվել և պարբերաբար տարածվել է տեխնոլոգիաների առաջարկների և հարցումների, գիտատար փոքր և միջին ձեռնարկությունների համար «Հորիզոն Եվրոպա» ծրագրի գործընկերների որոնման տեղեկաթերթ: ՁԵՅ-ի միջազգային հիմնապաշարում տեղադրվել է հայաստանյան կազմակերպությունների տեխնոլոգիաների 1 առաջարկ: Ցուցաբերվել է «Հորիզոն Եվրոպա» ծրագրի ՓՄՁ-ների համար նախատեսված մրցույթներին առաջարկների հայտադիմումներ նախապատրաստելու աջակցություն: Այս առումով բաժնի կողմից տրամադրվող ծառայություններն ուղղված են եղել ոչ միայն ակադեմիական ինստիտուտներին, այլև բոլոր գերատեսչական գիտահետազոտական ինստիտուտներին, համալսարաններին, գիտատար գործունեությամբ զբաղվող ՓՄՁ-ներին և հասարակական կազմակերպություններին:

ԳԱԱ նախագահության մասնակցությամբ Հ2020 ծրագրի EURAXESS-AM նախագծի շրջանակներում ստեղծված EURAXESS ցանցի հայաստանյան կայք-պորտալը բարելավվել և համալրվել է նոր բաժիններով: Մասնավորապես ստեղծվել և կայքում տեղադրվել են Հայաստան ժամանող, ինչպես նաև Հայաստանից Եվրոպա տեղափոխվող գիտնականների համար ուղեցույցներ, ավելացվել են աշխատանքային միջավայրին և Սփյուռքի գիտնականներին նվիրված բաժինները, ստեղծվել և տեղադրվել է «Հորիզոն Եվրոպա» Մարի-Սկլոդովսկա Կյուրի ծրագրի շրջանակներում Սփյուռքի գիտնականների համար հնարավորությունների ամփոփ ձեռնարկ: 2021թ. EURAXESS-Հայաստան կայք-պորտալ այցելել է շուրջ 6651 օգտատեր 141 երկրից (<https://www.euraxess.am/>):

Բաժինը շարունակել է սերտորեն համագործակցել EURAXESS-ի հայաստանյան կոնտակտային կազմակերպությունների ցանցի հաստատությունների հետ, որտեղ

ընդգրկված են Երևանի պետական համալսարանը, Երևանի պետական բժշկական համալսարանը և ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը: Նախագծի շրջանակներում փետրվարին և հուլիսին կազմակերպվել են առցանց թրեյնինգ-սեմինարներ EURAXESS-ի հայաստանյան կոնտակտային կազմակերպությունների կարողությունների զարգացման և այլ հետաքրքրված շահառուների իրազեկության բարձրացման համար, որոնց մասնակցել է ավելի քան 60 շահառու: Սեմինարներին ներկայացվել են EURAXESS ցանցի կողմից տրամադրվող աջակցության ուղղությունները, «Հորիզոն Եվրոպա» ծրագրի վերաբերյալ ընդհանուր տեղեկություն և Հայաստանի կազմակերպությունների մասնակցության հնարավորությունները: «Հորիզոն Եվրոպա» ծրագրին նվիրված տեղեկատվական օր է կազմակերպվել մայիսին ԵՀ-ի փորձագետների հետ համագործակցությամբ և անմիջական մասնակցությամբ: Հուլիսին կազմակերպվել է նաև նախագծեր գրելու հմտությունների զարգացման առցանց թրեյնինգների շարք եվրոպական փորձագետների համագործակցությամբ և մասնակցությամբ:

Նոյեմբերին ստորագրվել է ԵՄ հետազոտությունների և նորարարությունների «Հորիզոն Եվրոպա» ծրագրին Հայաստանի ասոցացման համաձայնագիրը, որը թույլ է տալիս մեր հաստատություններին լիարժեք օգտվել ծրագրի բոլոր հնարավորություններից ԵՄ անդամ պետությունների համար նախատեսված պայմաններով և հանդես գալ որպես նախագծերի համակարգող: Այս կապակցությամբ նոյեմբերին ՀՀ գիտության կոմիտեի և Եվրոպական հանձնաժողովի հետ կազմակերպվել է «Հորիզոն Եվրոպա» ծրագրի և EURAXESS-Հայաստան կայք-պորտալի շնորհանդես-միջոցառում, որի նպատակն էր մասնակիցներին ներկայացնել EURAXESS-Հայաստան կայք-պորտալը, «Հորիզոն Եվրոպա» ծրագիրը և ասոցացման կարգավիճակից բխող մասնակցության հնարավորությունները: Միջոցառմանը ներկա էր ավելի քան 100 մասնակից:

Գերմանիայի միջազգային համագործակցության գործակալության (GIZ) հայաստանյան գրասենյակի հետ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի միջոցառումների շարք է կազմակերպվել սեպտեմբերին: Նույն կազմակերպության համագործակցությամբ հայտարարվել է հայաստանյան կազմակերպությունների կողմից նախաձեռնվող ՀԵ ծրագրին նախագծերի առաջարկների նախապատրաստման աջակցության մրցույթ, և ընտրված 5 առաջարկի աջակցություն են ցուցաբերել եվրոպական փորձագետները:

Ընդհանուր առմամբ եվրոպական նախորդ ՀՀ 2020 ծրագրին 2014-21թթ. ներկայացվել է ՀՀ 316 կազմակերպության մասնակցությամբ 273 հայտ, որոնցից հավանության են արժանացել 36-ը (44 կազմակերպության մասնակցությամբ)՝ մոտ 4.03 մլն. եվրո ընդհանուր ֆինանսավորմամբ: Հավանության արժանացած նախագծերից 21-ում ներկայացվել է ԳԱԱ համակարգի 6 կազմակերպություն՝ շուրջ 2 միլիոն եվրո ընդհանուր ֆինանսավորմամբ՝ ԳԱԱ նախագահությունը, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների, Ֆիզիկական հետազոտությունների, Հնագիտության և ազգագրության ինստիտուտները «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ը, Էկոլոգանոռաֆերային հետազոտությունների կենտրոնը:

Տարվա ընթացքում բաժնի աշխատակիցները մասնակցել են առցանց կազմակերպված բազմաթիվ միջազգային միջոցառումների և սեմինարների: Սեպտեմբերին Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի կազմակերպած «Լազերային ֆիզիկա» միջազգային գիտաժողովին բաժնի աշխատակիցը ներկայացրել է զեկուցում եվրոպական ծրագրերի վերաբերյալ: Դեկտեմբերին ԱՄՆ Միջազգային զարգացման գրասենյակի կազմակերպված «Տեխնոլոգիաների փոխանցումը և առևտրայնացումը Հայաստանում» կլոր սեղան-քննարկմանը բաժնի աշխատակիցը հանդես է եկել ԳԱԱ համակարգում նորարարության և տեխնոլոգիաների փոխանցման իրավիճակի վերաբերյալ զեկուցմամբ:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի գործունեությունը ներառել է՝ ԳԱԱ ինստիտուտներին տեխնոլոգիաների փոխանցման և նորարարական հետազոտական արդյունքների առևտրայնացման աջակցության տրամադրումը, խորհրդատվությունը տեխնոլոգիաների և շուկայի գնահատման, գործընկերների որոնման, ֆինանսական աջակցություն գտնելու և այլ գործընթացներում: Տրամադրվել է խորհրդատվություն և աջակցություն նորարարական առաջարկներ ունեցող անհատներին, ԳԱԱ ինստիտուտների գիտնականներին և հետազոտողներին:

Հավաքագրվել են վերջին հինգ տարիների ընթացքում ԳԱԱ ինստիտուտների կիրառական հետազոտությունների արդյունքները, կատարվել է վերլուծություն, միջազգային շուկայի և միջազգային պահանջարկի ուսումնասիրություն, ընտրվել են լավագույն կիրառական ներուժ ունեցող առաջարկները՝ հետագայում աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Պատրաստվել է բաժնի տեսլականը, նախանշվել են գործունեության հիմնական նպատակները:

Տարվա ընթացքում շահառուներին տրամադրվել են տեղեկաթերթեր տարբեր աղբյուրներից ստացված տեխնոլոգիական առաջարկների և հարցումների վերաբերյալ:

Ծավալվել է բաժնի աշխատանքների մասին նորարարական գործունեություն իրականացնող հայաստանյան և արտասահմանյան կազմակերպություններին տեղեկատվություն տրամադրելու և համագործակցության հրավիրելու ակտիվ աշխատանք: Մասնավորապես նախնական պայմանավորվածությամբ մտավոր գործունեության արդյունքների առևտրայնացմանն ուղեկցող որոշ ծառայություններ կիրականացվեն ՀՀ էկոնոմիկայի նախարարության Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի հետ համատեղ: Բաժնի աշխատակիցը «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» միջազգային նորարարության զարգացման ինստիտուտների ցանցի (ANSO-BIDI Institute Network) կոմիտեի անդամ է և ներգրավված է նրա աշխատանքներում: ANSO-BIDI Institute Network -ի շրջանակներում գործում է նորարարության դպրոց, որտեղ իրականացվում են երեքամսյա դասընթացներ. առաջին դասընթացին մասնակցել է ակադեմիայի համակարգի ինստիտուտների 10 աշխատակից, (ստացել են մասնակցության հավաստագրեր), երկրորդին՝ 9-ը:

Բաժնի աշխատակիցները մասնակցել են տեխնոլոգիաների փոխանցման և նորարարության վերաբերյալ հանրապետական և միջազգային մի շարք համաժողովների, գիտաժողովների, սեմինարների, կլոր սեղանների՝ «Երիտասարդ գիտնականների դերը գիտության, նորարարության և տեխնոլոգիայի զարգացման գործում» VI միջազգային գիտաժողովին (Դուշանբե), Ռուսաստանի Դաշնության գործարար շրջանակների ներկայացուցիչների Հայաստանի Հանրապետություն այցի շրջանակներում կազմակերպված «Նորարարություններ» կլոր սեղանին, «Երիտասարդությունը գիտության մեջ 2021» XVIII միջազգային գիտաժողովին (Մինսկ), ԱՊՀ անդամ պետությունների գիտնականների III համաժողովին (Մինսկ):

ՍՓՅՈՒՌՔԻ ԲԱԺԻՆ

Բաժինն արտասահմանյան անդամների հետ պահպանելով անմիջական կապ՝ համագործակցության նրանց առաջարկների մասին իրազեկում է ԳԱԱ կազմակերպություններին, իսկ արտասահմանյան անդամներին՝ ԳԱԱ կողմից կազմակերպվող միջոցառումների մասին: Հավաքվում և պարբերաբար ԳԱԱ կայքէջում թարմացվում են նրանց անհատական

տվյալները հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով և շարունակաբար ներկայացվում է գիտական գործունեությունը:

Ստորև բերվում է ԳԱԱ արտասահմանյան անդամների թվաքանակը՝ ըստ գիտության ուղղությունների և երկրների.

N	Երկիր	Մաթեմատիկական և տեխնիկական գիտություններ	Ֆիզիկա և աստղաֆիզիկա	Բնական գիտություններ	Քիմիա և Երկրի մասին գիտություններ	Հայագիտություն և հասարակական գիտություններ	Ընդամենը
1	ՌԴ	9	6	10	10	8	43
2	ԱՄՆ	10	6	9	4	5	34
3	Ֆրանսիա	1	4	2	2	5	14
4	Գերմանիա		5	2			7
5	Մեծ Բրիտանիա	1		1	1		3
6	Իտալիա					2	2
7	Շվեդիա	1	1				2
8	Ճապոնիա			2			2
9	Կանադա	1		1			2
10	Ուկրաինա	1			1		2
11	Ավստրալիա		1	1			2
12	Պորտուգալիա					1	1
13	Իրան	1					1
14	Հունաստան	1					1
15	Բելառուս				1		1
16	Կորեա		1				1
17	Լիբանան					1	1
Ընդամենը՝		26	24	28	19	22	119

2020թ. Արցախյան պատերազմը, ինչպես նաև COVID-19 համաճարակը ՀՀ, ԱՀ և առհասարակ հայ ժողովրդի կյանքում շատ բան փոխեցին: Ստեղծված իրավիճակում մեծապես կարևորվում է ԳԱԱ-ի, ԳԱԱ արտասահմանյան անդամների և Սփյուռքի գիտնականների համախմբումը գիտական միտքն ու ներուժը 2 հանրապետությունների զարգացմանն ու հզորացմանն ուղղորդելու համար: ԳԱԱ անունից նամակով դիմել ենք արտասահմանյան անդամներին՝ ներկայացնել իրենց տեսակետը ծառացած մարտահրավերների, դրանց դիմակայելու ուղիների, անհրաժեշտ գործողությունների ու միջոցառումների վերաբերյալ, ինչը կարևոր է ԳԱԱ ընդհանրական մոտեցման ձևավորման համար:

Արտասահմանյան անդամների կողմից ներկայացված համագործակցության առաջարկները, ԳԱԱ համակարգի և ՀՀ այլ գիտակրթական կազմակերպությունների հետ ձեռք բերված պայմանավորվածություններն ընդգրկում են մի շարք կարևոր ուղղություններ՝ համատեղ հետազոտությունների իրականացում և հետազոտական նոր ծրագրերի մշակում, մասնագետների պատրաստում և վերապատրաստում, արտասահմանյան գիտական կենտրոնների և ԳԱԱ համակարգի կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրերի և համաձայնագրերի կնքում, համատեղ աշխատությունների պատրաստում, մասնակցություն Հայաստանում կազմակերպվող գիտակրթական և գիտակազմակերպական միջոցառումներին, համատեղ միջազգային գիտաժողովների կազմակերպում:

ԳԱԱ արտասահմանյան անդամների իրականացրած համագործակցության և աջակցության արդյունքներից կարելի է նշել.

Համատեղ հետազոտությունների իրականացում և առաջարկներ

Արտասահմանյան անդամ Կ.Լին (Կորեա) շարունակում է ակտիվ համագործակցությունը Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի ու ԵՊՀ ԳԲՀ ռադիոֆիզիկայի և

հետահաղորդակցության ամբիոնի հետ: ԵՊՀ-ն և Սոգանգ համալսարանն իրականացնում են գիտակրթական ծրագրեր, գիտափորձի փոխանակում և համատեղ գիտական աշխատանքներ: Կ.Լ.ին հոկտեմբերից Գիտություն կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Կանոնակարգված հաղորդականությամբ տարրերով մետամակերևույթը որպես միկրո-ալիքային փուլահամաձայնեցման կառուցվածք» գիտական ծրագրի պաշտոնական արտասահմանյան գործընկերն է 2021-26թթ. համար: Գիտակրթական ծրագրերի և գիտափորձի փոխանակման շրջանակում Սեուլի Սոգանգ համալսարանում շարունակում է սովորել և աշխատել ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի հայցորդ Ժ.Բաղդասարյանը:

Արտասահմանյան անդամ Լ.Բուզակը (ՌԴ) սերտ համագործակցում է Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի պինդ մարմնի ֆիզիկայի լաբորատորիայի հետ: Ներկայումս համագործակցությունը շարունակվում է «Ֆեռոմագնիսական բարակ նանո-գրաֆենային կլաստերների սինթեզը, ատոմական կառուցվածքը և կարգավորված մագնիսական բնութագրերն ածխածնային միկրո- և նանոսֆերաներում» ծրագրի շրջանակում:

Արտասահմանյան անդամ Ա.Քոչարյանը (ԱՄՆ) համագործակցում է Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի պինդ մարմնի ֆիզիկայի լաբորատորիայի հետ մագնիսական «միջուկ-թաղանթ» նանոմասնիկների սինթեզի և հետազոտության աշխատանքներում:

Արտասահմանյան անդամ Ա.Սեդրակյանը (Գերմանիա) Բյուրականի աստղադիտարանի «Տիեզերական կոմպակտ օբյեկտներ և ռելատիվիստական գրավիտացիա» գիտահետազոտական խմբի ղեկավարն է, աջակցում է նրա աշխատանքներին: Համագործակցության շրջանակում ուսումնասիրվել են նեյտրոնային աստղերի միաձուլմանը բնորոշ ջերմաստիճաններում թույլ պրոցեսները (նեյտրոնի տրոհում և էլեկտրոնի ու մոտոնի զավթում, թույլ լեպտոնային ռեակցիաներ) և դրանցով պայմանավորված մածուցիկության գործակիցը: Ստացված արդյունքներով գնահատվել են մի շարք պարամետրեր:

Արտասահմանյան անդամ Ֆ.Մկրտչյանը (ՌԴ) և Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը քննարկել են Սևանա լճի էկոբարդության ու էկոբազմազանության գնահատականի ստացման հարցերը, ձևակերպվել են այն խնդիրները, որոնց ուղղությամբ պետք է իրականացվեն հետազոտություններ:

Արտասահմանյան անդամ Վ.Աղաբեկովի (Բելառուս) ղեկավարած ԲԳԱ նոր նյութերի քիմիայի ինստիտուտը Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հետ իրականացրել են հետազոտություններ «Մանրաթելի ստացման համար պոլիբենզի-միդագոլի սինթեզը» թեմայով: Կատարվել են ելանյութային արգասիքների ստացման համատեղ որոնողական հետազոտություններ, սինթեզվել են նոր միացություններ հետագա ուսումնասիրությունների համար:

Արտասահմանյան անդամ Վ.Սաքանյանը (Ֆրանսիա) շարունակում է համագործակցությունը «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի հետ: «Ոչ սպիտակուցային ամինաթթուների, պեպտիդների և պոլիմերների հենքի վրա հակավիրուսային (անտի-SARS-CoV) և հակաբակտերիալ միացությունների նպատակային սինթեզ ու սկրինինգ» նախագծի շրջանակում նա համագործակցում է կենտրոնի գիտական խմբերի հետ որպես արտասահմանյան կոլաբորատոր: Վ.Սաքանյանը Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Կենսաբանորեն ակտիվ ջրալույծ մելանինի ստացումը, բուսական հումքի թափոնների հատկությունների ուսումնասիրությունը և կիրառումը» և «Հիդանտոինազային և կարբամոլիլազային ակտիվությամբ օժտված ռեկոմբինանտ շտամների կառուցումը և դրանց կիրառումն օպտիկապես ակտիվ D-ամինաթթուների կենսակատալիտիկ սինթեզի համար» ծրագրերի գիտական խորհրդատուն է: Վ.Սաքանյանը մեծ ներդրում ունի երիտասարդ կադրերի պատրաստման ու որակավորման բարձրացման գործում, իր խորհուրդներով աջակցում է բարձրորակ գիտական աշխատանքների կատարմանը: Նրա ղեկավարությամբ

երիտասարդ գիտնականները տիրապետում են մոլեկուլային կենսաբանության հետազոտական ժամանակակից մի շարք մեթոդների և մասնակցում տարբեր նախագծերի իրականացմանը: Նա «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ում ներդրել է կետային մուտագենեզի տեխնոլոգիան: Մալիտակուցային տեխնոլոգիաների լաբորատորիային Վ.Սաքանյանը տրամադրել է թանկարժեք նյութեր՝ մուտագենեզի և ՊՇՌ մաքրման լրակազմեր, ՊՇՌ-ի ֆերմենտներ, վեկտորներ, ռեստրիկտազներ, պրայմերներ, ազարոզ, մանրէների աճի սննդամիջավայրերի համար բաղադրամասեր, աֆինային քրոմատոգրաֆիայի խեժեր և այլն: Նշված լաբորատորիայի աշխատակիցները և նրա ֆրանսիական խումբը տպագրության են պատրաստում համատեղ նոր աշխատանք:

Արտասահմանյան անդամ Պ.Լանգերը (Գերմանիա) սերտորեն համագործակցում է «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի հետ: Նա A-2705 ծրագրի գիտական խորհրդատուն է, հայ-գերմանական համագործակցության շրջանակում կենտրոնը և Ռոստոկի համալսարանը համատեղ իրականացրել են գիտահետազոտական և գիտակրթական մի շարք ծրագրեր:

Արտասահմանյան անդամ Գ.Անտրանիկյանը (Գերմանիա) ակտիվորեն համագործակցում է «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի մոլեկուլային կենսաբանության լաբորատորիայի հետ: Համբուրգի Տեխնոլոգիական համալսարանի տեխնիկական մանրէաբանության ինստիտուտի (տնօրեն Գ.Անտրանիկյան) հետ շարունակվում են աշխատանքները «Հիպերթերմոֆիլ բնույթի կարբամոլիլազի կիրառումը N-կարբամոլիլ-D-ամինաթթուների էնզիմատիկ հիդրոլիզում» թեմայի շրջանակում: Եղել են կատարողների փոխայցելություններ, որոնք մեծ նշանակություն ունեն թե՛ արժեքավոր գիտական արդյունքների ստացման, թե՛ փորձի փոխանակման և նոր գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման առումով: Իրականացվել է կարբամոլիլազային ակտիվություն ունեցող գենի կլոնավորում, ռեկոմբինանտ ֆերմենտի ուսումնասիրում: Հետազոտական աշխատանքները շարունակվում են և հիմք են ստեղծել հետագա համատեղ նոր ծրագրերի իրականացման համար: Գ.Անտրանիկյանը FAST-ի կողմից իրականացվող ADVANCE հետազոտական դրամաշնորհի շրջանակում կենսատեխնոլոգիայի բնագավառում իրականացվող ծրագրերի գիտական ղեկավարն է, որի մասնակիցներն են «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի, հայաստանյան համալսարանների և տարբեր գիտական կենտրոնների աշխատակիցները: Նպատակը Հայաստանում նորագույն սարքավորումներով հագեցած լաբորատորիայի, ինչպես նաև բաց գիտական միջավայրի ստեղծումն է: Ա.Պալոյանը FAST ծրագրի շրջանակում այցելել է Գերմանիա, Գ.Անտրանիկյանի ու նրա խմբի հետ իրականացրել ջերմակայուն գլյուկոզների բյուրեղացման և կառուցվածքային-ֆունկցիոնալ վերլուծման հետազոտություններ:

Արտասահմանյան անդամ Ա.Դարզին (Մեծ Բրիտանիա) Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է, “Global Health Research Unit”-ի ծրագրի շրջանակում շարունակում է համագործակցությունը ՀՀ առողջապահական կառույցների հետ:

Արտասահմանյան անդամ Տ.Դանիելյանը (Ֆրանսիա) սերտորեն համագործակցում է Երկրաբանական գիտությունների ինստիտուտի հետ: Գիտական գործունեությունը հիմնականում կենտրոնացված է բրախիոպոդ և կոնոդոնտ ֆաունայի վրա, որը պահպանվում է կենտրոնական Հայաստանի վերին դևոնյան նստվածքային հաջորդականություններում և յուրօրինակ է իր բազմազանությամբ ու հարստությամբ: Բրախիոպոդների ուսումնասիրությունն անցկացվել է ԵԳԻ և Լիլի համալսարանի միջև ասպիրանտուրայի ծրագրի հետազոտությունների շրջանակում: Նախկինում ուսումնասիրված հատվածներից մեկում հայտնաբերված որոշ բրածո բույսերի մնացորդներ այժմ Բուսաբանության ինստիտուտի ասպիրանտ Ս.Խաչատրյանի ուսումնասիրության առարկան են, որը ներկայումս Լիլում է և ուսումնասիրում է նյութը Տ.Դանիելյանի թիմի CNRS-ի անդամ և միջին պալեոգոյական դարաշրջանի պալեոբուսաբանության փորձագետի հետ: Մեպտեմբե-

րին Տ.Դանիելյանը հայաստանյան այցելության ժամանակ դասախոսություններ է կարդացել ԵԳԻ մագիստրանտների և ասպիրանտների համար «Գիտական գիր» և «Նստվածքային հաջորդականությունների հաջորդական շերտագրական վերլուծություն» դասընթացներից, աշխատակիցների հետ անցկացրել է հետազոտական տիպի քննարկումներ, կատարել դաշտային (Վեդիի տարածք) հետազոտություն: Համագործակցության շրջանակում ԵԳԻ տնօրեն Խ.Մելիքսեյանն այցելել է Լիլի համալսարան և ելույթ ունեցել «Հայաստանում երկրաբանական հետազոտությունների ակնարկ՝ ԱՄՆ-ի կողմից ֆինանսավորվող երկրաբանական վտանգների և երկրաջերմային ռեսուրսների ծրագրի վրա հատուկ կենտրոնացմամբ» թեմայով: Տ.Դանիելյանի աջակցությամբ և Լիլի համալսարանի ամբողջական ֆինանսավորմամբ, որպես հրավիրյալ դասախոս, ԵԳԻ գեոդինամիկայի լաբորատորիայի վարիչ Ա.Ավագյանն այցելել է Լիլի համալսարան, մագիստրատուրայի ուսանողների համար դասախոսություններ կարդացել առաջին հայկական գեոպարկի նախագծի մասին՝ ներկայացնելով երկրաբանական վտանգների հետ կապված տարաբնույթ թեմաներ, որոնք կարող են դիտվել Սևանա լճի հարավային մասի տարբեր վայրերում: Տ.Դանիելյանի աջակցությամբ և Էրազմուս + ICM ծրագրի ֆինանսավորմամբ ԵԳԻ և Լիլի համալսարանի համատեղ ասպիրանտ Վ.Սերոբյանը 8 ամիս աշխատել է Լիլում, ավարտել «Վերին դևոնյան բրախիոպոդներ և նստվածքային հաջորդականություններ Հայաստանից. Կենսաբազմազանություն, շերտագրական և պալեոբիո աշխարհագրություն» թեմայով ուսումնասիրությունը, իսկ արդեն Երևանում պաշտպանել ատենախոսություն միջազգային կոմիտեի մասնակցությամբ: Տ.Դանիելյանի աջակցությամբ և Էրազմուս + ICM ծրագրի ֆինանսավորմամբ ԵԳՀ-ի ու Բուսաբանության ինստիտուտի 2 ասպիրանտ և ԵԳՀ-ի 1 մագիստրանտ մի շարք մասնագիտական դասընթացներ են ունկնդրել Լիլի համալսարանում:

Արտասահմանյան անդամ Է.Կարախանովը (ՌԴ) Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հետ շարունակում է անցումային շարքի մետաղների կարբիդներն ու բորիդները որպես կատալիզատորներ հիդրոպրոցեսներում ծրագրով հետազոտությունները: Համագործակցության շրջանակում իրականացվում է «Անցումային մետաղների նանոչափսի օքսիդների միկրոալիքային սինթեզը և դրանց կատալիտիկ ակտիվության ուսումնասիրությունները ծծումբօրգանական միացությունների օքսիդացման ռեակցիաներում» ծրագիրը: Նա ռուսական կողմի խմբի ղեկավարն է:

Արտասահմանյան անդամ Վ.Հարությունովը (ՌԴ) Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հետ շարունակում է բնական գազից՝ պրոպանից, արժեքավոր պրոպիլենի և բութիլենի մոնոմերների ստացման հետազոտությունները: Համագործակցության շրջանակում իրականացվում է «Թեթև ածխաջրածինների մասնակի զուգորդված օքսիդացում» ծրագիրը, որի ռուսական կողմի խմբի ղեկավարը Վ.Հարությունովն է: Նշված դրամաշնորհի շրջանակում իրականացվում են տեսական և փորձնական հետազոտություններ:

Արտասահմանյան անդամ Ռ.Միրզոյանը (ՌԴ) շարունակում է համագործակցությունը ԵՊԲՀ-ի քիմիկոսների և դեղագետների հետ, համատեղ հետազոտում են ուղեղի պաշտպանվածությունն իշեմիկ վնասվածքներից:

Արտասահմանյան անդամ Ս.Օրդանյանի (ՌԴ) համագործակցությունը Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի հետ շարունակվել է Հայաստանի լեռնային սիլիկատային ապարների և քարերի (ներառյալ տուֆեր) վերամշակման բարձր մաքրությամբ նյութերի ստացման արդյունաբերական արտադրության տեխնոլոգիաների մշակման և ներդրման ուղղությամբ՝ մեքենաշինության բնագավառում կերամիկական և գերկարծր նյութեր ստանալու համար:

Արտասահմանյան անդամ Ա.Կոստանյանի (ՌԴ) համագործակցությունը Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի հետ շարունակվում է ոչ մե-

տաղական հանքանյութերից արժեքավոր նյութերի ստացման տեխնոլոգիաների մշակման և զարգացման ուղղությամբ՝ պղնձի կորզման և մոլիբդենիտային խտանյութերից բարձր մաքրության նանոկառուցվածքի նյութերի ստացման համալիր տեխնոլոգիաների մշակմամբ:

Արտասահմանյան անդամ Տ.Չալիկյանը (Կանադա) ԳԿ-ի ֆինանսավորմամբ «Կայունացնող և ապակայունացնող համալուծիչների ազդեցությունը ԴՆԹ-ի G-հարուստ և C-հարուստ կոմպլեմենտար շղթաների խառնուրդի կոնֆորմացիոն բաշխման վրա» դրամաշնորհի խորհրդատուն է: Նա ակտիվորեն համագործակցում է ԵՊՀ-ի, Ֆիզիկայի ինստիտուտի «Մակրոմոլեկուլների ֆիզիկա» լաբորատորիայի հետ:

Արտասահմանյան անդամ Ա.Չուբարյանը (ՌԴ), լինելով ԱՊՀ պետությունների պատմաբանների ասոցիացիայի նախագահ, շարունակում է համագործակցությունը Պատմության ինստիտուտի հետ:

Արտասահմանյան անդամ Ա.Ղազարյանը (ՌԴ) սերտորեն համագործակցում է Արվեստի ինստիտուտի հետ: Համագործակցության շրջանակում իրականացվում է «Հայկական սփյուռքի կենտրոնների արվեստը. Նոր-Նախիջևանի հայկական գաղութի արվեստը» ծրագիրը, որը հայ արվեստագիտության մեջ առաջին անգամ համակողմանի ուսումնասիրելու է Նոր Նախիջևանի հայկական գաղութի արվեստը հիմնական բոլոր ճյուղերով՝ կերպարվեստ, ճարտարապետություն, երաժշտություն և թատրոն: Նա ռուսական կողմի խմբի ղեկավարն է:

Ստեղծված գիտական կապերի և համագործակցության խորացման արդյունքում հայ-ռուսական և այլ միջազգային հիմնարար գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի մրցույթին Հայաստանի գիտական խմբերի հետ, որպես մյուս կողմի գիտական խմբերի ղեկավարներ, համատեղ հայտեր են ներկայացնում նաև արտասահմանյան անդամները և իրականացնում մի շարք գիտական ծրագրեր:

Արտասահմանյան անդամների մի մասը շարունակում է սկսված համագործակցությունը, պարբերաբար քննարկումների արդյունքում հստակեցվում և ձևակերպվում են համատեղ նոր հետազոտությունների խնդիրները:

Շատ կարևոր է, որ գիտական կապերի և համագործակցության սերտացման շնորհիվ կիրառական բնույթի հետազոտություններում օգտագործվում են նաև արտասահմանյան անդամների լաբորատորիաների ժամանակակից սարքավորումները և հնարավորությունները միջազգային չափանիշներին համապատասխանող հետազոտություններ կատարելու համար, ինչը խրախուսելի է, քանի որ ՀՀ-ում առկա սարքավորումներով հնարավոր չէ ժամանակակից բարձր մակարդակի հետազոտություններ կատարել: Նման հետազոտությունների արդյունքների տպագրումը և զեկուցումները գիտաժողովներում նպաստում են Հայաստանի գիտության միջազգային վարկանիշի բարձրացմանը: Համատեղ հետազոտությունները նպաստում են նաև Հայաստանում միջազգային չափանիշներին համապատասխանող արդի ուղղությունների զարգացմանը:

Մասնագետների պատրաստում և վերապատրաստում

Արտասահմանյան անդամները հնարավորինս աջակցում են ԳԱԱ և բուհական համակարգի կազմակերպությունների երիտասարդ մասնագետների պատրաստմանը և վերապատրաստմանը, նաև ասպիրանտների գիտական ղեկավարներ և համադեկավարներ են: Սակայն համավարակի պատճառով այդ այցելություններն էապես պակասել են:

Արտասահմանյան անդամներ Կարեն և Արմեն Քոչարյանները (ԱՄՆ) Ն.Քոչարյանի անվան ամենամյա միանվագ դրամաշնորհ են տրամադրում ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի 2 ուսանողի լավագույն մագիստրոսական աշխատանքի համար:

Արտասահմանյան անդամ Վ.Գրեգորյանի (ԱՄՆ) անվան ամենամյա կրթաթոշակ է սահմանվել երիտասարդ արևելագետների և պատմաբանների համար «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության կողմից:

Հ.Փանոսյանի նախաձեռնությամբ ԱՐՓԱ-ն երիտասարդ մասնագետների համար կազմակերպում է նորարարության ամենամյա մրցույթ, որի նպատակն է խրախուսել նորարական միտքը և խթանել նրա զարգացումը:

Պետք է նշել, որ արտասահմանյան անդամների առաջարկները և հնարավորությունները՝ իրենց գիտական կենտրոններում կազմակերպել հայաստանաբնակ երիտասարդ մասնագետների ասպիրանտական ուսուցումն ու վերապատրաստումն ավելին են, քան ներկայացվում է:

Համատեղ աշխատությունների հրատարակում

Արտասահմանյան անդամների և ՀՀ ակադեմիական ու բուհական համակարգերի գիտնականների համատեղ ուսումնասիրությունների հիման վրա հրատարակվում են գրքեր, նրանց հետազոտությունների արդյունքները տպագրվել են միջազգային հեղինակավոր հանդեսներում, Հայաստանի կենտրոնական պարբերականներում, զեկուցվել են բազմաթիվ միջազգային գիտաժողովներում: Համատեղ հետազոտությունների արդյունքների տպագրումը և զեկուցումները գիտաժողովներում նպաստում են Հայաստանի գիտության միջազգային վարկանիշի բարձրացմանը:

Մասնակցությունը ՀՀ-ում կազմակերպվող գիտական և գիտագործնական միջոցառումներին

COVID-19-ով պայմանավորված՝ 2021թ. ՀՀ-ում կազմակերպված գիտական, գիտակազմակերպական միջոցառումներին արտասահմանյան անդամները հիմնականում մասնակցել են առցանց, աջակցել են ծրագրային և կազմկոմիտեների աշխատանքներին:

Արվեստի ինստիտուտը և Ճարտարապետության ու շինարարական գիտությունների ուսաստանյան ակադեմիայի Ճարտարապետության և քաղաքաշինության տեսության ու պատմության գիտահետազոտական ինստիտուտը (տնօրեն՝ արտասահմանյան անդամ Ա.Ղազարյան) Դոնի-Ռոստովում կազմակերպել են «Архитектура и искусство: от теории к практике» խորագրով միջազգային գիտագործնական գիտաժողով:

Արտասահմանյան անդամներից ոմանք ընդգրկված են ՀՀ գիտական կազմակերպությունների կառավարման մարմիններում և գիտական հանդեսների խմբագրական կազմերում: ԳԱԱ հայազգի արտասահմանյան անդամներից ոմանք նաև Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) խորհրդի անդամ են:

Մասնակցությունը գիտական փորձաքննությանը

ԳԱԱ հայազգի արտասահմանյան անդամներն ընդգրկված են ԿԳՄՄՆ ԳԿ փորձագետների տվյալների շտեմարանում, մասնակցում են բյուջետային ֆինանսավորման համար մրցութային սկզբունքով կազմակերպվող գիտական հետազոտությունների նախագծերի (տեղական և համատեղ միջազգային) հայտերի գիտական փորձաքննությանը:

Արտասահմանյան անդամ Ա.Դարգին մեծ դեր ունի «Ավրորա» մարդասիրական մրցանակաբաշխության աշխատանքներում, Ա.Ղազարյանն ընդգրկվել է Արվեստի ինստիտուտում գործող Արվեստագիտության մասնագիտական խորհրդի կազմում:

Արտասահմանյան անդամներից ոմանց գիտական, գիտամանկավարժական և գիտակազմակերպական գործունեությունը գնահատվել է իրենց երկրների կողմից. պարգևա-

տրվել են պետական, կառավարական պարգևներով և մրցանակներով, ստացել են արտերկրի պետությունների գիտական կոչումներ, եվրոպական և միջազգային մրցանակներ:

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Ասպիրանտուրա

Տարեկգրին ասպիրանտուրայում պետական պատվերով սովորել է 98 (55-ն առկա, 43-ը հեռակա), վճարովի հիմունքներով 15 (2-ն արտերկրացի) ասպիրանտ: Հայցորդների թիվը 168 է (78-ը վճարովի, 90-ն անվճար հիմունքներով՝ ԳԱԱ համակարգի աշխատակիցներ):

Հաշվետու տարում ասպիրանտուրան ավարտել է 30 ասպիրանտ (11-ն առկա, 19-ը հեռակա, որոնցից 2-ը վճարովի հիմունքներով (1-ն արտերկրացի)): 2021թ. ասպիրանտուրա է ընդունվել 19 ասպիրանտ (17-ն առկա, 1-ը հեռակա, 1-ը վճարովի հիմունքներով):

Առ 01.01.2022թ. պետպատվերով սովորող ասպիրանտների ընդհանուր թիվը 101 է (60-ն առկա, 41-ը հեռակա), վճարովի հիմունքներով սովորում է 12 ասպիրանտ (1-ն արտերկրացի): Հայցորդների թիվը 156 է (86-ը վճարովի, 70-ն անվճար հիմունքներով՝ ԳԱԱ համակարգի աշխատակիցներ):

2021թ. ԳԱԱ-ում պաշտպանվել է 33 թեկնածուական ատենախոսություն (11 ասպիրանտ, 22 հայցորդ):

Ասպիրանտների բաշխումն ըստ բաժանմունքների

ԳԱԱ բաժանմունքները և գիտական կազմակերպությունները	2021թ. ընդունվել են ասպիրանտուրա			Ասպիրանտների թվաքանակն առ 01.01.22թ.		
	առկա	հեռ.	վճար.	առկա	հեռ.	վճար.
Մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունք	3	0	0	11	3	1
Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք	1	0	0	10	5	0
Բնական գիտությունների բաժանմունք	5	1	0	15	10	1
Քիմիայի և Երկրի մասին գիտությունների բաժանմունք	2	0	0	6	0	0
Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք	6	0	1	17	23	8/1*
Գիտակրթական միջազգային կենտրոն	0	0	0	1	1	2
Ընդամենը՝	17	1	1	60	41	12/1*

* Արտերկրացի ասպիրանտ

Մագիստրատուրա

Տարեկգրին մագիստրատուրայում սովորել է 608 մագիստրանտ (1-ին կուրսում 304, որոնցից 10-ը պետպատվերով, 2-րդ կուրսում 280, որոնցից 9-ը պետպատվերով, հեռավար ուսուցմամբ 24): Միջուկային և արտերկրացի մագիստրանտների թիվը 1-ին կուրսում 7 է, 2-րդ կուրսում՝ 2:

Մագիստրանտների բաշխումն ըստ մասնագիտությունների

Մասնագիտություն	Մագիստրանտների թվաքանակն առ 01.01.22թ.			
	1-ին կուրս		2-րդ կուրս	
	վճարովի	պետպատվեր	վճարովի	պետպատվեր
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	10	1	14(2*)	2
Կառավարում (առկա/հեռակա)	23/27/9	1	26 (1*)/21/3	1
Ֆինանսներ (առկա/հեռակա)	7	-	10	1
Իրավագիտություն (առկա/հեռակա)	17/52(1*)	-	28/ (1*)/70	2

Դեղագիտություն	11	-	6	-
Հոգեբանություն (առկա/հեռակա)	11/25	-	21/24 (1*)	-
Արևելագիտություն (առկա)	4	1	7	-
Միջազգային հարաբերություններ (առկա)	5	1	11	1
Շուկայագիտություն (առկա)	-	-	8	-
Բնապահպանություն և բնօգտագործում	4	1	4	2
Սոցիալական մանկավարժություն (հեռակա)	16	-	19	-
Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ (հեռակա)	-	-	5	-
Ընդհանուր և հայ լեզվաբանություն	5(1*)	-	-	-
Քաղաքագիտություն(հեռակա)	17	-	9	-
Կենսաբանություն	2	2	4(1*)	1
Երկրաբանություն (առկա/հեռակա)	7	-	-	-
Կրթության կառավարում (առկա/հեռակա)	11	-	-	-
Ընդամենը՝	87/157/9(2*)	7	118(5*)/165/3(2*)	10

* Այդ թվում՝ արտերկրից

2020-21 ուստարվա առկա ուսուցմամբ շրջանավարտները 103-ն են (24-ը մագիստրատուրան ավարտել է գերազանցությամբ), հեռակա ուսուցմամբ՝ 120-ը (12-ը մագիստրատուրան ավարտել է գերազանցությամբ): «Գործարար վարչարարություն» մասնագիտությամբ հեռավար ուսուցմամբ շրջանավարտները 15-ն են (2-ը մագիստրատուրան ավարտել է գերազանցությամբ):

Հաշվետու տարում մագիստրատուրա ընդունվածների թիվը 261 է (7-ը սովորում է պետպատվերով): Տարեվերջին մագիստրանտների ընդհանուր թիվը 557 էր (57-ը հեռակա ուսուցման 3-րդ ավարտական կուրսում):

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը կրթական գործունեություն իրականացնելու իրավունք է սովել առկա ուսուցմամբ, 1.5 տարի ուսման տևողությամբ «Կրթության կառավարում», «Հանրային կառավարում» առկա ուսուցմամբ, 2 տարի ուսման տևողությամբ «Հանրային ֆինանսների կառավարում» և հեռակա ուսուցմամբ, 2 տարի ուսման տևողությամբ «Կրթության կառավարում», «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» ՄԿԾ-ին:

ԳԿՄԿ-ն շարունակում է հրատարակել «Կաճառ» գիտական պարբերականը, «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսը:

Կենտրոնը շարունակում է ինտենսիվորեն զարգացնել և ընդլայնել միջազգային կապերը Տուշայի ու Նեապոլի (Իտալիա), Լիլի (Ֆրանսիա) և այլ միջազգային ուսումնական հաստատությունների ու համալսարանների հետ: Կնքվել են մի շարք համաձայնագրեր ու հուշագրեր արտաքին շահեկիցների և գործատուների հետ:

Կենտրոնը մասնակցում է ««Շրջակա միջավայրի պաշտպանություն» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագրին, որի շրջանակում համալրվել է միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական եզակի լաբորատորիա՝ ERLEP: Անցկացվել է «Շրջակա միջավայրի գիտությունները հանուն կայուն առողջության» միջազգային առցանց ամառային դպրոց:

Գիտական խմբեր

Գերհաղորդականության խումբ: 77-300K տիրույթում տեսակարար դիմադրության ջերմաստիճանային կախվածության $\rho(T)$ կորի միջոցով ուսումնասիրվել է արտաքին մագնիսական դաշտի և տրանսպորտային հոսանքի ազդեցությունը բազմաբյուրեղային կուպրատների գերհաղորդչային և նորմալ բնութագրերի վրա: Որպես գերհաղորդչային բնութագրեր դիտարկվել են գերհաղորդչային անցման լայնությունը, կրիտիկական

ջերմաստիճանը՝ որոշված անցման սկզբում, միջնակետում և 0-ական դիմադրությամբ, իսկ որպես նորմալ բնութագրեր՝ տեսակարար դիմադրությունը ֆլուկտուացիոն տիրույթում և գծային տիրույթում տեսակարար դիմադրության ջերմաստիճանային կախվածության ածանցյալն ըստ ջերմաստիճանի՝ $\rho'(T)$: Յույց է տրվել, որ նշված բոլոր բնութագրերի կախվածությունը մագնիսական դաշտից պայմանավորված է նմուշի ջերմաստիճանով և խառնուրդների պարունակությամբ: Բացահայտվել է նաև, որ հազվագյուտ մետաղների փոքր քանակության ներմուծումը բերում է կիրառված արտաքին գործոնների նկատմամբ գերհաղորդչի բնութագրերի կայունացման: Սակայն այս դեպքում մաքուր նմուշների համեմատությամբ դիտվում է նաև $\rho'(T)$ -ի նվազում մի քանի անգամ, որը վկայում է հոսանքակիրների ցրման մեջ էլեկտրոն ֆոնոն փոխազդեցության դերի նվազման մասին:

Կենսահիմնադրման խումբ: Շարունակվել են բարդ համակարգերի, մասնավորապես պոլիմերային և պոլիմեր/մակերևութային ակտիվ նյութ-միացությունների կլանման առանձնահատկությունների ուսումնասիրությունները մետաղական նանոթաղանթների մակերեսին: Համակարգչային փորձերը կատարվել են GROMACS ծրագրային փաթեթի օգնությամբ, բարձր արտադրողականության մեքենաների վրա, իսկ որպես ուսումնասիրության մեթոդ ընտրվել է մոլեկուլային դինամիկայի մեթոդը: Որպես համակարգչային ռեսուրս օգտագործվել են թե՛ կենտրոնի լաբորատորիայում առկա աշխատանքային կլաստերները, թե՛ ԳԱԱ ԻԱՊԻ-ում գործող գերհզոր գրաֆիկական քարտերով զինված մեքենաները:

Մշակման փուլում է նաև առցանց գործիքների միջավայրը, որը գործելու է <http://mdesigner.bioinformatics.am> հասցեով, տպագրվել է 2 գիտական հոդված:

ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական կազմը տպագրել է 112 գիտական հոդված, լույս է տեսել 2 ուսումնամեթոդական ձեռնարկ և 7 մենագրություն:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Հրատարակչությունը 2021թ. հրատարակել է 106 անուն գիրք և հանդես, որոնցից 51-ը գիտական աշխատություններ են (990 տպագրական մամուլ ծավալով), 55-ը՝ 14 ակադեմիական հանդեսների համարներ (480 տպագրական մամուլ ծավալով):

Ինչպես նախորդ տարիներին, ընթացիկ տարում ևս գիտական աշխատությունների և հանդեսների հրատարակմանը մեծապես աջակցել է ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամը:

ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի որոշմամբ լույս տեսած գրքերի և հանդեսների ընդհանուր ծավալը կազմել է 1470 տպագրական մամուլ, տպաքանակը՝ 30600 օրինակ: Ակադեմիական գրքերից բացի պատվերային կարգով իրականացվել են նաև այլ հրատարակություններ:

2021թ. գրահրատարակչական ցուցանիշները*

Անվանումները	Քանակը	Տպագրական մամուլը	Տպագրական թերթ-տպվածքը (հազ. օրինակ)	Տպաքանակը
Գրքեր	51	990	296	18900
Հանդեսներ (14 անուն)	55 համար	480	105	11700
Ընդամենը՝	106	1470	401	30600

* Տվյալները վերաբերում են «Գիտություն» հրատարակչության մակնիշով լույս ընծայված գրականությանը:

**«Գիտություն» հրատարակչության 2021թ. հրատարակությունները
Գրքեր**

1. А.Манташян - Цепные реакции и сопряженные процессы
2. E.Pogossian - Constructing models of being by cognizing
3. Վ.Պետրոսյան - Անաստաս Միկոյանի այցելությունը Չինաստան
4. Հեղ. խումբ - Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցի մանկավարժական գործընթացում (ուսումնամեթոդական ձեռնարկ)
5. «Բանբեր հայագիտության», 2020թ., N 3
6. «Լևոն Շանթ - 150» (հոբելյանական գիտաժողովի զեկուցումների ժողովածու)
7. «Հովհաննես Թումանյան -150» (հոբելյանական գիտաժողովի զեկուցումների ժողովածու)
8. Ա.Արևշատյան - Համամ Արևելցուն վերագրվող «Համառոտ յերաժշտական արուեստէ ի յարապ գրոց» երկը
9. «Պետրոս Ադամյանը ժամանակակիցների հուշերում»
10. ՀՀ ԳԱԱ գիտական և գիտակազմակերպական գործունեության 2020թ. հիմնական արդյունքներ. հաշվետվություն
11. Основные результаты научных исследований НАН РА за 2020г. отчет
12. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների 2020թ. գործունեության համառոտ հաշվետվություն
13. «Լեզու և լեզվաբանություն», 2020թ., N 2
14. Ա.Արևշատյան - Կոստանդնուպոլսի հայ երաժիշտ-տեսաբանները. XVIII-XIX դարեր
15. Վ.Պետրոսյան - Մոսկվայի 1921թ. ռուս-թուրքական պայմանագիրը
16. «Բանբեր հայագիտության», 2021թ., NN 1,2,3
17. Յուրի Թադևոսի Ալեքսանյան. կենսամատենագիտություն
18. Ավ. Իսահակյան - Երկերի լիակատար ժողովածու, հ. XIII
19. «Հայկական տնտեսագիտական հանդես», 2021թ., NN 1,2
20. М.Авакян - Русскоязычная пресса Армении: проблемы использования и функционирования языка
21. Հեղ. խումբ - Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտական հոդվածների ժողովածու)
22. Авт. коллектив - Белорусская диаспора в Армении и армянская диаспора в Беларуси: этническая идентичность и межкультурные взаимоотношения в современных условиях
23. Վ.Վարդանյան - Մեղրի և պատմի համաչափության սկզբունքները սահմանադրական կարգավորումների և եվրոպական իրավական չափորոշիչների համայնապատկերում
24. Գ.Գևորգյան - Պարսից պատմավեպի զարգացման միտումները հետհեղափոխական Իրանում (1980-2010թթ.)
25. Մ.Կիրակոսյան - ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կազմակերպած գիտական միջոցառումները
26. А.Акопян - Московский и Карсский договоры в судьбе армянского народа (по поводу 100-летия заключения договоров)
27. A.Harutyunyan - China's One Belt, One Road Initiative in the Middle East and North Africa
28. «Արվեստագիտական հանդես», 2021թ., NN 1,2
29. Տ.Հարությունյան, Ա.Կյուրեղյան - Գործարար միջավայրի կառավարման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում
30. Ռ.Սարինյան - Ուրվագիծ արդի հայ տնտեսագիտական մտքի պատմության, հ. 4
31. «Актуальные проблемы механики сплошной среды (сборник научных трудов)»
32. Լ.Խաչատրյան - Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան

33. «Հարաբերություններ հայության և Հայաստանի» (կազմող Վ.Գրիշենց)
34. Մ.Խեմչյան - Նվիրատուն և խորհրդատուն հայ ժողովրդական հեքիաթներում
35. Մ.Գևորգյան - Գիտակցության տեսություն
36. «ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տեղեկագիրք - 2020»
37. Авт. коллектив - Изученность распространения и развития опасных экзогенных процессов и явлений и их воздействия на транспортные коммуникации горных стран (на примере Южного Кавказа и Центральной Азии)
38. «Ջառնուկյանական ընթերցումներ», N 1(16)
39. Մ.Շաֆիի Քադքանի - Պարսից պոեզիայի զարգացման փուլերը (Սահմանադրական շարժումից մինչև միապետության անկումը)
40. Վ.Հարությունյան - «Տնտեսական հրաշքները» և «տնտեսական նորոգությունները» աշխարհում. գործարկման ուղիները Հայաստանում
41. Ս.Անանյան - Անմոռաց անուններ
42. «Լեզու և լեզվաբանություն», 2021թ., N 1
43. Г. Харатян - «Геноцид» Ходжалу и его миссия в карабахском конфликте
44. H.Kharatyan - Khojalu «Genocide» and its Mission in Karabakh Conflict
45. Օ.Խնկիկյան - Հայկական լեռնաշխարհի հյուսիսային տարածքները մ.թ.ա. VII-VI դդ. (ըստ հնագիտական տվյալների և գրավոր աղբյուրների)
46. Հեղ. խումբ - «Նոր բառեր», պրակ Զ
47. «Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ», հ. 4

ԳԱԱ գիտական հանդեսներ

1. «ՀՀ ԳԱԱ զեկույցներ» - NN 1,2, 3, 4
2. «Աստղաֆիզիկա» - NN 1, 2, 3, 4
3. «Պատմաբանասիրական հանդես» - NN 1, 2, 3
4. «Լրաբեր հասարակական գիտությունների» - NN 1, 2, 3
5. «Հայաստանի բժշկագիտություն» - NN 1, 2, 3, 4
6. «Հայաստանի քիմիական հանդես» - NN 1, 2, 3, 4
7. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Ֆիզիկա» - NN 1, 2, 3, 4
8. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մաթեմատիկա» - NN 1, 2, 3, 4, 5, 6
9. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մեխանիկա» - NN 1, 2, 3, 4
10. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Գիտություններ Երկրի մասին» - NN 1, 2, 3
11. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Տեխնիկական գիտություններ» - NN 1, 2, 3, 4
12. «Հայաստանի կենսաբանական հանդես» - NN 1, 2, 3, 4
13. «Նեյրոքիմիա» - NN 1, 2, 3, 4
14. «Գիտության աշխարհում» - NN 1, 2, 3, 4

Տպագրվող գիտական հանդեսներից բացի ԳԱԱ մականիշով գիտական հանրությանն են ներկայացվել «Ֆիզիկա», «Մաթեմատիկա», «Բնական գիտություններ» և «Հիմնարար հայագիտություն» էլեկտրոնային հանդեսները: Լույս է տեսել «Գիտություն» թերթի 12 համար՝ 6000 օրինակ ընդհանուր տպաքանակով:

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԳԱԱ համակարգում գործում է 29 ակադեմիական գրադարան՝ Հիմնարար գիտական գրադարանը (ՀԳԳ) և ակադեմիական ինստիտուտների 28 ճյուղային-մասնագիտական գրադարանները:

Համալրման բոլոր աղբյուրներով գրադարաններն այս տարի ձեռք են բերել 9151 գրադարանային միավոր: Արդյունքում ակադեմիական ինստիտուտների և ՀԳԳ-ի ընդհանուր ֆոնդը կազմել է 4215127 գրադարանային միավոր: 2021թ. ԳԱԱ համակարգի գրադարաններից օգտվել է 14063 ընթերցող, սպասարկվել է 54123 գրադարանային միավոր:

ՀԳԳ-ը, որպես մեթոդական կենտրոն, աջակցել է ակադեմիական ինստիտուտների գրադարաններին արդիականացման և նորովի աշխատելու հարցերում: Ներկայումս 10 գրադարան ակտիվորեն ներգրավված է ԳԱԱ ինստիտուտների գրադարանների համահավաք էլեկտրոնային քարտարանի ձևավորման աշխատանքներում: Հաշվետու տարում մուտքագրվել է 22136 գրադարանային միավոր:

ՀԳԳ-ն իր հավաքածուներում ունի 3066969 գրադարանային միավոր (1676374 գիրք, 1366384 ամսագիր և այլ նյութեր): Համալրման բոլոր աղբյուրներով գրադարանն այս տարի ձեռք է բերել 4148 գրադարանային միավոր (այդ թվում՝ 2876 միավոր գիրք, 1088 միավոր ամսագիր և 184 միավոր այլ նյութեր): Ստացվել և ֆոնդ է հանձնվել թերթերի 8 լրակազմ (866 միավոր): ՀԳԳ-ը միջազգային գրքափոխանակության գծով հաստատված կապեր ունի արտասահմանյան երկրների 50 կազմակերպության հետ, որոնցից տարվա ընթացքում ստացել է 296 գրադարանային միավոր:

Շարունակվել են էլեկտրոնային սպասարկման աշխատանքները, ինչի արդյունքում խնայվել է ընթերցողի ժամանակը, միաժամանակ բարձրացել է սպասարկման որակը: Աշխատանքի նման մոտեցումը հատկապես արդյունավետ է դարձել COVID-19 համավարակով պայմանավորված արգելափակումների ժամանակ: Համավարակի պայմաններում այս տարի ևս ՀԳԳ-ի սպասարկման բաժնի աշխատակիցները կազմակերպել են ԳԱԱ համակարգի կազմակերպությունների գիտաշխատողների պատվիրած գրականության առաքումն ինստիտուտներ և դրանց հետ ընդունումն ինստիտուտներից:

2021թ. ՀԳԳ-ն ունեցել է 16200 օգտվող: Սպասարկման բաժնի համակարգչային ցանցից օգտվել է 1705 այցելու, իրականացվել է 1887 էլեկտրոնային պատվերի սպասարկում:

Շարունակվել են ՀԳԳ-ի էլեկտրոնային քարտարան գրականության մուտքագրման աշխատանքները: Հաշվետու տարում քարտարան է մուտքագրվել 26706 միավոր գրականություն, որից 3774-ը նոր ստացված գրականություն է: Ներկայումս ՀԳԳ-ի մատենագիտական տվյալների շտեմարանում մուտքագրված է 874992 գրադարանային միավոր: Գրադարանը նաև գրառումներ է կատարում «Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակում»:

ՀԳԳ-ը հանրությանն է տրամադրում հետևյալ շտեմարանները՝ «Հայ գիրքը 1512-1800թթ.», «Հայ գիրքը 1801-1850թթ.», «Հայ գիրքը 1851-1900թթ.», «Հայ գիրքը 1900-1920թթ.», «Անթվակիր գրքեր», «Եզակի հրատարակություններ և հայերեն հատվածներ պարունակող այլալեզու գրքեր», «Հայկական տպագրություն 400», «Մասնա ծոեր», «Մատենագիտական ցանկեր», «Հիմնադիր ակադեմիկոսներ», «ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների կենսամատենագիտություններ», «ԳԱԱ մատենաշարային հրատարակություններ», «ԳԱԱ շարունակական հրատարակություններ», «ՀՀ ԳԱԱ նախագահներ»: Նշված շտեմարանները հասանելի են գրադարանի կայքէջից (www.flib.sci.am), որի այցելությունների քանակը 2021թ. գերազանցել է 155000-ը:

«ԳԱԱ շարունակական հրատարակություններ» շտեմարանում հոդվածների մակարդակով մուտքագրվել են ԳԱԱ պարբերականների հերթական համարները: Իրականացվել է 778 հոդվածի վերլուծական նկարագրություն, հոդվածները կցվել են նկարագրություններին:

ՀԳԳ-ը, որպես գրադարանագիտության առաջնակարգ դպրոց և թվային գրադարանների ձևավորման հարցերում առաջատար, շարունակել է համագործակցությունը Երուսաղեմի Հայոց Պատրիարքության «Միոն» և Մայր Աթոռի «Էջմիածին» ամսագրերի նոր

համարների հանրայնացման աշխատանքներում: Այդ ամսագրերի թվային լրակազմերը և հոդվածները հանրությանը հասանելի են ՀԳԳ-ի գիտատեղեկատվական հանգույցից: Տպագրության է պատրաստվել «Միոն» ամսագրի մատենագիտությունը:

Շարունակվել են «ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների կենսամատենագիտություններ» էլեկտրոնային շտեմարանի համալրման աշխատանքները. 2021թ. կազմվել է 9 ակադեմիկոսի կենսամատենագիտություն: Կազմվել և տպագրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Ալեքսանյանի կենսամատենագիտությունը:

Համահայկական թվանշային գրադարանը, որը համարվում է գրադարանի ամենամասշտաբային նախագիծը և իրականացվում է ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների» ինստիտուտի ու Պոզնանի գերհամակարգչային կենտրոնի մասնագետների համատեղ ուժերով, համալրվել է նորանոր գիտական նյութերով: Ըստ հոդվածների նկարագրվել են 28 անուն ԳԱԱ պարբերականներ (73522 հոդված) և 38 անուն շարունակական հրատարակություններ (12459 հոդված): Սկսվել են Բեյրութի Հայկազյան համալսարանի հայագիտական ամբիոնի հրատարակության «Հայկազյան հայագիտական հանդեսի», ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի «Հասարակագիտական միտքը արդի ժամանակաշրջանում» ժողովածուի, Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի տեղեկագրքի մուտքագրման աշխատանքները Համահայկական թվանշային գրադարան: Ըստ հոդվածների մուտքագրվել է ԳԱԱ մատենաշարային հրատարակությունների 7 շարք (1891 հոդված): «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի և Մխիթարյան միաբանության հետ համատեղ ստեղծվել է «Վիեննայի Մխիթարյան մենաստանի գրքային հրատարակությունների շտեմարանը», որը պարունակում է 344 գիրք, ինչպես նաև «Վիեննայի Մխիթարյան մենաստանի մամուլի շտեմարանը», որը պարունակում է Մխիթարյան մենաստանի մամուլի նմուշների թվայնացված համարներն իրենց նկարագրություններով: Այս աշխատանքները կրում են շարունակական բնույթ: 2021թ. Համահայկական թվանշային գրադարանը պարունակել է 179591 թվային նյութ:

Եվրամիության աջակցությամբ տպագրության է պատրաստվել «Հայ գիրքը Թուրքիայում», պրակ Ա՝ «Հայերեն և հայատառ թուրքերեն գրքերի մատենագիտություն» 800 էջանոց գիրքը, որը լույս կտեսնի 2022թ.:

Գիտական հրատարակությունների հանրայնացման նպատակով ՀԳԳ-ը համակարգում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի, Արցախի էլեկտրոնային գրադարանի հրատարակությունների հասանելիության ապահովումը Համահայկական թվանշային գրադարանից:

ՀԳԳ-ը շարունակում է ներկայացնել «Վաստակաշատ գիտնականներ» շարքի տեսանյութերը՝ նվիրված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների, թղթակից անդամների, գիտության այլ երախտավորների հոբելյաններին: Տարվա ընթացքում թողարկվել է 12 տեսանյութ:

2021թ. նոյեմբերից սկսվել են անհատական ֆոնդերի տեղափոխման աշխատանքները: Ստեղծվել է ակադեմիկոս Գագիկ Մարգարյանի անհատական ֆոնդը:

ՀԳԳ-ը մասնակցել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության և «Հայկական գրադարանային ասոցիացիա» հասարակական կազմակերպության հայտարարած «Լավագույն գրադարան» մրցույթին և հաղթող ճանաչվել «Լավագույն գիտակրթական գրադարան» անվանակարգում:

ՀԳԳ-ը ԳԱԱ 6 ամսագրի գիտական հոդվածներին տրամադրել է DOI համարանիշեր: Կատարվել է ԳԱԱ ամսագրերի հոդվածների համընդհանուր տասնորդական դասակարգում:

ՀԳԳ-ը «Գիտական տպագիր նյութերի թվայնացման ծառայություններ» ծրագրի շրջանակում մատուցել է հետևյալ ծառայությունները՝ ԳԱԱ հրատարակչության հրատարակած գիտական ամսագրերի բոլոր հոդվածների համար էլեկտրոնային ձևաչափով կատարվել է հոդվածների վերլուծական նկարագրություն, դրանք տեղադրվել են

«Հայաստանի գիտահետազոտական հանգույց» պահոցում, ստեղծվել են հեղինակավոր գրառումներ, մատենագիտական բոլոր նկարագրություններին կցվել են հոդվածների էլեկտրոնային տարբերակները, բոլոր ամսագրերի համար ստեղծվել են կայքէջեր: Արդյունքում «Համահայկական թվանշային գրադարան»-ում տեղադրվել է 371 գիրք (59917 էջ), 97 պարբերական (1499 հոդված, 14864 էջ):

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԳԱՍ ԳԻՏԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԲՈՒՀԵՐԻ ԵՎ
ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ**

N	Համատեղության կազմակերպություններ	ՀՀ ԳԱՍ բաժանմունքներ												Ընդամենը	
